



**Ն.Մ.Ը.Մ. սուկ մարզական կամ սկաուրական  
շարժում մը եղած չէ ու պիտի չըլլայ:**

**Նանրային իմաստով յանձնառութիւն զարգացնող,  
ազգային առումով ինքնաճանաչում սերմանող  
եւ գաղափարական խորքով նուիրում  
ջամբող ընդհանիք է Ն.Մ.Ը.Մ.**



## ՆԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹ-ԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Կազմակերպական հզորանքի պատգամը 2

### ԱՆԴՐԱԴԱՐՁ

Վերջին հրաժեշտ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի 4

### ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի շրջունը դեսպանը՝ եղբ. Գառնիկ Մկրտիչեան 10

### ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տիպարը այսուհետև իբրև ուղեցոյց պիտի ծառայի յաջորդող սերունդներուն 14

Միշտ պիտի յիշենք քեզ, պիտի մնաս մեր մօտ, մեզի հետ ամեն օր 16

Ապրուած, բայց երբեք չգրուած պատմութիւն մը 18

Կրտսեր «Մեծ եղբօրս» յիշատակին 21

Արժանաւորը արժանեացներուն 22

Եղբ. Գառնիկին յիշատակը՝ ապագայ սերունդներու մղիչ ուժ 24

Գառնիկ Մկրտիչեանի անունը- ազգանունը ոսկէ տառերով կը գրուի Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ 26

Սգաւոր է Հ.Մ.Ը.Մ.ը՝ կորսնցուցինք եղբ. Գառնիկ Մկրտիչեանը 28



Անդառնալի՛ կորուստ - Այս երկինքը ա՛լ երկինք չէ... - Ստորումներ եղբ. Գառնիկին հողին յանձնումի պահուն - Դասականէն անդին ազգային գործիչ մը 29

Ոգեշնչողը, ոգեկոչողն ու ոգորողը 32

«Կամաւոր բանակ»ի մեծ բացական 34

Եղբ. Գառնիկէն հակադիր պատկեր մը 35

Ի սպաս Հայ Դատին՝ մեր գերագոյն իտէալին 36

Իրաւունք չունէիր... Արդէն կարօտցանք 37

Հաւասարակշռուած եւ մանրութեան վեր գործող ընկեր Գառնիկը 38

Սիրելի եղբօրս՝ Գառնիկին 39

Սիրելի եղբօրս՝ Գառնիկին 41



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

**Խմբագիր:** Վիգէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

**Խմբագրական կազմ:** Գրիգորիս Պողարեան, Մեւան Նազարեան, Յոլեր Փանոսեան, Բաֆֆի Միլիսեան, Միզի Օհանեան, Շանթ Ժամկոչեան եւ Միլիս Ալավերդեան:

**Վարչական կազմ:** Արօ Մոսիկեան, Միլիս Սաղրեան, Վարդույ Ֆրոնզլեան, Վարդան Բասմիկեան, Տիգրան Ծախիկեան եւ Եղիա Քիլէնեան:

**Էջադրում եւ ընդհանուր ձեւադրում:** Արշօ Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշարութիւն:** Շողիկ Պոյանեան, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Մէքեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

**Բաժանորդագրութիւն:** «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու բաժանորդներու: Տարեկան բաժանորդագրութեան սակ ճշդուած է՝ Լիբանան 25 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 50 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 55 \$: Լիբանանի մէջ թերթին հարավաճառի սակն է 5000 լ.ո.: **Ցրում:** «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յարուստի ցրումը (հեռ. 71/239209): Թերթը կարելի է սրանալ նաեւ «Համազգային»ի գրախանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը սրացուի «Liban post»ի միջոցով:

«Մարզիկ» կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցէ: «Մեւան» շէնք, թիւ 77 փողոց, թիւ 4 հատուած, Պուրճ Համուտ, Պէյրութ, Լիբանան 9611248043, 9611260117 marzig@Homenetmen.org Homenetmen - Հ.Մ.Ը.Մ. www.Homenetmen.org



Սիրեցիր խաղաղութիւնը,  
 Գնջէ՛ խաղաղութեամբ... 42  
 Երկինքէն կտոր մը 44  
 Հայուն եւ լիբանանահայուն  
 նուիրուած կեանք մը 46

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ** 48

**ՑԱՒԱԿՑԱԳԻՐՆԵՐ** 58

**ՊԱՏՊԱՆՆԵՐ**

Հ.Մ.Ը.Մ.ը եւ Հ.Ս.Ը.Մ.ականները եղբ. Գառնիկ  
 Սկրտիչեանի պատգամներուն ընդմէջէն 74

**ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ**

**ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԱՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆՆԵՐ** 86

Սուրիա - Իրաք - Գանատա - Եգիպտոս -  
 Նետըրլէնտներ - Լիբանան - Սուրիա- Քուէթ -  
 Աւստրալիա - Հայաստան - Երուսաղէմ

«Հ.Մ.Ը.Մ.ի եղբ. Գառնիկ  
 Սկրտիչեանի ֆոնտ»ին  
 կատարուած նուիրատուութիւններ 96



*Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին  
 արեւնապետ եղբ. Գառնիկ Սկրտիչեանի յիշատակին  
 նուիրուած այս յարուկ թիւին մեկենասութիւնը  
 կը սրանչնեն Տէր եւ Տիկ. Սարգիս Տէր Պեպրոսեան,  
 Սիպնի, Աւստրալիա:*



**ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ ԳԱՌՆԻԿ  
 ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՄԱՍԻՆ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս մօտէն ճանչցած է Գառնիկ Սկրտիչեանը եւ հետեւեալը կը վկայէ իր մասին.-

Գառնիկը կը պարկանի այն գաղափարապաշար ու մարտունակ սերունդին, որ իր ազգային մկրտութիւնը ու կազմաւորումը սրացաւ հայաբոյր ու հայակերպ ակումբին մէջ: Պուրճ Համուրի սրբին վրայ գրկուող «Սարդարապատ» ակումբը դարչաւ իր առաջին ընդանիքը, եւ հոն Սարդարապատեան ոգիով քրծուած, Լիբանանի քաղաքական պարկերակմի թէժ օրերուն հայկական քաղերու ապահովութեան ու հայ ընդանիքներու պաշտպանութեան իր կարեւոր ներդրումը ունեցաւ:

Գառնիկին երկրորդ ընդանիքը դարչաւ Հ.Մ.-Ը.Մ.ը: Արդարեւ, ակումբին ճամբով Լիբանանի հայութեան ծառայութեան դաշտը նկատուած ու հարուստ փորձառութեամբ քրծուած Գառնիկը Հ.Մ.-Ը.Մ.ի մեծ ընդանիքէն ներս ինքզինք արժեւորեց բարչրագոյն աստիճանի ծառայական ոգիով ու նուիրումով: Կարելի չէ հասկնալ Հ.Մ.Ը.Մ.ի յարկապէս վերջին 25 տարիներու պարմութիւնը առանց Գառնիկին:

Գառնիկին սրանչնած կուսակցական, մարգահան ու ազգային պարասխանապտութեանց գագաթնակէտը հանդիսացաւ իր նուիրեալ ծառայութիւնը մեր եկեղեցոյ թէ՛ որպէս արեւնապետ Լիբանանի Ազգ. Երեսփոխանական Ժողովին եւ թէ որպէս համաարեւնապետ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վերջին Ազգային Ընդհանուր Ժողովին:

Շուրջ 40 տարիներ Գառնիկը ո՛չ միայն գործօն ներկայութիւն դարչաւ Լիբանանի հայութեան կեանքէն ներս, միշտ մնալով հաւապարիմ ու յանչնառու իր սրանչնած բոլոր պաշտօններուն նկատմամբ, այլ եղաւ ծառայասէր բառին ամբողջական ու վաւերական իմաստով: Ուր որ ծառայութեան կարիքը կար, հոն էր Գառնիկը: Հարցերուն մօտեւալու իր հաւասարակշռուած ոգիով եւ իր շրջապարիկ նկատմամբ ունեցած յարգալից մօտեցումով, ան դարչաւ սիրելի ներկայութիւն բոլորին կողմէ:

# ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԶՕՐԱՆՔԻ ՊԱՏԳԱՄԸ

(ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻԶԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

**Ո**վ որ չտեսաւ միութեան դրօշով պատուած դագաղը, կրնայ ենթադրել, որ ան մեկնած է Հ.Մ.Ը.Մ.ական այս կամ շրջան եւ ուր որ է շուտով կը վերադառնայ:

Ով որ գլխահակ չմասնակցեցաւ ժողովրդային յուղարկատրութեան իր սուգին, կրնայ հաւատալ միայն իր ժամանակատր քացակայութեան:

Իսկ ով որ գերեզմանատան մէջ չսեց «Յառաջ նահատակ»ով իրեն տրուած վերջին պատիւը, ինչպէ՛ս ընդունի որ յաւերժ քուն մտած է ան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Սկրտիչեանը չկա՛յ այլեւս: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկներուն պիտի չտեսնենք զինք: Պիտի չսենք իր պատգամները, պիտի չխորախուսուինք իր կեցուածքներով, պիտի չվայելենք իր մագնիսական ներկայութիւնը:

Ուրեմն, լռութի՞ւն է հիմա...

Բայց ո՞վ ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ կորուստալը կը սիրէր լռութիւնը, կը սիրէր սուգն ու վիշտը, կրնար ապրիլ անցեալի յիշատակներով եւ յուշերով միայն: Լռութիւնն անգամ իմաստ եւ արժէք ունէր իրեն համար: Չէ՞ որ քանի՛-քանի՛ անգամներ ան ժողովականներ հրաիրած էր յոռնկայս լռութեան՝ յարգելու համար միութեանական երախտատրի մը յիշատակը: Չէ՞ որ քանի՛-քանի՛ առիթներով ան վայրկեան մը լռութեամբ գլուխ խոնարհել տուած էր Ծիծեռնակաբերդի յուշարձանին թէ Եռաբլուրի անմահներու շիրիմներուն, ազգին նահատակները պատուելու համար:

Ո՛չ, լռութիւն չէ հիմա:

Հիմա ինք կը խօսի իր գործերով եւ պատգամներով: Աւելի ճիշդ, իր գործերն ու պատգամները խօսիլ կուտան իր մասին, Հ.Մ.Ը.Մ.ի մասին, Հ.Մ.Ը.Մ.-հայ ժողովուրդ անքակտելի կապին մասին, Հ.Մ.Ը.Մ.-Հայրենիք ամուր կապուածութեան մասին եւ այն բոլոր արժէքներուն մասին, որոնց ջատագովը եղաւ ան՝ իր բովանդակ կեանքին ընթացքին:



Մահման ու ժամանակ չճանչցաւ իր կեանքը: Իր ապրած աշխարհագրութիւնը ընդգրկեց այն բոլոր քաղաքներն ու երկիրները, որոնց վերեւ անմար մնաց Հ.Մ.Ը.Մ.ի արեւը: Իր անցուցած ժամանակը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ին համար ապրուած օրը, օրերը: Այդպէս է, որ ան կեանքը լեցուց Հ.Մ.Ը.Մ.ի համար ծրագրելով, կազմակերպելով, գործելով եւ գործերուն ընդմէջէն տեսաբար դասեր քաղելով:

Ու հիմա, ինչ որ մնացած է իրմէ՛ այդ դասերն են, որոնք իբրեւ մնայուն յուշարար մեզի կը թելադրեն, որ՝ «Հ.Մ.Ը.Մ. սոսկ մարզական կամ սկաւտական շարժում մը չէ եղած ու պիտի չըլլայ: Հանրային իմաստով յանձնառութիւն զարգացնող, ազգային առումով ինքնաճանաչում սերմանող եւ գաղափարական խորքով նուիրում ջանքող ընտանիք է Հ.Մ.Ը.Մ.ը, որ տարիներու հարուստ փորձառութեամբ արժանացած է իր ժողովուրդին հոգածութեան եւ վստահութեան»: Իսկ ինք եղաւ այդ հոգածութեան եւ վստահութեան արժանատր մէկ ներկայացուցիչը:

Ինքն է, որ հայ կեանքի բարձրագոյն բեմերէն ու ամպիոններէն բազմիցս կրկնեց. «Այսօր որբեր չկան, սակայն որբացած գաղութներ կան: Ու Հ.Մ.Ը.Մ. պատմէ՛լի վրայ է: Հայ երիտասարդութիւն կը համախմբէ, հայեցի դաստիարակութեան միջավայր եւ մթնոլորտ կը ստեղծէ: Սկաւտութեան եւ մարզախաղերու ճամբով երիտասարդները ձուլման վտանգէ կը փրկէ, հայութեան եւ Հայաստանին կը կապէ»: Այս գիտակցութեամբ ալ ան գործեց անդուլ եւ անվիատ, գաղութ գաղութ շրջելով, ամենուրեք Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ երիտասարդութիւն համախմբելով եւ ատենապետութեան 12 տարիներուն միութեան մասնաճիւղերուն թիւը 90-էն 111-ի բարձրացնելով:

Դիւրին չեղաւ աշխատանքը, իր բառերով՝ «Մփիւքի մէջ հայը հա՛յ պահելու, իսկ Հայաստանի մէջ տիպար քաղաքացիներ կերտելու» Հ.Մ.Ը.Մ.ի պարտականութիւնը: Դիւրին չեղաւ, բայց նաեւ անկարելի՛ չեղաւ, որովհետեւ ան աշխատանքի նշանաբան ունե-

ցաւ «Արժանի ըլլալ Հ.Մ.-Ը.Մ.ականի կոչումին եւ անպայման ըսելիք եւ ընելիք ունենալ մեր կեանքին մէջ, մեր գաղութներուն եւ մեր նորահաս սերունդներու դաստիարակութեան գործին մէջ: Անտարբերութիւն, ծուլութիւն եւ անհոգութիւն ներելի չէ: Արտօնելի՛ չէ: Ամէն մարդ հարկ է իր պատասխանատուութեան գիտակցութիւնը ունենայ եւ իրեն վստահուած գործը լաւագոյնս կատարել՝ անձնական նախասիրութիւնները եւ շահերը մէկ կողմ դրած»:



Այսպէս մտածեց ու գործեց եղբայր Գառնիկ, հիմնական մտասելեռում ունենալով Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական հզօրանքը՝ միութեան համահայկական կառոյցին տեւական ընդարձակումը, արդիականացումը, հզօրացումն ու ճառագայթումը, խորապէս համոզուած, որ «Կազմակերպական որակ պահելու համար անհրաժեշտ են բարեփոխութիւններ: Անհրաժեշտ է քննել, թէ վարչական մեր գործելաձեւերը որքա՞ն կը պատշաճին մեր այսօրուան պայմաններուն: Որքա՞ն գործնական են մեր ժողովական կեանքի դասաւորումները, ներգրաւելու համար երիտասարդ սերունդի կարողականութիւնը, իրապաշտ եւ գործնական մօտեցումը, այդ հսկայ ներուժը»:

Հ.Մ.Ը.Մ.ի վերջին քառորդ դարու ամենէն տիրական դէմքը հսկայ ջանքեր ի գործ դրաւ միութիւնը կազմակերպական նոր որակով օժտելու համար: Ներքին իմաստով ան գրաւը դրաւ երիտասարդութեան վրայ, իսկ արտաքին իմաստով ան աշխատեցաւ նիւթաբարոյական առաւելագոյն աջակցութիւն ապահովել կազմակերպական կարեւոր ծրագիրներու յաջողութեան համար:

Երիտասարդութիւնը եղաւ իր սրտին մօտիկ, իսկ ինք՝ միշտ երիտասարդութեան հետ, երիտասարդութեամբ շրջապատուած: Հաւատաց, որ «Երիտասարդներ շատ բան կրնան ընել մեր ժողովուրդին եւ հայրենիքին համար: Անհրաժեշտ է միայն կազմակերպուիլ, աւելի շատ քով-քովի ըլլալ եւ մեր ապրած քաղաքներուն եւ երկիրներուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ական եռանդ եւ շարժում ստեղծել»: Փաստ է, որ իր գլխաւորած Կեդրոնական Վարչութիւնները առաջին անգամ ըլլալով կազմակերպեցին երիտասարդական համագումար, հովանաւորեցին համաեւրոպական երիտասարդական խորհրդաժողով, իսկ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանա-

կումներն ու մարզախաղերը վերածեցին երիտասարդական մեկական տօնի, միութեանական խանդավառութեան եւ ազգային ոգեւորութեան գեղեցկագոյն արտայայտութիւններով:

Ու եթէ ներքին ճակատը ամրացաւ շարքերու երիտասարդականացման ընթացքով, մեծ եղաւ արտաքին ճակատին նիւթաբարոյական նըպաստը այդ ընթացքին յաջողութեան: Ասոր լա-

ւագոյն դրսեւորումը հանդիսացաւ 100-ամեակի տօնակատարութիւններուն միութեան հանդէպ ցուցաբերուած պետական ամբողջական զօրակցութիւնը Հայրենիքի մէջ եւ ժողովրդային անսահման աջակցութիւնը Սփիւռքի մէջ, անկախ՝ քաղաքական, գաղափարական, տեղական-տեղայնական ամէն նկատառումէ:

Առաջնահերթութիւններուն առաջնահերթը, հետեւաբար, եղաւ ու մնաց Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական կառոյցին հզօրացումը՝ մարդկային, նիւթական, յարաբերական եւ արհեստագիտական կարելի բոլոր միջոցներով, որպէսզի ան շարունակէ՝

«Մերունդներ դաստիարակել, կրթել եւ մեծցնել:

«Մարզախաղեր կիրարկել, բայց մարզախաղերէ առաջ մարզական ազնիւ ոգի փոխանցել իր տղոց ու աղջիկներուն:

«Սկաւառութիւն կատարել, բայց սկաւառութենէ առաջ պարկեշտ մարդը եւ ազնիւ քաղաքացին կերտել իր արհ-արեւոյշներէն:

«Վարչական աշխատանք կատարել, բայց ատկէ առաջ վարչական տղոց ազգային կրթութիւն եւ պահանջատիրական ոգի փոխանցել»:

Այս էր իր պատգամը, կազմակերպական հզօրանքի գլխաւոր նպատակը, քաջ գիտնալով, որ «Հ.Մ.Ը.Մ. առաքելութիւն մը ունի մեր կեանքին մէջ: Ծառայութիւնն է անոր առաքելութիւնը, նուիրումն է անոր դերակատարութիւնը»:

Իր անվերադարձ մեկնումէն ետք, հիմա այս պատգամը կը հնչէ շատ աւելի բարձր եւ, իբրեւ թանկագին աւանդ, կը փոխանցուի գալիք սերունդներուն, որպէսզի անոնք ապրին այս խօսքերով, խօսքերը վերածեն գործերու, իսկ գործերով կենդանի պահեն յիշատակը անգուգական Մարդուն, Հայուն եւ Միութեանականին, որ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉ-ԵԱՆ անունը արձանագրեց գլխազիր տառերով:



# ՎԵՐՁԻՆ ՀՐԱԺԵՇՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ

Հ.Մ.Ը.Մ.Ը ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԻՐ  
ՆԱԽԿԻՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՎԱՍՏԱԿԻՆ ԿԸ ԽՈՆԱՐՀԻ  
ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՅԱՐԳԱՆՔՈՎ, «ԱՐԺԱՆԵԱՅ»  
ՇՔԱՆՇԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԴԷՊԻ  
ՅԱԻԵՐԺՈՒԹԻՒՆ «ՅԱՌԱՋ ՆԱՀԱՏԱԿ»Ի  
ՈՒՂԵԿՑՈՒԹԵԱՄԲ

8

ՅՈՆՈՒԱՐ 2021-ը սուգի օր մը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ին համար, որովհետեւ այդ օր միութիւնը խոր կսկիծով վերջին հրաժեշտը տուաւ Կեդրոնական Վարչութեան իր նախկին ատենապետին՝ եղբայր Գառնիկ Մկրտիչեանին, որ քորոնայի համաճարակին զոհ դառնալով՝ անժամանակ կերպով կեանքէն հեռացաւ 6 Յունուարին, Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առաւօտուն, երեք օր հիւանդանոց մնալէ ետք:

Եղբայր Գառնիկ շուրջ քառօրդ դար հանդիսացաւ Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական կառոյցին կեդրոնական դէմքը, որուն գլխաւորութեամբ գործած յաջորդական Կեդրոնական Վարչութիւնները միութեան պատմութիւնը հարատւացին բազմաթիւ յաջողութիւններով եւ նուաճումներով:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
ԿԵԴՐՈՆԻՆ ԱՌՋԵԻ

Եղբայր Գառնիկին ազգային թաղումը ընթացք առաւ առաւօտեան ժամը 10.30-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կեդրոնին առջեւէն, ուր յարգանքի իրենց տուրքը ընծայելու եկած էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամներ, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը եւ անդամներ, Պուրճ Համուտի քաղաքապետը, բազմաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներ, Գառնիկ



Մկրտիչեանի հարազատներ եւ ծանօթներ:

Պուրճ Համուտի քաղաքապետութեան պատուոյ շքախումբին առաջնորդութեամբ, երբ մեծ կորուսեալին դազազը Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնին առջեւ հասաւ, շեփորախումբի անդամներ մահերգով, իսկ սկառտոներ «Պատուի ա՛ռ»ով վերջին անգամ ըլլալով ողջունեցին իրենց երէց եղբայրն ու ղեկավարը, որ հաւատքով ու համոզումով քառորդ դար գործեց այդ կեդրոնին մէջ՝ ծրագրելով, կազմակերպելով եւ կատարուած աշխատանքներուն հետեւելով: Եղբոր գործակիցներ եւ կրտսեր եղբայրներ, իրենց կարգին, վերջին նայուածք մը նետեցին Հ.Մ.Ը.Մ-ի եւ Դաշնակցութեան դրօշներով ծածկուած իրենց բազմափաստակ ատենապետին դազաղին վրայ եւ թաց աչքերով «վարձքդ կատա՛ր» ըսին անոր:

**«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ»  
ԱԿՈՒՄԲԻՆ ԱՌՋԵՒ**

Ապա, յուղարկաւորներու թափօրը ուղղուեցաւ Հ.Յ.Դ. «Սարդարապատ» ակումբ, եղբայր Գառնիկին ազգայն-կուսակցական-գաղափարական կազմաւորման հարազատ տունը, հո՛ն ուր հասակ առաւ եւ ծառայեց ան կեանք մը ամբողջ, իբրեւ Հ.Յ.Դ. ԼԵՄ-ի «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղի անդամ, «Սարդարապատ» կոմիտէի հաւատաւոր ընկեր, կոմիտէի անդամ եւ երկար տարիներ կոմիտէի հերթապահ: Թաղի մուտքէն մինչեւ ակումբ դազազը երիտասարդներու կողմէ փոխադրուեցաւ

ուսամբարձ: Ակումբին առջեւ, թափօրը կանգ առաւ եւ յուղարկաւորները, թաղեցիներն ու եղբոր գաղափարի ընկերները իրենց վերջին յարգանքը ընծայեցին «Մենք անկեղծ զինուոր ենք» երգով, ի յիշատակ անոր՝ որ աւելի քան քառասուն տարի «եարի փոխան զէնք գրկեց»: Ծառայութեան եւ նուիրումի զէնք:

**ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ  
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԱՌՋԵՒ**

«Սարդարապատ» ակումբէն ետք, եղբայր Գառնիկի դազաղին յաջորդ կանգաւոր եղաւ Պուրճ Համուտի քաղաքապետարանը, որուն քաղաքապետական խորհուրդին երկար տարիներու անդամը եղաւ ան: Պուրճ Համուտը իր

յատուկ տեղն ու նշանակութիւնը ունեցաւ եղբայր Գառնիկին համար: Լիբանանի քաղաքացիական պատերազմի ամէնէն տագնապալի օրերուն, երբ Պուրճ Համուտի գոյութիւնը վտանգուած էր, եղբայր Գառնիկ մնաց հայկական այս միջնաբերդին պաշտպանութեան պատնէշին վրայ: Եղաւ իր հարազատ ժողովուրդին հետ, ժողովուրդին կողքին: Պահակ տղոց կողքին, գիշեր ու ցերեկ, հասնելու համար բոլորին՝ վիրաւորին եւ կարիքաւորին, ապաստանարանի մէջ գտնուողին թէ հացի ու ջուրի կարիքը ունեցողին: Պատերազմէն ետք, ան մնաց նոյն ծառայասէր պատասխանատուն, որուն զրասենեակին դռները բաց մնացին բոլոր պուրճ համուտցիներու դիմաց, ինչ հարցով որ դիմեցին իրեն:





**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ԵՒ Հ.Յ.Դ. «ՇԱՂՁՈՅԵԱՆ» ԿԵԴՐՈՆԻՆ ԱՌՋԵԻ**

Այնուհետև, եղբայր Գառնիկին դազադը ուղղուեցաւ Ազգային Առաջնորդարան, որուն հովանիին տակ եղբայր Գառնիկ գործեց անսակարկ նուիրումով, իբրև Նոր Մարաշի Ազգ. Քառասնից Մանկանց վարժարանի եւ Ազգ. Լեւոն եւ Սոփիա Յակոբեան Քոլէճի խնամակար: Իբրև Ազգային երեսփոխան, Ազգային Վարչութեան փոխ ատենապետ, Ազգային երեսփոխանական ժողովի նախկին ատենապետ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր ժողովի պատգամաւոր եւ համաատենապետ:

Առաջնորդարանի մուտքին, երախտաշատ եղբօր անշխիթի յիշատակին իրենց վերջին յարգանքը ընծայեցին Ազգային Վարչութեան իր ժողովակիցները, Ազգային մարմիններու անդամներ եւ Առաջնորդարանի անձնակազմի անդամներ:

Վերջին կանգաւոր եղաւ Հ.Յ.Դ. «Շաղգոյեան» կեդրոնը: Այն կեդրոնը, որ տեւական ժամադրաւայրը եղաւ Կեդրոնական Կոմիտէի նախկին անդամ եղբայր Գառնիկին՝ ժողովներու, «Ազդակ»ի հանդիսութիւններու, «Վանայ Զայն»ի հարցազրոյցներու եւ, առհասարակ, ազգային-կուսակցական հարցերու շուրջ Հ.Յ.Դ. Բիւրոյի, Կեդրոնական Կոմիտէի ընկերներու եւ հայկական երեսփոխանական գրասենեակի անդամներու հետ տեւական խորհրդակցութեան համար:

«Շաղգոյեան»ը խորապէս սգաց իր

մեծ կորուստը: Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի եւ հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ՝ երեսփոխան Յակոբ Բագրատունիի վերջին հրաժեշտը եղբայր Գառնիկի անշունչ մարմնին այդ օր ամփոփեց անբարեբախտ վիշտն ու ցաւը անդամանելի կորուստին:

**ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ**

Աւելի քան ժամ մը տեւած չըջագայութեան, ազգային-միութենական, կուսակցական եւ համաժողովրդային յարգանքէ ետք, կէսօրէ առաջ ժամը 11.30-ին, եղբայր Գառնիկին դազադը հասաւ Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճար, որուն մուտքէն մինչեւ եկեղեցւոյ խորան, երկշարք սկառուտներ կանգնած՝ պատրաստ էին իրենց ողջոյնը տալու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետին: Տաճար փութացած էին եղբայր Գառնիկին Հ.Մ.Ը.Մ.ական, ազգային-կուսակցական երկար տարիներու ծանօթները, հարազատներն ու բարեկամները: Տաճարը ողողուած էր եղբօր մահուան առիթով ընտանիքին, Հ.Մ.Ը.Մ.ին եւ Հ.Յ.Դ.աշակցութեան յղուած բազմատասնեակ ծաղկեպսակներով:

Յուզարկաւորութեան արարողութեան հանդիսապետեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոս: Արարողութեան նախագահեց եւ եղբայր Գառնիկին մասին դամբանական խօսք արտասանեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Արք. Փանոսեան: Ան իր







խօսքին մէջ նշեց, որ «Հաւաքուած ենք տխուր պայմաններու մէջ եւ վիշտն ու արցունքը մեր սրտերուն մէջ, կը պատրաստուինք հրաժեշտ տալու անձնաւորութեան մը, որ երկար ժամանակէ ի վեր լիբանանահայ կեանքի խաղաղ կամ փոթորկոտ պահերուն, ո՛չ միայն Աստուծոյ մօտիկ եղաւ, այլեւ՝ իր մարդկային պարտականութեանց մէջ ալ մնաց միշտ հաւատարիմ եւ օրինակելի»:

«Գառնիկը, պարզ հոգիի, քաղցր, մեղմ եւ շինիչ կեցուածքի տէր անձնաւորութիւն էր,- շեշտեց Առաջնորդը,- ան մեր շրջապատին համար տարած տեսակաւոր ծառայութիւններուն ընդմէջէն թէ՛ խոնարհ սրտով Աստուծոյ կամքը կատարեց եւ թէ՛ ալ մեր համայնական կեանքին ծառայեց՝ իր միջավայրն ու շրջապատը աւելի լուսաւոր դարձնելու, բարեկամներու ու ծանօթներու շրջանակին մէջ յոյս սերմանելու, կորով, քաջութիւն եւ նուիրում յառաջացնելու անշղթ կամքով ու կեցուածքով», հաստատեց Շահէ Արք. Փանոսեան:

Իր խօսքը աւարտելով, Առաջնորդ Սրբազանը ընթերցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին վկայութիւնը եղբայր Գառնիկին մասին: Վկայութեան մէջ Արամ Ա. կ'ընդգծէր, որ «Շուրջ 40 տարիներ Գառնիկը ո՛չ միայն գործօն ներկայութիւն դարձաւ Լիբանանի հայութեան կեանքէն ներս, միշտ մնալով հաւատարիմ ու յանձնառու իր ստանձնած բոլոր պաշտօններուն նկատմամբ, այլ եղաւ ծառայասէր՝ բառին ամբողջական ու վաւերական իմաստով: Ուր որ ծառայութեան կարիքը կար, հոն էր Գառնիկը: Հարցերուն մօտենալու իր



**ԼԻԲԱՆԱՆԻ ՆԵՐԿԱՅ  
ԵՒ ՆԱԽԿԻՆ  
ՎԱՐՉԱՊԵՏՆԵՐ  
ԿԸ ՑԱՒԱԿՑԻՆ**

Ազգային-կուսակցական գործիչ եւ Հ.Մ.Բ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին արեւնապետ եղբ. Գառնիկ Սիրպիչեանի մահուան առիթով Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին հեռաշայնով իրենց ցուակցութիւնները յայտնեցին վարչապետի պաշտօնակալար Հասսան Տիապ, նշանակեալ վարչապետ Սաաք Հարիրի, նախկին վարչապետներ Թամմամ Սալամ եւ Նեժիպ Միքաթի, Ազգային Ազատ Հոսանք կուսակցութեան նախագահ, երեսփոխան Ժըպրան Պասիլ, ինչպէս նաեւ Լիբանանի խորհրդարանի անդամներ, պետական եւ հասարակական դէմքեր:



հաւասարակշռուած ոգիով եւ իր շրջապատին նկատմամբ ունեցած յարգալից մօտեցումով, ան դարձաւ սիրելի ներկայութիւն բոլորին կողմէ:

«Իր ողջ կեանքը ազգին ծառայելու ոգիով շաղախած Գառնիկը նոյն ոգիով ընտանիք կազմեց ու կազմաւորեց: Եւ այսօր իր երկու զաւակները լծուած են ազգին ծառայութեան վեհ առաքելութեան», հաստատեց Արամ Ա. եւ այս առիթով յետ մահու կաթողիկոսութեան «Ասպետ»ի շքանշանը շնորհեց անոր (Առաջնորդ Սրբազան Զօր եւ Վեհափառ Յայրապետին խօսքերը տեսնել առանձին, էջ 53 եւ էջ 1):

Յուզարկաւորութեան աւարտէն ետք, եղբայր Գառնիկին դազաղը դուրս բերուեցաւ Հ.Յ.Դ. Բիւրոյի եւ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անդամներու կողմէ:

Յաջորդեց Տաճարի շրջափակին մէջ ցաւակցութիւններու ընդունման բաժինը, որմէ ետք եղբոր թաղման կարգը տեղի ունեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մէջ:

**ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳԸ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՄԷՋ**

Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մուտքին, Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբը «հանգիստ-պատրաստ»ով եւ մահերգով առաջնորդեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ Շրջանային Վարչութեան եղբայրներուն կողմէ ուսամբարձ տարուող դազաղը, որուն ընկերացան եղբոր շքանշանները եւ

ծաղկեպսակները գրկած տասնեակ մը սկառուտներ:

Թաղման կարգը տեղի ունեցաւ Առաջնորդ Սրբազան Զօր գլխաւորութեամբ եւ Լիբանանի Հայոց Թեմի քահանայից դասուն ներկայութեամբ: Հասկնալի պատճառներով, փոխան մատրան՝ կարգը կատարուեցաւ բացօթեայ, Հ.Յ.Դ. Դաշնակցութեան պանթէոնին առջեւ:

Արարողութեան աւարտին, յանուն Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Յ.Դ. Դաշնակցութեան դամբանական խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Նաճարեան եւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի եւ հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ՝ երեսփոխան Յակոբ Բագրատունի:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Նաճարեան իր խօսքին մէջ նշեց, որ «Անակնկալ ու անժամանակ բաժանումի այս պահուն դժուար է ընդունիլ, որ Հ.Մ.Ը.Մ. այլեւս պիտի գրկուի եղբայր Գառնիկին ողբնշող խօսքէն ու գործէն: Անգնահատելի է աւանդը եւ ժառանգութիւնը մեր երէց եղբոր, որ այսօր յաւէտ կը բաժնուի բոլորէս՝ մեզի կտակերով Հ.Մ.Ը.Մ.ի կեանքին իր բերած ներդրումը, վաստակը եւ միութենական ոգիով դաստիարակուած սերունդները, որոնք պիտի շարունակեն իր նուիրական երթը»:

Շարունակելով, եղբ. Նաճարեան հաստատեց, որ «Իբրեւ միութենական, եղբ. Գառնիկ ունէր իր առանձնատուկ հմայքը: Զինք ճանչցողները կը սիրէին եւ կը յարգէին զինք, նոյնիսկ եթէ





կարգ մը նիւթերու շուրջ տարակարծիք ըլլային հետը: Ի ծնէ միութենական, կազմակերպական աշխատանքի մարդ էր ան: Էութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ական: Այս պատճառով իրեն կը վստահուէին կազմակերպական ամէնէն բարդ հարցերու տնօրինումները, որոնք ընդհանրապէս բարօք լուծումներ կը գտնէին հակասութիւնները մեղմացնելու եւ միշտ միջին եզրեր գտնելու իր բացառիկ կարողութեան շնորհիւ»:

Եղբայր Գառնիկին կորուստին անդրադառնալով, եղբ. Նաճարեան ըսաւ, որ «Ճիշդ է, որ եղբ. Գառնիկին բացակայութիւնը ծանր կը կշռէ, բայց մեր սփոփանքը այն է, որ հակառակ իր ֆիզիքական բացակայութեան, ան պիտի մնայ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի մտքին ու սրտին մէջ, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական տիպար եւ անզուգական դեկավար, որ պատասխանատու պարտականութիւններ ստանձնած տարիներու ընթացքին անասակարկ կերպով ծառայեց իր ազգին եւ միութեան»:

Խօսքը աւարտելով, եղբ. Նաճարեան Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետը յետ մահու պարգեւատրեց միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

Հ.Յ.Դաշնակցութեան անունով դամբանական խօսք արտասանեց Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի եւ հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ՝ երեսփոխան Յակոբ Բագրատունի: Ան ըսաւ, որ «Շարժում էր Գառնիկ Մկրտիչեան բառին էութենական իմաստով: Համակ աշխատանք, համակ նուիրում, հաւաքականը

անձնականին գերադասող ու սեփականէն վնասող, ինքնագոհութեան լաւագոյն ու հագուագիւտ տիպարը մեր կեանքի իրականութեան մէջ: ...Իր բազմաբեղուն, բազմոլորտ աշխատանքը ինք կատարեց բացառիկ բժախնդրութեամբ, կազմակերպութեամբ, նուիրութեամբ, տագնապով, կրելով երբեմն վիրաւորանք, երբեմն հանդուրժելով անարդարութիւն եւ խճբածանք, բամբասանք, նոյնիսկ՝ ապերախտ վերաբերում: Բայց տեւաբար մնաց բարի հոգիով, լաւատես, ներողամիտ ժպիտով, դէպի վաղուան նայող, հպարտութեամբ լեցուն սիրտ մը, որ բաբախեց հայութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ով ու Դաշնակցութեամբ»:

Բագրատունի նկատել տուաւ, որ «Մարդու սովի, ընկերականութեան նա-

հանջի, հայրենիքի վտանգուածութեան այս օրերուն, սիրելի Գառնիկ, դու ան պիտի յիշուիս իբրեւ գլխադիր ընկեր, առաքինի ընկերը մարդուն, դաշնակցական մեր սիրելի ընկերը: Այլեւս պիտի չհանդիպինք քեզի Պուրճ Համուտի մէջ թէ՛ այլուր, պիտի չայցելես «Մարդարապատ» ակումբ, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոններ, «Շաղգոյեան» կեդրոն, Ազգային Առաջնորդարան թէ՛ Կաթողիկոսարան: Քեզ պիտի չունենանք մեր ժողովներուն մէջ ու պիտի չչսենք չափաւոր, բայց խիստ, սիրով արտայայտուած տեղին քննադատութիւններդ, պիտի չսենք կիրքերը հանդարտեցնող քու յորդորներդ ու միաժամանակ ականատես պիտի չըլլանք կարգ ու կանոնադիրը, գաղափարական ուղղափառ գիծը անշեղօրէն յարգելու կրքոտ կեցուածքներուդ: Բայց վստահ եղի՛ր, պիտի յիշենք քեզ միշտ, պիտի մնաս մեր մօտ, մեզի հետ ամէն օր», հաստատեց ան:

Դամբանական խօսքերէն ետք, սգակիրներ դադարին հետեւելով ուղղուեցան եղբայր Գառնիկին ընտանեկան դամբարանը, ուր թաղման կարգի ամբողջացումէն ետք, եղբօր մարմինը Լիբանանի ցուրտ հողին յանձնուեցաւ յուղումով եւ արցունքով, շեփորախումբի հնչեցուցած «Յառաջ նահատակ»ով եւ ներկաներու կողմէ «Վէրքերով լի» երգին երգեցողութեամբ:

Յայտնենք, որ եղբայր Գառնիկին վերջին հրաժեշտի, յուղարկաւորութեան եւ թաղման արարողութիւնները ուղղակիօրէն սփռուեցան Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի հանրային կայքերու մարմինի դիմատետրի էջերով:





Բիւզանդ եւ Ծաղիկ Մկրտիչեաններու ընտանեկան յարկին տակ հայեցի շունչով եւ գաղափարական դաստիարակութեամբ հասակ առած եղբ. Գառնիկ, ինքնակերտման առաջին քայլերէն ետք, մաս կը կազմէ Հ.Յ.Դ. Լիբանանի Երիտասարդական Միութեան «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղին, կանուխէն իր մէջ յայտնաբերելով բնատուր ղեկավարի եւ շրջահայեաց առաջնորդի յատկանիշներ: Քսանմէկ տարեկանին ան կ'ընտրուի Հ.Յ.Դ. «Սարդարապատ» կոմիտէի անդամ, իսկ կարճ ատեն մը ետք՝ կոմիտէի ներկայացուցիչ, Լիբանանի քաղաքացիական պատերազմի ամէնէն դժուարին օրերուն, աւելի քան տասնամեակ մը իր շուքը անպա-

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋՈՒՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ

**Դ**ժուար է հաշտուիլ բացակայութեանը հետ մարդու մը, որ անցնող քառասուն տարին եղաւ մեր կեանքի բոլոր կալուածներուն մէջ, ամէն տեղ ձգելով իրեն յատուկ հետքն ու դրոշմը: Թէեւ վերջին քառորդ դարուն եղբ. Գառնիկ Մկրտիչեանին անունը առաւելաբար կապուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ին եւ անոր համահայկական աշխատանքներուն, սակայն ան ազգային-կուսակցական իր վաստակով մեր ժողովուրդին ծանօթ էր աւելի առաջ:

Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական կառոյցի ամէնէն հեղինակաւոր ու տիրական դէմքերէն եղբ. Գառնիկ Մկրտիչեան ծնած է 10 Ապրիլ 1962-ին: Ան իր կրթութիւնը ստացած է Համագգայինի Նշան Փալանճեան Ճեմարանին եւ Զմմառեան միաբանութեան Ս. Պօղոս վարժարանին մէջ: Հօրը կանխահաս մահը սակայն պատճառ դարձած է, որ ան կանուխէն նետուի գործի ասպարէզ՝ դիմագրաւելու համար կեանքի դաժան մարտահրաւէրները:

կաս պահելով շրջանի հայութեան ֆիզիքական պաշտպանութեան եւ թաղային-կենցաղային հարցերու լուծման գործին:

Դաշնակցութեան ճամբով հայ ժողովուրդին մղած պայքարը եղբ. Գառնիկը շուտով կ'առաջնորդէ նաեւ հայ մշակույթի եւ հայ երիտասարդութեան ծառայութեան դաշտեր: Ան կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի եւ Համագգայինի Պուրճ Համուտի մասնաճիւղերուն: Կը գործէ նաեւ իբրեւ խնամակալ Ազգ. Քառանից Մանկանց Վարժարանի եւ Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Քոլէճի: Ծառայութեան ընդմէջէն, հայ մշակույթը, հայ դպրոցը, հայ մարմնակրթութիւնը եւ հայ մարդու բնորոշ ազգային յատկութիւնները իրեն համար կը հանդիսանան անսակարկելի արժէքներ:

Հ.Մ.Ը.Մ.ի մէջ, եղբ. Գառնիկ նախ կը գործէ Պուրճ Համուտի մասնաճիւղին ու ապա՝ Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպական յանձնախումբին մէջ: 1980-ական թուականներէն ան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջ-





Ջանաչին Ներկայացուցչական բոլոր ժողովներուն, իսկ 1991-էն սկսեալ՝ Հ.Մ.Ը.Մ.ի իրերայաջորդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովներուն:

Կազմակերպական կեանքի հարուստ կենսափորձով, եղբ. Գառնիկ, 1999-ին, միութեան է. Պատգամաւորական Ընդհանուր ժողովին, 37 տարեկանին մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան այն կազմին, որ սերնդափոխութեան կարգով պիտի փոխարինէր շուրջ երկու տասնամեակ միութիւնը առաջնորդած Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարութիւնը՝ գըլ-խաւորութեամբ տոքթ. Միսաք Արզումանեանի եւ գործակից եղբայրներու՝ Վարուժան Սերոբեանի, Միհրան Շիմշիրեանի, Պատրիկ Կիւլպէնկեանի, Կարօ Թիւթիւնճեանի, Ժիրայր Սարգիսեանի, Գօգօ Պալեանի եւ ուրիշներու:

2003-ին, եղբ. Գառնիկ կը վերընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ կը ստանձնէ միութեան ատենապետի պատասխանատու պաշտօնը: Այնուհետեւ, քառամեակի մը ընդմիջումէ ետք, 2011-2019 ան երկու շրջան եւս կը վերստանձնէ ատենապետութեան պաշտօնը՝ միութիւնը ձեռնհասօրէն առաջնորդելով ադամանդեայ յրելեան՝ 100-ամեակ:

Եղբ. Գառնիկ Մկրտիչեանի Կեդրոնական Վարչութեան ատենապետութեան 12 տարիները կը յատկանշուին կազմակերպական, քարոզչական, յարաբերական բազմաբեղուն գործունէութեամբ: Հանգիստ ու դադար չի ճանչնար ան: Կը գործէ անվճատ, կը հասնի հոն ուր հայրութիւնը կազմակերպ



կեանքի կարիքը ունի, Հ.Մ.Ը.Մ.ի հայապահպան դերակատարութեան պահանջը ունի: Ան ամբողջութեամբ կը նուիրուի նորահաս սերունդներու ազգային դաստիարակութեան եւ մարմնակրթութեան կարեւոր գործին, Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով հայրութեան հասցնելով քաղաքացիական իրենց պարտաւորութիւններուն գիտակից, ազգին ու հայրենիքին ծառայութեան պատրաստ տղաք ու աղջիկներ:

Իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի շրջուն դեսպան, եղբ. Գառնիկ հետամուտ կ'ըլլայ միութեան կազմալոյծ մասնաճիւղերու վերականգնումին, Հայաստանի, Արցախի, Թիֆլիսի եւ Մոսկուայի մէջ նոր մասնաճիւղերու ստեղծման եւ Եւրոպայի տարածքին նոր մասնաճիւղերու հիմնադրման, ազգային ապահով երդիք մը ապահովելու համար Միջին Արեւելքէն դադրած հայ ընտանիքներուն ու յատկապէս անոնց մատղաջ զաւակներուն:

Անուրանալի է եղբ. Գառնիկին դերն ու վաստակը միութեան 100-ամեակի փառապանծ տօնակատարութիւններու





ծրագրման, կազմակերպման եւ իրագործման մէջ, ազգային-պետական շուքով, միութենական արժանավայել փառքով ու պատիւով: Մեծ է նաեւ անոր ներդրումը միութեան երիտասարդականացման աշխատանքներուն եւ երիտասարդական առաջին համագումարի կազմակերպման մէջ:

Հայաստանականութեան գործին իր բերած մեծ նպաստին համար, եղբ. Գառնիկ 2012-ին կը պարգևատրուի Սփիւռքի նախարարութեան ոսկէ շքանշանով, իսկ «Հայրենիք-Սփիւռք



կապերու ամրապնդման գործին ներդրած աւանդին համար», 2015-ին, ան կ'արժանանայ Հայաստանի Հանրապետութեան նախագահին «Երախտագիտութեան» շքանշանին:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամակցութեան առնթեր, եղբ. Գառնիկ մաս կազմած է Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի զանազան մարմիններու, Կեդրոնական Կոմիտէի եօթը կազմերու, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հոգաբարձուներու խորհուրդին եւ Պուրճ

## «Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ ՖՈՆՏ»

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախկին արեւնապետ եղբ. Գառնիկ Միրախչեանի մահուան առիթով, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան որոշումով արեղծուած է յարուկ ֆոնդ մը, որուն կանոնադրութիւնն ու աշխարհանքի եղանակը մշակման ընթացքի մէջ են արդէն:

Առ այդ, Միրախչեան ընկերանիքին եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան փափաքն է, որ եղբոր յիշարակին կարարուելիք նուիրարությունները հասցէագրուին այս ֆոնդին միութենական օգուկար եւ մնայուն ծրագիրով մը յաւերժացնելու համար եղբ. Գառնիկ Միրախչեանին յիշարակը:

Լիբանանէն դուրս, նուիրարությունները կարելի է փոխանցել դրամապահային հեկրեւեալ հաշիւին- CREDIT LIBANAIS S.A.L. in BEIRUT - LEBANON

Customer: Mm Comite Central Du Homentmen  
Account: 0012002778002


Branch: BOURJ HAMMOUD

IBAN: LB43 0053 00CA USD0 0120 0277 8002

SWIFT Code (BIC): CLIBLBBX

Currency: USD

Լիբանանի մէջ նուիրարությունները կարելի է կարարել «Վանայ Զայն», «Շաղղոյեան» կեդրոն, երկրորդ յարկ:






Համուտի քաղաքապետական խորհուրդին: Ան մասնակցած է Հ.Յ.Դ. Ընդհանուր ժողովներու եւ Հ.Յ.Դ. Լիբանանի շրջանի վերջին 35 տարիներու գրեթէ բոլոր Ներկայացուցչական ժողովներուն:

Եղբ. Գառնիկ երկար տարիներ գործած է նաեւ Լիբանանի Ազգային իշխանութեան մարմիններուն մէջ: Եղած է Ազգային երեսփոխանական ժողովի ատենապետ, Ազգային Վարչութեան փոխ ատենապետ եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողի-

կան Վարչութեան «Արժանեաց» եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ասպետ»ի շքանշաններուն:

Եղբ. Պատրիկ Կիւլպէնկեանի մահուան առիթով եղբ. Գառնիկին գրած մահագրական յօդուածին ձեռագիրը: Յօդուածը գրուած է 13 դեկտեմբեր 2020-ին, մահէն 24 օր առաջ:



**ՄԱՀԱՉԳ**

Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գումծ միութեան Կեդրոնական Վարչութեան երկար տարիներու ատենապետ, բազմավաստակ Հ.Ս.Ը.Մ.ական՝

**ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ**

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 6 Յունւար 2021-ին:

Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 8 Յունուար 2021-ին, կէսօրուան ժամը 12.00-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Ցաւակցագիրները փոխանցել ե-նամակի հետեւեալ հասցէին՝ office@homenetmen.org

**ՄԱՀԱՉԳ**

Հ.Ս.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կը գումծ Հ.Ս.Ը.Մ.ի Լիբանանի ծառայատէր, բազմավաստակ եղբայրներէն՝

**ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ**

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 6 Յունւար 2021-ին:



Սգակիր բարեկամներ,  
Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եւ եղբայրներ,

Բոլորս ալ վարժուած էինք եղբ. Գառնիկին ճամբորդութիւններուն: Գիտէինք, թէ ան յաճախ կը բացակայի քանի մը օրով, բայց ո՛ւր որ է անպայման կը վերադառնայ՝ միութենական յաջողութիւններու նոր լուրերով:

Այս մէկը սակայն ոչ ոքի մտքէն կ'անցնէր: Այս անգամւան ճամբորդութիւնը երկար եւ անվերադարձ է, որովհետեւ յաւերժական եւ յաւիտենական է: Այս անգամ ան գացած է միանալու Հ.Մ.Ը.Մ.ի անմահներու փաղանդին, զինք նախորդող սերունդին, սերունդներո՛ւն՝ Լուտեր Մասպանաճեանին եւ Վարդգէս Տէր Կարապետեանին, Բիւզանդ Թորիկեանին եւ Միհրան Շիմշիրեանին:

Անանկնկալ ու անժամանակ բաժանումի այս պահուն դժուար է ընդունիլ, որ Հ.Մ.Ը.Մ. այլեւս պիտի գրկուի եղբայր Գառնիկին ոգեշնչող խօսքէն ու գործէն:

Անգնահատելի է աւանդը եւ ժառանգութիւնը մեր երէց եղբոր, որ այսօր յաւէտ կը բաժնուի բոլորէս՝ մեզի կտակելով Հ.Մ.Ը.Մ.ի կեանքին իր բերած ներդրումը, վաստակը եւ միութենական ոգիով դաստիարակուած սերունդները, որոնք պիտի շարունակեն իր նուիրական երթը:

Աւելի քան քառասուն տարիներու վրայ կ'երկարի եղբայր Գառնիկին Հ.Մ.Ը.Մ.ական կեանքը, ազգային-հասարակական կեանքի իր այլազան ծառայութիւններուն կողքին:

Եղբ. Գառնիկին մուտքը Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիք կը կատարուի Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին անդամակցութեամբ: Ան կը գործէ մասնաճիւղին եւ Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպական յանձնախումբին մէջ եւ 1999-ին, միութեան եօթներորդ Պատգամաւորական Ժողովին կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ: Չորս տարի ետք ան կը վերընտրուի եւ կը ստանձնէ Կեդրոնական Վարչութեան ատենապետի պաշտօնը: Ապա, քառամեակի մը ընդմիջումէ ետք, ան կը վերընտրուի երկու շրջան եւս՝ 2011-2019, միշտ վարելով ատենապետի պատասխանատու պաշտօնը եւ ծառայութեան ամբողջ տեւողութեան մնալով աշխոյժ ու կորովի ղեկավար: Արդարեւ, եղբ. Գառնիկ իր կեցուածքներով քաջարի պաշտպանը եղաւ իր սիրած միութեան սկզբունքներուն, զանոնք փոխանցեց յաջորդական սերունդներու՝ միշտ հաւատարմով, որ միութեան կազմակերպական յարկին տակ է, որ պիտի կազմաւորուին ազգին եւ հայրենիքին համար անսակարկ նուիրուելու պատրաստ հայրեր:

Իբրեւ միութենական, եղբ. Գառնիկ ունէր իր առանձնաշատուկ հմայքը: Զինք ճանչցողները կը սիրէին եւ կը յարգէին զինք, նոյնիսկ եթէ կարգ մը նիւթերու շուրջ տարակարծիք ըլլային հետը:

Ի ծնէ միութենական, կազմակերպական աշխատանքի մարդ էր ան: Էութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ական: Այս պատճառով իրեն կը վստահուէին կազմակերպական ամէնէն բարդ հարցերու տնօրինումները, որոնք ընդհանրապէս բարւօք լուծումներ կը գտնէին հակասութիւնները մեղմացնելու եւ միշտ միջին եզրեր գտնելու իր բացառիկ կարողութեան շնորհիւ:



# ՏԻՊԱՐԸ ԱՅՍՈՒՀԵՏԵՒ ԻՔՐԵՒ ՈՒՂԵՑՈՅՑ ՊԻՏԻ ԾԱՌԱՅԷ ՅԱԶՈՐԴՈՂ ՍԵՐՈՒՆԳՆԵՐՈՒՆ

## (Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂՔ ՎԱՉԷ ՆԱՃԱՐԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԵՂՔ ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

Իբրեւ ժողովական, եղբ. Գառնիկ յատկութիւնը ունէր նիւթերը նախապէս լաւ ձեւով համադրելու եւ կանխելու որեւէ հարց, որ կրնար ծագիլ ժողովներու ընթացքին, տեսակէտներու բախումի կամ երկուութեան ստեղծման պատճառով: Վարպետ ժողովականի իր այս մօտեցումը միշտ իր դրական արդիւնքը կ'ունենար աշխատանքներու ընթացքին վրայ:

Իբրեւ ժողովական, հաճելի էր հարցերու քննարկումի ժամանակ լսել իր ազգային եւ միութենական կեանքի պարած փորձառութիւնները, որոնք տուեալ հարցին հետ սերտօրէն կապ կ'ունենային: Յիշողութիւններու իր շտեմարանը հարուստ էր եւ դաստիարակիչ:

Հ.Մ.Ը.Մ.Ի համահայկական կառույցին մէջ իւրայատուկ երեւոյթ էր եղբ. Գառնիկ: Չկար մէկը, որ իրեն չափ ծանօթութիւն ունենար եւ յարաբերութիւններ մշակէր Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքի գանազան շրջաններու միութենականներուն, նախկին կամ ներկայ վարչականներուն եւ անոնց անմիջական շրջանակին հետ:

Իր այս կապերուն եւ յարաբերութիւններուն շնորհիւ է, որ կարելի եղաւ փառաւոր ձեւով կազմակերպել Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակը: Ժիշդ է, որ Հ.Մ.Ը.Մ.Ի մէջ որեւէ աշխատանքի յաջողութիւն հաւաքական աշխատանքի արդիւնք է, Հ.Մ.Ը.Մ.Ի կազմակերպական մեքենային նոյնանպատակ պատրաստութեան հետեւանք է, բայց եղբ. Գառնիկին յարաբերական եւ կազմակերպական բացառիկ ճիգով կարելի եղաւ իրականացնել միութեան 100-ամեակի փառաւոր ձեռնարկները, միութեան ապահովելով 700.000 ամ. տոլարի նուիրատուութիւն, նաեւ յաջորդաբար երկու տարի 1200 Հ.Մ.Ը.Մ.Ի-ականներով համա-Հ.Մ.Ը.Մ.Ի-ական ձեռնարկներ իրականացնելով Հայաստանի մէջ (Մարզախաղեր, բանակում եւ 100-ամեակ):

Սիրելի՛ եղբ. Գառնիկ,

Դժուար ու ծանր պարտականութիւն է յարգանքի եւ հրաժեշտի խօսք արտասանել՝ ներկայացնելով տարիներու ծառայութիւնը եւ միութենական ժառանգը, այս առիթով յիշելով Հ.Մ.Ը.Մ.Ի մէջ ծառայած այն բոլոր հանգրուանները, որոնք հետք ու դրոշմ ձգեցին միութեան վրայ, դիմագիծ եւ ինքնութիւն տուին միութենական մեր քոյր-եղբայրներուն:

Դժուար պիտի ըլլայ մխիթարել հարազատներդ, ընկերներդ, եղբայրներդ եւ քոյրերդ, երբ ոեւէ մէկը հաշտուած չէ տակաւին կամ չի հաւատար կորուստիդ գաղափարին: Պիտի սպասենք ժողովներուն յատուկ շուքով քու մուտքդ: Պիտի

կարօտանաք շաբաթական մեր հանդիպումները, ուր կը քննարկէիր տեղական թէ համասփիւղեան իրադարձութիւններ՝ քեզի յատուկ ժպիտով եւ ազնիւ հիւմորով, միշտ փորձելով բացատրել եւ վերլուծել մեր հաւաքականութեան վրայ անոնց ունեցած ազդեցութիւնը:

Տխուր ենք, որ մեզմէ անակնկալ կը բաժնուիս, առանց լուր տալու, առանց մեզի առիթը տալու քեզմէ հրաժեշտ առնելու, բայց շատ լաւ գիտենք, որ դու եւ պարեցար Հ.Մ.Ը.Մ.Ի-ական հարուստ կեանք մը՝ հաւատարիմ մնալով միութեան նշանաբանին՝ «Բարձրացիր-բարձրացուր»ին եւ քու տիպարովդ օրինակ դարձար մեզի եւ քեզի ճանչող բոլոր միութենականներուն:

Սիրելի՛ սգակիրներ,

Ժիշդ է, որ եղբ. Գառնիկին բացակայութիւնը ծանր կը կըլընէ, բայց մեր սփոփանքը այն է, որ հակառակ իր Ֆիզիքական բացակայութեան, ան պիտի մնայ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.Ի-ականի մտքին ու սրտին մէջ, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.Ի-ական տիպար եւ անզուգական ղեկավար, որ պատասխանատու պարտականութիւններ ստանձնած տարիներու ընթացքին անսակարկ կերպով ծառայեց իր ազգին եւ միութեան:

Մեր իրականութեան մէջ անկրկնելի անձնաւորութիւն մը եւ եզակի երեւոյթ մըն էր եղբ. Գառնիկ, որուն աշխատանքին իբրեւ արդիւնք՝ այսօր Հ.Մ.Ը.Մ.Ի համահայկական կառույցին մէջ կը գործեն գաղափարական հաւատքով թրծուած միութենականներ, օրինակ ունենալով ի՛ր տիպարը, որ այսուհետեւ իբրեւ ուղեցոյց պիտի ծառայէ յաջորդող սերունդներուն:

Յանուն Հ.Մ.Ը.Մ.Ի համահայկական ընտանիքի 111 մասնաճիւղերուն եւ 28 հազար հաշուող անդամներուն, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը խորապէս կը սգայ բազմավաստակ իր նախկին ատենապետին կորուստը եւ կը խոնարհի անոր յիշատակին առջեւ:

Երթդ բարի՛, սիրելի՛ եղբ. Գառնիկ:

Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքը երբեք պիտի չմոռնայ քեզ ու քու աւանդը, եւ առ ի երախտագիտութիւն վաստակիդ ու նուիրումիդ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը յետ մահու քեզի կը շնորհէ միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանը, որմով շատ պիտի փափաքէինք կուրծքդ գարդաբել ողջութեանդ:

Հողը թեթեւ գայ վրայդ:



Անհաւատալի բան մը կայ այսօր հոս:  
Կը դիտեմ չորս դիս, կը փնտռեմ, կը հարցնեմ, կը սպասեմ, բայց չեմ գտներ:

Ե՞րբ պատահած է, որ ան բացակայ եղած է այս գերեզմանատան մէջ կատարուող ոեւէ ընկերոջ թաղման արարողութեան:

Չկայ ան կանգնած, այլ՝ քովդ, մեր քով պառկած է իր պաշտած դրօշներով ծածկուած այս դագաղին մէջ:

Հաւատա՞լ: Կարելի՞ է հաւատալ:

Գառնիկը, ընկեր Գառնիկը, եղբայր Գառնիկը, երբեմն կատակով՝ պարոն Գառնիկը, մեր Գառնիկը այսպէս, յանկարծ, առանց կանխազգուշացման, առանց նախապատրաստական աշխատանքի լքէ մեզ ու երթա՞յ:

Լո՞ւրջ ես Գառնիկ, թէ՞ կատակ:

Ինք, որ միշտ ուզած է եւ յաջողած կազմակերպել իր առօրեան, ժամերն ու վայրկեանները, իրեն վստահուած աշխատանքներն ու հանդիպումները, ժամադրութիւններն ու գործերը, այսպէս, առանց ծրագրումի, ամէն ինչ կիսաւարտ ձգած մեկնեցաւ:

Այս մեկնումը իր գրպանի փոքր թուղթին վրայ չէր արձանագրած վստահաբար:

Բայց յանկարծ գնաց՝ իր շուրջ ձգելով անմխիթար հարազատներու, հազարաւոր ընկերներու եւ եղբայրներու հեկեկանքը, ու միաժամանակ զինք ճանչցած ըլլալու, իր մտերմութիւնը վայելած ըլլալու, իր թելադրանքն ու ցուցմունքը լած ըլլալու, ամէն առաւօտ իր ժպիտով բարեւ ստացած ըլլալու, մկրտութեան, պսակի կամ տարեդարձի, անուանակոչութեան կամ շնորհաւորական եւ կամ այլապէս մխիթարանքի խօսքի մը արժանացած ըլլալու յիշատակը ապրողի, հազարաւոր բարեկամներու եւ ընկերներու բազմութիւն մը:

Շարժում էր Գառնիկ Մկրտիչեան բառին հոլթեանական



իմաստով: Համակ աշխատանք, համակ նուիրում, հաւաքականը անձնականին գերադասող ու սեփականէն վնասող, ինքնագոհողութեան լաւագոյն ու հագուազիւտ տիպարը մեր կեանքի իրականութեան մէջ:

Հ.Յ.Դ. Պատանեկան Միութեան մինչեւ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անդամ, Հ.Յ.Դ. Ընդհանուր Ժողովներու մասնակից եւ նախագահ:

Սկստութեան մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ բազմավաստակ ատենապետ:

Նախակրթական դպրոցի հոգաբարձութեան Լիբանանի Թեմի Ազգային Վարչութիւն կամ Ազգային երեսփոխանական ժողովի ատենապետ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովի նախագահ:

Պատերազմի օրերուն Պուրճ Համուտի ինքնապաշտպանութեան մասնակցութեան եւ ժողովուրդին օժանդակութեան մինչեւ Լիբանանահայութեան Վերականգնումի Մարմինի նախագահ:

Պուրճ Համուտի հոգեհարազատ հայրենակիցներու հարցերը լսել է լուծումներ գտնելէ մինչեւ Պուրճ Համուտի քաղաքապետական խորհուրդի անդամ:

Ձանազան նպատակներու համար կազմակերպուած տեղական դրամահաւաքէ մինչեւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հոգաբարձութեան խորհուրդ:

Եւ դեռ, ամէն տեղ էր ան, հոն, ուր կար շարժում, ձեռնարկ, պատարագ, հաւաք, ամսվերջի հանդէս, ճաշկերոյթ, բանակում, թատրոն, երգահանդէս, պարի ելոյթ, նուագահանդէս, գիրքի շնորհահանդէս թէ արուեստի ցուցահանդէս, յիշատակի երեկոյ թէ յոբելեանական, թաղային թէ ընդհանրական ձեռնարկներ:

Կար ժամանակ, երբ կ'ըսէինք՝ Գառնիկը այցելութեամբ Լիբանան կը գտնուի: Ու արտասահմանէն վերադարձին, փայլատակող աչքերով կը պատմէր, թէ աշխարհի ո՞ր հեռաւոր երկրի հեռաւոր քաղաքի մը մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ հիմնած էր՝ Ջաւախքէն Ստեփանակերտ, Մոսկուա, մինչեւ Աւստրալիա, Եւրոպա, Միջին Արեւելք, Իրան թէ Հարաւային Ամերիկա:

Երբ մահուան գոյժը ստացայ, առաջին տողը, որ մտքիս դուռը թակեց, երգին աղուոր նախադասութիւնն էր. «Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն»: Եւ այս բառերը մինչեւ սա վայրկեանը չեմ կրնար մտահան ընել:



Հ.Յ.Դ. 33-րդ Ընդհանուր ժողովի կազմ, Արցախ, 2019:

## ՄԻՇՏ ՊԻՏԻ ՅԻՇԵՆՔ ՔԵՉ, ՊԻՏԻ ՄՆԱՍ ՄԵՐ ՄՕՏ, ՄԵՉԻ ՀԵՏ ԱՄԷՆ ՕՐ

**(Հ.Յ.Դ. ԼԻՔԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝  
ԵՐԵՍՓՈՒՄԱՆ ՅԱԿՈՔ ԲԱԳՐԱՏՈՒՆԻԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՕՍՔԸ,  
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ԵՂՔ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)**

Իր բազմաբեղուն, բազմոլորտ աշխատանքը ինք կատարեց բացառիկ բժախնդրութեամբ, կազմակերպուածութեամբ, նուիրուածութեամբ, տաղնապով, կրելով երբեմն վիրաւորանք, երբեմն հանդուրժելով անարդարութիւն եւ խժեժանք, բամբասանք, նոյնիսկ՝ ապերախտ վերաբերում:

Բայց տեւաբար մնաց բարի հոգիով, լաւատես, ներողամիտ ժպիտով, դէպի վաղւան նայող, հպարտութեամբ լեցուն սիրտ մը, որ բաբախեց հայութեամբ, Հ.Մ.Ը.Մ-ով ու Դաշնակցութեամբ:

Մենք առաւելաբար կորսնցուցինք մարդ Գառնիկը եւ ընկեր Գառնիկը:

Մարդու սովի, ընկերականութեան նահանջի, հայրենիքի վտանգուածութեան այս օրերուն, սիրելի Գառնիկ, դուն պիտի յիշուի իբրեւ գլխազիր ընկեր, առաքինի ընկերը մարդուն, դաշնակցական մեր սիրելի ընկերը:

Այլեւս պիտի չհանդիպինք քեզի Պուրճ Համուտի մէջ թէ այլուր, պիտի չայցելես «Մարդարապատ» ակումբ, Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոններ, «Շաղգոյեան» կեդրոն, Ազգային Առաջնորդարան թէ Կաթողիկոսարան: Քեզ պիտի չունենանք մեր ժողովներուն մէջ ու պիտի չլսենք չափաւոր, բայց խիստ, սիրով արտայայտուած տեղին քննադատութիւններդ, պիտի չլսենք կիրքերը հանդարտեցնող քու յորդորներդ ու միաժամանակ ակնաստես պիտի չըլլանք կարգ ու կանոնադիրը, գաղափարական ուղղափառ գիծը անշեղօրէն յարգելու կրթող կեցածքներդ:

Բայց վստահ եղի՛ր, պիտի յիշենք քեզ միշտ, պիտի մնաս մեր մօտ, մեզի հետ ամէն օր:



Հ.Յ.Դ. Բիւրոյին, Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին եւ Դաշնակցութեան մեր բոլոր ընկերներուն անունով կը խոնարհիմ դազադիզ առջեւ եւ կը փոխանցեմ բոլորիս ցաւակցութիւնները գործի բերմամբ իրենց մէջ յաճախ հեռու մնացած տիկնոջդ՝ Մարալին, զաւակներդ՝ Բիւզանդին եւ Նժդեհին, եղբորդ՝ Յարութին եւ քրոջդ՝ Անիին ու ընտանեկան բոլոր պարագաներդ:

Բայց նախքան մեկնումդ, արտօնէ Գառնիկ, որ մեղադրեմ քեզի այս ըրածիդ համար: Ներեցէ՛ք սիրելիներ, անձնական է այս յիշատակը:

Պայմանաւորուած էինք, որ դուն պիտի խօսիս իմ դամբանականս: Եւ դուն կ'ըսէիր,

կատակով՝ անհոգ եղիր:

Տակաւին անցեալ Չորեքշաբթի երեկոյ, 30 Դեկտեմբեր 2020-ին, երբ աւարտեցինք «Միշտ միասին կառուցենք մեր ապագան» թեմայով առցանց տարեփակի ձեռնարկը, ուզեցինք միասնաբար հաւաքական նկար մը ունենալ: Տղուդ՝ Նրժդեհին ըսի. «Պապայիդ հետ առանձին նկար մը կ'ուզեմ, թեբեւս վերջինը ըլլայ»: Իսկ դուն հարց տուիր. «Արդէն պիտի երթա՞ս»: Ըսի. «Դամբանականս գրէ՛»:

Չէ՛ Գառնիկ, այս անգամ կարգը չյարգեցիր: Իրաւունք չունէիր:

Ամէնէն դժուար օրերուն մեկնեցար:

Կորուստդ երկար պիտի սգանք:

Գնա՛, հանգիստ հող մտի՛ր, հողը թեթեւ գայ վրադ:



**Վ. Արագեան  
ՊԵՅՐՈՒԹ**

**Ա**յս անգամ, առաջին անգամ, երկար սպասեցինք քեզի եղբայր Գառնիկ: Դուք որ սովորութիւն չունէիք ուշանալու կամ թերանալու, չեկա՛ր: Նոյնիսկ չհեռաձայնեցիր, թէ պիտի ուշանաս: Չէ՞ որ ժամադրուած էինք տեսնուելու եւ, ինչպէս միշտ, ազգին ու հայրենիքին հոգերուն շուրջ զրուցելու:

Այս անգամ, առաջին անգամ, եղբայր Գառնիկ, մենք չլսեցինք համով-հոտով կատակներդ, հոսկէ-հոնկէ հաւաքած նորութիւններդ:

Չլսեցինք Հայաստանի ու Արցախի մասին մտահոգութիւններդ: Չբաժնեկցեցանք սփիւռքեան այս ու այն գաղութէն ստացած լուրերդ: Չէ՞ որ ամէն տեղ ծանօթ մը ունէիր: Ուր որ երթայիր անպայման ընկեր մը կը գտնէիր: Կը զարմանայիր, երբ հարց տայինք, որ ի՞նչպէս կրնաս ընկերներու այսքան թիւ ու անուն ունենալ: Գաղտնիքը պարզ է, պէտք է ժամանակ տրամադրել, միշտ կապ պահել, կը պատասխանէիր: Լաւ ընկեր էիր, բոլոր ժամանակներու ընկեր, հարազատ ընկեր:

Այս անգամ, եղբայր Գառնիկ, քաղաքականութիւն չխօսե-



**Կիպրոս, Մարտ 2013:**

ցանք միասին, ո՛չ ալ հինէն ու նորէն նիւթեր քննարկեցինք: Չյիշեցիր սիրելի Հալէպդ եւ հօրդ՝ Բիւզանդին գաղափարի ընկերները՝ Առաքել Թերզեանը եւ Գէորգ Առաքելեանը: Չպատմեցիր «Լանդրը Եագուպ»ին եւ «Բարթը Միաք»ին պարզ ու խորիմաստ պատմութիւնները: Չյիշեցիր «Սարգարապատ»ի օրերդ եւ Աբոյին, «Կարպուշ»ին, «Կայծակ»ին, «Շէրիֆ»ին, Խաչիկներուն՝ Արապեանին եւ Պասմաճեանին կապուած յուշերդ:

## **ԱՊՐՈՒԱԾ, ԲԱՅՑ ԵՐԲԵՔ ՉԳՐՈՒԱԾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ**

Գիտե՞ս, եղբայր Գառնիկ, դեռ պատմելիք ունէիր մեզի: Դեռ փոխանցելիք ունէիր Համազգայինի «Սիմոն Վրացեան» մասնաճիւղի օրերէդ, Զոհրապ Եագուպեանին հետ մանկական թատրոնի ստեղծման առաջին փորձերէդ: Իսկ ի՞նչպէս մոռնայիր Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտի մասին խօսելու, երկար տարիներու գործակիցներդ՝ Վարուժան Գէորգեանը եւ Հայկ Ազգարեանը յիշելու, Երուանդ Տէմիրճեանին կապուած սրամտութիւններդ ներկայացնելու, Յովհաննէս Տէր Յարութիւնեանին մասին վկայութիւնդ փոխանցելու: Գործած էիր քանի մը սերունդի հետ եւ յուշեր ու տպաւորութիւններ ունէիր բոլորէն:

Այս անգամ, առաջին անգամ, մենք չհանդիպեցանք իրարու, եղբայր Գառնիկ, եւ չխօսեցանք հայ դպրոցի ցաւերուն մասին: Դուք, որ տարիներ Ազգ. Քառասնից Մանկանց վարժարանի հոգաբարձու եղած էիր, Ազգ. Լեւոն եւ Սոփիա Յակոբեան քոլէճի խնամակալութեան ատենապետութիւնը վարած էիր, յատուկ գուրգուրանք եւ հոգածութիւն ունէիր Պուրճ Համուտի դպրոցներուն հանդէպ, առհասարակ: Կը տազնապէիր անոնց հետ, կ'ուրախանայիր անոնց յաջողութիւններով: Վերամ՞ուտ էր, ձեռքիդ թղթիկ մը կ'այցեկէիր շրջանի դպրոցները մէկ առ մէկ եւ տնօրէններուն կը փոխանցէիր աշակերտներու անուններ, որոնց ծնողները գիրքերդ դըպրոց արձանագրելու դժուարութիւն ունենալով, խնդրակատար կ'ըլլային քեզի: Իսկ դուք, ոեւէ մէկը չմերժելու բարեսրը-



տուլթեամբը, կ'ընդառաջէիր բոլորին. կը միջնորդէիր անօրէնի մը մօտ, կը բարեխօսէիր այլ տնօրէնի մը, որպէսզի մարդ չզրկուի հայեցի կրթութեան բարիքէն: Անշուշտ, Ազգ-Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճը մասնաւոր տեղ ունէր սրբ-տիրդ մէջ, այդ պատճառով ալ, խնամակալութենէն դադրելէդ տարիներ ետք, սիրով ընդունեցիր քոլէճին յիսնամեակի յոբելէնական մարմինն նախագահութիւնը եւ ինչպիսի՛ խանդավառութեամբ գլխաւորեցիր բոլոր տօնակատարութիւնները:

Երկար սպասեցինք քեզի, եղբայր Գառնիկ, խորհրդակցելու համար Հ.Մ.Ը.Մ.ի ներկային եւ ապագային մասին: 100-ամեակէն ետք տակաւին ծրագիրներ ունէիր մտքիդ մէջ. միութեան նոր թանգարանի ստեղծում, Հ.Մ.Ը.Մ.ի «Աւագներու մարմին»-ի յառաջացում (Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներով, բարերարներով ու բարեկամներով), Արցախի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնի կառուցում, Արեւելեան Եւրոպայի մէջ մասնաճիւղերու հիմնադրում: Կը յիշե՞ս, «Անգամ մը Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցողը ա՛լ չի կրնար բաժնուիլ անկէ», կը կրկնէիր յաճախ: Իսկ ո՞ր ուժը կրնար քեզի բաժնել Հ.Մ.Ը.Մ.էն: Կա՞ր շրջան մը, մասնաճիւղ մը, ակումբ մը, զոր այցելած չըլլայիր, կրտսերագոյն մոկիլէն երիցագոյն պատասխանատուին հետ տեսնուած ու նկարուած չըլլայիր: Մեծերը կը գնահատէին քեզ, երիտասարդները՝ կը սիրէին, քու մէջդ տեսնելով հաւատաւոր միութենականի եւ անխոնջ ղեկավարի օրինակը: Իսկ դուն, իւրայատուկ հմայքովդ գիտէիր ամէնուն սրտին խօսիլ, սրտովդ խօսիլ: Անկեղծ էիր, սրտամօտ եւ մարդամօտ:

Ժողովական կեանքի մարզն էիր, եղբայր Գառնիկ: Իւրաքանչիւր ժողով քեզի համար առիթ էր անպայման կազմակերպական քանի մը գիտելիք, քանի մը անգիր օրէնք, ժողովավարական կարգ ու կանոն սորվեցնելու նորերուն: Իբրեւ աւանդապահ եւ ժառանգորդը Վարդգէս Տէր Կարապետեաններու, տղթ. Միսաք Արզումանեաններու եւ Բիւ-

զանդ Թորիկեաններու կտակին, կը հաւատայիր, որ լաւ միութենական ըլլալու համար լաւ ժողովական պէտք է ըլլալ: Պատահական չէ, որ երբ Կեդրոնական Վարչութեան կազմակերպական յանձնախումբին պատասխանատուութիւնը ստանձնեցիր, առաջին գործը եղաւ Պետրոս Շեմմեսեանին եւ Արա Յակոբեանին հետ պատրաստել «Հ.Մ.Ը.Մ.ի դաստիարակչական ուղեցոյց»ը, միութեան շարքերը դիմող նորեկներուն ժողով եւ ժողովականութիւն սորվեցնելու համար: Իսկ կարելի՞ է մոռնալ 2009-ի համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն, բազմահարիւր մարզիկներուն եւ մարզական պատասխանատուներուն ներկայացուցած դասախօսութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական կեանքին եւ վարչամեքենային մասին, յատուկ բաժին մը յատկացնելով Հ.Մ.Ը.Մ.ի ժողովներուն եւ ժողովականութեան արժէքին:

Հ.Մ.Ը.Մ.ը «վերջին սէրդ» էր, եղբայր Գառնիկ, «առաջինը»՝ Հ.Յ.Դաշնակցութիւնն էր, որուն կապուած էիր ամբողջ էութեամբդ: Դաշնակցական էիր հաւատքով ու համոզումով: Հասակ առած էիր հաւատաւոր սերունդի մը շուքին տակ, քաղաքացիական պատերազմի ամբողջ տեւողութեան գործակցելով կուսակցութեան լիբանանեան կառույցի հեղինակաւոր բոլոր դէմքերուն հետ: Ճանչցած էիր դժուար պահեր, ապրած էիր տեսակաւոր փորձութիւններ, բայց միշտ յաջողած էիր մնալ անդրդուելի՛ շնորհիւ ամուր կամքիդ եւ հանդարտ խառնուածքիդ:



Ծառատնկում, Ծիծեռնակաբերդ, 2018:

Դաշնակցականութիւնը քեզի համար, եղբայր Գառնիկ, ամբողջանուէր ծառայութիւն էր մեր կեանքի բաղադրիչ բոլոր տարրերուն՝ կուսակցութեան, ուղեկից միութիւններուն, եկեղեցիին, դպրոցին եւ, անշուշտ, այս բոլորին գոյութեան իմաստը հանդիսացող մեր ժողովուրդին: Այս ըմբռնումով ալ դուն եղար ամէն տեղ, ամէնուն համար, ուր որ ծառայութիւնը քեզ կանչեց, ուր որ ժողովուրդը քեզ փնտռեց: Գործեցիր՝ առանց գործերու



մէջ խտրութիւնն դնելու, իսկական հանրային գործիչի կերպարով, յարգուած ու փնտուռուած բոլորէն, նոյնիսկ... ոչ-գաղափարակիցներէ եւ ոչ-հայերէ, որոնք պատիւ կը զգային յարաբերելու քեզի նման անձնաւորութեան մը հետ, որ օժտուած էր բոլորին հետ «լեզու գտնելու» բարեմասնութեամբ եւ ամէնէն սուր հարցերն անգամ «կլորցնելու» վարպետութեամբ:

Եղբայր Գառնիկ, համարումդ մեծ էր հայ մարդու նկատմամբ: Կը յարգէիր բոլորը՝ համեստ թաղեցիէն մինչեւ պետական նախարարը: Կը հաւատայիր, որ նիւթը չէ հարստութեան մեր գլխաւոր աղբիւրը, այլ՝ մա՛րդն է, նուիրումի իր ոգիով ու եռանդով: Գործի՛ մարդ կը փնտուէիր շուրջդ, թէ եւ մօտը ունէիր բաւական ցանկեր մարդոց անուններու, որոնք կրնային աշխատանքի հրաւիրուիլ այս կամ այն մարզին մէջ: «Մարդու լուծարարութիւնը դարձած ենք այլեւս», կը կատակէիր մտերմութեան մէջ, անմիջապէս դժգոհելով որ ցանկերուդ անունները հետզհետէ կը պակսին, ի նշան՝ ծառայութեան դաշտին մէջ օրէ օր յառաջացող ամայութեան, մարդու եւ... ոգիի սովի:

Այս անգամ, առաջին անգամ, եղբայր Գառնիկ, մենք չխօսեցանք Պուերձ համուտի մասին, անոր բարգաւաճման եւ բարեգարգման աշխատանքներուն մասին, որոնց խանդավառ մասնակիցն էիր տասնամեակներէ ի վեր, իբրեւ «Մարդարա-

պատ» կոմիտէի բարեգարգման յանձնախումբի պատասխանատու, իբրեւ կոմիտէի ներկայացուցիչ, Պուերձ Համուտի առեւտրականներու միութեան ջերմ պաշտպան եւ, վերջապէս, քաղաքապետական խորհուրդի բազմամեայ անդամ: Աւանդական պուերձ համուտցի էիր, քաջածանօթ հայաւանի իւրապատու կեանքին ու միջնորդութիւն, որուն ստեղծման մէջ բաժին մըն ալ դո՛ւն ունէիր, այդ կեանքին մէջ քու տիրական ներկայութեամբ: Ի գուր չէ, որ բացակայութեանդ, «Առանց PM Գառնիկի ի՛նչ Պուերձ Համուտ», վկայեց նախկին պուերձ համուտցի մը:

Այս անգամ, առաջին անգամ, յուսախաբ ըրիր մեզ եղբայր Գառնիկ, որովհետեւ տեղի տուիր անողոք համաճարակին կեանքի ու մահուան կուրծին դիմաց, անժամանակ հրաժեշտ տուիր մեզի եւ նախընտրեցիր ապրիլ յաւերժութեան մէջ, երբ մենք դեռ շա՛տ խօսելիք ունէինք...: «Ես կը պատմեմ, դո՛ւն կը գրես», ըսած էիր մեր վերջին հանդիպումներէն մէկուն, երբ քանիբորորդ անգամ ըլլալով յիշեցուցած էի յուշերդ անպայման թողութիւն յանձնելու անհրաժեշտութիւնը: Օրին խնդացինք, առանց մեր միտքէն անցընելու, որ կեանքդ պիտի ըլլար ապրուած, բայց երբեք չգրուած հարուստ պատմութիւն մը:

Հիմա դժուար է հաշտուիլ, որ ընդմիջտ շիջած ես, եղբայր Գառնիկ: Թէ եւ մարմինդ յանձնած ենք օտար հողին, բայց շունչդ կը մնայ մեր մէջ: Քեզ կը յիշենք ամէն անգամ որ ընկերներով կը հանդիպինք: Քեզ կը յիշենք ամէն անգամ որ Հ.Մ.Ը.Մ.ի մասին կը խօսինք ու կը մտածենք: Քեզ կը փնտուենք ամէն անգամ որ Դաշնակցութեան ժողով ու գործ կը կատարենք:

Յուզումով ու յարգանքով կը խոնարհինք վաստակիդ եւ ծանօթ բանաստեղծին բառերով, այս անգամ, առաջին անգամ, քեզի կ'ըսենք՝

**«Օտար հողին մէջ կոխու էր կեանքդ  
Երէկ, ընդդէմ բախարին աշխարհին:  
Հայ ես ընկեր, հայու բախար,  
կոռու՛ նսեւ մահէդ վերջ»:**



# ԿՐՏՍԵՐ «ՄԵԾ ԵՂԲՕՐԱ» ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գրիգորիս Պողարեան  
ՊԵՅՐՈՒԹ



**Ս**փիւռքի տարածքին, հայակերտման եւ հայապահպանման դժուարին գործը միշտ ալ ընթացած է եկեղեցի-դպրոց-միութենական կազմակերպութիւններ (անոնք ըլլան գաղափարական, մշակութային, մարզական, բարեսիրական թէ՛ այլ) համագործակցութեամբ, իւրաքանչիւրը ստանձնելով իրեն յատուկ բաժինը, ըստ տուեալ միջավայրի ընձեռած պայմաններուն:

Ճիշդ է, որ նուիրեալ կղերականներու եւ դաստիարակներու հոյլ մը իր անփառելի ներդրումը ունեցած է բոլոր ժամանակներուն ալ, բայց նոյնքան եւ թերեւս աւելի ճիշդ է, որ հայապահպանման աշխատանքը գրեթէ անկարելի պիտի ըլլար կատարել՝ առանց անհատ ազգայիններու կամաւոր մասնակցութեան: Այս իմաստով հազուադէպ են անոնք, որոնք յաջողած են իրենց բացառիկ նկարագիրին եւ անձնուրաց նուիրումին շնորհիւ անջնջելի դրոշմ ձգել աշխատանքի յիշեալ բոլոր մարզերէն ներս: Այդ հազուադէպներու շարքին իր իւրապատուկ տեղը ունէր եղբայր Գառնիկ Մկրտիչեանը, որուն անունն ու վաստակը կարելի չէ չյիշել լիբանանահայութեան վերջին քառասնամեայ պատմութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի մօտակայ անցեալի թէ՛ ժամանակակից պատմութեան մէջ:

Եղբայր Գառնիկի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետութեան տարիներուն մասին կարելի է անդրադարձ կատարել ինքնաշարժներու աշխարհէն փոխառութեամբ մը. 4X4 բարձրորակ եւ տոկուն ինքնաշարժի մը նման եղբայր Գառնիկ բառացիօրէն կը սուրբար հոն, ուր իր ներկայութեան, աշխատանքային ցուցմունքներուն եւ կազմակերպական կարողութիւններուն կարիքը կը զգացուէր, կտրելով երկար, յաճախ փոշեպատ, երբեմն ալ ցեխածածկ կամ ձիւնածածկ ճամբաներ: Ապա, 4X4-ը մէկ կողմ դրած, եղբայր Գառնիկ կը բարձրանար օդանաւ եւ կը ձեռնարկէր իր անվերջ թուացող ճամբորդութիւններուն (այնքան մը, որ յաճախ կ'ըսէինք՝ «Բարի՛ եկած ես, ե՛րբ կը մեկնիրս»...): Եղբայր Գառնիկի ճամբորդութիւններուն շօշափելի արդիւնքները ի յայտ կու գային ժամանակի ընթացքին, բծախնդրօրէն կազմակերպւած ձեռնարկներու, դժուարալոյծ հարցերու լուծման կամ նորաստեղծ մասնաճիւղերու ստեղծման ժամանակ:

Տարիներու վրայ երկարած անդուլ աշխատանքը տուած էր իր արդիւնքը, եւ եղբայր Գառնիկը կրնար իրաւացիօրէն հպարտ զգալ իր կատարած նուաճումներուն ի տես, բայց այս պարագային ան «դաւաճանած» պիտի ըլլար ինքն իրեն՝ ա՛յն Գառնիկին, որ չէր բաւարարուեր այսօրուան նշանակելի նը-

ւաճումով, այլ կը ձգտէր յաջողութեան յաջորդ, իմա՝ իրերայաջորդ ծրագիրներու: Չէ՞ որ աշխատանքի լայնատարած դաշտը օրէ օր կ'ընդարձակուէր հայրենիքէն դուրս ծիւղ առնող նորանոր օճախներով, որոնք կարիքը ունէին կազմակերպուելու եւ, հետեւաբար, միութիւնը կը դնէին նոր մարտահրաւէրներու դէմ յանդիման: Եղբայր Գառնիկին համար հարց չէր, որ միութեան վարչական տնօրինումներու ջահը փոխանցւած է այսօր գործող Կեդրոնական Վարչութեան, որուն մաս չէր կազմեր ինք, որովհետեւ իրեն համար կարեւորը այն էր, որ իր ներդրումը պիտի փոխանցուեր հո՛ն, ուր կարելի էր լաւագոյնս օգտագործել:

Կարելի է երկար վկայել եղբայր Գառնիկին մասին, առանց համապարփակ ձեւով կարենալ ներկայացնելու անոր վաստակը Հ.Մ.Ը.Մ.ի մէջ թէ՛ այլուր:

Կը բաւէ յիշել եղբայր Գառնիկի «Տասնաբանեայ»ին հիմնական կէտերը: Այն, որ իւրաքանչիւր հայ պարտաւոր է իր ներդրումը ունենալու, եւ ամէն ներդրում, մեծ թէ՛ փոքր, հոս թէ՛ հոն, անկախ յարանուանական, կուսակցական, միութենական թէ՛ այլ նկատառումներէ, պէտք է ընդունիլ շնորհակալութեամբ եւ քաջալերել անհատը, որպէսզի շարունակէ տալ եւ աւելի՛ տալ: Չէ՞ որ մենք մէկ ազգի, մէկ հայրենիքի՝ ազատ, անկախ ու միացեալ Հայաստանի գաղափարին հաւատացողներն ու նուիրեալներն ենք, «Կամաւոր բանակ»ի ճամբով:

Յ.Գ. Եղբայր Գառնիկին համար հաճելի էր զուարթախոհութիւնը, զոր «տալու եւ ստանալու» մէջ հարց չունէր ան: Յիշենք պատահար մը, որ տեղի ունեցաւ 2019-ի ամբարն, Պատգամաւորական վերջին Ընդհանուր Ժողովի աւարտէն ետք:

Եղբայր Գառնիկ Մկրտիչեանը, եղբայր Վաչէ Նաճարեանն ու մենք միասնաբար կը զրուցէինք իրարու հետ, երբ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ստացանք Պէյրութէն: Ընկալուչէն մեր խօսակիցը հարց տուաւ, թէ որո՞նք կային հետս: Պատասխանեցինք. հոս երեքո՞վ ենք, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նոր ատենապետը, հինը եւ «անթիքան» (պարզապէս ժամանակագրական եւ տարիքային շարքով): Այս պատահարին կ'անդրադառնանք, որովհետեւ «ըստ կարգի»ներու մէջ բծախնդիր եղբայր Գառնիկ խախտում մը կատարեց շրջանցելով անդարձ մեկնումի կարգը, որուն ի պատասխան այսօր իրեն կ'ըսենք... Յետեւութիւն:



**Կարալիս Գապասագալեան  
ՊԵՅՐՈՒԹ**

Միրելի՛ եղբայր Գառնիկ,  
Շատ հաւանաբար խորագիրը քեզ գար-  
մացնէ եւ ըսես. «Քիչ մը բարձր այլքի վրայ է»:  
Ո՛չ, սիրելի եւ հարազատ եղբայր Գառնիկ, պի-  
տի բացատրեմ, թէ ինչո՞ւ գրիչս ընտրեց այս տիտղոս-  
սը:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան մեր պաշտօնավա-  
րութեան տարիներուն մեծապէս կը հրճուէիր, երբ շրջաննե-  
րէն յատուկ դիմումագիրով կը ներկայացուէր թեկնածուի  
մը «Արժանեաց» շքանշանի տուչութեան առաջարկը. դէմքիդ  
բացառիկ պայծառու-  
թեանէն մեզի համար  
ակնյայտ կը դառնար,  
որ մենք եւս մեր հա-  
մամտութիւնը պէտք է  
չնորհէինք յիշեալ թեկ-  
նածուին, որովհետեւ  
չատ յաճախ կ'ըսէիր,  
որ աւելի ճիշդ է անձը  
գնահատել եւ արժեւո-  
րել իր ողջութեան՝  
անոր վաստակին հա-  
մար, իսկ շքանշանի  
տուչութեան պահուն,



երբ կը դիտէինք քեզ, ուրխտութիւնդ ան-  
սահման կը դառնար, կարծես թէ դուն ըլլա-  
յիր պարգեւատրուողը: Սակայն, դուն մեզ  
գրկեցիր հոգեկան այդ գերազոյն ապրում-  
ներէն, երբ ծափողջոյններու տարափին տակ՝  
կարմրած ու քրտնած, բեմ պիտի բարձրանայիր  
ստանալու արդար քրտինքիդ եւ տքնաջան ու  
անսպառ վաստակիդ ոսկեգօծ մետալը, որուն արժա-  
նի էիր ողջ էութեամբդ, պիտի պարգեւատրուէիր իբրեւ «Ար-  
ժանաւորը արժանեացներուն»:

Կանխահաս էր բաժանումդ եւ մենք տակաւին չենք համոզ-  
ւած կորուստիդ հետ, որուն համար չենք յաջողիլ գիրար  
մխիթարել...: Կ'ըսեն «Անփոխարինելի մարդ չկայ...»: Խօսքի



Արցախի նախկին նախագահ  
Բակո Սահակեանի հետ:



Յունաստանի նախկին նախագահ  
Կարոլոս Պապուլիասի հետ:





Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի հետ:



Լիբանանի նախկին վարչապետ Սաատ Հարիրիի հետ:

սահմաններուն մէջ շատ դիւրին է արտասանել ատիկա: Անձնապէս չէի համոզուած այդ գաղափարին, որովհետեւ ես ինծի կ'ըսէի, որ ինքնախաբէութիւն է, հիմա բացակայութեամբդ կու գամ համեստաբար հաստատելու, որ չեմ սխալած:

Սիրելի՛ եւ հարազատ եղբայրս, Առանց վարանելու պիտի ըսեմ, որ աստուածատուր շնորհքիդ (քարիզմա) պատճառով անզգալաբար ունէիր այն մոգական կարողութիւնը, որուն շնորհիւ շահած էիր վստահութիւնը մարդոց, որոնք կը ներկայանային քեզի՝ իրենց դժուարութիւններուն խորհուրդ եւ օգնութիւն խնդրելու, նոյնիսկ իրենց ուրախութիւնը քեզի հետ կիսելու: Մեծագոյն

# ԱՐԺԱՆԱՒՈՐԸ ԱՐԺԱՆԵԱՑՆԵՐՈՒՆ

Սիրելի՛ Գառնիկ,

Մենք առաջին անգամ իրարու ծանօթացանք 1991-ին, Լիբանանի Շրջանային Ներկայացուցչական Ժողովին, ուր մեզի վստահուեցաւ ժողովի դիւանին պատասխանատուութիւնը: Մեր ծանօթացումը տեւեց հազիւ երեք վայրկեան. ըսեմ, որ կախարդական հմայքիդ շնորհիւ, շուտով դարձանք մտերիմներ եւ հարազատներ՝ անքակտելի հանգոյցով մը, որ մնաց մինչեւ անսպասելին... Պարագայաբար տարակարծիք կ'ըլլայինք որոշ հարցերու շուրջ, ոմանք կը զարմանային, թէ ի՞նչ պէս կրնայ ըլլալ, բայց չէին հասկնար, որ վէճերուն աւարտը յաղթող ու յաղթուող պիտի չըլլար, յաղթականը միշտ պիտի ըլլար անպարտելի Հ.Մ.Ը.Մ.ը:

ուրախութիւնդ կ'ըլլար, երբ անոնց դժուարութիւններուն լուծում եւ ցաւերուն դարման ապահովէիր: Երբեմն քեզի հարց կու տայի՝ ըսելով, անձիդ համար ժամանակ կը գտնե՞ս... Հիմա հարց կու տամ՝ այս հարցերուն համար ժառանգորդ ականջ մը ունի՞ս, որպէսզի քովը երթանք:

Սիրելի՛ Գառնիկ,

Շատեր շատ բաներ ըսին ու վկայեցին քու մասիդ, թերեւս նոյն բաները ըսինք ու գրեցինք, սակայն ի՞նչ ալ ըսենք ու գրենք, վաստակդ գերակշիռ է:

Վերջին Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, երբ ակամայ պիտի բացակայէի ժողովէն, պարտաւոր էի բացատրազիր մը յղել: Այս առիթով, օրին, իմ պրիսմակովս գնահատելով Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութիւնը, որ առաւել կեդրոնացած էր Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 100-ամեակին վրայ, նամակս եզրափակեցի ըսելով. «Խօսքերը ծաղիկներ են, որոնք կը թօշնին, մինչ գործը պտուղ է, զոր ամէնքս կը վայելենք...»: Լաւ գիտէիր ի՞նչ ըսել կ'ուզէի, եւ յուզուեցար...

Հիմա կու գամ քեզի վստահեցնելու, որ վաստակդ պիտի մնայ անթառամ, պիտի ապրիս մեր մէջ եւ գալիք նորահաս սերունդներուն մէջ, որովհետեւ ցանած սերմերդ այնքան բազմաձաւալ են, որ պիտի մնան միշտ բերրի:

Հողը թեթեւ գայ վրադ:



Աւստրալիոյ Նիւ Սաութ Ուելզ նահանգի վարչապետ Կլատիս Պէրեճիքլեանի հետ:



## ԵՂԲ. ԳԱՌՆԻԿԻՆ ՅԻՇԱՏԱԿԸ՝ ԱՊԱԳԱՅ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ ՄՂԻՉ ՈՒԺ

### Աբրահամ Ահարոնեան ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍ

**Ե**րկար տարիներ կիրքով եւ անձնուրացութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարութիւնը գլխաւորած եղբ. Գառնիկ Մկրտիչեանի վաղաժամ եւ ցաւալի կորուստը, անկասկած, մեր կազմակերպութեան կառուցին մէջ կը յառաջացունէ մեծ պարապութիւն: Եղբոր կորուստը անչափելի է: Պիտի գգացուի, անշուշտ, անոր ֆիզիքական բացակայութիւնը, սակայն երբեք պիտի չմոռնանք անոր ժուժկալութիւնը, ուսմունքները, հեղինակութիւնը, արժէքները, օրինակելի էութիւնը:

Դժուար է գտնել յարմար բառերը եղբ. Գառնիկ Մկրտիչեանի անձնաւորութեան եւ օրինակելի էութեան մասին պատկեր մը փոխանցելու համար: Արտայայտութիւններու եւ փոխարաբերութիւններու հեղեղ մը կը դառնայ մտքիս մէջ: Վերջապէս կարողացայ մտածումներս կարգի դնել մարդ արարածի նիւթական եւ հոգեկան իրականութեամբ: Զիրար գնահատող անձերու միջեւ շատ անգամ օգտագործուած ժողովրդական խօսք մը կ'ըսէ. «Մինչեւ որ մահը մեզ բաժնէ»: Հարց կու տամ. արդեօք մահը կը բաժնէ՞ անձերը: Ո՛չ, մոռացութիւնն է որ կը բաժնէ գանոնք: Ի վերջոյ մահը կեանքին մաս կը կազմէ կամ անոր վերջաւորութիւնն է: Կեանքը ճամբորդութիւն մըն է, որուն կը ձեռնարկենք ամէն օր եւ օր մը անխուսափելիօրէն կը վերջանայ ան: Ու երբ վերջը կը հասնի, ընտանեկան, կազմակերպական, համայնքային միջավայրը կը կրէ սիրուած անձին նիւթական կորուստը: Այս իրողութեան դիմաց՝ կը փնտռենք ցաւը մեղմացնող սփոփիչ արտայայտութիւններ:



Պուէնոս Այրես, Զ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի շրջանի Կեդր. Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներու հետ:

Հոս է որ կ'ուզեմ պահ մը կանգ առնել եւ յիշատակներուս մէջ խորանալ: Եղբ. Գառնիկ Մկրտիչեանի հետ, որ այլեւս նիւթապէս մեր մէջ չի գտնուիր, կիսուած յիշատակներն ու ապրումները կը լրացնեն մեր հոգիները: Կը փափաքիմ նախապէս նշուած ճամբորդութեան գաղափարին վերադառնալ: Ծամբորդութիւն մը, որ շատերուն համար կը վերջանայ մահով եւ քիչերուն համար կը վերջանայ յաւիտենականութեամբ: Եղած են անձեր, որոնք այս աշխարհէն անցած են առանց մարդկութեան հետք մը ձգելու եւ իբրեւ լաւագոյն մրցանակ ստացած են իրենց հարազատներուն մոռացումը: Այդ անձերուն մահը վստահաբար բաժանում մը եղած է:

Սակայն, գոյութիւն ունին նաեւ անձեր, որոնք այս աշխարհէն անցան, ձգելով իրենց անջնջելի կնիքը, զոր ժամանակը երբեք պիտի չկարենայ սրբել: Այս է եղբ. Գառնիկ Մկրտիչեանի պարագան: Ան իր երկրային անցքին ընթացքին իմաս-



տուլթիւնն ու ազնուութիւնը ունեցաւ բարոյապէս եւ հոգեպէս մեզ հարստացնելու: Ընտանիքը, գաղութը, Հ.Մ.Ը.Մ.ականները երբեք պիտի չմոռնանք քեզ, եղբայր Գառնիկ: Միշտ պիտի մնաս մեր մէջ եւ, վստահաբար, առօրեայ զանազան խոչընդոտներու եւ մարտահրաւէրներու ժամանակ մենք պիտի փնտռենք քու օրինակը, գտնելով այս կեանքէն անցնելու համար պէտք եղած զօրութիւնը, «մինչեւ որ մահը մեզ միացնէ»:

Այս տողերը շարադրելը սպասածէս աւելի դժուար է, սակայն կը գրեմ յուզումով եւ գոհունակութեամբ, եւ եթէ արցունք մը թափի, ի վերջոյ մարդ արարած ենք, մի՛ մեղադրեր... Շատեր պիտի տանջուին քու բացակայութեամբը, բայց կը մխիթարուինք այն համոզումով, որ ունեցանք առիթն ու նախապատուութիւնը միասնաբար աշխատելու Հ.Մ.Ը.Մ.ի ամրապնդման եւ զարգացման ի խնդիր:

Եղբայր Գառնիկ Մկրտիչեանի մեզի ժառանգ ձգած բարոյական եւ հոգեկան հարստութիւնը չի պահուիր ապահով արկղի մը մէջ, այդ հարստութիւնը կը պահուի մեր սրտերուն խորը: Ցաւած սրտեր, որոնց համար միակ բալասանը պիտի ըլլայ իր անմոռանալի յիշատակը:

Եղբայր Գառնիկ, դուն եղար այն փարոսը, որ իր լոյսի շքեղ ճառագայթներով առաջնորդեց մեզ: Փարոս մը, որ ցոյց տուաւ ամէնէն վստահ ճամբան, կիրքով եւ անձնական կեանքէն հրաժարումով հետապնդելու համար Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական եւ ազգային նպատակները: Նպատակներ, որոնք են ու պիտի ըլլան օրինակ ապագայ սերունդներուն: Փարոս մը, որ անմար պիտի մնայ դէպի յաւերժութիւն քու մեկնումովդ: Փարոս մը, որ այսօր, աւելի քան երբեք, բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն կը տարածէ ու պիտի շարունակէ տարածել օրինակելիութեան եւ բարոյականութեան շողեր:

Երբ յանկարծ Ֆրիդրիքապէս կ'անհետանայ եղբայր Գառնիկ Մկրտիչեանի նման անձնաւորութիւն մը, մեր մտքերուն մէջ կը թռչի ծանօթ խօսքը. «Կազմակերպութեան համար անվերականգնելի կորուստ մըն է»: Եւ իրապէս, այդպէս է: Սակայն, եթէ Հ.Մ.Ը.Մ.ի հարիւրամեայ պատմութիւնը պրպրտենք, կը գտնենք հակառակը ապացուցող փաստեր:

Երբ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան գաղափարախօս Շաւարշ Քրիսեանը 1915-ին նահատակուեցաւ, 1915-1923 հայ ժողովուրդին դէմ տեղի ունեցած 20-րդ դարու առաջին Յեղապանութեան, զոհը դառնալով թուրք-օսմանեան պետութեան անհանդուրժողականութեան եւ բարբարոսութեան, հայ երի-

տասարդները միեւնոյն դրօշին տակ համախմբող կազմակերպութիւն մը հիմնելու իր երազը կիսատ մնաց: Շատեր մտածեցին, որ իր ողբերգական անհետացումով պիտի անհետանային նաեւ անոր գաղափարն ու երազները, սակայն, պատահեցաւ հակառակը: Հազիւ երեք տարի ետք, 16 Նոյեմբեր 1918-ին, Շաւարշ Քրիսեանի խումբ մը ընկերներ հիմնեցին Հ.Մ.Ը.Մ.ը: Անոնք յաղթահարեցին ողբերգութիւնը եւ կարողացան իրականացնել Քրիսեանի գաղափարախօսութիւնը եւ փրկասփայլութիւնը ներկայացնող կազմակերպութիւն մը:

Տարիներ ետք, երբ Հ.Մ.Ը.Մ.ը համաշխարհային կառույց դարձաւ, եւ երբ կը քալէր ամրապնդման ու զարգացման ճամբէն, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանի, եղբայրներ Լեւոն Պէրպէրեանի եւ Ներսէս Խիւտավերտեանի սպանութիւնները ցընցեցին կազմակերպութեան կառույցները: Հաւանաբար շատեր մտածեցին կազմակերպութեան տկարացման մասին, սակայն դարձեալ հակառակը պատահեցաւ: Հ.Մ.Ը.Մ.ի համաշխարհային կառույցը ամրապնդուեցաւ եւ շուտով վերելք ունեցաւ: 1974-ին գումարուած Առաջին Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին մասնակցող 23 մասնաճիւղերուն թիւը այսօր հասած է 111 մասնաճիւղերու, որոնք մաս կը կազմեն Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական կառույցին:

Այս իրողութիւնները կը փաստեն, որ կարգ մը անձերու անդարմանելի կորուստը հաստատ հիմք կը դառնայ կազմակերպութիւններու ստեղծման, զարգացման եւ տեսականութեան, որովհետեւ այդ անձերը տողորուած են ազգի ու հայրենիքի ծառայութեան գաղափարախօսութեամբ: Անոնք անցած են յաւերժութեան եւ անոնց հետեւորդները Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ արձանագրած են անմոռանալի էջեր: Այդ պատճառով է, որ եղբ. Գառնիկը եւ նմանները երբեք մոռացութեան պիտի չմատնուին, այլ՝ անոնց մշտական յիշատակը պիտի ըլլայ ապագայ սերունդներու մղիչ ուժը, որ պիտի նպաստէ անոնց վառած ջահին առաւել բոցկլտումին:

Վստահաբար, այսօր շատ մը Հ.Մ.Ը.Մ.ականներ կը մտածեն, որ եղբայր Գառնիկ Մկրտիչեանի վաղաժամ մահը կը ընայ ազդել կազմակերպութեան ապագային: Ընդհակառակը, անոր օրինակը պիտի ամրապնդէ կազմակերպութեան զարգացումը: Անոր արժէքները, իբրեւ մարդ եւ իբրեւ միութեան համահայկական դեկավար պիտի նախագծեն ա՛յն ճամբան, ուրկէ պիտի քալեն Հ.Մ.Ը.Մ.ի ապագայ սերունդները:



## ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԱՆՈՒՆ-ԱԶԳԱՆՈՒՆԸ ՈՍԿԷ ՏԱՌԵՐՈՎ ԿԸ ԳՐՈՒԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Հ.Մ.Ը.Մ.Ի սգակիր իմ սիրելի քույրերին ու եղբայրներին, Մկրտիչեան ընտանիքի բոլոր անդամներին, Լիբանանի հայ համայնքի իւրաքանչիւր վշտակիր անդամի,

Արցունքները խեղդում են կոկորդս, ցաւը պարուրել է հոգիս, քանզի Գառնիկի մասին պէտք է գրեմ անցեալ ժամանակով:

Անկարող եմ նկարագրել սրտիս մորմոքն ու հոգեկան ապրումներս, երբ ստացայ անսպասելի ու անհաւատալի բօթը մեր այնքան սիրելի, ազգային գործիչ Գառնիկի մահուան մասին:

Սորապէս վշտակցում եմ բոլորիս, քանզի նրա մահը մեծ կորուստ է ո՛չ միայն Մկրտիչեան ընտանիքի, հարազատների, այլեւ՝ ողջ հայ համայնքի, նրան ճանաչողների համար:

Այս ծանր ու դժնի օրերին, ողբի ու որբի Հայաստանում, վշտի, արեան ու արցունքի անտակ ծովում, երբ ալեկոծուած է հայ ժողովուրդը, երբ կրել ենք ցաւալի պարտութիւն, ունեցել անչափ թանկ կորուստներ, վիրաւոր են մեր սրտերն ու հոգիները, բզկտուել ու անդամահատուել է երեսուն տարուան մեր համազգային հպարտութիւնը՝ հայոց սրբազան Արցախ աշխարհը, գիտեմ, թէ ինչպիսի՛ հոգեկան խռովք ու տագնապ էր ապրում այդքան հայրենասէր, այդքան մարդասէր, ջերմ ու պայծառ անհատը: Արժանաւոր հայորդին տա-

ռապում էր համազգային ցաւի ու վշտի պայծաններում, Արցախի ծուէն-ծուէն լինելու մասին լուրերը լսելիս: Նա գանգահարում էր եւ անընդհատ լաւ լուրի էր սպասում Արցախից, բայց, աւա՛ղ: Գառնիկ Մկրտիչեանը պարզապէս ապրում էր Հայրենիքի հոգսերով ու խնդիրներով: Ես տեսել եմ նրա հրճուանքը՝ Հայաստանի եւ Արցախի նուաճումների մասին լսելիս, զգացել նրա ուրախութիւնն ու հպարտութիւնը՝ Մայր Հայրենիքի իւրաքանչիւր յաջողութեամբ: Անհաւանական է, որ այդքան խելացի ու պայծառ, այդքան կենսասէր, այդքան ազգասէր ու հայրենասէր գործիչն այսօր մեզ հետ չէ:

Բնութիւնը չափազանց շուշլ էր գտնուել նրա նկատմամբ՝ օժտելով մարդկային աւինքնող հմայքով, այլոց



Մարտ 2015. Գրանոյշ Յակոբեան Հ.Մ.Ը.Մ.Ի կեդրոնատեղիին մէջ:



Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնատեղիի շենքին առջեւ:

ոգեշնչելու եւ ի գործ մղելու բացառիկ ունակութեամբ, անսահման բարութեամբ ու վսեմ առաքինութիւններով:

Գառնիկ Մկրտիչեանի անուն-ազգանունը ոսկէ տառերով կը գրուի Հ.Մ.Ը.Մ-ի պատմութեան մէջ: Նա իր պատանեկան, երիտասարդական եւ հասուն կեանքը նուիրեց Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեանը, իր գործունէութեամբ նպաստեց հայ երիտասարդների սկստական շարժման զարգացմանն ու ակտիւացմանը: Նրա ատենապետութեան տարիներին առաւել ծաղկում ապրեց Հ.Մ.Ը.Մ-ը, հիմնուեցին տարածքային միութիւններ Եւրոպայում, Ռուսաստանում: Հիանալ կարելի էր, թէ ի՞նչպէս էր ընկեր Գառնիկը ինամքով եւ ոգեւորութեամբ, իր ընկերների հետ նախապատրաստում Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեայ յրբեկեանը: 2018 թուականին գրեթէ բոլոր հայկական համայնքներում տեղի ունեցան համահայկական այդ ամենախոշոր կազմակերպութեան 100-ամեակին նուիրուած բազում միջոցառումներ:

Գառնիկը ծրագրում էր ու կատարում, հետեւողական էր ու կարգապահ, խստապահանջ էր իր եւ իր ընկերների հանդէպ, աշխատասէր էր ու պատասխանատու, միաժամանակ, չափազանց բարի էր, ազնիւ ու մարդասէր: Ընկեր Գառնիկը հզօր, կենսասէր ու աշխոյժ անձնաւորութիւն էր, հոգով

շռայլ, մարդկային բարձր որակներով օժտուած անհատ:

Նրա հետ իրականացրած մեր բազում ծրագրերն ունենում էին լայն տարածում եւ մեծ արձագանգ երիտասարդների շրջանում եւ ծառայում էին իրենց նպատակին: Նա լաւ ընկեր էր, Հ.Մ.Ը.Մ-ական իսկական եղբայր, լուսաւոր ՄԱՐԳ, վըստահելի բարեկամ, ում հետ ցանկացած հարց կարող էիր քննարկել ու խորհրդակցել: Յաւայի է, որ այլեւս չկայ հայրենասէր հայր, հոգատար ու նուիրեալ ամուսինը, բացառիկ հայրը, սիրասուն պապիկը, հաւատարիմ ու վստահելի ընկերը, համայնքի արժանաւոր զաւակը:

Համոզուած եմ, որ Գառնիկի անունը երբեք չի բացակայի համայնքային կեանքից, նրան ճանաչողների յիշողութիւնից:

Նա ի Տէր ննջելուց յետոյ եւս կը շարունակի իր հոգեւոր ներկայութիւնը, կը շարունակի ապրել իր երեխաների մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի հզօր ընտանիքի անդամների սրտում ու մտքում, հարազատների եւ ընկերների, նրան ճանաչող մարդկանց յիշողութիւններում:

Գիտեմ, որ մեր ազնիւ ու ժպտերես եղբօր հոգին լոյս է դարձել եւ վերեւից ժպտալու է մեզ, նաեւ բարեխօս է լինելու իր ընտանիքի, հայ համայնքի, մեր եկեղեցու, ժողովրդի եւ պետութեան համար:

Թող լոյս իջնի Գառնիկ Մկրտիչեանի շիրտի մին:

Յարգանք ու խոնարհում նրա պայծառ յիշատակին:

Սգում եմ Ձեզ հետ միասին, կիսում եմ Ձեր վիշտը:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի եւ վաստակն ապրողաց օրհնեալ եղիցի»:  
Խորին յարգանքով եւ վշտակցութեամբ՝

**ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈՒԲԵԱՆ**



Յուլիս 2017. Սփիւռքի նախարարութիւն այցելութիւն:



**Սեյլա Թնձուկեան  
ԼՈՆՏՈՆ**

Ամբողջ Հ.Մ.Ը.Մ.ը սգաւոր է:

Այս կազմակերպութիւնը իր բնոյթով կարծես մոգական ուժ մը ունի ստեղծելու, կազմաւորելու այնպիսի առաջնորդներ, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի շունչին տակ կ'օժտուին ղեկավարելու յատուկ կարողութեամբ:

Հ.Մ.Ը.Մ. կորսնցուց այդ անխոնջ ու բացառիկ աշխատող ղեկավարներէն մէկը՝ եղբայր Գառնիկը:

Ի՞նչպէս հաշտուիլ ի լուր այս ցնցիչ յանկարծակի գոյժին, եւ ընդունիլ այսուհետեւ անոր անվերադարձ բացակայութիւնը:

Անսպասելի դաժան մահը եկաւ ու խորտակեց Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը՝ գայն մատնելով սուգի... շատ կանուխ եւ անժամանակ կորսնցուցինք զինք. անձ մը, որ իր ամբողջ կեանքը նուիրեց Հ.Մ.Ը.Մ.ի աշխուժացման, տարածման եւ բարգաւաճման:

Օրինակելի բնաւորութեան տէր ատենապետ մը եղաւ ան՝ իր երկար գործունէութեան ընթացքին: Եղբայր-քրոջ դաստիարակութիւնը, բառին բուն իմաստով, տեսանք իր յարաբերութիւններուն մէջ՝ մեծին հետ մեծ, փոքրին հետ փոքր: Մտերմացաւ, գուրգուրաց, գնահատեց ու հաւասարի գաղափարի գիտակցութեամբ գործեց իսկական առաջնորդի մը գաղտնիքը ընկալած:

Իր հարազատ ընտանիքին ժամանակը հաւասարապէս բաժնեց իր երկրորդ ընտանիքին՝ Հ.Մ.Ը.Մ.ի հետ:

Ծրագիրներու իրականացման համար ան նուիրուեցաւ նպատակին՝ շրջելով երկիրէ երկիր, ո՛ւր որ Հ.Մ.Ը.Մ.ը գինք կանչեց՝ այդ ըլլար Փարիզ-Լոնտոն-Երեւան կամ այլուր:

Իր շրջագայութեանց ընթացքին, տօնախմբութիւններու բացման խօսքերը եղան անթերի հայերէնով՝ ամփոփ տեղեկութիւններով, քաջալերական եւ առանձնապատուկ պատգամներով լի:

Ձեռնարկի մը աւարտին հոգեկան անհուն երջանկութեամբ կը հեռանար շրջանէ մը՝ երեխայի մը նման խանդավառ, նորը երագելով, յաջորդը իր մտքին մէջ արդէն պատկերած:

Պաշտօնական յարաբերութիւններու մէջ խոհեմ դիւանագէտ, անդրդուելի առաջնորդի իր հմտութեամբ ան կարողացաւ շրջանցել խոչընդոտներ, եւ շնորհիւ այդ ճկունութեան յաջողեցաւ Հայաստանի սրտին մէջ մեծ շուքով տօնել Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակը:

Երա՞զ թէ իրականութիւն էր տեսնել աշխարհացրիւ բազմահազար Հ.Մ.Ը.Մ.ական սկառուներու տողանցքը Երեւանի մայր հրապարակին վրայ: Այդ տարազաւորներուն պատկերը առ յաւէտ պիտի մնայ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան էջերուն վրայ:

# ՄԳԱՒՈՐ Է Հ.Մ.Ը.Մ.Ը ԿՈՐՄՆՑՈՒՑԻՆՔ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԸ

Դիւրին չեղաւ այդ աշխատանքը... ամիսներու ծրագրումով եւ հետապնդումով ան կարողացաւ իր շուրջ հաւաքել անխոնջ ու խանդավառ Հ.Մ.Ը.Մ.ականներու պատկառելի խումբ մը, որ զօրավիգ կանգնեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի ծրագիրին, մանաւանդ որ անոնց երկար տարիներու տուած երդումն էր որ կ'իրականանար...

«Պատուոյս վրայ կ'երդնում ըլլալ հաւատարիմ Հայրենիքի»:

Եղբ. Գառնիկ բժախնդութեամբ մօտեցաւ այդ ձեռնարկին ծրագրաւորումին եւ արթուն պահակի կարգապահութեամբ ամիսներ հետեւեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի իրականացման:

Ան իր կազմին հետ միասին Հ.Մ.Ը.Մ.ը բերաւ, հասցուց մարզական եւ սկառուական համաշխարհային նախանձելի կազմակերպութեան մը մակարդակին:

Եղբ. Գառնիկին վճռակամութիւնը, տարիներու փորձառութիւնը, աշխարհացրիւ Հ.Մ.Ը.Մ.ական անդամներու հետ իր հետեւողական կապը եղաւ ո՛չ միայն իր գործունէութեան գաղտնիքը, այլեւ՝ աշխարհացրիւ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու ծանօթացման գործընթաց, յարաբերութեան ու սերտ կապի հաստատում:

Դժբախտաբար, անմահ կը կարծէինք զինք՝ երիտասարդ էր ու կորովով լի:

Այո՛, այսօր Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը սգաւոր է եւ միակ մխիթարութիւնը պիտի ըլլայ ծնիլ նոր Գառնիկներ, քայլել նոյն ճամբէն, գործել նոյն ոճով եւ օրինակելի առաջնորդի անոր յատկանիշներով շարունակել յառաջ մղել սկառուական եւ մարզական այս միութիւնը:

- Ըլլա՛լ՝
- Ծրագրող, սակայն ճկուն:
  - Յամառ աշխատող, սակայն բարեացակամ:
  - Դիւանագէտ, սակայն նպատակ հետապնդող:
  - Դիտող, լաւը տեսնող ու մանաւանդ գնահատող:



Մտորեւ Կրուած չորս մահագործիւնները Երուսաղէմէն եղբայր Սերոբ Սահակեանի գրիչին պատկանող դիմապերեան գրառումներ են, որոնք եղբ. Գառնիկ Մկրտիչեանի կորուստը կը ներկայացնեն իրարմէ փարբեր օրերու մը քառամեակով, պոռթկումներով եւ ազգային-միութենական խոհերով:

Իւրայայտուկ ոճով կատարուած այդ գրառումները կը ներկայացնեն նաեւ ընդհանուր ուրուագիծ մը եղբայր Գառնիկ Մկրտիչեան մարդուն, Հ.Մ.Ը.Մ.ականին եւ ազգային-հասարակական կեանքի նուիրեալին մասին:

## ԱՆԴԱՌՆԱԼԻ՝ ԿՈՐՈՒՄՍ

Այս Յոռուար վեցին սուրբ առաւօտը մերը չէր:  
Նորութիւն ըսած պիտի չըլլամ եթէ ըսեմ, որ վերջին քանի մը ամիսներու առաւօտները ընդհանրապէս մերը չեն:

Բայց եւ այնպէս, այս առաւօտը կարծես նոյնպէս առաւօտներէն ամէնէն նոյնպէս էր:

Դժուար թէ Հ.Մ.Ը.Մ.ական ըլլաս եւ Հ.Մ.Ը.Մ.ի համասփիւռ աշխատանքներուն մէջ ներգրաւուած ըլլաս, ու եղբայր Գառնիկին բացակայութեանը այս առաւօտեան հաշտուիս:

Դժուար թէ Հ.Մ.Ը.Մ.ը մօտէն ճանչնաս ու եղբայր Գառնիկէն «անկախացած» Հ.Մ.Ը.Մ. ըսուածը ըմբռնես:

Վերջապէս, դժուար թէ պատկերացնես Հ.Մ.Ը.Մ.ի օրը եւ օ՛րդ, Գառնիկ հայէն, Գառնիկ մարդէն, Գառնիկ Հ.Մ.Ը.Մ.ականէն որբացած:

Այո՛, մեծ է կորուստը Հ.Մ.Ը.Մ.ին:

Մեծ է կորուստը Լիբանանի հայ ընտանիքին:

Մեծ է կորուստը Դաշնակցական իմ ընտանիքիս:

Այնուհետեւ, աւելի մեծ է կորուստը ողջ հայ ընտանիքին:

Մեծ է կորուստը Հայաստանին թէ հայ Սփիւռքին:

Մեծ է կորուստը հայ իրականութեան ամէն մէկ հայուն:

Այս տողերուն իմաստը հասկնալու համար պարզապէս պէտք էր ճանչնալ Գառնիկ հայը, Գառնիկ մարդն ու ազգային գործիչը:

Այս տողերը ըմբռնելու համար պէտք էր մօտէն հետեւիլ Գառնիկ հայ մարդուն առօրեային:

Այս տողերը ընկալելու համար պէտք էր գոնէ մէկ թէ երկու առիթով ներկայ գտնուիլ եղբայր Գառնիկին նախագահութիւնը վայելող Հ.Մ.Ը.Մ.ի համասփիւռքեան Պատգամաւորական հաւաքի մը թէ պարզապէս համեստ սեղանի մը:

Ու պէտք էր տեսնել, թէ ի՞նչպէս եղբայր Գառնիկը կը վերաբերէր ամէն մէկ ժողովականի հետ, որուն թերեւս առաջին անգամը հանդիպած ըլլար:

Պէտք էր տեսնել, թէ ի՞նչպէս հեռաւոր գորտապացի եղբայրը

կամ քոյրը ի՞նչպէս առաջին հայեացքէն կը կապուէին ժողովին ու կը մտերմանային անմիջական նախագահի սեղանին:

Պէտք էր տեսնել, թէ ի՞նչպէս մեծ թէ փոքր, ալեհեր թէ աղուամազով երիտասարդը կը համակուէին եղբայր Գառնիկին պահու խօսքին թէ պարտադրած վարքին:

Վերջապէս, պէտք էր տեսնել, թէ ի՞նչպէս խայտաբղէտ Սփիւռքը եղբայր Գառնիկ զօրավարին առջեւ կը կերպարանափոխուէր իբրեւ ազգի ծառայութեան գինուոր ու զօրք:

Այո՛, եղբայր Վիգէն Աւագեանը դիմատետրի իր գրառումին մէջ եղբայր Գառնիկը որակած էր երեւոյթ:

Երեւոյթ, իբրեւ լիբանանահայ ազգային համագործակցութեան միշտ պեկոծ հարթակի իշխան:

Երեւոյթ, իբրեւ իր տեսակին իւրայատուկ մեծահոգի ազգային գործիչ:

Վերջապէս, երեւոյթ, իբրեւ անգերազանցելի համազգային յարգանք վայելող դէմք ու հեղինակութիւն:

Ես պիտի աւելցնեմ եղբայր Վիգէնի հաստատման ու ըսեմ. եղբայր Գառնիկ պարզապէս տեսակ մը կախարդ էր, դաստիարակ, մարդակերտ, որուն այնքա՛ն պէտք ունէր այս օրերուն պառակտուած հայ իրականութիւնը:

Այն իրականութիւնը, ուր իբրեւ հայ,

Ալ հազիւ թէ կը զգանք արիւնակից:

Ալ հազիւ թէ կը տողանցենք իբրեւ երազակից:

Ալ հազիւ թէ կը զգանք հողի մը տէր հայրենակից:

Ալ հազիւ թէ կը զգանք ՀԱՅ միատառ:

Է՛, եղբայր Գառնիկ, դուն այս օրը գտա՞ր երթալու:

Ըսի, կրկնեմ, հաստատե՛մ:

Գառնիկին «առեւանգման» գծով անպայման որ վերէն «ղալաթ» որոշում մը կար:

«Ղալաթ էր», որովհետեւ Գառնիկին տեսակը որքան մեզի պէտք էր, ու ո՛չ միայն մեզի, այլ նաեւ՝ Գառնիկին տեսակը հայհոյողներուն:

1999. Յ.Ս.Ը.Մ.ի Զ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողով, Ատմա, Լիբանան:



## ԱՅՍ ԵՐԿԻՆՔԸ ԱՆ ԵՐԿԻՆՔ ՉԷ...

Այս մարդուն տեսակն ալ կը մեռնի՞ եղեր:  
Գառնիկը, մեր Գառնիկը, Հ.Մ.Ը.Մ.ի եղբայր Գառնիկը կը մեռնի՞ եղեր:

Զէ՛, չէ՛, չէ՛, դուք վերիններդ, այլեւս շատ եղաւ:

Այս շրջանին համար, խնդրեմ, չափ ու սահման անցար:  
Քորոնա ըսիք, մեր երէցներէն լաւագոյնը առիք-տարիք:  
Լիբանան, փտտած իշխանութիւն ըսիք, Պէյրութի կործանման հետ, Պէյրութը իր լաւագոյն զաւակներէն զրկեցիք:  
Արցախ, Ազրպէյճան, պատերազմ ըսիք, Սփիւռք-Հայաստան հայու հինգ հազար երիտասարդի մատղաշ կեանքերը խլեցիք:

Ալ հասկնանք, այս բոլորէն ետք, այս մեր Գառնիկը ո՞ւր տարիք:

Այս մեր Գառնիկին ի՞նչպէս առիք:

Այդ ո՞ւր, այդ ի՞նչ ժողով էր, որո՞ւ որոշումն էր:

Մեր Գառնիկին համար ի՞նչ կարգադրութիւն էր:

Հէ՛յ, դուք վերիններդ, եթէ Գառնիկին համար տեղ դասաւորած էք Եղիա մարգարէին մօտ, այդ մէկը ընդունելի չէ:  
Եթէ եղբայր Գառնիկին համար վերը խնճոյք պիտի սարքէք, այդ իմ հարցս չէ:

Եթէ եղբայր Գառնիկին համար արքայութեան դրան առջեւ ամբողջ Հ.Մ.Ը.Մ.ի անցաւոր ընտանիքը պիտի սպասէ, ինծի համար այս պահուստ ոչինչ կ'ըսէ այդ:

Արդեօք դուք վերը չէի՞ք գիտէր, թէ այս մարդը հոս ի՞նչ գործի վրայ է:

Արդեօք չէի՞ք գիտէր, թէ այս մարդը հսկայական ի՞նչ յանձնառութիւններ կ'իսպատ պիտի ձգէ:

Արդեօք դուք չէի՞ք գիտէր, թէ այս մարդը հայր է:



2001. Համա-Յ.Ս.Ը.Մ.ական Զ. մարզախաղեր, Պէյրութ, Լիբանան:

Հայր է ո՛չ թէ իր անմիջական երկու դրախտ հարազատներուն:

Այլ՝ հայր է քսանհինգ հազարի, այլք պիտի ըսէին հարիւրի:

Զէ՛, դուք վերիններդ «դալաթ» գործած էք:

Ձեզի մէկը սխալ տեղեկութիւն փոխանցած է:

Հայու թշնամիներէն մէկը ձեր տոմարներուն թափանցած է:

Մէկը ձեր կամքէն անկախ գործած է:

Խնդրեմ, դուք վերիններդ, բան մը ըրէք:

Ետ զրկեցէք մեր Գառնիկը:

Մեր ուսերուն վրայ աւելի մի սպասէք:

Ծնունդ է, Ձեր ծնունդը պիտի փառաբանենք:

Կը խոստանամ, այլապէս իմ աղօթքս դուք երկար պիտի չսէք:

Գառնիկ, ըսեմ, չես հաւատար:

Այսօր, ողջ հայ իրականութեան աչքերն ու ականջները Հայաստան են:

Այսօր, Հայաստան-Սփիւռք ողջ հայութեան սրտերը Սիւնիքով ցաւ ու դող են:

Այսօր, աշխարհով մէկ Մեղրիի միջանցքին՝ Ալիեւին յանձնումի լուրջ մտաւախութեան մէջ են:

Այնուհետեւ, քու ընկերներէդ, բարեկամներէդ, հարազատներէդ, եղբայրներէդ շատ-շատերուն աչքերը քու վերջին ճամբուդ են:

Քու վերջին ճամբուդ են Պուրճ Համուտը, Պէյրութը, ողջ լիբանանահայութիւնը, իր քաղաքապետարանով, Առաջնորդարանով ու Կաթողիկոսարանով:

Քու ճամբուդ են մինչեւ շա՛տ հեռուներէն անոնք որոնք ամբողջ տասնամեակներ, իրենց միութենական թէ գաղափարական ճամբուն մէջ, ինչ որ փարոս տեսած են քեզ:

Վերջապէս, շատ-շատերուն համար հեշտ չէ հողին քու յանձնումդ: Անկեղծ ըսած, երկա՛ր սպասեցի, որ վայրկեան մը երեսդ վերցնես քեզի նման մեծութիւն մը շատ կանուխ ու անարդար ամփոփած դազադին ծածկէն:

Վայրկեան մը վերցնես ու նայիս շուրջդ ու տեսնես, թէ որո՞նք եկած են քու վերջին ճամբուդ իրենց խոնարհումը եւ յարգանքը կատարելու:

Վայրկեան մը նայիս, թէ ինչքա՛ն զգալի է բացակայու-





## ԴԱՍԱԿԱՆԷՆ ԱՆԴԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ ՄԸ

Շաբաթ մը եղաւ եղբայր Գառնիկին մեզմէ բաժանումին:  
 Շաբաթ մը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ը առանց եղբայր Գառնիկին:  
 Շաբաթ մը եղաւ հայ իրականութիւնը՝ առանց Գառնիկի:  
 Այս շաբաթուան ընթացքին շատերու կողմէ շատ բան գրուեցաւ եղբայր Գառնիկին մասին:

Գրուեցաւ ո՛չ միայն անոնց գրիչով, որոնք անմիջական գործակիցներն էին եղբայր Գառնիկին:

Վերջապէս, գրուեցաւ եւ անոր անժամանակ կորուստը նշուեցաւ անոնց կողմէ, որոնք մինչեւ իսկ քանի մը ժամուան ծանօթութեան բախտը ունեցած էին եղբայր Գառնիկին հետ:

Այո՛, գրուեցաւ եւ շատ գրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գառնիկին մասին, պատասխանատու դէմքին մասին, առաջնորդին մասին, նուիրեալ ազգային գործիչին մասին, դաստիարակին մասին, վերջապէս՝ դասական հայ մեծ գործիչին մասին,

որուն նկատմամբ յարգանք թէ պատկառանք, մինչեւ ակնածանք արտայայտեց ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ.ը, ո՛չ միայն Դաշնակցութիւնը, ո՛չ միայն լիբանանահայութիւնը, այլեւ՝ հայ իրականութեան ստուար փաղանգը:

Բայց եւ այնպէս պիտի համարձակիմ ըսել, որ բոլորն ալ, մինչեւ անգամ եղբայր Գառնիկին ամէնէն սրտակիցները, չներկայացուցին եղբայր Գառնիկը, այն ինչ որ էր ան:

Չներկայացուցին այն Գառնիկը, որուն համար Հ.Մ.Ը.Մ.ի ընդարձակ տարածքը նոյնիսկ նեղ էր:

Չներկայացուցին այն Գառնիկը, որ մեր հասկացած դասական ազգային գործիչին շատ աւելի անդին էր:

Արդարեւ, Գառնիկը այն անձը չէր, որ մեր ազգային եւ ընդունուած շատ մը գործիչներուն նման, առաւօտը կը սկսէր իր սեփական զբաղուածութեամբ, իսկ երեկոն կ'աւարտէր

## ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿԻՆ ՀՈՂԻՆ ՅԱՆՁՆՈՒՄԻ ՊԱՀՈՒՆ

Թիւնդ «Շաղգոյեան» կեդրոնէն, «Սարգարապատ»էն, Առաջնորդարանէն, քաղաքապետարանէն, մինչեւ իսկ շատերու համար ձեռով մը կարսի հնոց դարձած Պուրճ Համուտի ամէնէն փոշոտ անկիւնէն: Վերջապէս, նայիս երէկուան գործակիցներու՝ Վաչէին, Յակոբներուն, Իշխանին, Վիգէնին, Վերային, միւսներուն, միւսներուն, որոնք այսօր ինչ որ չափով, ինչ որ իմաստով որբացած, բայց երախտապարտ ու չնորհագարդ կը հետեւին դազաղիդ:

Գառնիկ, քեզմէ աւելի ո՞վ գիտէ, թէ ինչպիսի՞ յուղարկաւորութիւններ կազմակերպած է հայկական Պէյրութը: Քեզմէ աւելի ո՞վ անձնապէս հեղինակած է նման յուղարկաւորութիւններու վարքն ու շարքը:

Քեզմէ աւելի ո՞վ լաւ գիտէ, թէ այդ Պէյրութը օրին ի՞նչպէս Վրացեաններ, Շանթեր, աւելին ու՛շ՝ Փափագեաններ եւ Տասնապետեաններ ճամբու դրած է:

Չեմ գիտեմ, վերջին անգամ ե՞րբ էր, որպէսզի կարենամ վերջին ճամբուղ զուգահեռ գծել:

Մէկ բան ըսեմ, Գառնիկ, սա յուղարկաւորութիւն չէր:

Ըսեմ, չես հաւատա՛ր, սա շատ աւելին էր:

Սա քու շատ սիրած գաղափարական ճամբուղ յաղթարշաւն էր:

Սա քու պաշտած Հ.Մ.Ը.Մ.իդ փառապանծ տողանցքն էր: Սա վիրաւոր, բայց իր զաւկին հանդէպ երախտապարտ ողջ Պէյրութին տեղին ու պատշաճ խոնարհումն էր:

է՛, Գառնիկ, սա օրերուն չունինք լուսաւոր ճառագայթ մը, որուն շուրջ պլլուինք եւ ինչ որ չափով ջերմանանք:

Չունինք եւ Սուրբ Ծնունդը անգամ հազիւ թէ այդ ճառագայթին նշոյլը յուշէ:

Բայց եւ այնպէս, պիտի մխիթարուիմ անով, որ ունինք Դաշնակցութիւն, որ գիտէ իր զաւակը արեան դաշտ ուղարկել, բայց եւ գիտէ ըստ պատշաճի իր զաւակին վերջին երթը ապրիլ ու ապրեցնել:

Գառնիկ, պիտի հանդիպինք, թերեւս ոչ այսպիսի «տաւուլ զուռնայով», բայց անպայման Սուրբ գործին մեզի ինկած բաժինը ամբողջացուցած ըլլալու հոգեկան հիասքանչ ինքնաբաւութեամբ:



ակումբով, ժողովով ու հանդիպումով:

Գառնիկը այն գործիչը չէր, որ իր թաղային սահմաններէն անդին, ազգային-կուսակցական նոյն պարտաւորութեամբ, տարին քանի մը առթիւ երկու օդակայան կը վազէր:

Գառնիկը, վերջապէս, այն դասական գործիչը չէր, որուն նմաններուն շատ տեղ ունինք եւ բաւարարուած ենք:

Եղբայր Գառնիկը շատ մը իմաստներով այդ բոլորին առաւելն ու առաւելն էր:

Եղբայր Գառնիկին նկարագրային ստորագիծներուն մասին խօսիլը անպայման կրկնութիւն պիտի ըլլայ:

Արդէն շատ բան նշուեցաւ ու քանի մը առիթով նշուեցաւ եղբայր Գառնիկին գերազանց մարդասիրութիւնը, ընկերասիրութիւնը, անհասանելի խոհեմութիւնը, պարտաճանաչութիւնը, մեծ գործի նկատմամբ էութեամբ թէ էպպէս նուիրումը եւ մարդկային բազմաթիւ բարեմասնութիւնները:

Նշուեցաւ ատենապետը, քաղաքապետական խորհուրդի անդամը, Կեղերոնական Կոմիտէի ժրջան ընկերը եւայլն, եւայլն:

Բայց եւ այնպէս չնշուեցաւ մեծ ժողովականը, որ կրնար ամբողջ Սփիւռքին կեդրոնը կանգնիլ, ու այնքան որքան կըրնար մօտէն զբաղիլ հայ Պուրճ Համուտի տագնապներով ու երիտասարդներով, կրնար զբաղիլ հայ Արֆորվիլի հարցերով:

Չնշուեցաւ այն դէմքը, որ այնպէս ինչպէս համարձակ ու յարգալիլ կրնար տեսակցիլ Պուրճ Համուտի ունէ քահանային հետ, նոյնքան համարձակ ու ինքնավստահ կրնար տեսակցիլ ունէ Կաթողիկոսի հետ:

Չնշուեցաւ այն դէմքը, որ այնպէս ինչպէս կրնար իր հպարտանքի գագաթնակէտին գրաւել ունէ նախարարի ու շաղրութիւնը, կրնար գրաւել նաեւ ունէ նախագահի եւ վարչապետի սիրտը:

Չնշուեցաւ այն դեկավարը, որ առանց դոյզն նախապաշարումներու կամ տատամսումի, հանդէս կու գար հարիւրամեակներ նշելու, հազարներու մասնակցութեամբ համագաղութային բանակում թէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղեր կազմակերպելու, միլիոնաւոր տոլարի նախահաշիւներ կայացնելու եւ տակէն դուրս գալու:

Վերջապէս, չնշուեցաւ այն մարդը, որ իր կազմակերպչական ոգիով, շուքով թէ նոյն հայ Սփիւռքի գերազանց ճանաչողութեամբ, ամբողջ Սփիւռք մը կրնար առաջնորդել:

Իրօք, տեսակ մը համագաղային ոչ-դասական գործիչ, ԵՂՐԱՅՐ ԳԱՌՆԻԿ, ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ՉՈՒՆԷԻՆՔ ՈՒ ՉՈՒՆԻՆՔ:

ՈՒ ՍԱ ՕՐԵՐՈՒՆ ՄԱՆԱԻԱՆԴ, ՈՐՔԱՆ ՊԻՏԻ ՈՒՁԷԻՆՔ ՈՒՆԵՆԱԼ:



### Գեորգ Յակոբեան ՎԻԵՆՆԱ

Անցնող ամիսներուն, եղբ. Գառնիկ Մկրտիչեանի անձնուրաց վաստակին, մարդկային վեհ արժանիքներուն, միութենական, կազմակերպական եւ հասարակական բազմաթիւ ձեռքբերումներուն, ինչպէս նաեւ բարոյական ժառանգութեան մասին բազմաթիւ վկայութիւններ հնչեցին: Գրեթէ ամէն ինչ ըսուեցաւ եղբ. Գառնիկի աւելի քան քառասնամեայ ազգանուէր, հայնապատ ու հասարակական գործունէութիւնը ամփոփող, գնահատող ու արժեւորող:

Հնչած խօսքերը արդար էին ու արժանի: Իսկ ի՞նչ կարելի է աւելցնել, ի՞նչ նոր բան կարելի է փոխանցել: Թերեւս կարելի է լուսարձակները անոր մէկ, բայց էական արժանիքին վրայ կեդրոնացնել ու փորձել վերլուծել: Եղբ. Գառնիկը դեկավարի մը ամէնէն կարեւոր երկու արժանիքներուն, ազնուութեան կողքին, ՈԳԵՂԷՆ հարստութեան իսկական կրողն էր: Այո՛, ան ոգի՛ կը ներշնչէր, կ'ոգեշնչէր, կ'ոգեկոչէր ու կ'գործէր (երեք տարբեր գործողութիւններ):

Ոգեշնչելու համար մարդ նախ ոգի՛ պէտք է ունենայ, ամբողջ էութեամբ հաւատայ այդ ոգիին ու ապա այդ ոգին փո-





2005. Ի.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներին  
Տիգրան Ա. Քինյ.  
Խոյեանի շիրմի  
այցելություն,  
Մ. Նահանգներ:

## ՈՒԵՇՆՉՈՂԸ, ՈՒԵԿՈՉՈՂՆ ՈՒ ՈՒՐՈՂԸ

Խանցելու եւ այդ ոգիով հաւաքականութիւններ, սերունդներ կերտելու կարողականութիւն եւ հմտութիւն ունենայ: Ոգեղէն ուժը՝ դադափարական հաւատքի, անկոտրում կամքի, պատկանելիութեան եւ պատասխանատուութեան զգացումի, կուտակուած փորձառութեան, մեծն ու փոքրը լսելու կարողականութեան եւ նպատակասլացութեան ամփոփումն է: Եղբայր Գառնիկ ոգեղէն հարստութեան շտեմարան մըն էր, որմէ առատաձեռնօրէն կը բաշխէր ո՛ւր որ երթար, որո՛ւ հետ որ հանդիպէր: Եղբ. Գառնիկի ոգեղէն այս ուժը մակերեսային, կեղծաւոր ու արհեստական չէր: Թերեւս այս էր իր յաջողութեան հիմնական բանալին՝ ըլլալ հաւատարիմ իր կոչումին եւ լաւապէս տիրապետել ուրիշները ոգեւորելու, գործի առաջնորդելու, քաջալերելու եւ խրախուսելու հմտութիւններուն: Իր գործընկերներուն հետ միասին ան յաջողեցաւ Աւստրալիայէն Մ. Նահանգներ, Արցախէն Հայէպ, Պուրճ Համուտէն Սոսերթելիա, Պաղտատէն Պուէնոս Այրէս ոգեղնչել, սիրտ ու թեւ տալ, ոգեպնդել, ճամբայ հարթել հաւաքական գործին, հայապահպանութեան եւ հայակերտումին:

Ոգեկոչել կը նշանակէ յիշատակ արթնցնել, յիշատակել: Ոգեկոչումի ուսկիրայ մըն էր եղբ. Գառնիկը, որովհետեւ անցեալը յիշելու, անցեալէն դասեր քաղելու, անցեալով գօտեպնդուելու, անցեալը վերարթեւորելու, անցեալը ներկային



կապելու, մեր հաւաքական ցաւին ու մաքառումին յիշողութիւնը պահելու, հաւաքական ժառանգութեան տէր կանգնելու խոր հաւատք եւ ունակութիւն ունէր ան: Հայոց Յեղափոխութեան, Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադրութեան, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան եւ այլ առիթներու ոգեկոչումներուն արտասանած իր միտքերը լաւագոյն օրինակներն են այս հաստատումին: Անցեալը ներկային կապող երեւոյթներէն ո՞վ չէ լսած իր նշանաւոր խօսքը՝ «Ցեղասպանութենէն ետք Հ.Մ.Ը.Մ.ը որբահաւաքի եւ հայ նոր կեանք կազմակերպելու առաքելութեամբ զբաղեցաւ, իսկ հարիւր տարի ետք մենք պարտաւոր ենք Միջին Արեւելքի տագնապներէն եւ մայր հայրենիքէն հեռացած ու Արեւմուտք եւ այլուր սփռուած հայորդիներու հաւաքով, տիրութեամբ ու կազմակերպութեամբ զբաղիլ»:

Եւ վերջապէս, ոգորող էր ան: Ոգորիլ կը նշանակէ պայքարիլ ու մաքառիլ, իսկ ան քաջ կը հաւատար, որ վերի երկու գործողութիւնները (ոգեղնչելն ու ոգեկոչելը) լաւագոյնս իրականացնելու համար պէտք էր ոգորիլ գիտնալ: Ան լաւապէս կը տիրապետէր մարդկային պայքարներու արուեստին եւ նրբութիւններուն... Ան բոլոր տեսակի դժուարութիւններու եւ խոչընդոտներու դէմ կ'ոգորէր հաստատակամ ու վրձնականօրէն: Ան կը պայքարէր մեր հաւաքական կեանքը թունաւորող ու վնասող յոռի երեւոյթներուն՝ ծուլութեան, յուսահատութեան, օտարամոլութեան, անհանդուրժողութեան, բամբասանքին, անկազմակերպութեան դէմ: Կը մաքառէր, որպէսզի հաւաքական կեանքը չխամրի: Եղբ. Գառնիկի մահով հայ իրականութիւնը իր հաւաքական կեանքի գոյատեւման ու վերելքին նպաստող կեդրոնական մարտնչող մը կորսնցուց:

Ոգեղնչող, ոգեկոչող ու ոգորող եղբ. Գառնիկին առաքելութիւնը պէտք է շարունակուի: Մեր հաւաքական կեանքի ու նորագոյն պատմութեան ծանրագոյն այս օրերուն եղբ. Գառնիկին կտակած ոգեղէն ուժով տոգորուած՝ ոգեղնչելու, ոգեկոչելու ու մանաւանդ ոգորելու հրաւիրուած ենք բոլոր՛րս:



# «ԿԱՄԱՒՈՐ ԲԱՆԱԿ»Ի ՄԵԾ ԲԱՑԱԿԱՆ

Վերա Բարսեղեան-Տեր Պողոսեան  
ՊԵՅՐՈՒԹ

«Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելույ երկինք»

**Գ**առնիկ Մկրտիչեանի անուան ծանօթացած էի «Ազգակ» օրաթերթի էջերէն: Պատանեկան տարիքիս ան անջրպետ մը հեռու կը թուէր ըլլալ՝ իր պատկանելի ներկայութեամբ, աշխատանքի ծիրով եւ նկարներէն ցոլացող լրջութեամբ:

Այդ «անջրպետ»ը յանկարծ քանի մը քայլի վերածուեցաւ, երբ առաջին անգամ ծանօթացայ «ընկեր Գառնիկ»ին: Իր համատեղութիւնը եւ ընկերային վերաբերումը արդէն իսկ «անջրպետ»ը ջնջած էին: 2005-ին սկսաւ «եղբայր Գառնիկ»ին ծանօթանալու ճանապարհը: Եղբ. Գառնիկը միութենական եւ դիւանագիտական «համալսարան» մըն էր, որուն «աշակերտելու» պատիւին արժանացայ 17 տարիներ, մինչեւ իր կանխահաս մահը:

Հ.Մ.Լ.Մ.ով չնչոյ, Հ.Մ.Լ.Մ.ով տագնապող, Հ.Մ.Լ.Մ.ով հպարտացող ատենապետն էր եղբ. Գառնիկը: Մասնաճիւղային ժողովներէն, Շրջանային Ներկայացուցչական ժողովներ եւ գերագոյն՝ Պատգամաւորական ժողովներուն իր միջամտութիւնները, իր ուղղութիւնները եւ առաջարկները կը մղէին խոկալու իր խօսքերուն շուրջ եւ անպայման դա՛ս մը սորվելու իր արտայայտած միտքերէն:

Դիւանագէտ ատենապետն էր եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Իսկ Հ.Մ.Լ.Մ.ը իր դիւանագիտութեան կը պարտի միութեան 100-ամեակի ձեռնարկներուն պատմական յաջողութիւնը: 100-ամեակի նախօրեակին, պետական եւ կրօնական բարձրագոյն մակարդակով անհրաժեշտ բոլոր դասաւորումները կատարուած էին, երբ անակնկալ իշխանափոխութիւնը հարցականի տակ առաւ 100-ամեակը մեծ շուքով նշելու ծրագիրը: Կեդրոնական Վարչութեան եղբայրներուն հետ համախորհուրդ, պետական եւ կրօնական բարձրագոյն մակարդակի բոլոր տեսակցութիւնները կրկնուեցան՝ դիւանագիտական մօտեցումով եւ համբերութեամբ, յանուն Հ.Մ.Լ.Մ.ին, յանուն պատմութեան:

Գառնիկ Մկրտիչեանին կարելի էր դիմել որեւէ հարցով,

Լիբանանի մէջ կամ ի սփիւռս աշխարհի: Ան անպայման լուծում մը կամ «չարեաց փոքրագոյն»ը կը փորձէր դասաւորել: Ծանօթութիւններու լայն ցանցով օժտուած, դիւրահաղորդ եւ ծառայասէր, իր անձը եւ ընտանիքը երկրորդ մակարդակի դրած Գառնիկ Մկրտիչեանը օգտակար հանդիսացած է շատերու, եւ իր մահով բացակայութիւնը զգալի պիտի դառնայ բոլոր մակարդակներու վրայ եւ շատերու համար:

Հ.Մ.Լ.Մ.ի աշխարհասփիւռ անդամները, որոնք եղբ. Գառնիկին ծանօթացած էին համա-Հ.Մ.Լ.Մ.ական ձեռնարկներու կամ միութենական այցելութիւններու ժամանակ, ճանչցած էին համեստ մարդու իր նկարագիրը: Մոկլիէն մինչեւ խմբապետ, մարզիկ կամ մարզիչ, վարչական կամ գործավար, եղբ. Գառնիկ բոլորին մօտ մեծ եղբօր յատուկ յիշատակներ փորագրած է: Ընկերային ցանցերէն միշտ հեռու գործող Գառնիկ Մկրտիչեան իր մահով «գրաւեց» ընկերային ցանցերը՝ իր մասին յիշատակի գրութիւններով եւ նկարներով:

Գառնիկ Մկրտիչեանի ատենապետութեան տարիները եղան Հ.Մ.Լ.Մ.ի «ոսկեդար»ի շրջանը՝ մասնաճիւղերու թիւի յաւելումով, Բիւրականի բանակավայրի հիմնական վերանորոգութեամբ, բանակավայրի ընդարձակումով, Հայաստանի շրջանին՝ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի յառաջդիմութեամբ, համա-Հ.Մ.Լ.Մ.ական մարզախաղերը եւ բանակումները Հայաստանի մէջ իրագործելու ու մանաւա՛նդ «Հանրապետութեան» հրապարակին վրայ բացման հանդիսութիւններ կազմակերպելու իրողութեամբ, Հ.Մ.Լ.Մ.ի Արցախի մեկուսի շրջանին հիմնադրութեամբ եւ մանաւա՛նդ՝ միութեան 100-ամեակին ծրագրուած բոլոր ձեռնարկներուն պատմական իրագործումներով: Հ.Մ.Լ.Մ.ի նման նիւթական հարստութիւն չունեցող միութեան մը համար անկարելի թուացող նշուած իրագործումներուն ծրագրաւորումը սկսած է նիւթական նեղ պայմաններով եւ աւարտած է բարեյաջող կերպով: Ծով համբերութեամբ, փոքր գումարներ իրարու վրայ կուտակելով կատարուած իրագործումները երեւակայական ծրագիրներ էին, սակայն իրականացան Գառնիկ Մկրտիչեանի համբերատարութեան եւ բարերարներու հետ յարաբերելու իւրայատուկ կարողութեան շնորհիւ:

17 տարիներ թէ՛ իբրեւ Կեդրոնական Վարչութեան ատենապետ, եւ թէ՛ իբրեւ Կեդրոնական Վարչութեան յանձնա-

# ԵՂԲ. ԳԱՌՆԻԿԷՆ ՀԱԿԱԴԻՐ ՊԱՏԿԵՐ ՄԸ

Մեւան Նազարեան  
ՓԱՐԻՁ

Ամէն ձեւով ըսուեցաւ...

Շատեր ըսին, յիշեցին, նկարագրեցին, պատմեցին...

Դրուատուեցան արժանիքներ՝ խօսքին հաւատացող, յարաբերական մարզին տիրապետած, կազմակերպչական կարողութիւններով օժտուած, ատակ տարբեր որակներու, որոնք արդարօրէն գիրի վերածուելով անծանօթին ու ծանօթին համար ուրուագծեցին եղբ. Գառնիկին անձը:

Մինչ ես պարտք կը գգամ նկարագրելու հակադիր պատկեր մը խօսող, յարաբերութիւնը սիրող մարդուն «լուռ սպասելու եւ սպասցնելու» յատկութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի ԺԱ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի օրերն են, եղբայր Կեղրոնական Վարչութեան յազօրն է ու այդ պաշտօնով նստած է դիւանի կողքին (ինձմէ ոչ շատ հեռու):

Պատշաճ պահուն ոտքի է, իր խօսքը տեղ հասցնելու, անհրաժեշտ լուսաբանութիւնները տալու պարտականութեան վրայ:

Շարժում մը վրայ երկարող ժողովը մօտ է արդէն իր աւարտին, տարբեր ցամաքամասերէ եկած, տարբեր լեզուներ իբրեւ իրենց «մայրենին» օգտագործած Հ.Մ.Ը.Մ.ականներ, կարծէք այդ «բաղնիք»ին մէջ լրգանք առնելով այլեւս շատ ամէկոտ կամ վարանոտ չեն իրենց քիչ ծանօթ լեզուով՝ հայերէնով արտայայտուելու, շարունակ է բան մը, վերանալու տեսք առած են վախերը, ամբողջ օրը միասին ըլլալը, նոյն մտահոգութիւնները բաժնած ու նոր



ծրագիրներու մասին միասնաբար մտածած ըլլալու հանգամանքը լուծած է որոշ դժուարութիւններ:

Վերջին օրն է, ժողովականներուն առիթ տրուած է տպաւորութիւններ եւ սրտի խօսքեր փոխանցելու:

Ուրիշներու կարգին, Եւրոպայի մասնաճիւղերէն մէկուն ներկայացուցիչը եւս կ'ուզէր տարիներու իրենց երազը եղած, Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին վերամիացած ըլլալու հպարտանքը փոխանցել ժողովին: Ան ալ որոշած էր «չփախչիլ» հայերէնէն, յաճախ դժուարութեամբ, երբեմն կ'մկմալով, բայց անպայման կը ձգտէր իր միտքը ամբողջութեամբ փոխանցել:

Երբ ժողովավարը ժողովին կ'ընդմիջէր չզանգաղեցնելու ու գայն ճապարհէ վրկելու համար կը փորձէր կրճատել պահը, եղբ. Գառնիկն էր, որ անդրադարձաւ կացութեան, զգաստօրէն ու անզգալի ձեւով ժողովավարին թելադրեց չմիջամտել, ձգել, որ խօսի, նոյնիսկ եթէ ժողովը պէտք է «լռէ»:

Քանի մը վայրկեանի այդ լուռութեան կարեւորութեան գիտակցութիւնն ալ մաս կը կազմէր եղբ. Գառնիկ մարդու առաքինութեան եւ միութեանականի որակին:

Ժողովի այդ լուռութիւնը անհրաժեշտ էր այդ օր, «լեզու» հանելու համար նորածաղկ մասնաճիւղ մը:

Մինչ՝ այս ձեւի ԻՐ «լուռութեան» բնաւ պէտք չունէինք մենք...:

Խումբի անդամ, երկար եւ յիշատակելի ճանապարհ մը բոլորած ենք միասին՝ փոխադարձ յարգանքով եւ եղբայրական զգացումներով: Յաճախ կը վիճաբանէինք, երբեմն սուր կերպով: Եղբ. Գառնիկ կարծիք լսելու թաքուն շնորհ մը ունէր, եւ երբ տարակարծութեան պատճառով վիճաբանութիւններ յառաջանային, եղբ. Գառնիկ այն գլխադիր Մարդն էր, որ ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն ներողութիւն խնդրելու մեծութիւնը ունէր: Իրողութիւն մը, որ դիմացինը կը մղէր յանցաւոր զգալու, թէկուզ եթէ ան իրաւունք ունէր:

«Եղբ. Գառնիկ, հարց կու տայի յաճախ, չե՞ս նեղանար ըսի-ըսաներէն»: «Մարդ եմ: Ներքուստ կը նեղանամ, բայց պէտք է շարունակեմ՝ միութեան, կուսակցութեան կամ շրջանի շահերը գերադասելով»: Իսկապէս կը նեղանար, բայց չէր արտայայտուեր: Գործը կը շարունակէր եւ կ'աւարտէր այնքան լաւ արդիւնքով, որուն մասին նոյնիսկ ինք թերահաւատ կ'ըլլար աշխատանքին սկիզբը:

Անակնկալօրէն հեռացաւ եղբ. Գառնիկ, աշխարհը եւ մասնաւոր հայութիւնը հարուածող աներեւակայելի ծանր եւ տխուր ժամանակաշրջանի մը: Իր մահուան բօթն ալ աներեւակայելի եւ անհաւատալի էր: Կեանքով լեցուն մեր եղբայրը յանկարծ լուռութեան մատնուեցաւ՝ իր փոքր եւ մեծ ընտանիքները եւս սուգի մատնելով: Իր բացակայութիւնը ծանր կերպով կը ճնշէ ամէնուրեք: Կը մնայ համոզուելի եւ միտքարկի, որ իր կեանքի տարիները եղան իմաստալից՝ միութեանական, կուսակցական եւ ազգային բեղուն ծառայութեամբ:

Եղբ. Գառնիկ՝ «Կամաւոր բանակ»ի մեծ բացական:

Սիրելի՛ եղբայր,

Երկիր վրայ լուսաւոր եւ լուսաւորող բարի աստղ մըն էիր, իսկ այսօր արդէն երկինքէն կը դիտես բոլորս, իսկ հոնկէ մեզի հասնող լոյսը պիտի շարունակէ պայծառացնել մեր կեանքը:

Յիշատակդ պիտի ապրի քու իրագործումներուդ ընդմէջէն:



# Ի ՍՊԱՍ ՀԱՅ ԳԱՏԻՆ՝ ՄԵՐ ԳԵՐԱԳՈՅՆ ԻՏԷԱԼԻՆ

## Հրաչ Վարժապետեան ՄԱՐՍԷՅԼ

**Գ**առնիկ Մկրտիչեանին, ընկեր Գառնիկին, եղբայր Գառնիկին, հուսկ՝ մեր Գառնիկին անժամանակ մահով հաւաքական մեր կեանքին մէջ, այո՛, բան մը պակսեցաւ, տեղ մը բաց մը ստեղծուեցաւ:

Բոլորին պէս, ես ալ Գառնիկը ճանչցած եմ կանուխէն, նկատած եմ անոր բարեմասնութիւնները, ազնայտեա եղած եմ ժողովներու մէջ թէ քուլիսներու ետին անոր ունեցած շինիչ եւ դրական ներդրումին: Լիբանանի Կերպարանակա Կոմիտէի նիստերէն մինչեւ Լիբանանի Շրջանային ժողովներ ու, տակաւին, մինչեւ Հ.Յ.Դ. Ընդհանուր ժողովներու մէջ տեսած ու հաստատած եմ հաւաքել-միացնելու իր համոզումն ու ճիգը, այս առումով նաեւ իր յատուկ կարողութիւնը:

Դէմ էր ու մինչեւ վերջ ալ դէմ մնաց բաժանարար ոճին, հոսանքներու նուիրականացումին եւ ոգի ի բռին պայքարեցաւ անոր դէմ՝ դաւանելով միասնական, հաւաքական հասկացողութիւնը, որուն այլընտրանքը չէր տեսներ: Ամէն տեղ էր ան, բոլոր ճակատներուն վրայ՝ կուսակցական, միութե-

նական, Պուրճ Համուտի քաղաքապետութեան, Ազգային իշխանութեան: «Սարդարապատ» ակումբի ակունքներէն ըսկած անոր նուիրումը մեր հաւաքական կեանքին եղաւ ամբողջական: Բարի էր, համեստ, հեզ, ծառայասէր եւ մանաւանդ՝ պարտաճանաչ ու կարգապահ:

Սակայն, ըստ իս, Գառնիկին մեծագոյն ներդրումը, հսկայական ու յաւերժ երախտապարտ գործը հանդիսացաւ Եւրոպայի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի նոր մասնաճիւղերու հիմնադրութիւնը՝ Շուէտ, Գերմանիա, Աւստրիա, Հոլանտա եւ Ֆրանսա: Այդ մասին կրնամ վկայել պաշտօնապէս, իբրեւ տուեալ շրջաններուն մէջ կուսակցական պատասխանատու: Երբ շատեր թերահաւատութեամբ կը հետեւէին կազմակերպական իր աշխուժութեան, թերահաւատ՝ ոչ իր կարողութեան, անշուշտ, այլ՝ նախաձեռնած գործին արդիւնքին ու յաջողութեան, նկատի առած տուեալ գաղութներուն համեմատաբար մաշած ազգային իրավիճակը, ան կը զարմանար պարտուողական այս մօտեցումին համար, շեշտելով ու համոզելով բոլորը, որ այստեղ կա՛յ ներուժ, զոր պէտք է զօրաշարժի ենթարկել եւ կեանքի կոչել: Եւ շնորհիւ իր յամառ ջանքերուն՝ յաջողեցաւ: Ի՛նք է, որ հիմնեց Սթոքհոլմի, Սոտերթեյլիոյ, Միւնիխի, Ալմելոյի, Առնհեմի, Ալքմարի մասնաճիւղերը, վերաշխուժացուց Վիեննայի մասնաճիւղը եւ մասամբ նորին: Այո՛, վերջին տասնամեակին Եւրոպայի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի ծաղկումն ու կազմաւորումը կը պարտինք Գառնիկ Մկրտիչեանին:

Հ.Մ.Ը.Մ.ի յատկապէս սկառուտական շարքերուն մէջ կազմաւորուող պատանիներն ու երիտասարդները երախտապարտ պիտի ըլլան Գառնիկին, եղբայր Գառնիկին: Անոնք հայեցի դաստիարակութիւն ստացան եւ կը շարունակեն ստանալ այդ շարքերուն մէջ եւ պիտի ծառայեն իրենց գաղութներուն ու ազգին: Եւ այդ ծառայութիւնը ծառայութիւնն է նաեւ Հայ Դատին, մեր գերագոյն իտէպլին, որուն ոգի ի բռին հաւատաց ընկեր Գառնիկը իր ամբողջ կեանքով:

Շնորհակալութիւն, սիրելի՛ Գառնիկ, եւ յարգա՛նք վաստակիդ:



# ԻՐԱՒՈՒՆՔ ՉՈՒՆԷԻՐ...

## Խաժակ Գուլաձեան ԹՈՐՈՆԹՕ

«Ո՞վ կրնայ առազապրանա մը քշել առանց հովի,  
Ո՞վ կրնայ ընկեր մը չգեղ առանց արցունքի»:



**Փ**ոքը էի: Հօրս հետ կ'այցելէի խանութի: Պապան կ'ըսէր՝ «ՔՄ Գառնիկ»ին քով երթանք: Շատ կ'ուրախանայի: Ժամերով կը խօսէիք, բայց ոչինչ կը հասկնայի: Ապա այցելութիւնները «Սարդարապատ» Ժողովրդային Տուն» կ'ըլլային: Այն ատեն սկսայ հասկնալ, որ «Կարեւոր» եւ «գաղտնի» գործերու մասին կը խորհրդակցէիք:

Այդ օրերէն ալ արդէն ես ու դուն բարեկամներ դարձանք: Զիս շատ կը սիրէիր, «Ազատամարտի շիֆացած տղան» կը կանչէիր: Փոխադարձաբար՝ կը սիրէի ու կը յարգէի քեզ: «Սարդարապատ» իւրաքանչիւր այցելութեանս հոն էիր: Կը փաթթուէիք եւ անպայման պաշտիկ մը կու տայիր:

«Սարդարապատ» ակումբը եւ Գառնիկ Մկրտիչեան անունը միաձուլուած էին իրարու: Ո՞ր պուրճ համուտցին քեզ հօր մը նման չէր սիրեր ու յարգեր: Ո՞ր հայր տարբեր խնդրանքներով քեզ դիմած ու մերժուած էր: Ո՞ր Սարդարապատականը չէր հիւսեր գովաբան: Ո՞ր ազգային կառույցը խնդրած էր քու ներդրումը ու ղեկավարութիւնը եւ մերժուած:

Տարիները թաւայեցան: Հաստատուեցայ ովկիանոսին միւս կողմը: Բայց մեր կապը մնաց սերտ: Լիբանան իւրաքանչիւր այցելութեանս անպայման պիտի տեսնուէինք:

2014 թուականի Փետրուարին, երբ ազգային կառույցներն ու Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը կորսնցուցին եղբայր Միհրան Շիշմիրեանը (մօրեղբայրս), գործի գլուխ անցար: Ընտանիքիս հետ եղար առաջին վայրկեանէն, դասակարգելի յուզարկաւորութեան բոլոր գործերը: Մեզի հետ մնացիր մահուան օրէն մինչեւ թաղում, թաղումէն մինչեւ ցաւակցութիւններու աւարտ եւ մինչեւ մահուանը չարաբաստիկ օրը:

2018-ին, իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ այցելեցիր Գանատա եւ կարելի դրիր, որպէսզի բազմազբաղ ժամանակացոյցիդ մէջ կարենաս հետս տեսնուել եւ ծնողքիս համբոյրները փոխանցել: Պատեհ առիթն ալ ունեցանք խօսելու Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակին առիթով կատարուած եւ կատարուելիք աշխատանքներուն մասին, Թորոնթոյի Հայ Կեդրոնի «Նոր Հայ Հորիզոն» հեռուստաժամի եթերէն: Ըսիր՝ «Խաժակ, չեմ հաւատար որ այդ պատիւի Խաժակն ես: Հպարտ եմ քեզ մով»:

Կը յիշե՞ս ընկեր, 2020-ի ամառը հեռաձայնեցիր վերջին անգամ: Որպիսութեան



հեռաձայն մը ըլլալէ բացի, խօսեցար Լիբանանի տագնապալի իրավիճակին մասին, ապա, «Ազգակ»ի մէջ հրատարակուած վերջին յօդուածներու եւ մահախօսականիս անդրադառնալով, շնորհակալութիւն յայտնեցիր, որ յիշած եմ ազգային նուիրեալներ Սեդա Վարժապետեանն ու Մարալ Անթոյեանը՝ աւելցնելով, որ արտասովոր առօրեայ հոգերուդ եւ միութեանական աշխատանքներուդ մէջ, մոռցար ընկերուհիներուն մասին վերջին խօսք մը գրել, եւ ուրախ էիր, որ այդ պարտականութիւնը կատարած էի: Խօսեցար Բիւզանդիին ու Նժդեհին մասին: Միասին յիշեցինք հին օրերը...: Այդ օր ի՞նչ իմանայի, որ ճակատագիրի հեգնանքով այսօր թուղթին պիտի յանձնէի քու մահախօսականը:

Պէտքովի նաւահանգիստի պայթումին հետեւանքներու մեղմացման Լիբանանահայութեան Վերականգնումի Մարմինին ատենապետութիւնը ստանձնած էիր: Հեռակայ կարգով «Նոր Հայ Հորիզոն»ի եթերէն գրուեցինք տարուած աշխատանքներուն մասին: Խանդավառութիւնդ պակասած էր, նոյն Գառնիկը չէիր, բայց պատնէշի վրայ էիր՝ ինչպէս միշտ:

Եւ հա՛ն... Ծննդեան առաւօտուն, աչքերս կը բանամ ու ձեռքս կ'երկարեմ հեռաձայնիս դիմատետրը (այո՛, նորօրեայ լրատուական միջոցը...) ստուգելու: Ցնցուած է տառապող լիբանանահայ գաղութը, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիւռ ընտանիքը... Շառաչուն ապտակ մը ստացած՝ մղկտացի, բայց արցունքներս քարացան: Իմաստ առին միայն երգի մը բառերը՝ «Մահը Դաշնակցութեան մեծ ցաւ պատճառեց...»:

Ընկեր Գառնիկ, եղբայր Գառնիկ... շնորհակալ եմ որ եղար կեանքիս մէջ:

Ընկեր Գառնիկ, եղբայր Գառնիկ... իրաւունք չունէիր թերաւարտ ձգելու գլխաւորած ծրագիրներդ:

Ընկեր Գառնիկ, եղբայր Գառնիկ... վարձքը կատար: Բարեւէ՛ բոլոր ծանօթներուն: Բարեւէ՛ քեռիս՝ եղբ. Միհրանին: Բարեւէ՛ նորոգ հանգուցեալ, Հ.Մ.Ը.Մ-ական այդ սերունդի վերջին մահական՝ եղբ. Պատրիկին:

Բարեւէ՛ նաեւ Մաքրուհի Քոյրիկին... որքա՞ն ուրախ է քեզ դիմաւորելով: Որքա՞ն պատմելիք ունիք իրարու:

Մինչ նոր հանդիպում՝ ննջես բարի:



# ԱՐԴԷՆ ԿԱՐՕՏՑԱՆՔ

## Յակոբ Հաւաթեան ՊԵՅՐՈՒԹ

**Ք**անի մը ամիս անցած են ընկեր Գառնիկի անակընկալ ու անժամանակ բաժանումէն: Ամէն տեղ եւ ամէն օր տակաւին կը սպասենք զինք: Այո՛, ան զըլխաւոր բանաւոր բացական է մեր այսօրուան գործին, խորհրդակցութիւններուն եւ ժողովներուն մէջ, սակայն իր քաղցրահամ խօսքը, արժեւորումները եւ առաջարկները կը շարունակեն տիրական մնալ մեր առօրեային մէջ: Այլ խօսքով, տակաւին չենք կրցած ըմբռնել իր այս վերջին դառն կատակը եւ սպասումի մէջ ենք:

Հաւաքական կեանքը կը հարստանայ ու կը զարգանայ անհատական ներուժի եւ կարողականութեանց ճշգրիտ օգտագործումով, երբ մանաւանդ անհատը ճիշդ ձեւով կը յլտակացնէ իր դերակատարութիւնը ընդհանուր գործին մէջ, որպէսզի իր աշխատանքը դառնայ օգտաշատ մեր կեանքին համար: Իւրաքանչիւր անհատի այս խոր ըմբռնումն ու զի-

տակցութիւնը կարեւոր հանգամանք է մեր հաւաքական գործի յաջողութեան համար:

Գառնիկ հայ կեանքին մէջ ամբողջն ըմբռնած էր իր անձին ճիշդ դերակատարութիւնը, սահմանած էր իր առաքելութիւնը ու ըստ այնմ կը հունաւորէր իր խօսքն ու գործը: Այս իսկ պատճառով իր բացակայութեան ստեղծած ցաւը խորն է ու ճնշող:

Ընտանիքին, հարազատներուն եւ բարեկամներուն միջոցով կողքին կանգնելու ինքնակամօրէն վերցուցած պարտականութիւնը պայծառ ցուցանիչ է անոր վեհանձն նկարագրին, երբ մանաւանդ, բոլորին իսկ վկայութեամբ, այդ աշխատանքը կը կատարէր ամբողջական պատասխանատուութեամբ եւ անհուն հաճոյքով:

Գառնիկին մէջ աստուածատուր բնագոյ էր իր ժողովուրդի բոլոր խաւերուն կողքին կանգնելու, անոնց հետ մտերիմ, սրբտակից եւ վշտակից դառնալու իրողութիւնը, եւ այս բոլորը անշուշտ կ'ուրուագծուէին իր դէմքին արտայայտած ժպտով ու համեստ վերաբերմունքի անկեղծ դրսեւորումով:

Ժողովրդային ղեկավարի բնածին շնորհներով օժտուած եւ սիրուած հասարակական գործիչ էր ան, որ միջոց մերժեց ծայրայեղութիւնը եւ քինախնդրութիւնը ու շատագուր դարձաւ մաքուր ընկերականութեան եւ իրարհասկացողութեան: Ան միջոց ալ բամբասանքն ու չարախօսութիւնը նկատեց ոչ թէ հասցէագրուած անձին հարուածելու վատագի փորձ, այլ ամբողջ հաւաքականութեան սպառնացող չարիք ու ընդհանուր գործը կաթուածահար դարձնելու ամօթայի միտում: Գառնիկ միջոց ալ յորդորեց եւ թելադրեց բոլորին, իր անձին օրինակով, հեռու մնալ այս չարիքէն ու հիւանդութենէն:

Գառնիկ յաջողեցաւ նաեւ ստեղծել շարժում: Շարժման մէջ դրաւ իր պաշտած Հ.Մ.Ը.Մ.ը եւ մեծ ներդրում ունեցաւ անոր յաւելեալ համահայկականացման գործընթացին մէջ:

Այո՛, բոլորս կորսնցուցինք լաւ մարդ մը, անկեղծ ընկեր մը, հասուն ժողովական մը, ճշմարտամային եւ լարուած պահերը յաջողութեամբ կառավարող ու հանդարտեցնող խոհեմ ղեկավար մը:

Վա՛րձքդ կատար, սիրելի՛ ընկեր, արդէն շատ կարօտցանք:







## ՀԱՒԱՍԱՐԱԿՇՈՒՌՈՒՄԸ ԵՒ ՄԱՆՐՈՒՔՆԵՐԷՆ ՎԵՐ ԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐ ԳԱՌՆԻԿԸ

Րաֆֆի Տեմիրձեան  
ՊԵՅՐՈՒԹ

**Ժ**ողովական կեանքին մէջ տարիներէ ի վեր ծանօթ էի ընկեր Գառնիկին, որ իր գերակշիռ ներկայութիւնը ունէր ամէն տեղ: Թեթեւ ժպիտով եւ երբեմն ալ խստապահանջ նայուածքով ինքզինք կը պարտադրէր եւ միշտ ալ կը փորձէր բախումներէ հեռու մնալ՝ հարցերը «սիրով» լուծելով, մանրուքներն ու երկրորդական խնդիրները անտեսելով եւ ըստ-ըստներուն «ականջ չկախելով»:

Վերջին մէկ տարուան ընթացքին, երբ ընկեր Գառնիկ Լիբանանի Հայոց Թեմի Ազգային Վարչութեան կազմին մէջ նկատի առնուած էր, յայտնեց, որ փոխ ատենապետի պաշտօնը պիտի ստանձնէ: Բոլոր անոնք, որոնք կ'ըսէին, թէ ընկեր Գառնիկը աթոռ կը սիրէ եւ աթոռէն չի հրաժարիր, «աթոռ սիրող» ընկեր Գառնիկը տարիներ Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական Վարչութեան ատենապետի պաշտօնը ստանձնելէ եւ աշխարհը դառնալէ ետք, վստահաբար պիտի չստանձնէր փոխ ատենապետութիւնը, եթէ չըլլար համեստ, եւ եթէ չհասկնար խորքը... Փոխ ատենապետութեանն ալ անդին, երբ գործերու պաշտօններու մասին ալ կը խօսէինք, ընկեր Գառնիկը միշտ ալ կ'ըսէր, որ անուանուած երկրորդական է, բան չի փոխեր, եւ մէկու մը կատարած աշխատանքն է, որ պաշտօնը կը ստեղծէ, կ'արժեւորէ, կը բարձրացնէ եւ կամ... աւեր կը գործէ:

Ընկեր Գառնիկ մտահոգ էր Պուրճ Համուտի ընկերային դժուարութիւններն ունեցողներու վիճակով: Ճամբան անծանօթի մը դեղորայքի կարիքի դիմում մը բաւարար էր, որ ենթակային հեռաձայնի թիւը պահէր, վիճակը հասկնար եւ հոսանքն ընկեր Գառնիկին հարցազրուիչը դեղը ապահովէր, ուրիշին տուփ մը ուտելիք յանձնէր, եւ այլ պարագայի մը քաղցկեղի հետեւողական քննութիւններու գումարը ապահովելու դրամահաւաք կազմակերպէր... Պատիկ թողութի մը վրայ անուն-մականոնը, թիւը կը գրէր ու դռները կը զարնէր, որպէսզի թաղեցիներուն ձեռք երկարէր, թիկունք կանգներ: Այո՛, պատահեցաւ օր մը, երբ հարց տուի, թէ կը ճանչնա՞յ պարագան, թէ՞ ոչ. ան շատ պարզութեամբ ըսաւ, թէ պայման չէ, որ ծա-

նօթ ըլլայ, հայ է, եւ ինչի որ պէտք ունի, պէտք է օգտակար դառնանք, որքան որ կրնանք:

Քորոնա ժահրին վտանգը պատճառ չէր, որ ինք իր պարտականութիւնը չկատարէր, հակառակ անոր որ առողջական հարցեր կը դիմադրուէր: Շատ զգոյշ էր, բայց՝ պատասխանատուութեան գիտակից: «Ժողովները միշտ պէտք է գումարներն, այս պայմաններուն պէտք է վարժուինք եւ մեր աշխատանքները շարունակենք» իր ամէնօրեայ խօսքն էր:

Մնայուն կերպով ամէնէն շատ ներկայութիւն եղող դէմքերէն մէկն էր, որ միշտ կը հարցնէր, վարակուողներով կը մտահոգուէր: Տակաւին, ընկեր Գառնիկը Լիբանանի քաղաքացիական եւ Արցախի պատերազմներու մասնակիցներուն հանդէպ յատուկ ակնածանք ունէր: Այդ տղաքը իրեն համար «կարմիր գիծ» էին, որովհետեւ իրենց կեանքերը վտանգած էին, եւ ուստի արժանի էին յատուկ վերաբերումի: Այս տղոց համար, եթէ պէտք ըլլար ժողովներուն «կուր» ալ կ'ընէր...

Գաշնակցութիւնը, Հ.Մ.Ը.Մ-ը եւ եկեղեցին ընկեր Գառնիկի մտահոգութիւններուն առանցքներէն էին: «Սարգարա-





պատ» ակումբի եւ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցիներու ամէնօրեայ այցելութիւններ կատարելը «պարտաւորութիւն» էր: Յետոյ Առաջնորդարանն ալ աւելցաւ: Պուրճ Համուտի շրջուն դեսպանը օրական պէտք էր շրջագայէր, կեդրոնները այցելէր, մարդոց հարցերը լսեր, ընկերներուն մտահոգութիւնները քննէր եւ բոլորին յոյս ներշնչէր, որ այս դժուար օրերը պիտի անցնին: Մարդիկը մտիկ ընելու մեծ սիրտ ունէր...

Պուրճ Համուտցի ընկերը նոյնքան միւս շրջաններով ալ կը մտահոգուէր: Վերջին ամիսներուն ուրախ էր Ֆանարի՝ Լէյլաւանի աշխատանքներով: Շաբաթ չէր անցներ, որ Հարցընէր, թէ Ֆանար ի՞նչ կ'ընենք, որքա՞ն սնտուկ բաժնեցինք, քանի՞ կարիքաւոր կայ, ամէնօրեայ ճաշը ինչպէ՞ս կը պատրաստենք, կամաւոր աշխատողները ինչպէ՞ս կը հաւաքուին, եւ, տակաւին, նոյնիսկ աշխատանքներուն մէջ

Քորոնայի կանխարգելման միջոցները կը յարգուէին: Օր մը կատակով ըսաւ, որ՝ «Ձեր շրջանին համար Քորոնան լաւ եկաւ, որովհետեւ ամէն մարդ ծանօթացաւ Լէյլաւանին», հաստատելով, որ ամէնէն դժուար միջավայրերուն մէջ անգամ կարելի է փոփոխութիւն իրագործել, եթէ աշխատանք կատարուի:

Այո՛, կը զնահատէր աշխատանքը եւ յոյս կը ներշնչէր, սակայն որքան կը մօտենայինք ընկեր Գառնիկին եւ այնքան կը թափանցէինք իր էութեան մէջ, այնքան կը զգայինք իր ներքին ցաւերը: Վերջին ամիսներուն հոգեպէս անհանգիստ էր: Արցախի պարտութիւնը մեծ վիշտ էր, եւ ինքն ալ չէր կրնար «մարսել» դաւաճանութիւնները եւ կորուստները:

«Սիրտս պաղեցուցիր»ը դիմատետրի գրառումներու հետ կապուած տարբեր առիթներով իր կատարած արտայայտութիւններէն մէկն էր:

Իսկ վերջին շաբաթներուն նաեւ մտահոգուած էր իր զաւակներուն ապագայով եւ նեղացած էր, որ որդիներէն մէկը արդէն ճամբորդած էր, իսկ երկրորդը պիտի հեռանար... Տարբեր առիթներով կ'ըսէր, որ՝ «Տունը պիտի պարպուի, բայց հոս ալ ապրիլը դժուար է»: Մտահոգ էր նաեւ, որովհետեւ ինք Պուրճ Համուտի պահպանման ի խնդիր ամէնօրեայ պայ-

քարի մէջ էր, սակայն իր զաւակները իր ծննդավայրին մէջ պիտի չմնան...

2020-ի վերջին գիշերը ընկեր Գառնիկը հեռաձայնեց, բայց Քորոնայով վարակուած անհանգիստ վիճակիս մէջ չպատասխանեցի: 2021-ին առաջին օրը զանգեցի ընկերոջ, որ յայտնեց, որ եթէ բանի մը պէտք ունենամ, անպայման ըսեմ, որպէսզի ապահովէ: Յայտնեցի,

թէ ամէն ինչ կարգին է, շրջանի տղաքն ալ արդէն միշտ պատրաստ են օգտակար դառնալու, սակայն երկու անգամ եւս միեւնոյն խօսքը արտասանեց... Յետոյ հաստատեց, որ «Շուտով պիտի անցնեմ եւ վերադառնամ առօրեայիս»:

Ափսոս է, որ ընկերը երբ այդ մաղթանքները կը փոխանցէր, տեղեակ չէր, որ ինք ժահրով վարակուած էր: Ճիշդ է, որ շատ ալ շուտ չանցուցի Քորոնան, սակայն յաղթահարեցի եւ մասամբ վերադարձայ առօրեայիս, բայց այս անգամ ինք չկար...

Գրասենեակ վերադարձայ, բայց շատ բան փոխուած էր, եւ վերջին ամիսներու ամէնօրեայ զրուցակիցս չկար: Այսօրւան առաւել դժուարին եւ տագնապալի պայմաններուն մէջ «ընկեր, տերտ մի՛ ըներ» ըսողը չկայ:

Վատ պայմաններուն մէջ մնացին միայն ընկեր Գառնիկին լաւ ու ջերմ յիշատակները...

Ամպերէն անդին՝ ընկերական ջերմ բարեւներ, սիրելի՛ եւ յարգելի ընկերս...



# ՄԻՐԵԼԻ ԵՂՔՕՐՄ՝ ԳԱՌՆԻԿԻՆ

**6** Յունուար 2021. Սուրբ Ծնունդի օր՝ քու սիրած եւ յարգած օրերէն մէկը, հրաժեշտ տուիր այս կեանքին՝ ետիդ լքելով հազարաւոր մարդիկ, որոնք կը սիրէին քեզի: Ամբողջ աշխարհը կսկիծով եւ հեկեկալով ընկալեց այս ահաւոր լուրը: Ես պիտի չխօսիմ քու ազնուական բարի հոգի- իդ մասին, այլ՝ սրտի խոր կսկիծով պիտի գրեմ քու մասիդ իբրեւ հայր, եղբայր, ընկեր եւ ամէնէն կարեւորը՝ իբրեւ հայ մարդ:

Ինչպէս բոլորը ըսին, ես ալ «բառեր չեմ գտներ» քու անձիդ մասին խօսելու, բայց պարտաւոր կը զգամ շնորհակալութիւն յայտնել քու բոլոր զոհողութիւններուդ համար, զորս ըրած ես մեզի համար՝ միշտ առանց որեւէ ակնկալութեան:

Հօրս մահէն ետք եղար հայրս, պահապան հրեշտակս, բոլոր դժուարութիւններու պարագային դո՛ւն գիս խրատեցիր, համոզեցիր, հանդարտեցուցիր եւ սորվեցուցիր, որ այս բոլորը կ'անցնին, բայց պէտք է մնալ միշտ հաւասարակշռուած եւ պատշաճ: Տան մէջ քու ներկայութիւնդ իւրայատուկ էր, խանդավառութիւն կը փոխանցէր բոլորիս, միջնորդութիւն ուրիշ կ'ըլլար, եւ մեր Կիրակի օրուան ճաշի ժամուն կը խօսէինք, կը խնդայինք, երբեմն կ'երգէինք, բայց միշտ ուրախ եւ զուարթ միջնորդութիւն կը տիրէր հոն, ուր դուն ներկայ էիր:

Գուրգուրացող էիր բոլորիս նկատմամբ, իսկ սօնական օրերը դարձեալ քեզի համար յատկանշական էին: Կ'ուզէիր հաւաքուիլ ընտանեկան յարկի տակ, կը յարգէիր բոլոր եկեղեցական օրէնքները: Տօնական օրերուն կ'այցելէիր ընտանիքիդ մեծերուն՝ անոնց Նոր Տարին կամ Սուրբ Ծնունդը շնորհաւորելու, յարգանք կը տածէիր բոլորին նկատմամբ, առանց որեւէ բացառութեան:



Իսկ դուն, քու բոլոր դժուարութիւններդ անցուցիր լուեւայն, պայքարեցար կեանքին դէմ եւ միշտ մնացիր գլխադիր **ԸՆԿԵՐ ԳԱՌՆԻԿ**-ը:

Կեանքդ նուիրեցիր ազգին, եղար բոլորին ընկեր ու բարեկամ, անոնց ցաւերը, գանգատները լսեցիր միշտ եւ լայն սրտով, երբեմն նոյնիսկ ընտանիքիդ շահերը կորսնցնելու գնով: Դուն տարբեր էիր բոլորէն. ուրիշները կամ ուրիշներուն հարցերը միշտ առաջնահերթութիւն կը նկատէիր, եւ ատկէ ետք՝ ընտանիքիդ հարցերը:

Հաւատացիր Պուրճ Համուտը պահելու եւ պահպանելու գաղափարին, մինչեւ վերջին օրերդ մօտէն հետեւեցար ամէնէն մեծ ու փոքր հարցերուն, թաղերու կարգապահութեան՝ միշտ հաւատարմով, որ Պուրճ Համուտը սիրտն է հայութեան:

«Սարգարապատ» ակումբը եղաւ քու առաջին տունդ, դըպրոցդ, համալսարանդ: Տիպար դաշնակցականի կեցուածքով ապրեցար՝ միշտ կրկնելով, որ դաշնակցականը պէտք է ըլլայ օրինակելի մարդ եւ պէտք է տարբերի միւսներէն իր կեցուածքով եւ համեստութեամբ: Կը սիրէիր գործել լուեւայն եւ ամենայն գաղտնապահութեամբ:

Վերջին օրերուդ քեզի մեծ ցաւ պատճառեց Արցախեան պատերազմը, Արցախը յանձնելը, եւ բոլոր նահատակներուն համար տխուր էիր:

Հիմա, որ դուն բաժնուեցար մեզմէ, բայց այս անգամ անվերադարձ, տխուր ենք բոլորս եւ շատ դժուար պիտի ըլլայ ընդունիլ այս յաւերժական բաժանումը: Դուն միշտ պիտի մնաս մեր սրտերուն եւ հոգիներուն մէջ: Բնաւ չէի երեւակայած, որ օր մը ես քեզի համար պիտի երգեմ «Վէրքերով լի»: Շատ ծանր էր այդ պահը, երբ գերեզմանիդ շուրջ քեզի համար երգեցի պոռթկումով եւ ցաւով:

Երթա՛ս բարով ընկեր, դուն միշտ պիտի մնաս իմ հրեշտակս, բայց այս անգամ վերէն դիտելով մեզ՝ այն յոյսով որ օր մը դարձեալ պիտի տեսնուինք:



Քոյրդ՝  
**ԱՆԻ ՄԿՐՏԻՉԵԱՆ-ՏԵՐՏԵՐԵԱՆ**



## ՄԻՐԵՑԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ, ՆՆՁԷ՛ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ...

**Նորա Բարսեղեան  
ՊԷՅՐՈՒԹ**

*Մարդը մարդ չի կրնար ըլլալ չեռքերը ծալած, աչքերը շլմորում, ոտքերը քափառաշրջիկ եւ միայն բերանը բաց դափարկ խօսքի որպէս հրաբուխ: Մարդը մարդ է, երբ իր չեռքերուն կու տայ շարժում, երբ իր աչքերը կը յառէ նպատակակէտի մը, երբ իր ոտքերը կը քալեն նպատակասլաց գնացքով, երբ իր շրթները կը շարժին իմաստաւոր եւ շինիչ խօսքերով: **ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ***



2014, Երեւան.  
պաշտպանութեան  
նախարար Դաւիթ  
Տօնոյեանի հետ:

Սիրելի՛ ընկեր ու եղբայր Գառնիկ,  
Ուշ գիշեր է, տիրող խաղաղութիւնն ու լռութիւնը արտօնեցին ըլլալ քեզմէ ունեցած յիշատակներուս հետ, համախրմբել տարբեր առիթներով քու արտայայտած մտածումներդ, որոնք նաեւ զիս մտածելու մղած են, մաղել բազում տպաւորութիւններէս մի քանին եւ յիշելով քու գրած եւ յաճախ ուշացած ինծի հասցուցած մահազրուութիւններդ թերթին յանձնելու խնդրանքով կրկնած խօսքդ՝ «Ուշացայ, գիտեմ, բայց խնդրեմ տպես, մարդոց մեծ թէ փոքր արժանիքներուն անպայման պէտք է անդրադառնալ, յիշել անոնց կատարած գործը ու յարգել յիշատակը», տեղաւորուեցայ համակարգիչիս դիմաց: Երբ կը պատրաստուէի փակել դիմատետրի էջս, որպէսզի կեդրոնանայի քեզի նուիրուած գրութեանս վրայ, յանկարծ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին նկարն ու վերոյիշեալ տողերը ցնցեցին ամբողջ էութիւնս: Քանի մը անգամ կարդացի, չհաւատացի զուգադիպութեան, որովհետեւ իսկապէս քեզ տեսայ այս տողերուն մէջ, կարծես քեզի համար գրուած ըլլային: «Մարդը մարդ է, երբ իր ձեռքերուն կու տայ շարժում, երբ իր աչքերը կը յառէ նպատակակէտի մը, երբ իր ոտքերը կը քալեն նպատակասլաց գնացքով, երբ իր շրթները կը շարժին իմաստաւոր եւ շինիչ խօսքերով»: Դուն ՄԱՐԴ էիր, շարժում էիր անդադար, նպատակակէտեր ունէիր բազում, ոտքերդ քեզ կը տանէին, երբեմն յոգնեցուցիչ ըլլալով հանդերձ, հեռաւոր երկիրներ ու գա-



ղուլթներ, որպէսզի հաւաքական նպատակներն ու շահերը իրականութիւն դարձնելու մէջ քու ներդրումդ ունենայիր, իսկ խօսքերդ՝ միշտ իմաստ ունեցող, համերաշխութիւն սերմանող, շինիչ, կերտելու եւ գոյատեւելու մղող:

Լաւ կը յիշեմ քեզի հետ ունեցած առաջին անուղղակի, բայց տպաւորիչ հանդիպումս: Փոքր տարիքէս մաս չեմ կազմած Հ.Մ.Ը.Մ.ին, չեմ եղած տարագաւոր, այլ բարեկամներու առաջարկով անդամակցեցայ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին, ուր կեանքը կ'եռար, խանդավառութիւնը տիրական էր, սկառստներուն աշխատանքը մեղուաջան էր, իսկ Հ.Մ.Ը.Մ.ին ու անոր բազմաճիւղ գործունէութեան ծանօթանալու համար պէտք էր այդ մեծ դպրոցին լաւ աշակերտը ըլլալ, դասարան առ դասարան բարձրանալ, որովհետեւ չա՛տ բան կար սորվելիք:

Շատ ժամանակ չէր անցած Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալէս, տակաւին այդ դպրոցին բարձր դասարաններուն հասնելու առիթ չէի ունեցած: Անդամական առաջին ընդհանուր ժողովիս ծայր տուած անտեղի վէճ մը, լաւ կը յիշեմ, կարծես վայրկեանի մը համար փոքր տարիքէն Հ.Մ.Ը.Մ.ի մասին մտքիս մէջ ուրուազած վեհ ու անբիծ պատկերէն բան մը փոխեց, խռովք մը ստեղծեց հոգիիս խորերը: Մինչ այդ ձայն առաւ ինծի համար անծանօթ եղբայր մը, որուն ոտքի կանգնելով՝ արդէն լուրսիւն տիրեց սրահին մէջ, իսկ ան հանդարտ ոճով, ձայնի տպաւորիչ կշռոյթով, տրամաբանական հիմնաւորումներով մեղմացուց չիկացած միջնորդը, ներկայացուց առաջարկներ եւ լուծումներ, որոնք ընդունելի եղան վիճող երկու կողմերուն համար ալ՝ «ոսկեայ միջին»ով գոհունակութիւն ստեղծելով եւ միութենականի վարքն ու բարքը վերահաստատելով: Անփորձ Հ.Մ.Ը.Մ.ականի աչքերս լայն բացած՝ մտիկ ըրի այդ եղբոր եւ խորապէս տպաւորուեցայ իրմով:

Այդ ժողովէն որոշ ժամանակ ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի Սկառտական Խորհուրդի փոթորկոտ նիստի մը ընթացքին, երբ ձայները բարձրացան, եւ տեսակէտները այնքան բազմացան, որ հասարակ յայտարար գտնելը գրեթէ անկարելի դարձաւ, Հ.Մ.Ը.Մ.ի դուռը դիմացս բա-

ցած եւ այդ պահուն քովս նստած եղբայր Ֆէտի Թափրային ականջին փսփսացի. «Հաճիս, դիմենք այն եղբոր, որ անդամական ժողովին ալեկոծ ծովը խաղաղեցուց»: Ֆէտին բարձրաձայն ու լիաթոք խնդաց՝ «Շատ ճիշդ նկատեր ես» ըսելով:

Միջնորդը խաղաղեցնողը դ՛ու՛ն էիր, եղբայր Գառնիկ: Չէի սխալած վստահաբար, իսկ այդ տպաւորութեանս փաստը միշտ ցցուն կերպով երեւցաւ, երբ միութենական թէ՛ այլ ժողովներու միասին գտնուեցանք, երբ անլոյծ թուացող հարցերուն լուծումներ առաջարկողի դերքին մէջ եղար միշտ, երբ բարձրաստիճան ժողովներու նախագահողի հանգամանքէ հանգստութիւն առթեց ժողովականներուն, որովհետեւ կարողութիւնը ունէիր թափանցելու մարդոց հոգեկանին խորը, երբեմն կուահելու ըսուելիք խօսքը՝ լսուելէն առաջ իսկ, առաջը առնելու անհամ վիճակներու, յատկապէս՝ վիրաւորական կեցուածքներու եւ փակուղի առաջնորդող քաշքշուքներու:

Ժամանակն ու հանդիպումները մեր միջեւ ստեղծեցին թանկագին մտերմութիւն մը, որուն հիմքը քու կողմէդ մարդը արժեւորելու եւ անոր միշտ յարգանքով մօտենալու սկզբունքն էր: Չէր պատահեր, որ «Ազդակ»ի խմբագրատուն մտնէիր եւ մեր սենեակը չզայր բարեւելու, որպիսութիւն հարցնելու: Չէր պատահեր, որ Պուրճ Համուտի փողոցներուն մէջ երբ հանդիպէինք, կանգ չառնէիր, մտերմօրէն չզրուցէինք: Չէր պատահեր, որ ժողովներուն յատուկ կերպով չմօտենայիր, չսեղմէիր ձեռքս, եւ տարբեր նիւթերու մասին չխօսէինք: Տարբեր անհատականութիւն մըն էիր, հակառակ ամէն ինչի, մեծ հաւատք արմատաւորուած էր մէջդ քու ազգիդ, հայրենիքիդ, կուսակցութեանդ եւ միութեանդ նկատմամբ: Ի զուր չէր, որ երբ գանգատէի Հ.Մ.Ը.Մ.ի մէջ եղած բնական ալեկոծումներէն, որոնց դուն ինձմէ բազմապատիկ անգամներ ականատես եղած կ'ըլլայիր, աչքերուս խորերը նայելով՝ կ'ըսէիր. «Վէճեր պիտի ըլլան, տարակարծութիւնները բնական են, բարձր ձայները պիտի մեղմանան, չկարծես՝ ասոնց մէջ է Հ.Մ.Ը.Մ.ը, որ վեր է այս բոլորէն, եւ որուն գաղտնիքը միութենականներուն քոյր-եղբայր ըլլալու, ամէն գնով այս միութեան երդիքին տակ համախմբուելու եւ միասին գործը յառաջ տանելու մէջ է»:

Շատ հաճելի էր քեզի հանդիպիլ ժողովներու, Պուրճ Համուտի փողոցներուն մէջ, ուր քեզ տեսնելը բնական երեւոյթ էր, քեզի հետ հարցազրոյցներ ընել, խօսիլ խաղաղ կամ փոթորկոտ նիւթերու մասին, քաղել քու փորձառութիւններէդ ծաղկած շինիչ խորհուրդներ, սորվիլ քեզմէ՝ ուղղակի կամ անուղղակի կերպով: Մէկ խօսքով, հաճելի ներկայութիւն էիր, ո՛ւր եւ ե՛րբ ալ ըլլար, դրական ներուժը քեզմէ կը փոխանցուէր ուրիշին եւ վարակիչ կը դառնար:

Կ'ըսեն, որ անկրկնելի եւ անփոխարինելի մարդ չկայ, բայց երբ արագ ակնարկ մը նետեմ քու ապրած կեանքիդ՝ հարուստ եւ օրինակելի, գոնէ որքան հասցուցած եմ գիտնալ, երբ մտաբերեմ, որ ինչպէս գործած ես ազգիդ, յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ին համար, այնքան, որ վերջին տասնամեակի միութեան պատմութիւնն ու անունը միաձուլուած են, երբ վերյիշեմ, թէ որքան փափկանկատ եւ ուշադիր էիր ամէնէն պարզ մարդէն մինչեւ բարձրագոյն մակարդակի անձնաւորութեան նկատմամբ, երբ մտաբերեմ, որ մէկ օրուան մէջ սուրճ կը խմէիր նախագահներուն հետ ալ, սրճեփներուն ալ, երբ յիշեմ, որ այն անձն էիր, որ լաւ դաշնակցական ըլլալով հանդերձ լեզու կը գտնէիր բոլորին հետ, երբ յիշեմ որքան տաքնապեցար Պէյ-



2017. Համա-Յ.Ս.Ս.ական  
ժ. մարզախնայեր, Երևան:

րուծի նաև հանգիստի պայթուցիկ էությունը՝ իբրև Լիբանանահայտնական Վերականգնումի Մարմինի ատենապետ հասնելու բոլորին, չմոռնալու մէկը, ի պաշտօնէ եւ անպաշտօն գործնական կերպով նեցուկ կանգնելով ընկերային դժուարութիւններ դիմագրաւող, սակայն այդ մասին արտայայտուելի դժուարացողներուն, առանց երբեք անոնց արժանապատուութիւնը վիրաւորելու, նաեւ երբ յիշեմ, որ ես իբրև մարդ որքան ոյժ կ'առնէի քեզմէ, երբ ձեռքդ ուսիս դնէիր եւ սեղմէիր, ԱՅՈՒ, ուրեմն, անփոխարինելիներուն կարգին ես, բոլորին կողմէ սիրուած եւ յարգուած եղբայր, ընկեր, պարոն Գառնիկ, որ հսկայ բաց մը ձգած անժամանակ ու առյալէտ հեռացար մեզմէ:

Պիտի փնտռենք քեզ անպայման, զգանք ստեղծելիք բացիլդ ծանրութիւնն ու խորութիւնը, փորձենք նմանիլ քեզի, պիտի պահենք քեզ իբրև օրինակելի ՀԱՅ մարդու պայծառ յիշատակ եւ մնայուն յուշարար:

Սիրելի՛ եղբայր-ընկեր Գառնիկ,

Թաղմանդ օրը, երբ Պուրճ Համուտի մէջ տխուր ու լուռ տողանցքդ, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ խորհրդաւոր յուղարկաւորութիւնդ, Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մէջ արժանաւոր թաղումդ, դամբանական խօսքերը աւարտեցան, մեզմէ առյալէտ հրաժեշտ առիր «Վէրքերով լի»ով, եւ արդէն դուրս պիտի գայինք գերեզմանատան դարպասէն, կինդ՝ Մարալը, որուն մէջ կը մարմնաւորուի ազգին նուիրուած ամուսինի մը կողքին կանգնելու կերպարը, դիմելով քրոջ՝ կողորդը խեղդող ձայնով հարց տուաւ. «Վերջացա՞ւ յայտագիրը, Գառնիկը այսպիսով փակե՞ց յայտագիրը...»:

Չէր սխալած Մարալը, քու Փիզիքական գոյութիւնդ աւարտեցաւ, կեանքի թելը շատ արագ եւ անսպասելի կերպով անջատուեցաւ, ցաւ ի սիրտ, բայց քու յայտագիրդ անվերջ է, որովհետեւ դուն հատիկ-հատիկ սերմեր ցանցիր աշխարհով մէկ՝ քու գուրգուրոտ ափերովդ, բազում եւ բազմաճիւղ յայտագիրներ գծեցիր ամէնուրեք, շունչ եւ աւիւն տուիր բազմաթիւ գաղութներու, ուստի, այդ սերմերդ պիտի աճին անպայման, իսկ որոմները բնականաբար պիտի իյնան հեռու, պիտի շարունակուի հարուստ եւ ազգօգուտ յայտագիրդ, որ վեր է անձնականութենէ, այլ կը պատկանի ազգին, հայրենիքին ու միութեան:

Ննջ՛ խաղաղութեամբ, ինչպէս ուզեցիր ապրիլ եւ ապրեցար: Պիտի չմոռնանք քեզ վստահաբար, պիտի սիրենք ու յարգենք քեզ յաւիտեան:



### Նժդեհ Սկրտիչեան ՊԵՅՐՈՒԹ

«Երկու վիթխարի ուժերու հանդիպման կէտը, երկու յաւիտենականութեանց. ձայնին եւ լռութեան, շարժուն աղաղակող կեանքին եւ ցուրպ մահուան հանդիպման կէտը. հոն, ուր մէկը կը մեռնի, եւ անմիջապէս միւսը կը ծնի... հոգիներու այդ նօ մէնգ լէնպը»:

Երբեք չէի պարկերացներ, որ օր մը Կարօ Փոլարեանի այս փողերը ապրողը պիտի ըլլայի...

6 Յունուարի առաւօտուն, երբ պիտի լսէինք Յիսուս Քրիստոսի ծննդեան անսպասելի, սրացանք ամէնէն ցնցիչ բօթը՝ հօրս մահուան լուրը:

Երբ պիտի շնորհատրէինք մեր հարազատները եւ սրանայինք շնորհատրանքներ, սրացանք ցաւակցութիւններ:

Երբ պիտի նշէինք Ծնունդը... սզացինք մահը:

Գիտեմ, որ մահը անխուսափելի է, կեանքին օրէնքն է, սակայն երբեք չէի պարկերացներ, որ այսքան շուր, այսքան անակնկալ ձեռով այդ օրէնքը պիտի կիրարկուի 58 փարեկան հօրս կեանքին վրայ:

Աւելի՛ն, հօրս նկարագիրը լաւ գիտնալով, չէի պարկերացներ, թէ ան մեկնի առանց համադրելու, դասատրելու, կազմակերպելու ամէն ինչ, ամէնէն փոքր մանրամասնութիւնն անգամ:

Մեկնի առանձին, լո՛ւ, առանց նոյնիսկ ցրեսութիւն ըսելու:

Մեկնի առանց համբոյրի, փաթեռուկի եւ՝ «Մամային լաւ նայեցէ՛ք իմ բացակայութեանս» ըսելու, ինչպէս կ'ընէր ու կ'ըսէր իւրաքանչիւր ճամբորդութենէ առաջ:

Վաղաժամ եւ անսպասելի մեկնումը զգացումներու վերիվայրումներ յառաջացուց:

Կորուստի ցաւ, այլեւս զինք չընտելու կսկիծ, միասին զրուցելու, ուրախանալու, փխրելու, ուրբելու, խմելու առիթի չգոյութեան եւ հայրական խրապներու բացակայութեան վիշտ, միասին ապրելու, իրարու օգնելու եւ միասնաբար կեանքի բնական ընթացքը վայելելը անաւարտ ձգելու ափսոսանք:

Իսկ միւս կողմէ, իրեն նման հայր ունենալու, իր գաւազը ըլլալու բախտաւորութիւն, իր աշխա-



## ԵՐԿԻՆՔԷՆ ԿՏՈՐ ՄԸ

փանքներով եւ գործունեութեամբ՝ հպարտութիւն, իրեն հետ ապրելու, իր խրատները լսելու, իրմէ սորվելու գոհունակութիւն:

Ինչպէս որ իր կուսակցական, միութենական եւ ազգային կեանքին մէջ ունէր իւրայայտուկ աշխարհայայտ եւ հարցերու մօտեցում, նոյն ձեւով ալ, փան մէջ՝ թէ՛ իբրեւ հայր, թէ՛ իբրեւ ամուսին ունէր հեղափոխական եւ օրինակելի փիլոսոփայ մը ըլլալու յարկութիւնները, իսկ անոր բացակայութեան երբեք կարելի պիտի չըլլայ վարժուիլ, համոզուիլ, որ մեր կողքին չէ ալ, եւ այդ բացակայութիւնը միշտ պիտի զգանք: Սրտեղծը՝ ամբողջ երբեք պիտի չփակուի օրերու եւ փարիներու փոփոխութեամբ:

Նակառակ այն իրողութեան, որ իր կեանքին մեծամասնութիւնը յարկացուցած էր միութենական եւ կուսակցական աշխարհայայտին, ան երբեք չէր թերանար ընդհանրին հանդէպ իր ունեցած պարասխանաբարութիւններուն մէջ, չէր զլանար անոր: Նակառակ իր ծանրաբեռնուած ժամանակացոյցին, կամ հանդիպումներով եւ ժողովներով խճողուած ժամերուն, ան կը յաջողէր համադրել իր առօրեան, որպէսզի կարենար իր ընդհանրին հետ ըլլալ. ամէնէն պարզ օրինակներէն մէկը կէսօրուան ճաշի ժամն էր, որ անփոփոխ մնաց փարիներ շարունակ, եւ կը շարունակէ նոյնը մնալ՝ նոյնիսկ մահէն ետք:

Նոգաբար հայր էր, բարի, ազնիւ, գուրգուրացող, լսող, օգնող, բժախնդիր, համբերող, հարկ եղած արեւն՝ խիստ, պահանջկոտ, բայց նաեւ՝ կարակատեր ու ընկերային:

Նարցերը կը լուծէր ամենայն ճկունութեամբ, կը յանդիմանէր առանց նոյնիսկ ձայնը բարձրացնելու, կը խօսէր, կը խրատէր հանդարտութեամբ:

Կեանքի դասեր, բարոյական արժանիքներ ու արժէքներ կը փոխանցէր, կը սորվեցնէր գործնական օրինակներով, պարամութիւններով, հեղափոխական ձեւով՝ յարմար առիթը գտնելով եւ օգտագործելով:

Կը մղէր աշխարհայայտի, կ'օգնէր կերպելու մեր անհարականութիւնը, կը քաջալերէր, կը հեղափոխէր:

Կ'օգնէր բոլորին, կը հասնէր բոլորին՝ առանց ակընկալութեան: Կը լսէր բոլորին հարցերը: Կը ցաւէր ուրիշին ցաւով, կը մտախոհուէր ուրիշին մտախոհու-

թեամբ, կ'ուրախանար ուրիշին ուրախութեամբ, կը հպարտանար ուրիշին յաջողութեամբ:

Կը յարգէր, յարգանք կը պարտադրէր ու կը սորվեցնէր յարգել:

Կարելի է փակաին երկար խօսիլ իր յարկութիւններուն եւ արժանիքներուն մասին, իսկ եթէ ան 58 փարիներու փոխարէն ապրէր 78 փարի, ինչու ոչ՝ 88 փարի, բայց...

Այո՛, կանուխ էր եւ շա՛րք: Տակաւին շար բան ունէր սորվեցնելիք, շար բան ունէր ըսելիք եւ ընելիք՝ ըլլայ ընդհանրական կամ միութենական կեանքին մէջ:

Պէտք է աւելի ապրէր, որպէսզի կարենայինք վայելիլ հայր ու զաւակի գեղեցկագոյն փուլը՝ մտերիմ ընկերներ ըլլալու իւրայայտուկ փարիները:

Պէտք է աւելի ապրէր ու փեսներ իր զաւակներուն յաջողութիւնները ու ժպտէր իրեն յարուկ ժպտով՝ ամէն անգամ որ «Գառնիկին փղան» արտայայտութեան փոխարէն լսէր «Բիւզանդին/Նժդեհին պապան» արտայայտութիւնը:

Պէտք է աւելի ապրէր ու մասնակից դառնար մեր ուրախութիւններուն, վայելէր մեզ:


Իսկ աւելի ցաւալին մօրս խօսքն է, գոր քանի մը շաբաթ միշտ կ'ըսէ ու կը կրկնէ՝ ավստսալով. «Իր հայրը զինք չվայելեց, ինքն ալ իր զաւակները չվայելեց պէտք եղածին չափ»:

Պէտք է աւելի ապրէր ու ծերանար, դառնար մեծ հայր...

Պէտք է աւելի ապրէր, ճիշդ է, բայց նաեւ պէտք է հասարակել, որ փարիներու քանակը չէ կարետորը, այլ՝ «ի՛նչպէս ապրիլ»ը: Ան իր ապրած փարիները յաջողեցաւ արժետրել, յաջողեցաւ դառնալ իրենց անձ շարերու համար, առաւելաբար մեզի համար, յաջողեցաւ լաւ եւ հպարտանալի անուն ձգել, ամէն փեղ դրոշմ, ամէն փեղ եւ շարերու մօր յիշատակներ, յաջողեցաւ բարձրանալ եւ իրեն հետ բարձրացնել բոլորը:

Իսկ հիմա, ժամանակն է, որ աւելի՛ բարձրանաս, պա՛պ: Վե՛ր, դէպի երկինք:

Մենք ալ պիտի նայինք վեր, մեր գլուխները բարձր՝ միշտ հպարտութեամբ երկինքէն կտոր մը ունենալու բախտաւորութեամբ:



## ՀԱՅՈՒՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒՆ ՆՈՒՒՐՈՒԱԾ ԿԵԱՆՔ ՄԸ

**Դոկտ. Գրայր Եկալժեան  
Ընդհանուր քարտուղար Արաբական ծոցի  
Աստուածաշունչի Ընկերութեան  
ՔՈՒՅԹ**

Կեանքը Աստուծոյ կողմէ տրուած շնորհք մըն է մարդուն, եւ մարդը կ'ապրի իրեն տրուած այս օրհնաբեր կեանքը աշխարհի մէջ, բայց պարտի արժեքները՝ զայն դարձեալ նուիրելով Աստուծոյ: Մարդը կրնայ իրեն տրուած այս կեանքը նուիրել՝ Աստուծոյ ծառայութեան գործընթացի մը մէջէն, որ Աստուածահաճոյ առաքելութիւն մըն է: Քրիստոնէական Աստուածաբանութեան եւ Աստուածաշունչին մէջ կը գործածուի «Diakonia» յունարէն արմատէն սեռած բառը, որուն հայերէն բացատրութիւնը կը տրուի իբրեւ սպասարկութիւն: Սպասարկութիւնը կը դառնայ կեանք մը, որ ունի ընդհանրական հասկացողութիւն եւ բովանդակութիւն: Ան կրնայ իր մէջ ներառել ապրուած կեանքին բոլոր բնագաւառները, նպատակ ունենալով օգտակար ըլլալ մարդուն եւ աշխատիլ անոր հաւաքական կեանքի բարորութեան եւ զարգացման համար:

Այս իմաստով, Գառնիկ Մկրտիչեանին ապրած կեանքը եղաւ սպասարկութեան՝ իմա ծառայութեան նուիրուած տեսլական մը: Ան իր համակ կեանքը նուիրեց հայուն, համահայկական իմաստով, բայց նաեւ՝ Լիբանանի եւ լիբանանահայուն, ի մասնաւորի: Գառնիկին համար ազգային ինքնութիւնը եւ հասկացողութիւնը թարգմանուած էր իբրեւ ծառայութեան համար ապրող կեանք մը: Եւ այս իմաստով ան ծառայեց Հայ Եկեղեցիին, Հ.Մ.Ը.Մ.ին, Համազգայինին ու իր անդամագրուած կուսակցութեան՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, տարբեր մակարդակներու վրայ:

Գառնիկ հաւատաց հայ երիտասարդին դաստիարակութեան եւ ճիշդ չինայեց, որպէսզի կարենայ ջամբել «Բարձրացիր-բարձրացուր» տեսլականը Սփիւռքի, Հայաստանի եւ Արցախի մէջ: Եւ հո՛ս էր Գառնիկի կեանքին համահայկական նուիրումը: Բայց ան նոյնքան կառչեցաւ իր սիրելի Լիբանանին եւ անոր քաղաքացիական պատերազմի դժուար օրերուն միշտ մնաց պատնէշի վրայ՝ հասնելով բոլորին: Իր վերջին առաքելութիւնը Լիբանանահայութեան վերականգնումի Մարմինին ստանձնած առաջնորդութիւնն էր: Ինչ խօսք, որ դժուար պարտականութիւն մըն էր, զոր կատարեց ամենայն բծախնդրութեամբ: Մեր վերջին խօսակցութիւնը Գառնիկին հետ եղաւ հեռաձայնով: Քուէյթի մէջ, լիբանանահայութեան նիւթական օժանդակութեան մեր կազմակերպած աշխատանքները կը փորձէի համադրել իրեն հետ: «Հրա՛յր, դուն լիբանանահայ ես եւ ուր որ երթաս լոյս կը սփռես» եղաւ իր քաջալերական խօսքը ինծի: Իսկ եթէ ես լոյս կը սփռէի, քանի դուն՝ Գառնիկ միշտ լոյսին եւ անոր տարածման առաքելութեանը ջատագովը եղար մինչեւ վերջին շունչը:

Անժամանակ էր Գառնիկին մահը: Տակաւին շատ գործ ու-







նէր իրագործելու եւ յաջողցնելու: Մեր հայ իրականութեան եւ անոր ղեկավար տարրին տակաւ նօսրացող թիւին համեմատութեան մէջէն աշխոյժ առաջնորդ մը կորսնցուցինք: Եւ այս մեծ կորուստ է:

Ասկէ առաջ մատնանշած ենք հարցում մը, հասկացողութեան մը բնութագրումի ճամբով: «Ինչո՞ւ» հարցումը կ'երեւի պատասխան չունի: «Ինչո՞ւ Գառնիկ կանխահաս պիտի բաժնուէր մեզմէն»: Բայց կայ այլ հարցում մը, որուն պատասխանը կ'երեւի մենք պիտի կարենանք գտնել: «Ի՞նչ պիտի ընենք»: Եւ Գառնիկը տուաւ այս հարցումին պատասխանը եւ կը շարունակէ՝ նոյնիսկ երբ ան ֆիզիքապէս մեզի հետ չէ այլեւս: «Պէտք է կերտել կեանքեր, որոնց հիմքը սպասարկութիւնն է»: Ծառայութեան կեանքեր, ուր հայուն մէջ պիտի դարբնէ Արժէքի գիտակցութիւնը: Արժէք՝ ազգային ինքնութեան, պատկանելիութեան եւ գիտակցութեան համար: Եւ Գառնիկ այս տեսակի նուիրուած կեանքն է որ ապրեցաւ եւ մեզի կը ձգէ այսօր իբրեւ պատգամ:

Հայութիւնը ընդհանրապէս եւ լիբանանահայութիւնը մասնաւորապէս կորսնցուցին նուիրեալ եւ հաւատաւոր հայորդի մը, որուն կեանքը եղաւ համակ նուիրում իր ազգին: Իսկ ես կորսնցուցի բարեկամ մը, որուն հանդէպ պիտի շարունակեմ պահել յարգանքս ու սէրս: Յարգանք իր կեանքին, որ եղաւ ծառայութիւն իր ազգին: Եւ սէր իր հոգիին ու անոր ջերմ հաղորդականութեան, որուն մէջէն ան կերտեց բարեկամութիւն: Յաւակցութիւններ իր կողակիցին, զաւակներուն եւ հարազատներուն:



**Յաւակցութիւններ Լիբանանի Ազգային Առաջնորդարանին:**

Յաւակցութիւններ այն բոլոր կազմակերպութիւններուն, որոնց համար ան ծառայեց:

Յարգանք Գառնիկի ապրած կեանքին, հայուն եւ լիբանանահայուն նուիրուած իր կեանքին:

Աղօթքով կը միանամ եւ Սուրբ Հոգիին մխիթարութիւնը կը հայցեմ:



**ՎԼԽԱՌՈՐ ԳԵՐ ՈՒՆԵՑԱՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՇԱՐՔԵՐԸ ԹԱՐՄԱՅՆԵԼՈՒ, ԸՆԴԱՐՉԱԿԵԼՈՒ ԵՒ ԱՇԽՈՒԺԱՅՆԵԼՈՒ ՄԷՋ**

**Մ**եզմէ շատ կանուխ բաժնուեցաւ մեր ազնի ընկեր Գառնիկ Սկրտիչեանը:

Ընկեր Գառնիկը հաւատարմորդ ու նուիրեալ կուսակցական էր եւ գաղափարի մարտիկը. թէ՛ իբրեւ պարզ շարքային, թէ՛ ալ իբրեւ ղեկավար ան շարունակաբար դրսեւորած է իր ժողովուրդին եւ հայրենիքին հանդէպ հաւատքի ու նուիրումի լաւագոյն յատկանիշները: Եղած է միշտ կարգապահ, անշեղ սկզբունքներու տէր, համբերատար, լայնախոհ, նորարար, հաճելի գրուցակից, փոթորիկներու մէջ խաղաղ ափեր որոնող եւ մանաւանդ՝ իր հարեցիքին ու հայութեան ծառայելու միշտ պատրաստ:

Երբայր Գառնիկը երկար տարիներ Հ.Մ.Ը.Մ.ի համաշխարհային ընտանիքին ղեկավարէր: Ան գլխաւոր դեր ունեցաւ աշխարհով մէկ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը թարմացրնելու, ընդարձակելու եւ առաւել աշխուժացրնելու մէջ: Գլխաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի տօնակատարութիւնները Հայաստանի, Արցախի եւ Սփիւքի չորս ծագերուն մէջ: Հասաւ ամենուրեք, ուր հարկաւոր էր իր ներկայութիւնը: Երիտասարդութեան մօտ շարունակաբար ջանքեց ազգային գաղափարախօսութիւն, առողջ մարմնի ու մտքի անհրաժեշտութիւն եւ մանաւանդ՝ իր ժողովուրդին ծառայելու պատրաստակամութիւն:

Վերջերս ան մեծ ցաւ ապրեցաւ ի տես Արցախեան պատերազմի արհաւիրքին նահատակուած իր սրտի մօտիկ ընկերներուն եւ սկաւտներուն: Հիմա ինքն ալ միացաւ անոնց յանդիմանական փաղանգին: Հեռացաւ այս աշխարհէն՝ իր յաջորդներուն եւ գալիք սերունդներուն իր օրինակով կտակելով ազգանուէր ու հայրենամայաստ գործը շարունակելու անհրաժեշտութիւնը:

Ցաւակցութիւններս իր ընտանիքին, հարազատներուն, բարեկամներուն եւ Հ.Յ.Դ.ի ու Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքներուն:

Վարձքդ կատար, սիրելի ընկեր:  
Ցաւերժ հանգիստ յոգնաբեկ ոսկորներուդ:  
Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

**ՅԱԿՈԲ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ**  
Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ

**ԱՆՉՈՒԳԱԿԱՆ ԵՒ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ**

**Ա**նժամանակ մահ էր: Բացատրութիւն չունին: Ազկայ որեւէ տրամաբանութիւն: Ամոքիչ խօսքեր չունինք հերոսի մը, զոհուած նահատակի մը կամ նուիրեալ ազգայինի մը կորուստին համար:

Հայ իրականութեան մէջ գործող ամենէն բազմանդամ եւ ամենէն աշխույժ կամաւոր բանակին անգուզական եւ վաստակաշատ հրամանատարներէն մէկն էր Գառնիկ Սկրտիչեանը, որուն կորսնցուցիցն անժամանակ կերպով:

Հայ Առաքելական եկեղեցւոյ առաքելութեան հաւատացող, անդու ծառայող աշխարհական սպասարկուն էր Գառնիկ Սկրտիչեանը, որ շիջեցաւ անակնկալօրէն:

Սփիւքի սիրտ եւ ամբողջ, մերօրեայ արի միջնաբերդ Պուրճ Համուտի պարիսպները երկար տարիներ անխորտակելի պահող արթուն պահակն էր Գառնիկ Սկրտիչեանը, որ մտաւ յաւերժ քուն: Հպարտ էր ընկեր Բիւզանդ Սկրտիչեանի աւանդը պահած ըլլալուն համար, աւելի՛ հպարտ, որ իր Բիւզանդը եւ Նժդեհը այդ ժառանգը կը պահեն եւ պիտի պահեն:

Հ.Մ.Ը.Մ.ի վերջին 50 տարուան պատմութեան մէջ Վարդգէս Տէր Կարապետեան եղաւ այն տիտանը, որ հիմը դրաւ Հ.Մ.Ը.Մ.ի համազարդութային կառոյցին: Գառնիկ Սկրտիչեան եղաւ այն տիտանը, որ այդ կառոյցը դարձուց բազմաճիւղ: Այդ մասնաճիւղերէն ամենէն մօտիկը իր սրտին եւ հոգիին, սակայն, մնաց 111-րդ մասնաճիւղը, գոր իր ճիգերով երկա՛ր տարիներ ետք՝ 2019-ի

**ՎԿԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ**

ամրան հիմնեց ազատ Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ:

Համեստ, հեզ, բարի յատկանիշներու տէր մարդ էր Գառնիկ Սկրտիչեանը, եւ այդ յատկանիշներն էին հաւանաբար, որ իրեն տուած էին կախարդական գաւազանը հանգուցալուծելու ամէն դժուար կնճիռ, ամէն հարց, որոնց դիմաց յաճախ անճրկած կը մնայինք բոլորս: Ունէր այդ կախարդական հմայքը:

Կրօնք, լեզու, մշակոյթ արժանիքներ էին, զորս դարձուցած էր իր փարոսը, իր կեանքին ընթացքին նաւարկելու համար ալեկոծ ուժերու մէջ, իր նաւը հասցնելու համար ապահով ափեր: Ըստ երեւոյթին, իր վերջին նաւարկումը եղաւ շահ ալեկոծ ծովու մէջ եւ իր նաւը խորտակւեցաւ ժայռոտ ափերուն:

Յիշատակդ անթառամ մնայ, ընկեր:

**ՅԱԿՈՒԲ ԽԱՉԵՐԵԱՆ**  
Հ.Յ.Գ. Բիւրոյի անդամ

### **ՄԻՇՏ ՊԻՏԻ ՅԻՇԵՆՔ ԱՆՍԱՀՄԱՆ ՆՈՒԻՐՈՒՄԴ**

**Գ**առնիկ Սկրտիչեան, կեանքդ լուռ նուիրեցիր եւ լուռութեամբ մեկնեցար: Միշտ պիտի յիշենք ընկերութեան, երիտասարդութեան, սկաուտութեան, մարմնակրթութեան եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ին, Հ.Յ.Գ.ին եւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդարանին նկատմամբ քու տաժած անսահման նուիրումդ:

Քու ձգած սպիտակ մատնահետքերէն վերջինը եղաւ Լիբանանահայութեան Վերականգնումի Մարմինին աշխատանքներուն մէջ ունեցած դերակատարութիւնդ:

Գառնիկ Սկրտիչեանի մահուան կորուստին առիթով, խորազգաց ցաւակցութիւններս բոլորին, ի մասնաւորի անոր ընտանեկան պարագաներուն:

**ՎԱՐԳԻՆԷ ՕՀԱՆԵԱՆ-ԳԷՈՐԳԵԱՆ**  
Լիբանանի երիտասարդութեան  
եւ մարմնակրթութեան  
նախարարի պաշտօնակատար



**Հայաստանի պաշտպանութեան նախկին  
նախարար Աէյրան Օհանեանի հետ:**

**Ա**րդէն օրեր անցան սիրելի Գառնիկի մահուան պահէն: Նուազագոյնն է ըսելը, թէ ան մօտիկ ու հարազատ անձ էր մեզի՝ սրտով, հոգով եւ արտայայտութեամբ: Տպաւորած էր զիս հին օրերէն, թէ ան կը ներկայանար որպէս կշռուած, պատրաստուած, կոկիկ, ազնւութեամբ համեմուած, եւ դիւանագիտական հանդարտութեամբ օժտուած հայ միութեանական մարդ: Գառնիկ՝ փոխ յարաբերութիւններու հարուստ դրամագլուխ հիմնող, հայ եկեղեցիին ու համայնքին բարիքին համար ջանք չխնայող սիրտ էր: Հաւանաբար Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակը պայծառ կերպով ամփոփեց իր աստուածատուր ու ազգանուէր շնորհները բոլոր, եւ ան տպաւորեց զիս իր յարատեւ աշխատանքովն ու անսահման նուիրումովը, եւ ան գերազանցեց ինքզինք: Այս բոլորին ականատեսն էի անձնապէս: Եւ շատ աւելի ըսելիք:

**ՎԵՐ. ՓՕԼ ՀԱՅՏՈՍԹԵԱՆ**  
Նախագահ Հայկազեան համալսարանի

### **ԻՐ ՍԷՐՆ ՈՒ ՆՈՒԻՐՈՒՄԸ ՈՒՂԵՅՈՅՅ ՊԻՏԻ ՄՆԱՆ ԲՈԼՈՐԻՍ**

**Պ**որճ Համուտը միշտ պիտի յիշէ Գառնիկ Սկրտիչեանի նուիրումն ու տարբեր մարմիններու մէջ երկարամեայ ծառայութիւնը քաղաքին ու անոր բնակիչներուն, նաեւ անոր մեծ ներդրումը՝ խորհուրդին եւ քաղաքապետարանի գործունէութեան մէջ:

Յուակցելով հանգուցեալի ընտանիքին, հարազատներուն ու ընկերներուն, կը հաւատանք, որ Գառնիկ Սկրտիչեանի ողջ կեանքը յատկանշած շրջանի եւ բնակչութեան նկատմամբ սէրն ու նուիրումը ուղեցոյց պիտի մնան բոլորիս:

**ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏԻ ԲԱՂԱՔԱՊԵՏ  
ԵՒ ԲԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**



**Փ**որքին հետ փոքր, պատանիին հետ պատանի, երիտասարդին հետ երիտասարդ, ալեհերին հետ ալեհեր...

Իրայատուկ էր անձնաւորութիւնը, եղբայր Գառնիկ...

Վաղահաս ու անակնկալ մահուանդ գոյժը ցնցեց ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը, այլ նաեւ՝ ամբողջ հայութիւնը:

Ծանր է կորուստդ ու ահաւոր պիտի ըլլայ ֆիզիքական բացակայութիւնդ պաշտելի միութեանդ առօրեայէն, սակայն ցանած սերմերդ պիտի ծլարձակուին ու պիտի տան իրենց հունձքը Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին մէջ:

Թող ազնիւ հոգիդ խաղաղ ննջէ երկնային լուսաւոր կամարներու ներքեւ, սիրելի՛ եղբայր:

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութիւնը կը սգայ եղբ. Գառնիկ Սկրտիչեանին մեծ կորուստը:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՎԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Հայ կեանքի լաւ օրերու անկրկնելի երեւոյթներէն էր եղբայր Գառնիկ: Մէկը, որուն համար անձանօթ մը չկար իր թաղամասին, երկրին, Սփիւքին եւ հայ աշխարհին մէջ ընդհանրապէս:

Դաշնակցական էր ան ողն ու ծուծով: Համազգայնական էր համոզումով, Հ.Մ.Ը.Մ.ական էր ամենօրեայ ապրումով ու կիրքով եւ, դեռ, Ազգային իշխանութեան մարմիններու անդամ էր ամենայն բարեխղճութեամբ եւ լայնասրտութեամբ: Խօսակից բոլորին, յարգալիք՝ մեծին ու փոքրին, բոլորը համախմբող, բոլորին հայր, եղբայր ու հարազատ:

Երեւոյթ էր եղբայր Գառնիկ, Պուրճ Համուտին իր ամուր կառչածութեամբ, լիբանանահայութեան հանդէպ իր ունեցած անսասան հաւատքով ու կամքով: Այդ պատճառով ալ, ուր որ գնաց ան, ուր որ եղաւ, ան Պուրճ Համուտի՝ «Մարդարապատ»ի համն ու հոտը տարաւ իր հետ:

Եղբայր Գառնիկ անձնական կեանքէն աւելի պատկանեցաւ հաւաքական մեր կեանքին: Ան եղաւ ամեն տեղ. Կոմիտէի եւ Կեդրոնական Կոմիտէի անդամ, Ազգային Քառասնից Մանկանց Վարժարանի եւ Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Բոլէճի խնամակալ, Համազգայինի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղերու անդամ: Պուրճ Համուտի քաղաքապետական խորհուրդի երկար տարիներու անդամ: Աւելի քան 40 տարի ան ծառայեց, գործեց, տքնեցաւ եւ դարձաւ բոլորին Գառնիկը: Վերջին տասնամեակին ան եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի շրջուն դեսպանը աշխարհին մէջ: Այցելեց միութեան բոլոր մասնաճիւղերը մէկ առ մէկ, խրախուսեց բոլորը, ստեղծեց նոր մասնաճիւղեր եւ իր կեանքին մեծագոյն երազը՝ միութեան 100-ամեակը ծրագրեց, կազմակերպեց եւ իրագործեց ազգային-պետական շուքով, փառքով ու պատիւով:

Կարելի է երկար վկայել Գառնիկ Սկրտիչեան մարդուն, կուսակցականին եւ Հ.Մ.Ը.Մ.ականին մասին, մասնաւոր որ քառորդ դարու ընկերութիւն մը մեզ դարձուցած էր անբաժանելի մտերիմներ, գործակիցներ, յաճախ գրեթէ ամենօրեայ շփման եւ խորհրդակցութեան մէջ: Անակնկալ կորուստին ցնցումը մեր աչքերուն դիմաց կը պարզէ անմոռանալի գործակցութեան երկա՛ր պատմութիւն մը՝ 1995-ի մեր առաջին ծանօթութենէն մինչեւ վերջին հրաժեշտէն քանի մը օր առաջ, երբ հեռաձայնով Նոր Տարին շնորհաւորեցինք եւ արագ ապաքինում մաղթեցինք իրեն:

Կանուխ էր եղբայր: Տակաւին տալիք ունէիր: Տակաւին սորվելիք ունէինք քեզմէ: Դուն կ'երթաս միանալու «Մարդարապատ»ի սիրելի ընկերներուդ՝ Շերիֆին (Յարութիւն Թէնքերեան) ու Խաչիկին (Արապեան), Արային (Քէնտիքեան) եւ միւսներուն: Կ'երթաս նաեւ միանալու Հ.Մ.Ը.Մ.ական գործակից եղբայրներուդ՝ Միհրանին (Շիմշիբեան) եւ Կարոյին (Թիւթիւնեան), Բիւզանդին (Թորիկեան) եւ Պատրիկին (Կիւլպէնկեան):

Պիտի կարօտմանք քեզի:

Պիտի փնտռենք քեզ:

Պէյրուք

Վ. ԱՌԱԳԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ





**Ե**րբայր Գառնիկին անունն ու յիշատակը, իր զը-  
ւարթ բնատրութեամբ, հոգատար վերաբերմուն-  
քով, ղեկավարի անմնացորդ նուիրումով ու ծառայու-  
թեամբ, իբրև չընկրկող եւ պատմէշի վրայ մնացող ղեկա-  
վար, անջնջելի պիտի մնան մեր միութեան անդամներուն  
եւ յաջորդող սերունդներու յիշողութեան մէջ:

Երբ. Գառնիկ իր ամբողջ կեանքը նուիրեց նոր սե-  
րունդներու դաստիարակութեան գործին:

Ազգային-հասարակական կեանքէն ներս ստանձնած  
իր պատասխանատու պաշտօններուն ընդմէջէն ան ան-  
սակարկ նուիրումով ծառայեց իր միութեան, ազգին ու  
հայրենիքին: Ան պարտականութեան գիտակից նուիր-  
եալ միութեանականն էր ու հաւատարմ գործիչը:

Երբայր Գառնիկ ունէր ազգային եւ մարդկային  
բարձր գիտակցութիւն, որոնց թելադրանքով ան մշակած  
էր իր սկզբունքներն ու վերաբերմունքը, դառնալով բոլո-  
րին երբայր, առանց ընկերային կարգի խտրութեան:

Պարկեշտ էր ան իր բոլոր գործերուն մէջ, աշխատա-  
սէր, ծառայասէր, ընկերասէր, միշտ կը ձգտէր լաւագոյ-  
նին: Ան տէրն էր իր պարտականութիւններուն ու պար-  
տաւորութիւններուն եւ ջահակիրը՝ «Բարձրացի՛ր-բարձ-  
րացու՛ր» նշանաբանին:

Երբայր Գառնիկին յիշատակը վառ պիտի մնայ բոլոր  
Հ.Մ.Ը.Մ.ականներու սրտերուն մէջ: Ան իր ուրոյն տեղը  
պիտի գրաւէ միութեանս նուիրեալներու փառանգին մէջ,  
իբրև պատկառելի, սիրուած ու փնտռուած առաջնորդ եւ  
ղեկավար:

Հանգի՛ստ աճիւններուդ...  
Փունջ մը ծաղիկ քու յիշատակիդ...  
Յիշատակդ անմատ մնայ, սիրելի՛ երբայրս Գառնիկ...  
Հալէս

ՄԱՆՈՒԿ ԶԷՕՇԿԵՐԵԱՆ  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ

**Ե**րբայր Գառնիկ Սկրտիչեան երեք առիթով այցե-  
լած է Աւստրալիա, Մարտ 2007-ին՝ «Մարզիկ»  
պաշտօնաթերթի 25-ամեակին, Հոկտեմբեր 2013-ին՝  
Հ.Մ.Ը.Մ.ի 95-ամեակին եւ Նոյեմբեր 2018-ին՝ միութեան  
100-ամեակի տօնակատարութեան առիթով:

Երբայր Գառնիկի 2007-ի այցելութեան օրերուն մաս  
կը կազմէի Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչու-

թեան եւ երօր ընկերացայ Սիտնիի եւ Մելբուռնի մէջ  
կատարած միութեանական բոլոր հանդիպումներուն: Եր-  
բայր Գառնիկ ուր որ եղաւ ոգեւորեց ներկաները, իր  
պատգամներով եւ խորհուրդներով ան խրախուսեց եւ  
զնահատեց բոլորը, միշտ դրական տրամադրութիւն եւ  
յոյս ներշնչելով միութեանական շարքերուն: Երբայր Գառ-  
նիկ իր իւրայատուկ յարաբերութիւններուն շնորհիւ,  
բժախնդրութեամբ եւ ճկունութեամբ կարողութիւնը ունէր  
լուծելու ամէն դժուարութիւն:

Երբայր Գառնիկին աւելի մօտէն ծանօթացայ Հ.Մ.-  
Ը.Մ.ի Պատգամատրական եւ միջ-դիւանական ժողովնե-  
րուն, միշտ անկեղծ եւ սերտ յարաբերութիւններ մշակե-  
լով հետը: Երբայր Գառնիկ ժողովական կեանքի խտեւ  
մարդն էր, միշտ մթնոլորտը հանդարտեցնող իր իւրայա-  
տուկ բնատրութեամբ եւ դիւանագէտ առեւնապետի բա-  
ցամիկ կարողութեամբ: Ան սկզբունքային էր եւ ունէր ան-  
կարելի թուացող ծրագիրներ իրականացնելու շնորհ: Եր-  
բօր տիպար օրինակը իբրև ուղեցոյց պիտի ծառայէ  
Հ.Մ.Ը.Մ.ի յաջորդող սերունդներուն:

Մենք պիտի կարօտմանք երբայր Գառնիկը: Ան տե-  
ւաբար բարձրացաւ եւ իր հետ բարձրացուց Հ.Մ.Ը.Մ.ա-  
կան իր քոյրերն ու եղբայրները:

Վարձքդ կատար, սիրելի՛ երբայր Գառնիկ:  
Ննջէ խաղաղութեամբ: Բի՛ւր յարգանք, խունկ ու  
աղօթք բազմավաստակ յիշատակիդ:

Սիտնի  
ՏԻՐԱՆ ՎԱՀՐԱՏԵԱՆ  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ

**Չ**ոյց բառեր, զորս բոլորին շրթներուն վրայ եւ մըտ-  
քերուն մէջ դրոշմեցիր, սիրելի՛ ընկերս Գառնիկ՝

- 1) Անհաւատալի
  - 2) Շատ կանուխ էր
- Այո՛, շատ կանուխ էր, քանի որ ամէն տեղ էիր: ԸՄ-  
տանձնած գործը լաւագոյնը կ'ընէիր, ամբողջ սրտեղ կու  
տայիր:  
Շա՛տ կանուխ էր:  
Պիտի կարօտմանք սկզբունքային եւ բժախնդիր մօ-  
տեցումդ:  
Պիտի կարօտմանք անկարելի ծրագիրները կարելի  
ընելու վճռակամութիւնդ:



Պիտի կարօտնանք հայրենասիրական ոգիդ:  
Պիտի կարօտնանք հաստատամտօրէն գաղափարա-  
խօսութեան կառչած մնալու կամքդ:  
Պիտի կարօտնանք «ՄԵՃԵՐՈՒՒ» սերունդէն շահած  
փորձառութեանդ հաճելի պատմութիւններդ... եւ պիտի  
կարօտնանք քեզ:

Վատահ եղիր, որ յիշատակդ անթառամ  
պիտի մնայ, քանի որ ոսկեայ տառերով  
անունդ դրոշմեցիր լիբանանահայութեան,  
Հ.Յ.Դ.ի, Հ.Մ.Ը.Մ.ի, Ազգային իշխանութեան  
ու երկար շարք մը այլ տոմարներու մէջ:  
Աստուած հոգիդ լուսատրէ:

ՐԱՖԵՅԻ ԿԷՕՎՕՂՎԱՆԵԱՆ  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան  
նախկին անդամ

Այնչափ դժուար է եղբայր Գառնիկին  
մասին խօսել անցեալ ժամանակով,  
փորձել արժեւորել այն ճանապարհը, որ  
անցել է Գառնիկ Մկրտիչեանը որպէս Հ.Մ.-  
Ը.Մ.ական, որովհետեւ դեռ եւս շատ-շատ  
ծրագրեր կային:

Մենք շատ սերտօրէն համագործակցել  
ենք վերջին 11 տարիների ընթացքում, չնա-  
յած ծանօթ ենք շատ վաղուց՝ 1990-ից, եւ  
պէտք է ասեմ, որ վերջին, առնուազն 15-17  
տարիների ընթացքում եղբայր Գառնիկը  
խկապէս եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ նախ անա-  
վարը եւ արժանի նաւապետը, որովհետեւ

ունէր տեսլականը, թէ ո՛ր է ուզում հասցնել Հ.Մ.Ը.Մ.ը՝  
մանաւանդ կազմակերպութեան ծաւալման առումով:

Ասեմ, որպէս երուասիական տարածաշրջանի նախ-  
կին պատասխանատու, յատկապէս ուշադիր էր նախկին  
Խորհրդային երկրների՝ Վրաստանի, Ռուսաստանի, Հա-  
յաստանի մասնաճիւղերի նկատմամբ եւ նրա երազանքն  
էր Արցախում մասնաճիւղ հիմնադրել, որը յաջողու-  
թեամբ իրականացրեցինք:

Պէտք է ասեմ նաեւ, որ վերջին 16 տարիների ընթաց-  
քում նա նոր մակարդակի հասցրեց համա-Հ.Մ.Ը.Մ.կան  
ձեռնարկները՝ թէ՛ բանակումները, թէ՛ մարզախաղերը,  
որոնք բոլորը կազմակերպուեցին Հայաստանում եւ բոլո-  
րովին նոր որակ ստացան: Կարծում եմ մեր բոլորի աչքի  
առաջ եղբայր Գառնիկի անցած փառահեղ ճանապար-  
հին փառահեղ պսակը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի  
փայլուն կազմակերպուած միջոցառումների ծրագիրը:

Այնչափ մեծ է կորուստը, անդառնալի է կորուստը:  
Այնչափ մեծ է ցնցումը մէկ օրուան ընթացքում փորձելու  
համար արժեւորել եղբօր անցած ճանապարհը: Նա իս-  
կական լաւ ընկեր էր, լաւ անձնատրութիւն էր, եւ միշտ կը  
մնայ մեր մտքերում ու յիշողութիւններում:

Երեւան

ԲԱԳՐԱՏ ԵՄԱՅԵԱՆ  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան  
նախկին անդամ

Երբ մարդը ողջ է, կողքիդ՝ անկախ քիլոմետրերի հե-  
ռաւորութիւնից, դժուար է գիտակցել, թէ ի՞նչ կը  
զգաս երբ նա չլինի: Մ՛յ հիմա մենք բոլորս՝ Հ.Մ.Ը.Մ.ա-  
կաններս, որոնք գէթ մէկ անգամ շփուել էինք եղբայր  
Գառնիկի հետ, զգում ենք նոյնը, կորուստի մեծ ցաւն ու  
տխրութիւնը՝ անկախ մեր գտնուելու վայրից: Աստուած  
հոգիդ լուսատրի եղբայր Գառնիկ, քո գործն անմահ է ու  
շարունակական, յիշատակդ անթառամ եղբայր: Շատ  
ենք կարօտելու...

Երեւան

ՄԱՆՏՐԱ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Խոր ցաւով իմացայ անժամանակ մահը վաստա-  
կաշատ, վեթերան Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Գառնիկ  
Մկրտիչեանին: Եղբօր մահով Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը  
կորսնցուց անփոխարինելի Հ.Մ.Ը.Մ.ական մը, որուն բա-  
ցակայութիւնը զգալի պիտի ըլլայ: Խորագգաց ցաւակ-  
ցութիւններս Մկրտիչեան ընտանիքին, հարազատներուն  
եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին: Աստուած եղբօր հոգին  
լուսատրէ եւ լաւ յիշատակը պահէ: Յիշատակդ անթա-  
ռամ սիրելի եղբայր:

Լոս Անճելըս-Երեւան

ՄԱՐՕ ԲԷՇԻՇԵԱՆ

## ԳԺՈՒԱՐ Է ՀԱՇՏՈՒԻԼ

**Մ**եր առաջնորդն էիր Վեհափառին ու Սրբազանին դիմաց: Մեր դեսպանն էիր նախագահին ու նախարարին հետ: Միշտ լսողն էիր՝ նախքան ձայն առնելիր: «Պապա» մարդն էիր սկառուտին ու մարզիկին, գայլիկին հետ անգամ լեզու կը գտնեիր:

Հ.Մ.Ը.Մ.ի պատմության մեջ անունդ ու ազգանունդ ոսկեայ տառերով գրել տուիր քու պատուաբեր աշխատանքով եւ յաղթական արդիւնքով:

Որքա՛ն պիտի կարօտնամ միութենական մեր մտերիմ գրոյցներն ու մարտահրաւերները:

Պիտի փնտռեմ խնդրոքդ:

Հրաժեշտի պահերուն ամուր մեր ձեռքը կը սեղմելիր, երբ հայեացքդ արդէն կը խօսեր, յետոյ կ'ըսէիր. «Արա՛, կը տեսնուիք»:

Այսօր եւ վաղը հազարաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներ քու շունչովդ պիտի զինուին: Գաղափարակիցներդ ու գործակիցներդ պիտի շարունակեն ճամբադ:

Ընդհակալ եմ այն վստահութեան, գոր ունեցար ինձի հանդէպ:

Միայն ցտեսութիւն մըն է եղբայր...

*Գահիրէ*

ԱՐԱ ԶԷՕՀՆԵԼԵԱՆ



2018. Եւրոպայի Առաջնորդական պատուիրակին հետ:

### ԲԱՐՉՐԱՅՈՒՅԻՐ ՄԵԶԻՒ ԵՂԲԱՅԻՐ

Եղբայր, ընկեր, առաջնորդ:

Միշտ ճիշդ խօսքերով, միշտ մեզի քաջալերանքով մօտեցար, ժպիտով, խորհուրդներով: Որպէս կողմնացոյց ցոյց տալով, թէ ո՞ր է մեր նպատակը, մեր ճամբան:

Մեր մէջը կ'ապրիս:

Այս սերունդի իրաքանչիւր եղբայր, քոյր, ընկեր եւ ընկերուհի իր սրտին մէջ ունի Գառնիկ մը:

Բարձրացուցիր մեզի՝ ԵՂԲԱՅԻՐ:

Դաշնակցական առաքիւնի եւ աշխատասէր ընկեր:

Կաս ու կը մնաս, ընդմիշտ:

*Պուէնու Այրէս*

ԱԿՈՒՍԹԻՆ ԱՆԱԼԵԱՆ

**Դ**ժուար է ընկեր-եղբայր կորսնցնելը, երբ յանկարծ օր մը կ'արթննաս, որ չկայ ան, առանց հրաժեշտ տալու քեզի:

Միրելի՛ եղբայր Գառնիկ, վստահաբար շատ բան կ'ուզէիր ըսել նախքան բաժնուիլդ, որքա՛ն մտահոգ էիր լիբանանահայ աշակերտներով: Դեռ շատ ու շատ ծրագիրներ ունէիր իրագործելիք: Պիտի փորձեմ համոզուիլ քու մեկնումիդ հետ, բայց վստահ որ դուն մեր մտքերուն մէջ դրոշմուած պիտի մնաս, իբրեւ այն եզակի ընկերը, որ ամէնէն դժուար պահերուն առաջնագիծի վրայ եղար միշտ:

Պարզապէս ցտեսութիւն մըն է եւ պիտի միանանք: Սինչ այդ՝ պիտի շարունակենք քու ճամբադ:

Յարգանգով կը խոնարհիմ քու պատուաբեր գործունէութեանդ առաջ:

Յ.Գ. Ընկեր Բիւզանդն ալ հպարտ ժպիտով կը նայի վերէն:

*Արեւելեան Մ. Նահանգներ*

ՇԱՆԹ ԺԱՄԿՈՉԵԱՆ

**Մ**եծ տխրութեամբ կը լեցուի մեր հոգիները, երբ կը մտածենք, թէ այլեւս մեզի հետ չէ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքի կարեւորագոյն անդամներէն մէկը՝ եղբայր Գառնիկ Սկրտիչեան:

Մեր մեծ եղբօր անունը շատ կարեւոր նշանակութիւն ունի Հարաւային Ամերիկայի շրջանին համար: Քանի մը անգամուան մեր հանդիպումներուն ընթացքին խորապէս զգացի եղբայր Գառնիկին սէրը եւ գուրգուրանքը մեր շրջանին հանդէպ: Իմ խօսքս աւելի կը բնութագրէ իր զգացումը՝ «Իմ սրտիս մէկ մասը Հարաւային Ամերիկան է»:

Այս խօսքերը իրականացած տեսանք մեր շրջանին մէջ, երբ պատիւր ունեցանք հիւրընկալելու մեր երեք ակումբներու մէջ՝ «Վռամեան», «Անդրանիկ» եւ «Ռամոն Սեխիա»:

Իր խօսքերը ոգեշնչող էին, նաեւ շատ մեծ յոյս կ'արթնցնէին մեր սրտերուն մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի հանդէպ իր սէրը սահման չունէր: Այդ սիրոյն համար իր ամբողջ կեանքը տուաւ: Եւ հիմա, հակառակ որ մարմնապէս այլեւս մեզի հետ չէ, նորէն հարուստ ենք իր ներկայութեամբ՝ իր խրատներով եւ մանաւանդ իր օրինակով:

Մեր մեծ եղբայրներուն կեանքը եւ գործը բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներու համար ուղեմշային նշանակութիւն ունի: Անոնք բարձրացան եւ իրենց ետեւէն սերունդներ բարձրացուցին: Մենք պէտք է դաստիարակուինք անոնց փորձով եւ հետազօծով:

Հանգիստ ոսկրացդ:

Խումկ եւ աղօթք յիշատակիդ եւ վարձքդ կատար սիրելի՛ արագ եղբայր:

*Գորտոպա*

ՅԱԿՈՒԹՈՒԹՈՒՇԵԱՆ



2019. Երիտասարդական առաջին համագումար, Աթենք: 2019

Կեսնքում քիչ մարդ հանդիպես, որ քեզ թույլ թե՛ ամբողջ կեսնքը ճանաչել ես իրեն: Եղբայր Գառնիկը այս իրայատուկ անձերից էր: Ուներ շատ բարձր կեսնքի չափանիշներ, որոնք ինքը գործադրելով ոգեկոչում էր քաջալերում էր, որ իրաքանչիւր անձ ձգտի եւ փորձի իր ամենալավը: Մենք շատ պիտի փնտռենք եւ կարօտենք մեր եղբայր Գառնիկին, ով հեռացաւ մեզմէ շատ-շատ շուտ:

Հողը թեթեւ, սիրելի՛ եղբայր: Խոստանում ենք շարունակել կատարել քո դրական պատգամները: Յիշատակդ անթառամ, եղբայր:

Հ.Մ.Ը.Մ. ԼՈՆՏՈՆ

Այս ի՞նչ ապշեցուցիչ լուր էր... Այս ի՞նչ չցնցող գոյժ էր...

Մեր վերջին հանդիպումին խոստացար դարձեալ հանդիպինք Հայաստան՝ միասին համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրագիր մը իրականացնելու:

Դուրս դպրոց մըն էիր ինձի եւ ինձի մնան շատ-շատերու: Դուրս նոր շունչ տուիր Հ.Մ.Ը.Մ.ին եւ քու օրինակովդ ապացուցեցիր եւ դարձար մարմնացումը ազգին եւ հայրենիքին ծառայելու գաղափարին:

Թող հոգիդ մնայ երկնային լոյսերու մէջ եւ յիշատակդ իբրեւ մասունք ապրի ամէն հայու եւ Հ.Մ.Ը.Մ.ականի սրտին ու հոգիին մէջ:

Ես, իմ կարգիս, կը խոստանամ համա-Հ.Մ.Ը.Մ.ական եւ համահայկական այդ ծրագիրները շարունակել իրականացնել քոյրերուս եւ եղբայրներուս հետ՝ յարգելով յիշատակդ եւ պատուելով ժառանգդ:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Երուսաղէմ

ՅԱՐՈՒԹ ՊԱՂԱՍԵԱՆ

Անհաւատալի, բայց իրաւ պատահար մըն է եղբայր Գառնիկին կորուստը:

Ընկեր, եղբայր Գառնիկը իր վաստակաշատ գործունէութեամբ ծաղկեցուց չորս դիւն, իր անակնկալ մահով հսկայ ակօս մը եւ հազարաւոր անմխիթար ընկերներ ու եղբայրներ ձգելով իր ետին:

Եղբայր Գառնիկին ծանօթացած էի 1992-ին, Պէյրութ, «Մարդարապատ» ակումբին մէջ: Ապա, 2001-ին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 6-րդ մարզախաղերուն մենք դարձեալ հանդիպեցանք Պէյրութի մէջ, ինք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, իսկ ես՝ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ պատուիրակութեան մէկ ներկայացուցիչ:

Յուլիս 2018-ին, առիթը դարձեալ ներկայացաւ եղբոր հանդիպելու, այս անգամ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի տօնակատարութիւններուն, նախ՝ Հայաստան, ապա Շուէտ, ուր ան պարգեւատրեց զիս:

Եղբ. Գառնիկ իր բազմաբեղուն եւ անձնուէր գործունէութեամբ ոչինչ խնայեց միութեան նուիրական եւ սրբազան ճանապարհին: Ան իր ետին ձգեց հսկայական պատմութիւն:

Քեզ միշտ պիտի յիշենք, եղբ. Գառնիկ: Դուրս պիտի մնաս մեր սրտերուն մէջ անպայման:

Յիշատակդ անթառամ մնայ յաւիտեան:

Մթնօրով

ԱԲԻԿ ՊԱՍՍԱՃԵԱՆ

Եղբայր Գառնիկին մահուան լուրը ի՞նչպէս չցնցեց բոլորս, ցաւի, զարմանքի եւ կորուստի խառն զգացումներ չպատճառէ ամէնուս՝

- Երբ հազարաւոր քիլոմետրեր կը ճամբորդէր քանի մը տասնեակ սկաուտներու ոյժ տալու համար, անոնցմէ մէկը շրջանիս՝ Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի մասնաճիւղին վերականգնման ժամանակ:

- Երբ Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր գիրքերուն մէջ եղող սկաուտի, առաջնորդի, վարիչի, խմբապետի, վարչականի եւ ղեկավարի բոլոր յատկութիւնները կը գտնէինք եղբայր Գառնիկին մէջ, որ բոլորիս համար մղիչ ոյժ էր եւ է՝ ճիշդն ու մաքուրը սիրելու, նուիրումով աշխատելու եւ միութեան, ազգին ու հայրենիքին ծառայելու:

- Երբ մարդկային վեհ արժէքները կը տեսնէինք եղբայր Գառնիկին մէջ, իբրեւ անձնական յատկութիւններ:

Յարգալիւր ու սիրալիւր էր մեծին ու փոքրին հետ, օգնող եւ բոլորին հասնող, իրաքանչիւր աշխատանքի դժուար շրթաները քակող, օղակը ամբողջացնող, միութեան միջոցով ազգին ու հայրենիքին ծառայող, իսկ միութեան համար՝ իր կեսնքը նուիրող եւ զայն լաւագոյն ձեւով ներկայացնող՝ ամէնուր եւ բոլոր հարթակներու վրայ:

Եղբայր Գառնիկ օրինակ էր եւ է բոլորիս համար՝ իր ներկայութեամբ, վերաբերմունքով, աշխատանքով, խօսքերով եւ խորհուրդներով:

Համագումարներուն եւ բանակումներուն ժամանակ բոլորս եղբայր Գառնիկին գալը կը սպասէինք՝ նոր բա-

ՍԵՆՏԵՐ



ներ սորվելու համար: Հանգիստ էր երիտասարդներու հետ գտնուելով: Երիտասարդներուն ոյժ, կամք ու կորով կը սերմանէր ան:

Վարձքդ կատար, սիրելի՛ եղբայր Գառնիկ, մնջէ խաղաղութեան լոյսերու մէջ, հոգիդ ու խիղճդ հանգիստ. երիտասարդներդ, որոնց հետ հանգիստ կը զգայիր եւ իրենց օրինակն ու խտելալը ըլլալով շատ բաներ կը սորվեցնէիր, պիտի շարունակենք քու Սուրբ գործդ:

*Վիեննա*

**ՅԱԿՈՒ ՍԱՀԱԿԵԱՆ**

**Ե**րբ Գառնիկ Սկրտիչեան հարուստ եւ բեղուն ժառանգ մը ձգեց իր ետին: Ժառանգ մը, որ ազգային, կուսակցական, միութենական եւ մարդկային մարզերուն մէջ ընդգրկեց հսկայական նուաճումներ:

Հ.Մ.Ը.Մ.ի վսեմ նշանաբան «Բարձրացի՛ր-բարձրացուր»ը եղաւ անոր թե՛ նպատակը եւ թե՛ ուղին, որուն հաւատարիմ մնաց ան, եւ երբ անձնապէս բարձրացաւ, իր հետ բարձրացուց մատի իր միջավայրը, սիրած միութիւնն ու կուսակցութիւնը:

Երբ Գառնիկ կազմակերպչական իր իւրայատուկ հրմտութեամբ եւ ջանասիրութեամբ, անցնող երկու տասնամեակներուն, Հ.Մ.Ը.Մ.ին ապահովեց եզակի փայլը:

Ան ապրեցաւ հայօրէն եւ հայն ու Հայաստանը եղան իր կեանքի մնայուն տեսլականները:

*Քուէք*

**ԱՐԱՄ ՍԱՀՏԵՍԵԱՆ**

**Ե**րբայր Գառնիկը, ընկեր Գառնիկը, Գառնիկը պարզապէս, հասարակական կեանքի այն իւրայատուկ կերպարն է, որուն մնանները ափսո՛ս որ սկսած են սակաւաթիւ դառնալ:

Երբայր Գառնիկի կերպարին գաղտնիքը կը կայանար հոն, որ անոր ներկայութիւնն ու շունչը վստահութիւն



Լիբանանի մէջ Հայաստանի նախկին դեսպան Աշոտ Քոչարեանի հետ:



2018. Արեւմտեան, Արեւելեան եւ Հարաւային Ամերիկացիներու Շրջանային Վարչութիւններու ներկայացուցիչներու հետ:

կը ներշնչէին իր միջավայրին, գործի կը մղէին բոլորը:

Համեստութեամբ եւ ընկերասիրութեամբ շաղախուած իր խստապահանջութիւնը կը մղէր բոլորը, որ յարգեն, սիրեն եւ վստահին իրեն: Ան առջեւէն քալող ղեկավարն էր, որ յառաջ կը մղէր իր գործակիցները:

Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Յ.Դ.ի վիթխարի աւանդութիւնները իւրացուցած՝ ան այդ աւանդութիւնները փոխանցեց նորահաս սերունդներուն, կեանքի օրուան հրամայականներուն հաշտեցնելով զանոնք:

*Քուէք*

**ԺԱՆՕ ՔԷԹԷՆՃԵԱՆ**

**Ե**րբայր Գառնիկ, իբրեւ մարդ, համեստ էր, յարգանքով, ժպտուն, արդար, արժեւորող, հոգատար եւ աշխատասէր:

Իբրեւ հայ, հայրենասիրութիւնը իր մէջ խորացած եւ արմատացած սրբութիւն մըն էր: Ազգանուէր, հայապահպան, հայ լեզուի եւ գրականութեան, հայ ապրելու եւ մանաւանդ հայը պաշտպանելու մեծ նախանձախնդրութեամբ: Անկեղծ վարմունքով եւ հայու առաքինի նկարագիրով, ան շրջապատին պարտադրեց յարգանք ու սէր իր անձին նկատմամբ:

Երբ Գառնիկ բարեպաշտ հաւատացեալ էր միաժամանակ, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին իրեն համար լոյսի եւ յոյսի աղբիւր էր:

Հ.Մ.Ը.Մ.ի կողքին ան զինուորագրուած էր Հ.Յ. Գաշնակցութեան դրօշին, հաւատքով եւ անշահախնդիր նուիրումով ծառայելով իր ժողովուրդին:

Երբ Գառնիկ թէւ ֆիզիքապէս մեզի հետ չէ այլեւս, բայց իր հոգին վառ գոյնեքով դրոշմուած կը մնայ մեր մտքերուն եւ հոգիներուն մէջ:

Բի՛ւր յարգանք յիշատակիդ, վարձքդ կատար, եղբայր Գառնիկ:

*Քուէք*

**ՅԱԿՈՒ ՍԵԼԻՔՍԷԹԵԱՆ**

Եղբայր Գառնիկը իր գիտակցական կեանքին ամբողջ ընթացքին, մանկութենէն մինչեւ իր կեանքին մայրամուտը, Մայրիներու երկիր Լիբանանի մէջ եղաւ ու մնաց Հ.Յ.Դաշնակցութեան հաստատ համոզումներուն ուղղամիտ երդուեալ ընկերը, եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի ծառայութեան ու նուիրումի ոգին մարմնաւորող տիպար հայրերէն: Ան դաստիարակուեցաւ եւ առաջնորդուեցաւ ազգանուէր գաղափարախօսութիւններով: Իր կեանքի ամբողջ տեսողութեան, մանաւանդ ազգային, կուսակցական եւ միութենական գործերուն իր բերած նպաստին ընթացքին, ան եղաւ համեստ, շրջահայեաց ու հեռատես: Ան իր հաւատքը վերածեց գործի եւ տուաւ իր լաւագոյնը: Բարձրաճակատ ու հոգեկան մեծ հպարտութեամբ կ'ըսեմ, թէ ան նոր սերունդներուն կարողացաւ հարազատօրէն փոխանցել ազգի մը պատկանելիութեան հպարտութիւնը, հաւատալով, որ գալիք սերունդները պիտի կերտեն մեր նոր օրերու հայոց պատմութիւնը հայրենիքի եւ Սփիւռքի մէջ:

Եղբայր Գառնիկը այս անցաւոր աշխարհէն առ յաւիտ բաժնուեցաւ, զնաց անդենականին մէջ միանալու իր հոգեհարազատներուն, գաղափարակից ընկերներուն, Հ.Մ.Ը.Մ.ի քոյրերուն եւ եղբայրներուն եւ մեր ազգի անցեալի ու մերօրեայ նահատակ հերոսներուն, որոնք վըստահ պատիւով ու գրկաբաց դիմաւորեցին զինք:

Կը հաւատամ, որ եղբայր Գառնիկի հողին յանձնումի տխուր եւ մահասարսուտ պահը առիթ մը եղաւ նաեւ, որպէսզի մենք վերանորոգենք մեր սրբազան ուխտը, որպէսզի Հ.Յ.Դաշնակցութեան, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հայ Դատի հանդէպ իր ունեցած նուիրումի ոգին, պարտաճանաչ հայու նկարագիրը վարակիչ դարձնենք գալիք սերունդներու հոգիներուն մէջ, ամէնօրեք:

Թորոնթօ

ՅԱԿՈԲ ԵՒ ԺԻԻԼԻԷԹ  
ՃԱՆՊԱՉԵԱՆ

Կընա՞ք Հ.Մ.Ը.Մ.ը երեւակայել առանց Եղբայր Գառնիկին: Կընա՞ք Պուրճ Համուտը, մանաւանդ «Մարդարապատ» ակումբը, երեւակայել առանց ընկեր Գառնիկին: Վերջին տասը տարիներուն բախտը ունեցայ յաճախ այցելելու Լիբանան: Անշուշտ, Լիբանան այցելել կը նշանակէ Պուրճ Համուտի մէջ եղբայր Գառնիկին հանդիպիլ:

Ծանօթութիւնս եղբայր Գառնիկին հետ եղած է փոքր տարիքէն, երբ նոյն դպրոցի փոխադրակառքով կը յաճախէինք Ճեմարան: Մեր ընկերութիւնը շարունակուեցաւ Հ.Յ.Դ. ԼԵՄ-ի «Արշաիր Շիրակեան» մասնաճիւղին մէջ եւ վերջին տարիներուն՝ Մեծի

Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ընդհանուր Ժողովներուն: Ան իր ամբողջ կեանքը նուիրեց Հ.Մ.Ը.Մ.ին եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան: Իր մեծագոյն երազն էր Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակը տօնախմբել մայր հայրենիքի մէջ, եւ յաջողոց՝ զայն: Հրճուանքը անսահման էր՝ տեսնել ընկերները իր կողքին, «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանով:

Այո՛, եւ կորսնցուցի մօտիկ ընկեր մը, բայց Հ.Մ.Ը.Մ.ը կորսնցուց հաւատարիմ եղբայր մը, Լիբանանը կորսնցուց տիպար քաղաքացի մը, Պուրճ Համուտը կորսնցուց իր սիրներէն մէկը եւ մանաւանդ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կորսնցուց իր հաւատարիմ ու նուիրեալ զաւակներէն մէկը:

Վարձքդ կատար՛ր, սիրելի՛ ընկերս:

Լուս Անճելլօ

ՃՈՐՃ ՉՈՐՊԱՃԵԱՆ

Մեր գիտակցական կեանքին ընթացքին եղած են մարդիկ, որոնց հետքը անջնջելի կը մնայ: Ուր ալ երթաս, ինչ ալիքներու ալ զարնուիս, ինչքան ալ հեռանաս, անոնց ներկայութիւնը կենարար աւիշ կը դառնայ: Տեսակ մը թաղիք, տեսակ մը պատեան, որուն կը յենիս ամէն առիթի եւ որուն կ'ուզես հասնիլ՝ քու հին յոյզերդ կաթիլ առ կաթիլ գտնելու համար:

Գառնիկ Սկրտիչեանը անոնցմէ էր ...

Անոնցմէ, որոնք նոյնիսկ իրենց հեռուին մէջ կ'ապրեցնէին գաղափարի այն յոյսը, որ շատ առիթներով ինձմէ, ինձի նման ուրիշներէ կ'իյնար... Կ'իյնար, ո՛չ թէ գաղափարի պատեանէն կամ մարդոց ու ընկերներու վերաբերումէն, այլ կ'իյնար քու սեփական եսիդ մեղքով:

Եսերը իրենց սաղմին մէջ հալեցնողն էր Գառնիկ Սկրտիչեանը՝ բոլորին յայտնի ընկեր Գառնիկը, որ հրդեհներու ամենաժանր պահերուն կոչուած էր մարել բոլոր մակարդակի վերքերը:

Վերջին տարիներուն անոր անունը բացառաբար կապուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին հետ, դարձաւ այդ մարմինը գլխաւորողը, առաջնորդողը, յառաջ տանողը:

Ո՛չ մէկ կասկած, որ Հ.Մ.Ը.Մ.ն ալ մեր հաւաքական կեանքի ամենակարեւոր օղակներէն է ու իր փորձով, իր գործով, իր ոգեղէն արժեքներով Սփիւռքի մէջ թէ Հայաստանի կարողացաւ հանդիսանալ համահայկական մակարդակի ապրեցնող կազմակերպութիւն, նոր աւիշ բերող միութիւն եւ մէկ խօսքով մեր ժողովուրդի նոր սերունդի մկրտարան:

Երեւան

ՄԱԳՕ ԱՐԵԱՆ

# ՄԻՇՏ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԵՒ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՍԱՐԴԿԱՅԻՆ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ

(ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՇԱՀԷ ԱՐՔ. ՓԱՆՈՍԵԱՆԻ  
ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՍԿՐՏԻՉԵԱՆԻ ՄԱՍԻՆ)

Հաւաքուած ենք տխուր պայմաններու մէջ եւ վիշտն ու արցունքը մեր սրտերուն մէջ, կը պատրաստուինք հրաժեշտ տալու անձնատուրութեան մը, որ երկար ժամանակէ ի վեր լիբանանահայ կեանքի խաղաղ կամ փոքորկոտ պահերուն, ո՛չ միայն Աստուծոյ մօտիկ եղաւ, այլեւ՝ իր մարդկային պարտականութեանց մէջ ալ մնաց միշտ հաւատարիմ եւ օրինակելի:

Ողբացեալ Գառնիկը, պարզ հոգիի, քաղցր, մեղմ եւ շինիչ կեցուածքի տէր անձնատուրութիւն էր: Ան մեր շրջապատին համար տարած տեսակաւոր ծառայութիւններուն ընդմէջէն թէ՛ խոնարհ սրտով Աստուծոյ կամքը կատարեց եւ թէ՛ ալ մեր համայնական կեանքին ծառայեց՝ իր միջավայրն ու շրջապատը աւելի լուսատու դարձնելու, բարեկամներու ու ծանօթներու շրջանակին մէջ յոյս սերմանելու, կորով, քաջութիւն եւ նուիրում յառաջացնելու անշեղ ու կամքով ու կեցուածքով:

Իրօք, ողբացեալ Գառնիկը մէկն էր այն հազուագիտ բարեկամներէն, որոնք երկինքին նայելով, երկրի վրայ իրենց վերապահուած տեղն ու դերը դիւրութեամբ կը գտնեն եւ կեանքի մութ ու լոյս պատահարներն ու հարցերը պատասխանատուութեամբ ընկալելով, ուրիշներուն բռնը կը թեթեւցնեն եւ աստուածային սիրով մարդոց կեանքը կը քաղցրացնեն:

Դժբախտաբար, անոնք երբեմն անժամանակ կը հեռանան մեզմէ, սակայն երկրի ու երկինքի մէջ շահելով իրենց արժանատր տեղը:

Մաղթենք, որ Գառնիկին օրինակով հայրողիներուն տեղը պարապ չմնայ մեր համայնական կեանքէն ներս:



8 JAN. 2021

Monsieur le Président,

C'est avec une profonde tristesse que j'ai appris la disparition de Monsieur Karnik MEGUERDITCHIAN, ancien président du comité mondial du HOMENETMEN, et je tenais, par ces quelques mots, à vous assurer de mon entier soutien en ces instants douloureux que vous-même, vos proches, et l'ensemble des mem-

bres de votre association traversez actuellement.

Vendredi 20 septembre 2019, au sein de l'hôtel de ville d'Issy-les-Moulineaux, à l'occasion de la signature de notre accord relatif à la reconstruction du complexe sportif Alain MIMOUN, j'avais eu le privilège d'échanger, en votre présence, avec ce président Ouvert sur le monde, particulièrement attaché tant à l'Histoire qu'à l'avenir du peuple arménien.

Homme de fidélité et profondément humaniste, il était resté avant tout l'homme de sa ville, BOURJ HAM-

MOUD, dont il coordonnait depuis plusieurs mois la reconstruction, suite à la terrible explosion survenue à BEY-ROUTH au mois d'août dernier.

Pour l'ensemble de ces raisons, soyez assuré qu'un hommage appuyé lui sera rendu dans le journal municipal point d'Appui.

Vous renouvelant l'assurance de mon sincère soutien, je vous prie de croire, Monsieur le président, en l'expression de mes sincères condoléances et de ma sympathie émue.

André SANTINI  
Vice-Président de la métropole  
du Grand Paris



Monsieur Aram SISSERIAN  
Président  
HOMENETMEN France  
17 rue Bleue  
75009 PARIS

# ՉԱԻԱԿՉԱԳԻՐՆԵՐ

ք. Ստեփանակերտ

Գառնիկ Սկրտիչեանի ընտանիքին,

Խոր վշտով տեղեկացայ հայ հասարակական-քաղաքական գործիչ, Հ.Յ.Դ. Լիբանանի Կենտրոնական Կոմիտեի նախկին անդամ Գառնիկ Սկրտիչեանի մահուան մասին: Երկար տարիներ լինելով համահայկական կազմակերպության՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության Կենտրոնական Վարչության ատենապետը՝ նա մեծ ներդրում է ունեցել հայապահպանության, հայ երիտասարդների դաստիարակության եւ համախմբման գործում:

Արցախում զիտենք եւ բարձր ենք գնահատում Գառնիկ Սկրտիչեանի կարեւոր ու ազգանպաստ գործունեությունը, ինչի շնորհիւ նա մեծ յարգանք էր վայելում Հայրենիքում եւ Սփիւռքում:

Անդառնալի կորստի այս ծանր պահին ցուակցութիւն ու զօրակցութիւն են յայտնում հանգուցեալի հարազատներին եւ կուսակիցներին, մաղթում են տոկունութիւն ու ոգու կորով:

ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Արցախի Հանրապետության նախագահ



Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական վարչության ատենապետ Գառնիկ Սկրտիչեանի ընտանիքի անդամներին, հարազատներին, ընկերներին,

Խորը ցառով տեղեկացայ Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչության ատենապետ, բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ական Գառնիկ Սկրտիչեանի մահուան մասին: Տասնամեակներ շարունակ իր կեանքը նուիրելով Հ.Մ.Ը.Մ.ական գաղափարախօսությանը՝ նա նշանակալի ներդրում ունեցաւ միութեան զարգացման, ընդլայնման եւ ամրապնդման գործում:

Բարձրանալ եւ բարձրացնել. ահա այս կենսակերպով պարոն Սկրտիչեանն ուղղորդեց հազարաւոր երիտասարդների, առողջ ապրելակերպից զատ նրանց մէջ սերմանեց ընկերասիրութիւն, հոգատարութիւն, նուիրւածութիւն:

Շատ լաւ են յիշում Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի տօնակատարութիւնները, Հայաստան 1200 սկաւտների ժամանումը, տօնական միջոցառումներն ու բանակումը, որոնց պատիւ ունեցայ մասնակցել: Այդ օրերին անսահման էր Գառնիկ Սկրտիչեանի ուրախութիւնն ու ոգետրութիւնը:

Մէկ անգամ եւս ընդունէք իմ ցուակցութիւնները: Ուժ եւ ամրութիւն հանգուցեալի հարազատներին:

ՄԵԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի Գիտութեան, Կրթութեան, Մշակոյթի, Սփիւռքի, Երիտասարդութեան եւ Մարմնամարզի Հարցերու Մշտական Յանձնաժողովի նախագահ

Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական վարչության ատենապետ Գառնիկ Սկրտիչեանի ընտանիքի անդամներին, հարազատներին, ընկերներին,

Խորը ցառով տեղեկացայ Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչության ատենապետ, բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ական Գառնիկ Սկրտիչեանի մահուան մասին: Պարոն Սկրտիչեանն իր գործի ու գաղափարի նուիրեալն էր, «Բարձրացիր-բարձրացուր» կարգախօսի կրողը: Շատերը կը յիշեն այն ուրախութիւնն ու ոգետրութիւնը,

որ նա ապրեց Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի առթիւ: Միշտ այն համոզմանն էր, որ « Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցողը չի կրնար բաժնուիլ անկէ»: Հէնց ինքն էլ ամբողջ կեանքում ապրեց ու արարեց այդպէս:

Խնդրում եմ ընդունէք իմ անկեղծ ցաւակցութիւնները: Համբերութիւն ու ոգով կորով հանգուցեալի բոլոր հարազատներին:

**ԶԱՐԵՀ ՄԻՆԱՆԵԱՆ**  
Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի  
Գործերու գլխաւոր յանձնակատար

Ցաւով տեղեկացայ Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան երկար տարիների ղեկավար Գառնիկ Սկրտիչեանի անժամանակ մահուան մասին:

Այս անդամայի վշտի պահին խնդրում եմ փոխանցել իմ խորին ցաւակցութիւնները Գառնիկ Սկրտիչեանի ընտանիքի անդամներին, հարազատներին, գործընկերներին, բարեկամներին եւ բոլոր նրանց, ովքեր ճանաչել են նրան:

Բարձր եմ զնահատում նրա ազգանուէր գործունէութիւնը եւ սիրով յիշում մեր համագործակցութիւնն ու բարեկամական յարաբերութիւնները Լիբանանում անցկացուած տարիների ընթացքում:

Թող Աստուած լուսաւորի հանգուցեալի հոգին: Վառ յիշատակը Գառնիկի մասին յաւերժ կը մնայ բոլորիս սրտերում:

Մրտի կսկիծով՝

**ԱՇՈՏ ԶՈՉԱՐԵԱՆ**  
Սեւ Ծովեան Տնտեսական Համագործակցութեան  
Կազմակերպութեան Քարտուղարութեան գործադիր կառավարիչ,  
Լիբանանում Հ.Հ. նախկին դեսպան

Յարգարժան  
Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութիւն,  
Լիբանան,

Մրտի խոր ցաւով իմացայ եղբայր Գառնիկ Սկրտիչեանի վաղաժամ մահուան մասին: Եղբայր Գառնիկին մահը բաց մը պիտի ձգէ իր տարած՝ համազգային տարողութիւն ունեցող ազգանուէր գործունէութեան մէջ, մարզական, սկաուտական եւ կուսակցական բնագաւառներէն ներս: Բաց մը, որ դժուարութեամբ կրնայ համայրուիլ:

Մենք պիտի յիշենք զինք այն բացառիկ գործունէութեամբ, զոր ան տարաւ կիպրահայ գաղութի եւ մանաւանդ՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի Կիպրոսի մասնաճիւղի վերելքին մէջ:

Խորին ցաւակցութիւններ Մակիին եւ իմ կողմէս, եղբայր Գառնիկ Սկրտիչեանի ընտանիքին, մեզի սիրելի տիկնոջ Մարալին, իր զաւակներուն՝ Բիւզանդին եւ Նժդեհին, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:

Վշտակցութեամբ՝

**ՎԱՐԴԳԷՍ ՄԱՀՏԵՍԵԱՆ**  
Կիպրահայ համայնքի պետական ներկայացուցիչ

Մեծ ցաւով կորսնցուցինք քեզ՝ շատ սիրելի եղբայր Գառնիկ Սկրտիչեան:

Հայ մեծարժէք անձ մը, որ Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր դաշտերուն մէջ քու տիրա-



# ՉԱԻԱԿՉԱԳԻՐՆԵՐ

կան ներկայութեամբ մեծ դեր ունեցար, հսկայական ջանք ու ժամանակ նուիրեցիր ծառայելու հայ ազգին, անոր երիտասարդութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ին:

Մեր ցարը մեծ է, սակայն շատ ատելի մեծ է մեր հպարտութիւնը քեզի պէս ընկեր մը ունեցած ըլլալու համար:

Մեր խոր ցաւակցութիւնները կը յայտնենք Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին եւ հանգուցեալին պարագաներուն:

ՅԱԿՈՒ ԹԵՐՉԵԱՆ

Լիբանանի պետական երեսփոխան

Խոր ցաւով տեղեկացանք ընկ. Գառնիկ Սկրտիչեանի վաղաժամ մահուան մասին:

Ընկեր Գառնիկի աւանդը լիբանանահայ ազգային եւ կազմակերպական կեանքում, բայց յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ի ամրապնդման եւ տարածման գործում մեծ է: Հ.Մ.Ը.Մ.ում նրա Կենտրոնական Վարչութեան ատենապետութեան շրջանում բազմաթիւ մասնաճիւղեր հիմնուեցին տարբեր երկրներում, պատշաճ եւ համապարփակ ձեւով նշուեց միութեան 100-ամեակը եւ մեծ թափ ստացաւ հայ նոր սերունդի ազգային դաստիարակութիւնը:

Մեր խորին ցաւակցութիւնն ենք յայտնում ընկեր Գառնիկ Սկրտիչեանի ընտանիքին եւ հարազատներին, Լիբանանի Կ.Կ.ին եւ շարքերին, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան եւ աշխարհասփիռ անդամներին:

Հ.Յ.Դ. ԲԻԻՐՕ

Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինը գումար է Դաշնակցական նուիրեալ ընկեր, Հ.Յ.Դ. Լիբանանի Կենտրոնական Կոմիտէի նախկին անդամ, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) Կենտրոնական Վարչութեան երկարամեայ անդամ եւ ատենապետ Գառնիկ Սկրտիչեանի մահը եւ ցաւակցում հանգուցեալի ընտանիքին ու հարազատներին:

Ընկերոջ աւանդն իր հաստատուն տեղն ունի հայ ազգային կառոյցների յարատեւ ընթացքն ապահովելու գործում, եւ նրա լուսատու հետազիծը ներկայացնող շարադրանքը դեռ ստեղծուելու է:

Հ.Յ.Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութեան, Միքելի քոյրեր եւ եղբայրներ,

Խոր կսկիծով իմացանք ազգային վաստակատու ու նուիրեալ գործիչ եղբայր Գառնիկ Սկրտիչեանի մահուան գոյժը: Մեր պատմութեան դաժան այս օրերուն, եղբայր Գառնիկին կորուստը եկաւ նորիցս խոցելու մեր արդէն իսկ սգատու սրտերը:

Իր մահով հայութիւնը կը կորսնցնէ հազուագիւտ այն անհատներէն մին, որոնց կեանքը եղած է ամբողջական նուիրում՝ իրենց աշխարհով մէկ ցրուած ժողովուրդին ու մասնատուած հայրենիքին բարօրութեան այլազան անդաստաններէն ներս անցնելու ծառայութեան եւ անոնց արդար Դատին ճանաչման ի խնդիր տարուող ամենօրեայ պայքարին:

Որպէս երդուեալ շարքային Դաշնակցական, այս ճանապարհէն երբեք չշեղած հանգուցեալ մեր ընկերը իր պատանեկան, երիտասարդական ու հասուն կեանքը առաջնահերթօրէն նուիրած էր Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միու-



Photo by Markos

թեան «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» հրամայականով առաջնորդող համահայկական ազգաշէն գործունէութեան: Իր ներկայութեան վարակիչ հաւատքով ու գործունէայ նկրտումով, Հ.Մ.Ը.Մ.ը առաւել եւս ծաղկեցաւ հայաշխարհի նորանոր տարածքներէն ներս, Եւրոպայէն մինչեւ Ռուսաստան:

Իր յիշատակը պիտի ապրի ընդմիջտ՝ որպէս անշեղ ուղեցոյց ապագայ սերունդներուն: Այս տխուր պահուն, Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութիւնը կու գայ յայտնելու իր եւ իր բոլոր միատրներուն խորին ցաւակցութիւնները եղբայր Գառնիկի ընտանիքին, հարազատներուն, երկարամեայ գործընկերներուն եւ բոլոր անոնց, որոնց կեանքին ընթացքին ան եղաւ ու կը մնայ ընդմիջտ լուսաշող ներկայութիւն մը:

**ԴՈԿՏ. ՆԱՅԻՐԻ ՏԷՐՏԷՐԵԱՆ**  
Հայ Օգնութեան Միութեան ատենապետուհի

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան,  
Միտելիներ,  
Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը խոր կսկիծով կը սգայ ընկեր Գառնիկ Սկրտիչեանի մահը եւ իր խորագգաց ցաւակցութիւնները կը փոխանցէ ձեզի: Աստուած հոգին լուսաւորէ:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Ազնուափայլ տիկին Մարալ Սկրտիչեան եւ զաւակունք՝ Բիւզանդ եւ Նժդեհ, Յարգելիներ,  
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովը խոր ցաւով վերահասու դարձաւ Ձեր սիրելի ամուսնոյն եւ հոր՝ Գառնիկ Սկրտիչեանի մահուան, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 6 Յունուար 2021-ին:

Հ.Մ.Ը.Մ.ի Միութեան Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովին ու Բարեգործականի մեծ ընտանիքին անունով, սոյն գրութեամբ կու գանք մեր խորագգաց ցաւակցութիւնները յայտնել Ձեզի, Ձեր այս անդարմանելի կորուստին առթիւ:

Հանգուցեալ պրն. Սկրտիչեանին ատենապետութեամբ՝ Երեքշաբթի, 4 Օգոստոս 2020-ին, Պէյրութի նաւահանգիստի ահաւոր պայթումին հետեւանքով կազմուած Լիբանանահայ Վերականգնումի Մարմինին մաս կազմած ըլլալով, աւելի մօտէն ծանօթացանք արդարամիտ, անշահախնդիր, նուիրեալ ու հաւասարակշռութիւն ստեղծող անձին, որուն նմանները քիչ են այս օրերուն եւ որուն կորուստը անսփոփելի է:

Թող հողը թեթեւ գայ վրան ու Տէրը լուսաւորէ հոգին եւ Ձեզի պարգեւէ երկնային մխիթարութիւն եւ համբերութիւն:

**ՍԻԼՎԱ ԼԻՊԱՐԻՏԵԱՆ**  
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան  
Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի ատենադպրուհի

Յարգարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ,  
Խոր ցաւով իմացանք Հ.Մ.Ը.Մ.ի երկարամեայ նուիրեալ, Կեդրոնական Վարչութեան երբեմնի ատենապետ Գառնիկ Սկրտիչեանի անժամանակ մահը:

Ազնի եւ շրջահայեաց նկարագրի տէր Գառնիկ Սկրտիչեանը մեծ ներդրում ունեցաւ լիբանանահայ մարզական միութիւններու միջեւ համագործակցութիւնը ամրապնդելու ճիգերուն:



# ՉԱԻԱԿՉԱԳԻՐՆԵՐ

Այս տխուր առիթով Հ.Բ.Մ. Հ.Ե.Ը.ի անունով մեր խորազգաց ցուակցությունը կը յայտնենք Գառնիկ Սկրտիչեանի ընտանեկան պարագաներուն, հարազատներուն գործընկերներուն, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Լիբանանի Շրջանի Վարչութեան եւ համայն Հ.Մ.Ը.Մ.ի

ընտանիքին:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Հ.Ե.Ը.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յարգարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն, Հ.Մ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը սրտի դառն կսկիծով իմացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երկարամեայ բազմավաստակ ատենապետ, ներկայիս Լիբանանի Հայոց Թեմի Ազգային Վարչութեան փոխ ատենապետ, Պուրճ Համուտի քաղաքապետական խորհուրդի անդամ Գառնիկ Սկրտիչեանի վաղահաս ու անակնկալ մահը:

Այս տխուր առիթով, Հ.Մ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը իր խորազգաց ցուակցությունները կը յայտնէ հանգուցեալին ընտանեկան պարագաներուն, հարազատներուն, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ ողջ Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

Խունկ եւ աղօթք հանգուցեալին հոգիին:

Յիշատակդ ծաղկեալ ու անթառամ մնայ:

Հ.Մ.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը, Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտութեան տօնին, խոր կսկիծով ստացաւ մահուան գոյժը վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական, տարիներու Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբայր Գառնիկ Սկրտիչեանի: Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը եղբօր անակնկալ մահուամբ կորսնցուց հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ական մը, նուիրեալ միութենական մը, որ անսակարկ ծառայութեամբ եւ նուիրումով գրաւեց բոլորին սրտերը:

Եղբայր Գառնիկ Սկրտիչեան ծնունդ առնելով Հալէպի Մայր Գաղութէն, ազգայնաշունչ ընտանիքի մէջ հասակ առաւ եւ դարձաւ վեհանձն հայր իսկական տիպարը, որ մտահոգուեցաւ իր ազգին տագնապներով եւ ուրախացաւ անոր ձեռքբերած նուաճումներով:

Համեստ նկարագիրի, յարգալիք մօտեցումի եւ սիրալիք վերաբերմունքի տէր անձնաւորութիւն մը, որ ազգին շահերը իր անձնական կեանքէն գերադասելով եւ Միութեան «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանը իր կեանքին ուղեցոյցը դարձնելով՝ նուիրաբար ծառայեց, բարձրացաւ եւ իր հետ բարձրացուց աշխատունակ ոգի ունեցող Հ.Մ.Ը.Մ.ականները: Յարգեց Միութեան երէցները, քաջալերեց երիտասարդները եւ օրինակ հանդիսանալով ազգային գաղափարախօսութիւն սերմանեց անոնց մէջ:

Որպէս Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ ան մօտէն հետաքրքրուեցաւ Միութեան աշխարհասփիւռ շրջաններով եւ մասնաճիւղերով: Լայնասրտութեամբ լսեց անոնց մտահոգութիւնները եւ իր կարելին ի գործ դրաւ հաւասարակշռուած եւ շինիչ լուծումներ որդեգրելու համար: Միութեան 100-ամեակի զանազան նախաձեռնութիւնները, համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու եւ մարզախաղերու կազմակերպչական հսկայական աշխատանքները յաջողու-



թեամբ պսակելու համար, սերտուած յարաբերութիւններ մշակեց եւ ամենայն համբերատարութեամբ եւ յարատեւութեամբ ամբողջացուց զանոնք:

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ շրջանը քանիցս վայելած է եղբ. Գառնիկին ներկայութիւնը Սուրբոյ զանազան մասնաճիւղերէն ներս եւ օգտուած է եղբոր փորձառութենէն եւ շահեկան ցուցմունքներէն:

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը իր խորազգաց վշտակցութիւնն ու ցաւակցութիւնը կը յայտնէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ Ձեր ճամբով աշխարհասփիւռ Հ.Մ.Ը.Մ.ականներուն՝ եղբայր Գառնիկ Սկրտիչեանի անժամանակ մահուան տխուր առիթով:

Թող Ամենակալ Աստուած հանգուցեալ եղբոր հոգին խաղաղութեան մէջ պահէ եւ իր հարազատներուն Սուրբ Հոգւոյն մխիթարութիւնը պարգեւէ: Ազգանուէր ծառայութիւն ունեցող Հ.Մ.Ը.Մ.ականներ չեն մեռնիր, անոնք կը յաւերժանան Հ.Մ.Ը.Մ.ական սերունդներու սրտերուն մէջ՝ իրենց կատարած նուիրական գործերով եւ պայծառ յիշատակով:

Բի՛ւր յարգանք եղբ. Գառնիկի վաստակին եւ անմեռ յիշատակին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան,  
Սիրելի քոյր եւ եղբայրներ,

Սրտի խոր կսկիծով իմացանք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երկար տարիներու նախկին ատենապետ, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Գառնիկ Սկրտիչեանի անակնկալ մահուան գոյժը:

Այս տխուր առիթով Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնը կը յայտնէ ձեզի եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, անփոխարինելի կորուստին համար:

Կը գիտակցինք, թէ որքա՛ն դժուար է Հ.Մ.Ը.Մ.ականի մը մահը, ի մասնաւորի հանգուցեալ եղբ. Սկրտիչեանի պէս անդամի մը կորուստը Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին համար:

Ընդունեցէք մեր անսահման մխիթարութիւններն ու համբերութեան կամքը:

Թող ամենակարողն Աստուած հանգուցեալին հոգին լուսաւորէ եւ երկինքի արքայութեան արժանի ընէ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՍՏԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը, իր եւ Արեւելեան Շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի համայն ընտանիքին անունով կու գայ իր խորին ցաւակցութիւնները յայտնելու ձեզի, մեր սիրելի եղբոր՝ Գառնիկ Սկրտիչեանի մահուան տխուր առիթով:

Եղբայր Գառնիկին լուսաւոր յիշատակը փարոսը պիտի ըլլայ մեր ապագայ սերունդներուն, որոնք Հ.Մ.Ը.Մ.ական բարձր ոգիով պիտի շարունակեն իր սկսած գործը՝ աւելի հաստատ ու վճռակամ:

Տէրը Իր Սուրբ Հոգիով մխիթարէ ձեզ, հանգուցեալին հոգին լուսաւորէ եւ արժանացնէ յաիտեանական կեանքի:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



# ՉԱԻԱԿՉԱԳԻՐՆԵՐ

Սիրելի Սկրտիչեան ընտանիք,  
Սրտի խոր ցառով Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի  
Շրջանային Վարչութիւնը, Պուէնոս Այրէսի, Գորտոպայի  
եւ Մոնթեվիտոյի մասնաճիւղերը կը գուժեն Կեդրոնա-  
կան Վարչութեան նախկին ատենապետ, մեր սիրելի ու  
յարգելի եղբայր Գառնիկ Սկրտիչեանի տխուր մահը:

Եղբ. Գառնիկը տիպար Հ.Մ.Ը.Մ.ական մըն էր, որ իր կեանքը նուիրեց ի  
նպաստ հայութեան ու մեր կազմակերպութեան վերելքին: Մեր շրջանը պատիւը  
ունեցաւ մօտէն ծանօթանալու իրեն: Իր ամբողջանուէր ծառայութիւնը, ներդրումն  
ու նուիրումը պիտի դառնան ներշնչող օրինակ ապագայ սերունդներուն: Իր յիշա-  
տակը միշտ վառ պիտի մնայ մեր սրտերուն մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանը խորազգաց ցաւակցութիւն կը  
յայտնէ տիկնոջ, զաւակներուն եւ հարազատներուն: Թող Աստուած լուսատրէ  
եղբ. Գառնիկին հոգին եւ Ձեզի մխիթարութիւն պարգեւէ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,  
Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութիւնը սրտի խոր կսկի-  
ծով կը գուժէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երկարամեայ  
ատենապետ, բազմավաստակ ազգային գործիչ եղբայր Գառնիկ Սկր-  
տիչեանի անակնկալ մահը: Եղբայր Գառնիկ իր կարողութիւններով  
տակաւին շատ տալիք ունէր հայ ազգին, մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.ին:

Եղբ. Գառնիկ Սկրտիչեան յատուկ վաստակ ունէր աշխարհաս-  
փիւռ Հ.Մ.Ը.Մ.ի կեանքէն ներս: Եղբօր մահով Հ.Մ.Ը.Մ. կը կորսնցնէ  
հաւատաւոր տիտան մը:

Մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնա-  
կան Վարչութեան, հանգուցեալ եղբօր ընտանիքին, հարազատներուն  
եւ աշխարհասփիւռ Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

Խունկ ու աղօթք հոգւոյն խաղաղութեան:  
Աստուած հոգին լուսատրէ: Հողը թեթեւ գայ վրան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՍՏՐԱԼԻՈՅ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յարգարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,  
Սիրելի եղբայրներ,  
Սրտի խոր կսկիծով տեղեկացանք բազում տարիներու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնա-  
կան Վարչութեանց ատենապետ եւ վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր Գառ-  
նիկ Սկրտիչեանի մահուան գոյժը: Միտնիի Հ.Մ.Ը.Մ.ի «Անդրանիկ» մասնաճիւղին  
վարչութիւնը կու գայ իր ցաւակցութիւնը յայտնելու վարչութեանը՝ եղբայր Գառնի-  
կին անակնկալ մահուան եւ անվերադարձ կորուստին առիթով:

Կը խնդրենք Աստուծմէ, որ Ինք ձեզ եւ եղբայր Գառնիկին ընտանիքին պար-  
գեւէ երկնային մխիթարութիւն:

Եղբայր Գառնիկին բարի գործերուն յիշատակը դրոշմուած պիտի մնայ մեր  
բոլորին մտքերուն եւ սրտերուն մէջ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՏՆԻԻ «ԱՆԳՐԱՆԻԿ»  
ՍԱՄՆԱՃԻԴԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Ուաշինգթոնի մասնաճիղը իր խոր ցուակցությունները կը յայտնէ եղբայր Գառնիկի ընտանիքին, հարազատներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ին:

Աստուած հոգին լուսաւորէ: Հայրենասիրական իր ոգին եւ յիշատակը անթանամ պիտի մնան մեր միութեան մէջ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՈՒԱՇԻՆԿԹՐՆԻ  
ՄԱՍՆԱՃԻԿԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան,

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մեկուսի վարչութիւնը սրտի խոր կսկիծով կը գուժէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երկար տարիներու բազմավաստակ ատենապետ եղբ. Գառնիկ Սկրտիչեանի անակնկալ մահը:

Մեր խոր ցուակցութիւնը կը յայտնենք իր ընտանիքի անդամներուն, հարազատներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի համայն ընտանիքին:

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՄԵԿՈՒՄԻ  
ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յարգարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,  
Ընդունեցէք մեր խորին ցուակցութիւնները եղբ. Գառնիկ Սկրտիչեանի անըստասելի մահուան կապակցութեամբ:

Այս դէպքը ցնցեց բոլորիս, թողնելով մեզ մոլորուած:

Իր դրական գործունէութիւնը եւ խորհուրդները պիտի մեզ ուղի լինեն ներկայացնելու մեր ամենալաւը, մեր սիրելի Հ.Մ.Ը.Մ.ի համար:

Կը խնդրենք փոխանցել նաեւ մեր ցուակցական մաղթանքները հանգուցեալի ընտանիքին:

Աստուած հոգին լուսաւորի:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՆՏՈՆԻ ՄԵԿՈՒՄԻ  
ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յարգարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,

Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի մեկուսի շրջանի վարչութիւնը եւ անդամները կը գուժեն վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Գառնիկ Սկրտիչեանին մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 6 Յունուար 2021-ին:

Հ.Մ.Ը.Մ. Ալմելոն իր խորազգաց ցուակցութիւնները կը յայտնէ հաւատաւոր եղբոր ընտանիքին, հարազատներուն, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ ողջ Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՄԵԿՈՒՄԻ  
ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Նետրդլէտներու (Հոլանտայի) Ալքմար մասնաճիղը խոր կսկիծով կը ցուակցի Հ.Մ.Ը.Մ.ի վաստակաշատ նուիրեալ, ազգային գործերու անխոնջ եւ հաւատաւոր ասպետ՝ եղբայր Գառնիկ Սկրտիչեանի անժամանակ եւ ցուալի մահուան համար: Եղբայր Գառնիկ հիմնած է բազմաթիւ մասնաճիղեր, որոնց կարգին՝ Ալքմարի մասնաճիղը: Ան անձամբ մասնակցեցաւ մասնաճիղին ստեղծման եւ իր հոգատարութեամբ մնայուն աջակիցը եղաւ մասնաճիղին:

Հայ մարդու խորաթափանցութիւնը, ազնուութիւնը, խոհեմութիւնը եւ



# ՉԱԻԱԿՉԱԳԻՐՆԵՐ

հայրական հոգատարությունը կը ճառագայթէին եղբայր Գառնիկին աչքերէն եւ ուր որ ոտք դնէր ան, իր հետ կը բերէր սէր եւ ժպիտ, համբերութիւն եւ միասնականութիւն: Շահ ալիսու, որ այլեւս առիթը չենք ունենար վայելելու մեր ազնուագոյն եղբայրը, ընկերը, բայց ան բարի յուշերով յաւերժ կը մնայ մեր սրտերուն մէջ:

Փառք բեզի եղբայր: Փառք քու գործիդ, որ անկասկած անմահ է եւ դեռ յաջորդական սերունդներ պիտի դաստիարակէ հայոց մեծագոյն յաղթանակներուն համար:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼԶՍԱՐԻ ՄԵԿՈՒՄԻ  
ՄԱՍՆԱՃԻՂԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,  
Յարգելի քոյրեր եւ եղբայրներ,

Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի մեկուսի շրջանի վարչութեան եւ բոլոր քոյրերուն ու եղբայրներուն անունով կը փոխանցենք մեր խորին ցաւակցութիւնները Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, ի մասնաւորի Կեդրոնական Վարչութեան, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական, ծառայատէր եւ հայրենատէր տիտանի մը՝ եղբ. Գառնիկ Սկրտիչեանի մահուան առիթով:



Իսկապէս որ բառերը բարարար չեն արտայայտելու մեր խոր կսկիծը: Դժուար է գտնել մխիթարական խօսքեր՝ ամոքելու մեծ կորուստին պատճառած ցաւը:

Կ'աղօթենք անոր հոգւոյն խաղաղութեան համար: Լոյսերու մէջ նընչէ եղբ. Գառնիկ Սկրտիչեանը:

Յիշատակը անթառամ պիտի մնայ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներու հոգիներուն մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԿՈՒՄԻ  
ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ եղբ. Գառնիկ Սկրտիչեանի ընտանեկան պարագաներուն,

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնս իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ վաստակատէր Հ.Մ.Ը.Մ.ական ու բազմիցս Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբայր Գառնիկ Սկրտիչեանին՝ անակնկալ մահուան տխուր առիթով: Անխոնջ եղբոր մահը սուգի մատնեց Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի ընտանիքը:

Միշտ վառ պիտի մնայ անոր հոգատարութիւնը մեր շրջանի եղբայրներուն ու քոյրերուն հանդէպ եւ եզակի ու օրինակելի գործակցութիւնը՝ վարչական պատասխանատուներուս հետ:

Յարգանք իր քաղցր յիշատակին:

Հ.Մ.Ը.Մ.ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան,

Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչութիւնը շրջանիս անդամներուն կողմէ իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երկար տարիներու ատենապետ եւ բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր Գառնիկ Սկրտիչեանի ընտանիքին՝ իր մահուան տխուր առիթով:

Մեր ցուցանիշները կը յայտնենք նաև Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ու համասփիռ մեծ ընտանիքին:  
Խումկ եւ աղօթք հանգուցեալ եղբօր հոգւոյն:

ԳԱՀԻՐԷԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԱՐԱՏ»Ի  
ՄԵԿՈՒՄԻ ԱՐՉՈՒԹԻՒՆ

Յարգարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,  
Խոր կսկիծով տեղեկացանք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երկար տարիներու ատենապետ եղբայր Գառնիկ Սկրտիչեանի մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 6 Յունուար 2021-ին, Պէյրութ:

Այս տխուր առիթով հաճեցէք ընդունիլ Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի վարչութեան եւ անդամներու խորին ցուցանիշները՝ ուղղուած Ձեզ եւ յարգելի ընտանիքի անդամներուն: Աստուած անոր հոգին լուսատրեւ եւ Ձեզի համբերութիւն շնորհեւ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՐՏԱՏԻ ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յարգարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,  
Եղբ. Գառնիկին կեանքէն անժամանակ եւ անակնկալ բաժանումը սուգի մատնած է բոլորս: Տանամեակներու վրայ երկարող, երկու նուիրեալ եւ համեստ գործակից եղբայրներուս՝ Սարգիս Հաճինազարեանի եւ Պատրիկ Կիլպէնկեանի մահուան լուրերէն ետք, ավստասանքով աւելցաւ եղբ. Գառնիկ Սկրտիչեանի մահուան անսպասելի լուրը:

Եւ հիմա, եղբ. Գառնիկին գործունէութեան վերջին քառամեակին յետադարձ ակնարկ մը նետելով կը նկատեմ եղբօր կամայ թէ ակամայ աճապարանքը՝ կարեւոր ինքզինք գերազանցելու եւ իրագործելու իր պատասխանատուութեան զուգահեռ՝ Հ.Մ.Ը.Մ.ի կապուած բազմաթիւ յաջողութիւններ, որոնց վաստակը ծանր կը կշռէ Հ.Մ.Ը.Մ.ական ղեկավարի մը նժարին վրայ:

Եղբ. Գառնիկ, քու բացակայութիւնդ միշտ զգալի պիտի մնայ Հ.Մ.Ը.Մ.ի կեանքէն մերս: Թող Աստուած մխիթարէ տիկինդ՝ Մարալը, զաւակներդ եւ Հ.Մ.Ը.Մ.ի սգաւոր ընտանիքը:

Հողը թեթեւ գայ սիրելի եղբայր:

*Սան Ֆրանսիսքօ*

ԺԻՐԱՅԻ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւն,  
Սիրելի՛ վարչական եղբայրներ,  
Խոր ցնցումով տեղեկացայ եղբ. Գառնիկ Սկրտիչեանի մահուան անբնական պատճառով:

Եղբ. Գառնիկ բարձրացաւ ու բարձրացուց: Արդարեւ, բարձրացաւ միութենական շարքերէն անցնելով - բարձրացուց Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան հաւատալով, նշանակելի ներդրում ունեցաւ ազգային բոլորանրէր իր ծառայութեամբ:

Եղբ. Գառնիկին անժամանակ մահով Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական մեծ ընտանիքը կը կորսնցնէ բազմալատակ կեդրոնական վարիչ դէմք մը, պատուարեր արձանագրութիւններ աւելցնելով միութեան հարիւրամեայ պատմութեան:

Վաստակաշատ եղբօր վարձքը կատար:



# ՉԱԻԱԿՉԱԳԻՐՆԵՐ

Աստուած լուսաւորէ իր հոգին:  
Խորազգաց ցաւակցութիւններս իր հարազատներուն:  
*Մոնթրէալ*

**ՎԱՐՈՒԺԱՆ ՍԵՐՈՔԵԱՆ**  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան,  
Շատ սիրելի եղբայրներ,

Կ'ուզէիք 2020 աղէտաբեր տարին մեր ետեւ թողուլ եւ հաւատալ, որ 2021-ը պիտի սկսէիք նոր յոյսերով: Եւ ահա, մեր շատ սիրելի եղբոր՝ Գառնիկ Մկրտիչեանին անակնկալ մահը, Քրիստոսի Ծննդեան օրը, կու գար վերջ դնելու մեր վարկածներուն եւ ցնցելու ողջ Հ.Մ.Ը.Մ.ը, չըսելու համար հայութիւնը, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի: Ո՞վ չէր ճանչնար Գառնիկը, ո՞վ չէր սիրած իր իւրայատուկ ժպիտը, որո՞ւն չէր զօրակցած ան, ըլլայ բանիւ թէ գործով:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան իր երկարամեայ ատենապետութեան ընթացքին, համագործակցութեամբ իր նման անձնուրաց Հ.Մ.Ը.Մ.ականներու, ան յաջողութեան հասցուց շարք մը կարեւոր ծրագիրներու գործադրութիւնը, որոնց վերջինը՝ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի փառաշուք տօնակատարութիւնը Հայաստանի մէջ: Եղբայր Գառնիկը հասած էր իր հասունութեան տարիքին եւ պիտի սկսէր ստեղծագործել առաւել եռանդով: Եւ ահաւասիկ անհետք մահը վերջ կը դնէր իր երազներուն, ծրագիրներուն եւ մեր յոյսերուն: Թող Աստուած իր հոգին ընդունի իր լուսեղէն յարկերէն ներս: Ինծի համար ան պիտի մնայ օրինակելի Հ.Մ.Ը.Մ.ական, որ իր կեանքով օրինակ հանդիսացաւ մեծ թէ փոքր Հ.Մ.Ը.Մ.ականին:

Ընդունեցէք, եղբայրներ, խորին ցաւակցութիւնս այս վաղաժամ կորուստին համար: Գառնիկին յիշատակը մեր սրտերուն մէջ անմար պիտի մնայ առ յաւիտ:

*Միտնի*

**ՍԱՐԳԻՍ ՏԵՐ ՊԵՏՏՐՈՍԵԱՆ**  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ

Եղբայր Գառնիկի մահով կորսնցուցիք սիրուած եղբայր մը եւ ընկեր մը: Ան մեզի ներկայացուց լաւապէս եւ իր բացակայութիւնը շատ զգալի պիտի ըլլայ մեր մէջ: Մեր խորին ցաւակցութիւնները ընտանիքին:

Մենք կը գնահատենք իր յիշատակը եւ ծառայութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին: Մեր արցունքներն ու աղօթքները ձեզի հետ են:

*Լոս Անճելըս*

**ՀԱՍԼԷԹ ՉՐԱԽՆԵԱՆ**  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ

Յարգելի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,  
Խորապէս ցաւում եմ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի մահուան տխուր լուրի առիթով: Ցաւակցութիւն եմ յայտնում իր ընտանիքին եւ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին:

Աստուած հոգին լուսաւորէ:

*Լոնտոն*

**ԱԼԷԶ ԽԱՉԱՏՐԵԱՆ**  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ



Սկրուիչեանների յարգարժան ընտանիքին,  
Հ.Յ.Դ. Լիբանանի Կ.Կ.ին, Հ.Մ.Ը.Մ. Կ.Վ.ին,  
Խոր վշտով տեղեկացայ ընկեր Գառնիկ Սկրուիչեանի վաղաժամ մահուան  
կապակցութեամբ:

Ընկեր Գառնիկի ներդրումը ազգային կառոյցներում, բայց մանաւանդ Հ.Մ.-  
Ը.Մ.ի զարգացման եւ ընդարձակման գործում անժխտելի է:

Այսու ցաւակցութիւններս եմ յայտնում ընկերոջ ընտանիքին, Լիբանանի  
Կ.Կ.ին եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կ.Վ.ին:

Աստուած հոգին լուսաւորէ եւ երկնային արքայութեան արժանացնէ:  
Վշտակցաբար՝

ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ  
Հ.Յ.Դ. Բիւրոյի նախկին ներկայացուցիչ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,  
Սիրելի՛ սօսկիր քոյրեր եւ եղբայրներ,  
6 Յունուար 2021-ը սեւ թուական մը դարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին հա-  
մար: Եղբայր Գառնիկ Սկրուիչեանի անակնկալ մահուան բօթը մեծ ալեկոծութիւն  
ստեղծեց իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի կեանքէն ներս:

Եղբայր-ընկեր Գառնիկը իր անջնջելի դրոշմը դրած է Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան  
մէջ: Իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի կեանքէն ներս ան պիտի շարունակէ ապրիլ  
հայրենասիրութեան, համեստութեան, զոհողութեան, անձուրաց եւ ազգանուէր իր  
կերպարով: Իր եղբայրական եւ դրական կեցուածքով ան իւրաքանչիւրին կեանքը  
փոխած է դրական ձեւով:

Ընկեր Գառնիկին բեղուն գործունէութիւնը ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ.ի, այլ նաեւ՝ որ-  
պէս Դաշնակցական, հասարակական-կուսակցական ու ազգային գործիչի, կը  
մնանի մեծ կերտնի մը, որ կը հալի՝ լուսաւորելով իր շրջապատը: Նոյնիսկ իր նըն-  
ջելէն ետք, եղբայր Գառնիկը իր ստեղծած բացառիկ կերպարով պիտի շարունա-  
կէ մնալ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի համար լուսաւոր տիպար:

Առ այդ, Հ.Յ.Դ. Կեդրոնական Եւրոպայի «Վարանդեան» Առանձնակի Շրջա-  
նի կոմիտէները իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտա-  
նիքին, Կեդրոնական Վարչութեան, հանգուցեալի ընտանիքին եւ համայն հայու-  
թեան:

Հ.Յ.Դ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ «ՎԱՐԱՆԴԵԱՆ»  
ԱՌԱՆՁՆԱԿԻ ՇՐՋԱՆԻ ԿՈՄԻՏԵՆԵՐԻՆ

Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,  
Խոր կսկիծով իմացանք Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի նախկին  
անդամ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եւ ներկա-  
յիս Լիբանանի Հայոց Թեմի Ազգային Վարչութեան փոխ ատենապետ Գառ-  
նիկ Սկրուիչեանի մահուան գոյժը:

Գառնիկ Սկրուիչեանին հետ շատ առիթներով միասին գտնուեցանք  
Քուէթի, Լիբանանի եւ Հալէպի մէջ: Իր ազգանուէր, անսակարկ ծառա-  
յութեամբ, հեզ նկարագիրով եւ վեհանձն մօտեցումով ան մարմնաւորեց  
իսկական հայու տիպարը: Գառնիկը իր ստանձնած միութենական  
պարտականութիւններուն ընդմէջէն յարգեց երէցները եւ քաջալերեց  
երիտասարդները, որպէսզի կառչած մնան մեր ազգային-եկեղեցական  
արժէքներուն:

Հայապահպանութեան ի նպաստ Գառնիկին կատարած գործերը  
դրոշմուած կը մնան ո՛չ միայն Լիբանանի սերունդներուն մէջ, այլ նաեւ՝  
աշխարհասփիւռ Հ.Մ.Ը.Մ.ականներուն մէջ:



# ՉԱԻԱԿՉԱԳԻՐՆԵՐ

Բերիոյ Հայոց Թեմի ժողովականութեան անունով մեր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնենք Չեզի եւ Լիբանանի ազգայիններուն, աղօթելով առ բարձրեալն Աստուած, որ հանգուցեալ Գառնիկին հոգին երկինքի արքայութեան արժանացնէ եւ իր հարազատներուն Սուրբ Հոգ-

տյն մխիթարութիւնը պարգեւէ:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի,  
Մնամք սիրոյ ջերմ ողջոյնի եւ օրհնութեամբ:

ՄԱՍԻՍ ԵՊՍ. ԶՕՊՈՒԵԱՆ  
Առաջնորդ Հայոց Բերիոյ Թեմի

Սրտի խոր կսկիծով իմացանք նուիրեալ հայորդի Գառնիկ Սկրտիչեանի մահուան գոյժը, որուն համար անձնապէս եւ Քուէթի եւ Շրջակայից Հայոց Թեմի ժողովականութեան եւ գաղութէն ներս գործող բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու անունով կը ցաւակցինք Չեզի՝ Չեր այս ծանր կորուստին մէջ:

Արդարեւ, Գառնիկ Սկրտիչեան իր ամբողջ կեանքով ծառայութեան օրհնակ հանդիսացած է սերունդներու: Ան երկար տարիներ ինքզինք նուիրաբերելով ծառայած է իր դաւանած գաղափարին՝ ըլլալով տիպար հայ:

Գառնիկ Սկրտիչեանին ազգային ծառայութիւնը չէ սահմանափակուած որեւէ համայնքի մէջ, այլ՝ եղած է համահայկական: Ան ներդրում ունեցած է նաեւ Քուէթի մեր հայ համայնքի կազմակերպական կեանքին մէջ, որուն համար քուէթահայութիւնը միշտ երախտապարտ պիտի ըլլայ իրեն: Գառնիկ Սկրտիչեանի յիշատակը միշտ վառ պիտի մնայ մեր բոլորին սրտերուն մէջ:

Կ'աղօթենք, որ Ամենաբարին Աստուած հանգուցեալին հոգին երկնային լուսոյ խորաններուն արժանացնէ եւ Չեր բոլորին Սուրբ Հոգւոյ մխիթարութիւն պարգեւէ. ամէն:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Աղօթարար՝

ՊԵՏՐՈՍ ՎՐԴ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ  
Կաթողիկոսական Փոխանորդ  
Քուէթի եւ Շրջակայից Հայոց Թեմի

Եղբայր Գառնիկի մահուան կորուստը անսպասելի էր, մանաւանդ որ ան պատահեցաւ Ծննդեան տօնին օրը: Մեր խորին ցաւակցութիւնները բոլոր հարազատներուն:

Թող Աստուած հոգին լուսաւորէ եւ երկնային արքայութեան արժանացնէ:

ԻՐԱԶԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Մեծ ցաւով տեղեկացանք Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան նախկին ատենապետ, ազգային գործիչ տեսար Գառնիկ Սկրտիչեանի անժամանակ մահուան մասին:

Ցաւակցութիւններս եւ վշտակցութիւններս Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին՝ արն. Գառնիկ Սկրտիչեանի մահուան առիթով: Անձնապէս առիթ եղաւ ճանչնալու հանգուցեալը, երբ ան այցելութեամբ եկաւ Շուէտ:

Պրն. Գառնիկ Սկրտիչեանը բացառիկ ազգասէր եւ եկեղեցասէր անձ մըն էր, ինչ որ տեսայ մեր անձնական շփման եւ իր խօսքին մէջ: Ան վկայուած է իր կեան-





քում ունեցած բազմաթիւ նուիրեալ ծառայութիւններով: Այսօր Ս. Ծննդեան մեռելոց յիշատակութիւնն է եւ մեր եկեղեցում նաեւ իմ աղօթքների մէջ յիշում եմ տեսար Գառնիկ Սկրտիչեանին: Աղօթքս է, որ Տէրը երկինքի արքայութեան արժանացնէ ննջեցեալի հոգին:

Խումկ եւ աղօթք իր հոգուն:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի: Ամէն:

*Սթրոփով*

ՎԱՂԱՐԸ ԲՀՆՅ. ԻՍԱԽԱՆԵԱՆ

Ցաւով իմացանք եղր Գառնիկ Սկրտիչեանի մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 6 Յունուար 2021-ին: Մեր խորազգաց ցաւակցութիւնները եւ Սուրբ Հոգիին մխիթարութիւնը կը հայցենք Սկրտիչեան ընտանիքի հարազատներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:

*Պէտրոս*

ՊԱՏՈՒԵԼԻ ՍԵՊՈՒՀ ԹԵՐՁԵԱՆ

Սիրելի Հ.Մ.Ը.Մ.ի սգակիր քոյրեր եւ եղբայրներ, Գառնիկ Սկրտիչեանի հարազատներ եւ ընկերներ, Վաղածամ եւ անգութ մահը ընկ. Գառնիկ Սկրտիչեանի մեզ կը պապանձեն: Այնքան անհաւատալի կը թուի, որ չեմ գիտեր ի՞նչ բառերով դիմեմ կամ ի՞նչպէս ամոքեմ ցաւը, որ այնքան խորունկ է:

Ընկ. Գառնիկին կեանքը կարճ եղաւ, սակայն լեցուն ու բազմաժառանգ կեանք մը, որ կարելի չէր այդքան կարճ ժամանակի մէջ ամբարել այդքան հարստութիւն: Իր հարստութիւնը իր ծառայութիւնն էր՝ նուիրաբերած իր այնքան սիրած ժողովուրդին, իր ընկերներուն, Հ.Մ.Ը.Մ.ին, կուսակցութեան, ազգային մարմիններուն, բոլոր-բոլորին, անխտիր:

Անսակարկ ու առանց պայմանի տուաւ իր անձէն ու հոգիէն, ազգային հասարակական կեանքի բոլոր բնագաւառներուն:

Ընկ. Գառնիկը ո՛չ միայն պիտի երկար յիշենք, այլեւ՝ երկար պիտի փնտռենք զինք հետզհետէ անհետացող նուիրեալ ծառայողներու անհետացման թիւին ի տես:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

*Պէտրոս*

ՄԵՂԱ ԽՏԸՇԵԱՆ

Օր չանցաւ, որ սիրտը չբաբախէր Հ.Մ.Ը.Մ.ին հետ, Հ.Մ.Ը.Մ.ին համար: Օր չանցաւ, որ չնտածեց իր ժողովուրդին մասին, անոր ներկային ու ապագային մասին:

Ամբողջ կեանքդ նուիրեցիր Հ.Մ.Ը.Մ.ին, հայ ժողովուրդին: Շատ կանուխ ձգեցիր մեզի, ընկեր Գառնիկ: Մեծ է ցաւը: Խորին վշտակցութիւնս ընտանիքիդ: Խորին վշտակցութիւնս Հ.Մ.Ը.Մ.ի քոյրերուն-եղբայրներուն, ընկերուհիներուն-ընկերներուն:

Վատահ եղիր, որ քու ուղիդ պիտի շարունակենք: Յիշատակդ անթառամ մնայ:

*Պուճնու Այրէս*

ԽԱՉԻԿ ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ



# ՉԱԻԱԿՉԱԳԻՐՆԵՐ

Յարգելի սգակիր հարազատներ,  
Սրտի անհուն կսկիծով իմացայ լիբանանահայ ազգային, հասարակական եւ կուսակցական գործիչ, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական Գառնիկ Մկրտիչեանի անժամանակ մահը:

Գառնիկ Մկրտիչեան իր աշխոյժ, աշխատասէր, ազնիւ եւ լայնախոհ նկարագիրով սիրուեցաւ բոլորէն:

Գառնիկ Մկրտիչեանի բարի եւ պայծառ յիշատակը միշտ վառ պիտի մնայ մեր յիշողութեան մէջ:

Այս տխուր առիթով խորին ցաւակցութիւններս կը յայտնեմ հանգուցեալ Գառնիկ Մկրտիչեանի այրիին, զաւակներուն եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր քոյրերուն եւ եղբայրներուն:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

*Քուէթ*

ԿԻՐԱԿՈՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Յաւօք սրտի ստացանք մեր շատ սիրելի եղբօր եւ ընկեր Գառնիկի մահուան լուրը: Աստուած հոգին լուսաւորէ: Եղբար Գառնիկի անհամար, անոյշ եւ սիրուն յիշատակները մեր մէջ պիտի մնան մինչեւ այն ատեն, որ հայը եւ Հ.Մ.Ը.Մ.ը գոյութիւն ունին:

Մեր ցաւակցութիւնները ընտանիքին եւ ձեր բոլորին:

*Մթոքիով*

ՀՐԱՉ ՍԱՐՈՒԹԵԱՆ



Սիրելի Կեդրոնական Վարչութեան,  
Այս առտու իսկապէս շշմեցայ: Աստուած եղբ. Գառնիկին հոգին լուսաւորէ: Սրտագին եւ խորին ցաւակցութիւններս:

*Լու Անճելլոս*

ՇԱՀԷ ԵՆԻԳՈՍՇԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եղբայրներ,  
Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,  
Խոր վիշտով հետեւեցայ եղբայր Գառնիկի թաղման տխուր արարողութեան: Բառերը անբաւարար են իր մահուան պատճառած տխրութիւնը ներկայացնելու համար: Միասնաբար միշտ պիտի յիշենք զինք ու յարգենք յիշատակը՝ շարունակելով իր գործը:

Ընդունեցէք իմ խորին ցաւակցութիւններս իր մեծ կորուստին համար:

Աստուած հոգին խաղաղութեան մէջ հանգչեցնէ:

*Մոնթրէալ*

ԱՆԱՀԻՏ ԳՈՒԱՆՃԵԱՆ

Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,  
Ընդունեցէք խորին ցաւակցութիւններս Գառնիկ Մկրտիչեանի ընտանիքին ու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան՝ իր հաւատաւոր անդամին կորուստին համար:

*Պէյրուք*

ՎԱԶԳԷՆ ՉԷՔԻՃԵԱՆ

Գառնիկը իմ շատ մտերիմ ընկերս եղած է երկա՛ր-երկա՛ր ժամանակէ:  
Գառնիկը միշտ լուսատես, ժպտադէմ, անկեղծ եւ դրական ուժ փոխանցող ընկերս եղած է: Գառնիկը ինձի համար անփոխարինելի է: Անոր մահը ինձի շատ մեծ ցաւ պատճառեց: Անոր յիշատակը միշտ վառ պիտի մնայ սրտիս մէջ: Աստուած հոգին լուսաւորէ:

*Պէյրուք*

#### ՅԱՐՈՒԹ ՇԱՀՊԱՉԵԱՆ

Արեւմտեան Ամերիկայի Լոս Անճելըս քաղաքի իր բոլոր ընկերները խոր սուգի մատնուեցան անակնկալ մահովը:

Ընկեր Գառնիկին ծանօթ եմ 1975-էն՝ իր հորը մահէն ետք, «Մարդարապատ» ակումբին միջոցով: Շատ սերտ եւ մտերիմ ընկերներ եղած ենք: Կորուստը մեծ է: Լիբանան տուած յաճախակի այցելութիւններուս միշտ միասին եղած ենք:

Ընկեր Գառնիկ յարգուած եւ յարգելի եղած է մեր բոլորին կողմէ: Յատկապէս կ'ուզեմ ցուակցութիւն յայտնել նախ տիկնոջ՝ Մարային, զաւակներուն՝ Բիզանդին եւ Նժդեհին, երբօրը՝ Յարութիւն եւ ընտանիքին, քրոջը՝ Անիին եւ անոր ընտանիքին:

Աստուած հոգին լուսաւորէ: Հողդ թեթեւ գայ, ընկեր Գառնիկ:  
*Լոս Անճելըս*

#### ԳԷՈՐԳ ՉԷՔԻՃԵԱՆ

Միբելի Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիք,  
Մեր խորին ցաւակցութիւնները Գառնիկ Սկրտիչեանի մահուան առիթով: Աստուած հոգին խաղաղութեան մէջ հանգչեցնէ: Ամէն

*Պէյրուք*

#### ՍԱՐԳԻՍ ՄԻՍԻԹԵԱՆ

Խոր վիշտով իմացայ Գառնիկ Սկրտիչեանի մահուան լուրը. դպրոցական դասընկեր մը, մեծ հայրենասէր մը եւ սիրելի անձնատրութիւն մը, որ նուիրուած էր իր ժողովուրդին:

Մենք պիտի փնտռենք զինք: Մեր խորին ցաւակցութիւնները ընտանիքին եւ միութեան:

Աստուած հոգին երկինքի արքայութեան արժանացնէ:  
*Պէյրուք*

#### ՎԱՀԱՆ ԳԱՍԱՐՃԵԱՆ

Խոր վիշտի մատնուած եմ եղբայր Գառնիկի կորուստով: Կ'աղօթեմ առ Աստուած, որպէսզի ընտանիքին, ընկերներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ մեծ ընտանիքին բաւարար ուժ տայ՝ յաղթահարելու իր մահուան սուգն ու կսկիծը:


Իմ խորին ցաւակցութիւններս:  
*Պէյրուք*

#### ՀՐԱՅՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ



# Հ.Մ.Ը.Մ.Ը ԵՒ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐԸ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՊԱՏՎԱՄՆԵՐՈՒՆ ԸՆԴՄԷՋԷՆ





**Գործը կը ծնի խօսքէն, մտածումէ՛ն:**

Եղբայր Փառնիկ Մկրտիչեանի Հ.Մ.Ը.Մ.ական գործին ծանօթանալու համար կ'արժէ նախ ծանօթանալ անոր խօսքին, գիտնալու համար, թէ ան ի՞նչ կը մտածէր միութեան եւ միութենականներուն մասին: Ի՞նչպէս կ'արժեւորէր երեւոյթները եւ ի՞նչպէս կը պատկերացներ հզօր Հ.Մ.Ը.Մ.ով հզօր հայութիւնը:

Կեդրոնական Վարչութեան ատենապետութեան 12 տարուան ընթացքին (2003-2007 եւ 2011-2019), եղբ. Փառնիկ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկներու եւ շրջանային թէ մասնաճիւղային տօնակատարութիւններու ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի մասին արտասանած է աւելի քան 50 խօսք:

Կողքի էջերով ամփոփ հատուածներ կարգ մը խօսքերու յիշատակելի բաժիններէն, իբրեւ իրմէ փոխանցուած կտակ, մտածումի եւ խորհրդածութեան հարուստ պաշար՝ այսօրուան եւ վաղուան սերունդներուն:

**Հ**.Մ.Ը.Մ.ի ծրագիրը ծանօթ է ամէն հայու: «Առողջ միտք, առողջ մարմինի մէջ» նշանաբանէն մեկնելով՝ Հ.Մ.Ը.Մ. իր անդամներուն կը պատգամէ հաւատարիմ ըլլալ հայ ժողովուրդին, ծառայել ազգին եւ հայրենիքին: Աւելի գեղեցիկ պատգամ դժուար է երեւակայել:

Մեզի համար, Հ.Մ.Ը.Մ.ականը է՛ եւ կը մնայ գաղափարական մարդ, երբ յանձն կ'առնէ քայլել Եւրոպայի դրօշին ետեւէն, իբրեւ ներկայացուցիչը հաւատաւոր հայ երիտասարդութեան:

Հ.Մ.Ը.Մ.ականը է՛ եւ կը մնայ առաքինի մարդ, երբ միութեան եւ ժողովուրդին շահերը կը դասէ իր անձնական հաշիւներէն եւ նախասիրութիւններէն վեր, իբրեւ օրինակ նըւերումի եւ անշահախնդիր գործի:

Հ.Մ.Ը.Մ.ականը է՛ եւ կը մնայ կարգապահ մարդիկ, խոնարհ սկսուտ եւ նուիրեալ աշխատող, երբ իր արժէքը կը տեսնէ Հ.Մ.Ը.Մ.ի յաւելեալ հզօրացման եւ հայ ժողովուրդի յառաջդիմութեան մէջ, ի խնդիր՝ հաւաքական մեր ուժին ամրապնդման եւ վախճանման մեր նպատակներուն իրականացման:

Հ.Մ.Ը.Մ.ի 85-ամեակի այս հանգրուանին, արդար հպարտութեամբ մը այսօր կը հաստատենք, որ Հ.Մ.Ը.Մ. դարձած է ողջ հայութեան երիտասարդական մեծագոյն կազմակերպութիւնը, իր աւելի քան 91 մասնաճիւղերով, տարածուած աշխարհի հինգ ցամաքամասերուն վրայ: Ու մենք հաստատ համոզուած ենք, որ սփիւռքահայ կեանքին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպ ու գործօն յարատեւութեամբ, հաւաքաբար կըրնանք աւելի եւս սատարել մեր ազատ ու անկախ հայրենիքին վերականգնումին, որովհետեւ այդ վերականգնումը, իր անմիջականութեամբ հանդերձ, երկար ուղի մըն է: Մենք չէ միայն, այլ յաջորդաբար հասնող սերունդը, սերունդները պիտի ըլլան այդ յանձնառութեան դերակատար պատասխանատուները:

(Հատուած՝ Մոնթրէալի «Կամք» մասնաճիւղին Հ.Մ.Ը.Մ.ի 85-ամեակի տօնակատարութեան արտասանած խօսքէն, Գանատա, 2004)

2018. Արևելեացի Ս. Նահանգներ:



**Հ.** Մ. Լ. Մ. ի սկստույթները կոչուած է նորահաս սերունդին մօտ կերտելու վեհ նկարագիր, ազնիւ հոգի եւ մշակուած միտք, բարձր պահելու համար բարոյական այն արժանիքները, որոնք հայ մարդը կը դարձնեն տիպար քաղաքացի եւ յանձնառու հայ:

Այսօր, բացառիկ են մեր կեանքի պայմանները եւ մեզի բացառիկ ճիգեր պէտք են կարենալ դիմադրելու համար մեզի սպառնացող միջավայրի ազդեցութիւններուն, այլասերումի վտանգին եւ բարքերու ապականումին:

Երէկուան մեր յաջողութիւնները չեն գոհացնէր մեզ: Նոր ձեւ ու կշռոյթ ստացող մեր կեանքին համար բոլորէս կը պահանջուի հաւատքի եւ նուիրումի պատուանդանին վրայ խարսխուած աշխատանք:

Համա-Հ.Մ.Լ.Մ.ական սկստական խմբապետական Դ. համագումարը իր վեց օրերու աշխատանքներով տուաւ փաստը, որ միութեան սկստական պատասխանատուներուն մօտ ուժեղ է հաւատքը եւ համոզումը՝ հանդէպ իրենց գործին, նպատակին եւ յաջողութեան: Համագումարին քննարկումները ցոյց տուին, որ կատարելի են ազնուագոյնին իրենց ձգտումին մէջ, սկստական մեր պատասխանատուները այլ մտասեւեռում չունին, եթէ ոչ՝ պատրաստութիւնը սերունդի մը, որ բարոյալքում չճանչնայ, յաղթանակի հպարտութիւն ունենայ եւ միշտ ընթանայ յառաջ, անասան ու անդեղեւ:

(Հատուած՝ Համա-Հ.Մ.Լ.Մ.ական խմբապետական Դ. համագումարի փակման հանդիսութեան արտասանած խօսքէն, Հայաստան, 2004):

**Ա**յսօր ազգովին կը գտնուինք մեր ազգին ու պետականութեան սպառնացող վտանգներն ու դժուարութիւնները յաւելեալ վճռակամութեամբ եւ միացեալ ուժերով դիմադրաւելու հրամայականին առջեւ:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, իբրեւ հաւատքի եւ խանդավառութեան կազմակերպութիւն, գիտակից է ազգային այս հրամայականին եւ, հետեւաբար, յանձնառու է միշտ եւ ամէնուր գործելու անսակարկ կերպով, որպէսզի ազգը գոյատեւէ, նոր սերունդները այլասերումէ հեռու մնան եւ նորանկախ հայրենիքը օրէ օր աւելի ամրանայ:

Այս օրը, անկասկած, յիշատակելի օր մը պիտի ըլլայ արդի

Սփիւռքի պատմութեան մէջ, որովհետեւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հովանիին տակ գործող ուղեկից երեք կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, առաջին անգամ ըլլալով, նման խորհրդաժողովի մը ճամբով քով-քովի կու գան, որպէսզի աւելի շատ իրարու ձեռք երկարեն, իրարու աշխատանքները համակարգեն եւ ընեն ամէն ինչ՝ գոհացում տալու համար ներկայ ժամանակներու ազգային ընդհանրական մեր մտահոգութիւններուն եւ պահանջներուն:

Կանոնաւոր, տեւական ու ծրագրուած գործակցութիւնը, կը հաւատանք, որ անպայման զարկ պիտի տայ երեք միութիւններու աշխատանքներուն, պիտի աշխտօճացնէ անոնց շարքերը եւ միեւնոյն ժամանակ աւելի օգտաշատ պիտի դարձնէ վսեմ գաղափարներու ծառայութեան անոնց ճիգերը:

(Հատուած՝ Հ.Յ.Դ. ուղեկից միութիւններու ներկայացուցիչներու խորհրդաժողովին արտասանած խօսքէն, Լիբանան, 2004):

**Ս**փիւռքի մէջ հայը հայ պահելու, իսկ Հայաստանի մէջ տիպար քաղաքացիներ կերտելու մեր առաքելութիւնը օրէ օր կը բախի նոր դժուարութիւններու եւ կ'ենթադրէ ուժերու մեծ լարում՝ նոր օրերու համապատասխան միջոցներով յաղթահարելու համար մեր դէմ ցցուած բոլոր դժուարութիւնները, որպէսզի հայութիւնը չտկարանայ եւ Հայաստանը հզօր մնայ իր ապագայ սերունդներով:

Այդ տեսլականով Հ.Մ.Լ.Մ. ճամբայ ելաւ 89 տարիներ առաջ, Հայաստանի Ա. անկախութեան հռչակման հետ: Նոյն տեսլականով, տարիներ շարունակ ան Սփիւռքի սերունդներուն աչքերը սեւեռեց դէպի Հայրենիք, անպայման օր մը գայն անկախ տեսնելու ցանկութեամբ: Ու երբ ցանկութիւնը դարձաւ իրականութիւն, նոյն տեսլականը միութիւնը վերադարձուց Հայաստան եւ, իբրեւ Հայաստանի Ազգային Սկստական Կազմակերպութիւն, գայն լծեց հայրենանուէր աշխատանքի:

(Հատուած՝ Հ.Մ.Լ.Մ. թ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի պաշտօնական բացման արտասանած խօսքէն, Հայաստան, 2007)

**Հ.** Մ. Լ. Մ. ի նշանաբանը՝ «Բարձրացիր-բարձրացուր» իր մէջ խտացուց հայ մարդուն կեանքին խմաստը-

բարձրանալ դէպի մարդկային եւ ազգային վեհ արժէքներ, ապա ծով վար, ձեռք երկարել օգնութեան կարօտ եղբոր կամ քրոջ եւ զայն եւս բարձրացնել գաղափարի եւ բարոյականի գազաթները:

Թէ՛ իբրեւ տիպար սկաուտ եւ թէ՛ իբրեւ համբաւաւոր մարզիկ, Հ.Մ.Ը.Մ.ականը շահեցաւ անձնական փառք ու պատիւ, սակայն անոր փառքը պատկանեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին բոլոր անդամներուն, իսկ պատիւը՝ համայն հայութեան:

Հայութիւնը ուրախացաւ, երբ Հ.Մ.Ը.Մ.ը արձանագրեց սկաուտական եւ մարզական յաջողութիւններ: Իսկ այդ ուրախութիւնը գերազոյն հրճուանքի վերածուեցաւ, երբ ան նշեց Հ.Մ.Ը.Մ.ական ոգիին յաղթանակը:

Համակիրներուն համար ընդունելի եղաւ մարզախաղի մը ընթացքին արձանագրուած ձախողութիւն մը, երբ Հ.Մ.Ը.Մ.ականը տուաւ իր առաւելագոյնը, թէ՛ իբրեւ անշահախընդէր մարդ եւ թէ՛ իբրեւ անբասիր հայ:

Մինչեւ իսկ ընդունելի եղաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի միաւորները տողանցեն համեմատաբար քիչ թիւով, պայմանով որ անոնք քայլեն կազմակերպ եւ համաչափ, ու պայմանով որ անոնք արտայայտեն Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական ուժը եւ բարոյական պայծառութիւնը:

Ծանր եղաւ Հ.Մ.Ը.Մ.ականին բեռը, որովհետեւ ծանր եղաւ գիտակից հայուն բեռը ընդհանրապէս: Հ.Մ.Ը.Մ. անբաժան մէկ մասնիկը եղաւ հայութեան ազգային գոյամարտին, հետեւաբար Հ.Մ.Ը.Մ.ականէն տեւաբար պահանջուեցաւ անսահման ճիգ եւ զոհողութիւն, ի խնդիր Միութեան յառաջդիմութեան:

Դիւրին չեղաւ Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալը, շատ աւելի դժուար եղաւ Հ.Մ.Ը.Մ.ական մնալը: Շատեր եկան ու անցան Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն: Ուրիշներ դեռ պիտի գան ու անցնին:

(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի Քէմպրիճի մասնաճիւղի 35-ամեակին առիթով արտասանած խօսքէն, Գանատա, 2012)

**Կ**ը հաւատանք, որ այսօրուան չափահաս սերունդը, ներկաները մեծամասնութեամբ, շատ բան ստացան Հ.Մ.Ը.Մ.էն, միութենական եւ ազգային պատկանելիութեան հասկացողութեամբ: Անքակտելի բարեկամութիւններ հաստատեցին: Գայլիկին կանչը «Ընել մեր լաւագոյնը» ի մտի ունենալով բարձրացան մեր անհատական կեանքին մէջ: Շատեր իրենց մտքին ու աչքին լոյսը մաշեցուցին միութեան մէջ: Պարտականութիւն է մեզմէ իւրաքանչիւրին համար, մեր հերթին, փոխադարձել, տա՛լ Հ.Մ.Ը.Մ.ին, տալ նորահաս սերունդին, բարձրացնել զայն:

Մեր ժամանակներու նոր պայմանները, շրջապատէն ազդուած այսպէս կոչուած նոր արժէքները, արագընթաց արհեստագիտութիւնը իրականութիւններ են եւ անպայման իրենց ազդեցութիւնը ունին մեր երիտասարդ սերունդին վրայ: Կան նաեւ համաշխարհայնացումի տխուր երեւոյթները, որոնք ժխտական անդրադարձներ ունին միութենական եւ ազգային հաւաքական մեր կեանքին վրայ: Արդարեւ, երբ կը պակսի պատկանելիութեան գիտակցութիւնը, կը պակսի միութենական կապուածութիւնը, կը պակսի ներկայութիւնը համայնքային կեանքէն ներս:

Տակաւին, մեր յաջողութեան գաղտնիքներէն է Հ.Մ.Ը.Մ.ի բարոյական դրամագլուխը, տարիներու վարկը, անունը,



որոնց տոկոսներն են որ կու գան խտացնելու մեր շարքերը: Այլ խօսքով անոնք որոնք անցան միութեան շարքերէն, իրենց գաւակները կը դրկեն համոզուած, որ անոնք եւս զարգացնեն այդ պատկանելիութիւնը: Փաստօրէն, Հ.Մ.Ը.Մ. միակ հայ կազմակերպութիւնն է, ուր գայլիկ թոռնիկը, հայրը եւ մեծ հայրը միաժամանակ կ'անդամակցին միութեան: Երեք սերունդ «եղբայր» են Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ:

Համակիրներ չեն ծածկեր իրենց խոր համոզումը, որ Հ.Մ.Ը.Մ. սոսկ մարզական կամ սկաուտական շարժում մը եղած չէ ու պիտի չըլլայ: Հանրային իմաստով յանձնառութիւն զարգացնող, ազգային առումով ինքնաճանաչում սերմանող եւ գաղափարական խորքով նուիրում ջամբող ընտանիք է Հ.Մ.Ը.Մ.ը, որ տարիներու հարուստ փորձառութեամբ արժանացած է իր ժողովուրդին հոգածութեան եւ վստահութեան:

(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի Գորտոպայի մասնաճիւղի 25-ամեակին առիթով արտասանած խօսքէն, Արժանիքին, 2012)

**Մ**արմնամարզը, սփորը արդիականացած եւ մասնագիտացած հսկայ ճարտարարուեստի վերածուած է այսօր: Սկաուտութիւնը միջազգային տարողութեամբ, իսկ հայ սկաուտութիւնը իր 100-ամեայ հարուստ պատմութեամբ, իր երբեմնի փայլքը կորսնցնելու ընթացքին մէջ է: Նման երեւոյթներ նոր դժուարութիւններ են այսօրուան մեր վարիչ պատասխանատուներուն համար:

Յաճախ ըսած ենք ու դարձեալ կը կրկնենք. Մեր օրերուն սերունդէ սերունդ փոխանցումը հաւանաբար աւելի դժուար է: Փորձենք այդ փոխանցումը հեզասահ համադրել:

Վա՛յ մեզի, որ վաղը միութիւն ըլլալու փոխարէն դառնանք միայն ակումբ՝ «Քլապ»:

Վա՛յ մեզի, որ վաղը վարչական ընտրելու համար ստիպւինք ամիսներով մարդ փնտռել:

(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի Աղեքսանդրիոյ «Կամք» մասնաճիւղի 100-ամեակին առիթով արտասանած խօսքէն, Եգիպտոս, 2012)

**95**-ամեակը առիթ է բոլորիս համար, պարտականութեան հրաւեր մեզմէ իւրաքանչիւրին, Հ.Մ.Ը.Մ.ի ծառայութեան մեր ուխտը վերանորոգելու, որովհետեւ մենք



կը հաւատանք որ մրցակցութեամբ լեցուն այս աշխարհին մէջ, միշտ պէտք է պատրաստ ըլլալ Ֆիզիքապէս եւ հոգեպէս, տոկարու եւ պայքարելու:

**Բարձրանալու եւ բարձրացնելու:**

Առանց ազգային գիտակցութեան, առանց կարգապահ ու նուիրեալ շարքերու, առանց Ֆիզիքապէս ու հոգեպէս տոկուն երիտասարդութեան կարելի չէ հօր ու բարգաւաճ Հայաստան ունենալ: Ու եթէ բախտաւոր օր մը հայութեան պանծալի դրօշը պիտի ծածանի նաեւ բռնագրաւեալ մեր հայրենիքի երկնակամարին վրայ, այդ կը պահանջէ կամք, լաւագոյնին ձգտելու ճիգ եւ յարատեւութիւն:

**(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի 95-ամեակի Մայիսեան փառատօնին արտասանած խօսքէն, Լիբանան, 2013)**

**Մ**ենք գործեցինք, որովհետեւ գործելը մեր առաքելութիւնն է, հոսանքն է վեր ընթանալը մեր պարտականութիւնն է: Խոչընդոտները չեն տկարացնէր մեր կամքն ու վճռականութիւնը: Ժողովուրդը մեզի կը նայի եւ, մենք, Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Մ.Ա.Կ., չենք կրնար, իրաւո՛ւնքը չունինք անձնատուութեան դրօշ պարզելու, մեր դժուարութիւնները պատճառաբանելով եւ պատնէշը լքելով:

Դժուարութիւններ միշտ եղած են ու պիտի ըլլան: Դժուարութիւնները փորձառութիւն կու տան մեզի, փորձառութիւնը՝ համբերութիւն, իսկ համբերութիւնը՝ տոկունութիւն մեր աշխատանքները ամէն գնով յառաջ տանելու:

Ու եթէ հարցը միայն ընթացիկ աշխատանքներու վերաբերէր տակաւին գիւրդին ըլլար: Այսօր, մեր շուրջը կը զարգանայ նոր ձեւի կեանք մը՝ արհեստագիտական նորութիւններով լեցուն: Երիտասարդութիւնը շատ արագ ներգրաւող կեանք մը, որ պատճառ կը դառնայ, որ նոր սերունդի անդամները հեռու մնան ազգային կեանքէ ընդհանրապէս եւ միութենական միջավայրէ յատկապէս: Ի՞նչ ընել եւ ի՞նչպէս ընել այս մարտահրաւէրը յաղթահարելու համար: Ահաւասիկ, բոլորս չարչրկող հարցումը:

**(Հատուած՝ Հ.Մ.Ա.Կ.ի 25-րդ Պատգամաւորական Ժողովին արտասանած ողջոյնի խօսքէն, Իրան, 2013)**

**Ա**զգն ու հայրենիքը լուծումներ կը փնտռեն իրենց ապրած տագնապներուն: Իսկ լուծումները հրաշքներով չեն ըլլար, այլ՝ պահու լրջութեան գիտակցութեամբ, ուժերու

մէկտեղումով եւ տրամադրելի բոլոր կարելիութիւններու զօրաշարժով: Պատմական փորձառութիւնը այլ բան չի թելադրեր:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, իբրեւ հաւատքի եւ խանդավառութեան կազմակերպութեան, գիտակից ազգային այս հրամայականին՝ յանձնառու է միշտ եւ ամէնուր գործելու անսակարկ կերպով, որպէսզի ազգը գոյատեւէ, նոր սերունդները այլասերումէ հեռու մնան եւ մեր հայրենիքը իր պետականութեամբ հզօրանայ:

**Յարգելինք,**

Հայաստանը աշխարհասփիւռ հայութեան հայրենիքն է: Իւրաքանչիւր հայ կը պատկանի իր հայրենիքին եւ, հետեւաբար ու բնականաբար, ան իր պատկանելիութիւնը հարկ է որ գործնապէս արտայայտէ՝ մասնակից դառնալով անոր հօրացման գործին:

Այս մօտեցումով, Հ.Մ.Ը.Մ. առաջին օրէն իր անվերապահ մասնակցութիւնը բերած է հայրենիքի հզօրացման նպաստող ամէն ձեւի նախաձեռնութեան: 105 մասնաճիւղեր եւ աւելի քան 25 հազար անդամներ հաշուող այս միութիւնը հասած է երկրաշարժի աղէտեալներու օժանդակութեան: 1989-ին, երբ տակաւին հայրենիքը անկախ չէր, ան ծիլեր արձակած է Երեւանի ու ապա՝ Հայաստանի զանազան շրջաններուն մէջ, լծուելով նոր սերունդի առողջ դաստիարակութեան եւ քաղաքացիական կրթութեան գործին:

Այնուհետեւ, ան չորս տարին անգամ մը համա-Հ.Մ.Ը.Մ.ական իր բանակումները եւ մարզախաղերը կազմակերպած է հայրենիքի մէջ, աւելի քան 10 հազար պատանիի փոխանցելով հայրենիքի ճանաչողութիւնը, սէրը եւ պատկանելիութեան գիտակցութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ը անցնող 25 տարիներուն արմատ նետած է հայրենիքի մէջ եւ Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութեան ճամբով, հայրենի սկաուտութիւնը պատուով ներկայացուցած է Եւրոասիական թէ՛ համաշխարհային բեմերուն վրայ:

Եւ դեռ, Սփիւռք-Հայաստան գործակցութեան ջատագովը ըլլալով, Հ.Մ.Ը.Մ. առաջին օրէն իր կարեւոր ներդրումը բերած է համահայկական խաղերուն, կազմակերպիչ մարմնին մէջ իր ներկայութեամբ թէ՛ խաղերուն մեծաթիւ մասնակցութեամբ:

Հ.Մ.Ը.Մ. այս բոլորը կատարած է այն խոր համոզումով, որ հայրենիքը աղբիւրն է մեր բոլորին հզօրութեան, երաշխիքը մեր յաւերժութեան եւ արտայայտիչը մեր ամբողջականութեան:







Հայրենիքը կը զարգանայ եւ կը զօրանայ իր բոլոր գաւակներուն աշխատանքով միայն, իսկ հայու թիւը իր ինքնութիւնը կը պահէ եւ ազգային միասնականութիւնը կ'ամրապնդէ Հայաստանով միայն:

**(Հատուած՝ Հայաստան-Սփիւռք Եւ խորհրդաժողովին արտասանած խօսքէն, Երեւան, 2014)**

Շատերը Հ.Մ.Ը.Մ-ը ճանչցան իր քայլերգին բառերով, իբրեւ «կամաւոր բանակ» հայութեան եւ հայրենիքին, միշտ ծառայելու, ծառայութեամբ մեծնալու կամքով ու տեսիլքով:

Շատերը Հ.Մ.Ը.Մ-ի մէջ տեսան անհայրենիք ժողովուրդի մը փոքրիկ բանակը, որ հաւատաց մեծ նպատակներու, մեծ ու անսակարկելի արժէքներու:

Հ.Մ.Ը.Մ-ը հաւատաց ու այսօր ալ կը հաւատայ, թէ ինչ ալ ըլլան պայմանները, հայոց պետականութիւնը կը մնայ միակ ապակէն մեր գոյատեւման, իսկ հայոց բանակը կը հանդիսանայ հիմնական պաշտպանն ու երաշխիքը այդ գոյատեւման:

Մենք հզօր ենք, երբ մեր բանակը հզօր է:

Մենք անպարտելի ենք, երբ մեր բանակը համահայկական ուշադրութեան առարկայ դարձուցած ենք:

Հայոց բանակը մեր փառքն է ու մեր պատիւը:

Հայոց բանակը մեր հպարտութիւնն է ու մեր արժանապատուութիւնը:

Հայոց բանակի տողանցքին հետ հողը չէ որ կը դըրդայ, այլ՝ իւրաքանչիւր հայու սիրտն ու հոգին է որ կը ցնցուի հայրենակարօտ զգացումներով:

Հայոց բանակի տողանցքին հետ զօրամաս մը չէ որ միայն կը տողանցէ, այլ՝ մեր պատմութեան բոլոր հերոսները, փաղանգ առ փաղանգ, անցեալի նախարարական գունդերէն մինչեւ Ֆետայական մեր խումբերը եւ Արցախեան պայքարի հերոսական վաշտերը:

Հ.Մ.Ը.Մ-ական սերունդները ա՛յս համոզումով կը մեծնան ու հասակ կ'առնեն, խոր յարգանք տածելով հայոց բանակին եւ անոր վեհ առաքելութեան:

Հ.Մ.Ը.Մ-ական տղաք ու աղջիկներ ա՛յս դաստիարակութեամբ կը խոնարհին հայոց բանակի անթիւ զոհողութիւններուն դիմաց եւ, իբրեւ գերագոյն արժէք, զայն կը դասեն ամէն բանէ վեր:

Այսօր, «կամաւոր բանակը» կանգնած է կողքին պետա-

կան բանակին: Իսկ կա՞յ աւելի գեղեցիկ պատկեր՝ քան համա-Հ.Մ.Ը.Մ-ական, համահայկական այս զօրակցութիւնը, որ սա պահուն կը պարզուի մեր աչքերուն դիմաց: Այստեղ ներկայ սկառտներուն ճամբով ամբողջ հայութիւնն է, որ այսօր յարգանքի իր տուրքը կու տայ հայոց բանակի նուիրեալներուն, որոնք կը մնան միշտ արթուն, միշտ խրոխտ ու անձնագոհ, որպէսզի հայրենիքի սահմանները մնան ապահով, իսկ գաւակները՝ պաշտպանուած:

Հայոց բանակը իր արիութեամբ եւ հայրենասիրութեամբ ներշնչումի աղբիւր կը հանդիսանայ աշխարհասփիւռ մեր սկառտներուն:

Հայոց բանակը իր հերոսութիւններով եւ նահատակութիւններով կը գրէ մեր նորագոյն պատմութեան ամէնէն պանծալի էջերը, հետեւաբար ան կը դաստիարակէ մեզ, կը կերտէ մեր ինքնութիւնը եւ դիմագիծը:

Մենք պարտական ենք հայոց բանակին:

**(Հատուած՝ համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակումի մասնակիցներուն հետ Վազգէն Սարգսեանի անուան զօրանոց այցելութեան ընթացքին արտասանած խօսքէն, Հայաստան, 2014)**

«Հայկ Յովսէփեան» բանակավայրին բացումը պատահակութեան մը արդիւնքը չէ: Ան երկարաշունչ ծրագրի մը մէկ օղակն է, որ մօտիկ ապագային պիտի ամբողջանայ նոր օղակներով: Այս ծրագիրը ընթացք առաւ 2012-ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի քառայարկ ակումբին բացումով Երեւանի մէջ: 2014-ին կատարուեցաւ Բիւրականի արդիական բանակավայրին բացումը՝ պետական շուքով:

15 օր առաջ կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Աբովեանի գրասենեակին բացումը, իսկ այսօր, ահաւասիկ, կը կատարուի այս բանակավայրին բացումը: Երեք տարուան մէջ՝ երկու կեդրոն եւ երկու բանակավայր, ինչ որ հպարտալի երեւոյթ է, անկասկած:

Այս ծրագիրը պիտի շարունակուի եւ այսուհետեւ հոն ուր Հ.Մ.Ը.Մ. կայ, հոն ուր Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութեան կարիքը կայ, պիտի ջանանք այնտեղ ունենալ կեդրոն, հաւաքատեղի, որպէսզի մինչեւ միութեան 100-ամեակ, մինչեւ 2018 թուական, գործը ընդարձակուի, ամրանայ եւ հասնի այն բարձունքին, ուր պիտի ուզէր տեսնել մեր ժողովուրդը:

Կը մնայ, որ հայ սկառտութեան արժէքներուն եւ սկզբունքներուն հաւատարիմ մեր ժողովուրդը անվարան դիմէ

Պատգամաւորական ԺԲ. Ընդհանուր ժողով, 2019, Հայաստան:



Հ.Մ.Ը.Մ-ի շարքեր, այս կեղերոններն ու բանակավայրերը լեցրնէ մեր պատանիներու շունչով, որպէսզի կառուցները իսկապէս արժեքորուին եւ ծառայեն այն նպատակին, որուն համար ստեղծուած են անոնք:

(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի «Հայկ Յովսէփեան» վերանորոգուած բանակավայրի բացման արտասանած խօսքէն, Հայաստան, 2015)

Պատմութիւնը կրկնեց ինքզինք: 1918-ին Հ.Մ.Ը.Մ. հազիւ հիմնուած՝ զբաղեցաւ որբահաւաքի եւ գաղութներու երիտասարդութեան կազմակերպման աշխատանքով: Այսօր որբեր չկան, սակայն որբացած գաղութներ կան ու Հ.Մ.Ը.Մ. դարձեալ գործի վրայ է: Հայ երիտասարդութիւնը կը համախմբէ, հայեցի դաստիարակութեան միջավայր եւ միջնորդ կը ստեղծէ: Սկստուածութեան եւ մարգարտադրութեան ճամբով երիտասարդները ձուլման վտանգէ կը փրկէ, հայութեան եւ Հայաստանին կը կապէ: Կը բաւէ նշել, որ վերջին երկու տարուան ընթացքին, իր ժողովուրդի կարիքներուն ընդառաջելով, Հ.Մ.Ը.Մ. նոր մասնաճիւղեր հիմնեց Հոլանտայի եւ Գերմանիոյ մէջ, իսկ Շուեյտի մէջ գործող իր կառույցը մեծցաւ երեք անգամով, երբ Սթոքհոլմի մասնաճիւղը ծնունդ տուաւ երկու այլ մասնաճիւղի: Այս բոլորը արդիւնք են Եւրոպա հասնող հայութեան գաղթական զաւակները համախմբելու եւ կազմակերպելու Հ.Մ.Ը.Մ.ական գործին, ազգային փրկութեան առաքելութեան:

Այսքան մեծ գործ կը կատարուի կամաւոր աշխատանքով, զոհաբերութեամբ եւ նուիրումով: Մեր դրամագլուխը մեր մարդուծն է: Մեր ուժին աղբիւրը մեր գաղափարախօսութիւնն է, հայութեան եւ Հայաստանին ծառայելու մեր ուխտն է, որ գրաւականն է այսօրուան եւ վաղուան մեր բոլոր յաջողութիւններուն:



97-ամեայ Հ.Մ.Ը.Մ.-ը, այսօր, աւելի քան երեք, առոյգ եւ կենսունակ է: Ան իր 100-ամեակին կը նայի լաւատեսութեամբ եւ նորանոր մարտահրաւէրներ դիմագրաւելու վճռակամութեամբ:

(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ-ի ԺԱ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի բացման պաշտօնական հանդիսութեան արտասանած խօսքէն, Հայաստան, 2015)

Նոր օրերու նոր պայմանները կը թելադրեն մեզի անպայման քննել մեր ընթացքը: Կազմակերպական որակ պահելու համար անհրաժեշտ են բարեփոխութիւններ: Անհրաժեշտ է քննել, թէ վարչական մեր գործելաձեւերը որքա՞ն կը պատշաճին մեր այսօրուան պայմաններուն: Որքա՞ն գործնական են մեր ժողովական կեանքի դասաւորումները, ներգրաւելու համար երիտասարդ սերունդի կարողականութիւնը, իրապաշտ եւ գործնական մօտեցումը, այդ հսկայ ներուժը:

Կան զարգացող ուրիշ իրականութիւններ եւս: Մարմնամարզը արդիականացած եւ մասնագիտացած հսկայ ճարտարարուեստի վերածուած է: Ամէնուրեք կը տիրապետէ արհեստավարժութեան դրութիւնը: Ոգին կը նուազի եւ նիւթն է որ կ'իշխէ: Բարոյական արժէքները հետզհետէ նահանջ կ'արձանագրեն եւ մարդիկները օրէ օր կը դառնան աւելի պահանջկոտ ու նիւթապաշտ: Արհեստավարժութեան խելայեղ վագրին կը դիմանան միայն զօրաւորները, շահակցական մօտեցում ունեցող ակումբները, որոնց համար մարմնամարզը առեւտուրի նիւթ է եւ ոչ թէ սերունդ կերտելու միջոց:

Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնը ծանօթ է բոլորին: Ան չի կրնար զոհուիլ ըլլալ արհեստավարժութեան այսօրուան հրապոյրներուն, որովհետեւ ան իր ծնունդով կոչուած է իր ժողովուրդի ծառայութեան, անոր զաւակներու դաստիարակութեան, իսկ այս բոլորը շահամոլական մօտեցումով, առուծախով չեն կատարուիր, այլ՝ բարոյական-ազգային արժէքներու պահպանումով եւ միութեան սկզբունքներուն կառչած մնալով:

(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղի 80-ամեակին արտասանած խօսքէն, Լիբանան, 2015)

Այսօր, Հ.Մ.Ը.Մ. 107 մասնաճիւղերով հսկայ ընտանիք մըն է, որ կը համախմբէ աւելի քան 25 հազար անդամներ, բոլորն ալ հայութեան, Հայաստանին եւ Հայ Դատին զինուորեալներ, պահանջատէրներ եւ իրաւատէրեր իրենց սրբազան դատին:

1995. Հ.Մ.Ը.Մ.ի Ե. Պատգամաւորական Ընդհանուր Ժողով, Պրուժմանա, Լիբանան:



Երեք տարիէն Հ.Մ.Ը.Մ. պիտի ըլլայ 100 տարեկան: Իր երթը պիտի շարունակուի նաեւ 100-ամեակէն ետք: Այդ երթը վերջ չունի, մինչեւ հայ ժողովուրդի բոլոր իրաւունքներուն վերատիրացումը եւ հայութեան հայրենիքին բարգաւաճումն ու հզօրացումը:

Հ.Մ.Ը.Մ. պիտի շարունակէ սերունդներ դաստիարակել, կրթել եւ մեծցնել:

Հ.Մ.Ը.Մ. մարզախաղեր պիտի կիրարկէ, բայց մարզախաղերէ առաջ մարզական ազնիւ ոգի պիտի փոխանցէ իր սղոց եւ աղջիկներուն:

Հ.Մ.Ը.Մ. սկստուած լինելով պիտի կատարէ, բայց սկստուած չլինելով առաջ պարկեշտ մարդը եւ ազնիւ քաղաքացին պիտի կերտէ իր արի-արեւոյշներէն:

Հ.Մ.Ը.Մ. վարչական աշխատանք պիտի կատարէ, բայց անկէ առաջ վարչական սղոց ազգային կրթութիւն եւ պահանջատիրական ոգի պիտի փոխանցէ:

Հ.Մ.Ը.Մ. սովորական միութիւն մը եղած չէ եւ ասկէ վերջն ալ պիտի չըլլայ, որովհետեւ ան ծնունդն է Յեղասպանութիւն ապրած սերունդին: Ան մկրտուած է անկախութեան սերունդի ոգիով եւ մեծցած է ազգային գոյատեւման համար պայքարող սերունդներու ճիգերով:

Հ.Մ.Ը.Մ. առաքելութիւն մը ունի մեր կեանքին մէջ: Մառախուլութիւնն է անոր առաքելութիւնը, նուիրումն է անոր դերակատարութիւնը:

(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի 97-ամեակին առիթով Առնհեմի մասնաճիւղի տօնակատարութեան արտասանած խօսքէն, Նետրըլէնտներ, 2015)

**Կ**ը բաւէ, որ կազմակերպուինք, հզօրանանք եւ ձեռք ձեռքի տուած մեր ներքին տունը՝ մեր գաղութները եւ հայրենիքը շէնացնենք:

Այսօրուան մեր այցելութիւնը այստեղ, Արեւմտեան Եւրոպայի կեդրոնական այս քաղաքը, կը հետապնդէ այս նպատակը: Զգալի աշխուժութիւն ապրող Միւնիխի մեր գաղութին տալ նոր թափ ու կորով, որպէսզի ազգային կազմակերպման եւ հզօրացման աշխատանքները այսուհետեւ յառաջ տանի աւելի հաստատ քայլերով:

Նոր թափն ու կորովը պիտի ներարկուի ո՛չ թէ հրաշքով, այլ՝ հրաշքի համագորգործ կատարող Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը ստեղծումով: Հ.Մ.Ը.Մ. այսօր պիտի օժտուի իր 107-րդ

1999. Հ.Մ.Ը.Մ.ի Զ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի կազմի Անթիլիաս այցելութիւն:



մասնաճիւղով: Եւրոպական այս ցամաքամասը պիտի ունենայ հայակերտման եւ մարդակերտման նոր հասցէ մը՝ Հ.Մ.Ը.Մ. Միւնիխը, որ իբրեւ մէկ օղակը 107 օղակներ հաշուող համահայկական մեր միութեան, պիտի գայ իր նպաստը բերելու հայութեան գոյատեւման մեր երթին:

(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի Միւնիխի մասնաճիւղի հիմնադրութեան առիթով արտասանած խօսքէն, Գերմանիա, 2015)

**Մ**եր կեանքի այս դժուարին օրերուն, նոր սերունդով զբաղելը, պատանի-պարմանուհիները արդի հաղորդակցութեան միջոցներէն պահ մը անջատելը, ակումբ բերելը եւ ազգային-միութենական դաստիարակութիւն ջամբելը նուիրական գործ է, որուն համար այլ բառ կարելի չէ գտնել, եթէ ոչ՝ «Ապրի՛ք տղաք»:

Ապրի՛ք, որպէսզի ձեզմով Հ.Մ.Ը.Մ.ը ապրի: Ապրի՛ք, որպէսզի ձեզմով ձեր ժողովուրդը ապրի, այն կազմակերպուածութեամբ եւ աշխատանքով, որուն վկաներն ենք մենք այսօր:

Դուք մեր պահեստի բանակն էք: Դուք մեր ապագան էք: Վաղը, միւս օր, դո՛ւք է որ պիտի գտնուիք մեր տեղ, այստեղ եւ ձեր գործով ու խօսքով պիտի խրախուսէք ձեզմէ կրտսերները, նորերը: Դուք է որ պիտի պատրաստէք նոր մարդու՛ժ՝ մեր վաղուան գործին եւ յաջողութիւններուն համար:

Ու այս է արդէն 98 տարեկան Հ.Մ.Ը.Մ.ի յարատեւութեան եւ յաջողութեան գաղտնիքը. միշտ նորեր պատրաստել եւ շարունակականութիւն ապահովել, որպէսզի 1918-ին ըսկըտուած գործը կիսատ չմնայ, Հ.Մ.Ը.Մ.ի երթը կանգ չառնէ եւ շարունակուի, մինչեւ որ իր լրումին հասնի՝ մեր ազգային վախճանական նպատակներուն իրականացումով:

(Հատուած՝ Կիպրոսի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի սկստական հանդիսութեան արտասանած խօսքէն, Նիկոսիա, 2016)



2016. Պուլկարիա:



Պուլկարիա:

**Հ**ՄԼՄ-ի այսօր կը տազնապի Արցախի իրավիճակով: ՀՄԼՄ-ի Հայաստանի սկաուտները օգնութեան ձեռք կ'երկարեն Ապրիլեան պատերազմէն վիրաւորուած հայ զինուորներուն, անմիջական օժանդակութիւններ կը հաւաքեն ու կը բաժնեն Արցախի սահմանային գիւղերու բնակիչներուն: Բոլորը կը գիտակցին պահու լրջութեան եւ կ'անդրադառնան, որ Արցախի դէպքերը պարտականութեան հրաւեր են մեզմէ իւրաքանչիւրին, ՀՄԼՄ-ի ճամբով հայ ժողովուրդի ծառայութեան մեր ուխտը վերանորոգելու, որպէսզի միշտ պատրաստ ըլլանք ֆիզիքապէս եւ հոգեպէս տոկալու ու պայքարելու:

Բարձրանալու եւ բարձրացնելու:

Առանց ազգային գիտակցութեան, առանց կարգապահ ու նուիրեալ շարքերու, առանց ֆիզիքապէս ու հոգեպէս տոկուն երիտասարդութեան կարելի չէ հզօր ու բարգաւաճ Հայաստան ունենալ, կարելի չէ անպարտելի Արցախ ունենալ: Ու եթէ բախտաւոր օր մը հայութեան պանծալի դրօշը պիտի ծածանի նաեւ բռնագրաւեալ մեր հայրենիքի երկնակամարին վրայ, այդ կը պահանջէ կամք, լաւագոյնին ձգտելու ճիգ եւ յարատեւութիւն:

Այս հաստատ համոզումներով կ'ողջունենք Մայիսեան այս տօնակատարութիւնը, խոստանալով միշտ բարձր պահել այն դրօշը, որ մեզի աւանդ ձգուեցաւ միութեան աննման հիմնադիրներուն կողմէ:

Այն դրօշը, զոր 98 տարի բարձր բռնեցին «հսկայ նուիրման... կամաւոր բանակ»ի հաւատաւոր անդամները:

(Հատուած՝ ՀՄԼՄ-ի 98-ամեակի Քուէյթի մասնաճիւղի Մայիսեան փառատօնին արտասանած խօսքէն, 2016)

**Հ**ՄԼՄ-ի կեդրոնական վարչութեան յանձնառութիւնն է «Մարզիկ»ը, իբրեւ հրատարակութիւն, հայ լեզուի եւ հայոց պատմութեան կարեւոր մէկ մասունք: Առ այդ, ան նոյնքան կարեւորութիւն կը ներկայացնէ՝ որքան ախոյեանական որեւէ բաժակ կամ սկաուտական որեւէ յաջողութիւն, որովհետեւ ան կը ծառայէ հայակերտման ու հայապահպանման այն նպատակին, որուն համար ստեղծուած է ՀՄԼՄ-ը:

Բաժակները կրնան հիննալ ու ժանգոտիլ, սկաուտական յաջողութիւնները կրնան գնահատուիլ ու մոռցուիլ, բայց ինչ որ պատմութեան կը մնայ, իբրեւ ներշնչման եւ հպարտութեան աղբիւր, գիր եւ գրականութիւնն է, նկարն ու արիւնն է: «Մարզիկ»ը այդ բոլորն է ու աւելին: Ան ՀՄԼՄ-ի յիշու-

ղութիւնն է, հարստութիւնն է եւ խտացումը այն բոլոր արժէքներուն, որոնք այս միութիւնը սովորական մարզական ակումբէ մը կը զատորոշեն եւ սերունդներու դաստիարակութեան կը ծառայեն:

(Հատուած՝ «Մարզիկ» պաշտօնաթերթի 35-ամեակի հանդիսութեան արտասանած խօսքէն, Լիբանան, 2016)

**Պ**էտք է արժանի ըլլալ ՀՄԼՄ-ականի կոչումին եւ անպայման ըսելիք եւ ընելիք ունենալ մեր կեանքին մէջ, մեր գաղութներուն եւ նորահաս սերունդներու դաստիարակութեան գործին մէջ: Անտարբերութիւն, ծուլութիւն եւ անհոգութիւն ներքի չէ: Արտօնելի՛ չէ: Ամէն մարդ հարկ է իր պատասխանատուութեան գիտակցութիւնը ունենայ եւ իրեն վստահուած գործը լաւագոյնս կատարէ՝ անձնական նախասիրութիւնները եւ շահերը մէկ կողմ դրած:

Հայութիւնը կարիքը ունի բոլորիս համախումբ ճիգերուն: Մեր ժողովուրդը կարիքը ունի մեր նոր սերունդի բոլոր գաւակներու ներդրումին եւ մասնակցութեան մեր կեանքին: Հայրենիքը պէտք ունի բոլորին:

Ամրացնենք մեր շարքերը, կազմակերպենք ու դաստիարակենք մեր տղաքն ու աղջիկները, որպէսզի անոնք պատրաստ ըլլան վաղուան մեր մարտահրաւէրներուն: Պուլկարիան ընդհանրապէս եւ Փլովտիվը յատկապէս պէտք ունի բոլորին՝ վերականգնելու համար իբրեւ ՀՄԼՄ-ական չէն ու աշխոյժ մասնաճիւղ: Սկաուտական մեր շարքերը պէտք է աւելի խտանան եւ բանակումները աւելի բազմամասն: Դուրսը, մեզմէ հեռու մարդ պէտք չէ մնայ: Բոլորը պէտք է հրաւիրել գործի եւ պատասխանատուութեան: Մենք կը հաւատանք, որ երբ ծրագրեալ եւ կազմակերպուած գործ ըլլայ, ՀՄԼՄ-ի շարքերը կը կրկնապատկուին ու կը բազմապատկուին:

Մենք կը հաւատանք, որ Փլովտիվի մեր գաղութը, ինչպէս անցեալին, այսօր եւս պատրաստ է իր գաւակները յանձնելու ՀՄԼՄ-ին, որպէսզի անոնք մեծնան առողջ միջավայրի եւ ազգային միջնորդութիւնով: Պէտք է վստահիլ ՀՄԼՄ-ին եւ մեր կարողութիւնները ի սպաս դնել անոր ծրագրերներու յաջողութեան համար, որովհետեւ ՀՄԼՄ-ի յաջողութիւնը մեր բոլորին յաջողութիւնն է, հայութեան եւ Հայաստանին յաջողութիւնն է:

(Հատուած՝ ՀՄԼՄ-ի Փլովտիվի մասնաճիւղի վերականգնումի 25-ամեակի տօնակատարութեան արտասանած խօսքէն, Պուլկարիա, 2016)

**Ա**նցնող տասնամեակներուն, հաւատարիմ իր նպատակին եւ առաքելութեան, Հ.Մ.Ը.Մ. մագնիսական քաշողականութեամբ մը իր դրօշին տակ հաւաքեց մատղաշ տարիքի բազմաթիւ սերունդներ, հեռու պահեց զանոնք նկարագիր խաթարող միջավայրէն, դաստիարակող դպրոց եղաւ եւ անոնց առջեւ բացաւ հայ մարմնակրթական ընդհանուր միութեան ուղին, ուր անոնք աւելի փորձառու պատասխանատուներու խնամքին տակ դարձան անուանի մարզիկներ, դարձան ախոյեաններ, ախոյեան դարձուցին իրենց խումբերը եւ հպարտութեան անմոռանալի զգացումներով ջերմացուցին հայ մարդոց հոգիները:

Հ.Մ.Ը.Մ.ի սկստուները շեփորախումբի առաջնորդութեամբ տողանցքներով խանդավառեցին մեր ժողովուրդը, հայ ապրելու կամքը զօրացուցին եւ այս, այն տխուր օրերուն, երբ հայրենի հողերէն մղոններով հեռացուած հայութիւնը յուսահատութեան եւ ձուլումի սպառնալիքին դուռը կը գլորէին ինքզինք:

Այսօր, Լաթաքիոյ մասնաճիւղի 90-ամեակի այս հանգրուանին, արդար հպարտութեամբ մը կը հաստատենք, որ Հ.Մ.Ը.Մ., ինչպէս միշտ կը մնայ բովանդակ հայութեան երիտասարդական մեծագոյն կազմակերպութիւնը: Ու մենք համոզուած ենք, որ սփիւռքահայ կեանքին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպ ու գործօն յարատեւութեամբ, հաւաքաբար կրնանք աւելի սատարել մեր ազատ ու անկախ հայրենիքին վերականգնումին, որովհետեւ այդ վերականգնումը, իր անմիջականութեամբ հանդերձ, երկար ուղի մըն է: Մենք չէ միայն, այլ յաջորդաբար հասնող սերունդը, սերունդները պիտի ըլլան այդ յանձնառութեան դերակատար պատասխանատուները:

**(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ մասնաճիւղի 90-ամեակի հանդիսութեան արտասանած խօսքէն, Սուրիա, 2016)**

**Սիրելի՛ տղաք,**

Աշխարհը կը զարգանայ շատ արագ: Ամէն ինչ կը փոխուի մեր շուրջ եւ մենք ալ, իբրեւ ժողովուրդ, իբրեւ Սփիւռք, ամէն օր կ'ենթարկուինք հսկայական փոփոխութիւններու: Կը դիմագրաւենք տեսակ-տեսակ դժուարութիւններ, որոնց դէմ դնելու մեր մեծագոյն զէնքը մեր ուժն է: Այդ ուժը նիւթականը չէ: Նիւթականը կարեւոր է, բայց անբաւարար է: Այդ ուժը մեր ունեցած միջոցները չեն, որոնք այդքան ալ շատ չեն: Այդ ուժը, մեր մարդուժն է, դո՛ւք էք, որ ձեր գաղափարներով, ձեր նորութիւններով ու ձեր աշխատանքով մեր կեանքը յառաջ պիտի տանիք եւ օրէ օր աւելի պիտի զօրացնէք մեզ:

Թող այս հաւաքը մեկնակէտը ըլլայ Եւրոպայի հայութեան ուժի ստեղծման առաջին քայլին: Գալիք օրերուն պիտի յաջորդեն նոր քայլեր, աւելի մեծ եւ աւելի ինքնավստահ քայլեր, որոնք Եւրոպայի մեր տղաքը պիտի համախմբեն համաեւրոպական Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու եւ բանակումներու շուրջ, երիտասարդական նման հաւաքներու շուրջ եւ նոր եռանդ ու խանդավառութիւն պիտի տան:

Հաւատացէ՛ք, երիտասարդները շատ բան կրնան ընել մեր ժողովուրդին եւ հայրենիքին համար: Անհրաժեշտ է միայն կազմակերպուիլ, աւելի շատ քով-քովի ըլլալ եւ մեր ապրած քաղաքներուն եւ երկիրներուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ական եռանդ եւ շարժում ստեղծել:

**(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի համաեւրոպական երիտասարդական հանդիպումին արտասանած խօսքէն, Աւստրիա, 2017)**



**Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ժ. բանակում, 2014:**

**Սիրելի՛ քոյրեր եւ եղբայրներ,**

Այս հոգեպարար եւ գեղեցիկ միջնորդութիւն մէջ, կ'ուզեմ խօսքիս աւարտին անպայման յիշել այս յուշարձան մատուռը խորհրդանշող մեր Գատը եւ նկատի ունենալով 100-ամեակի մեր նշանաբանը՝ «Պատուաբեր անցեալէն յաղթական ապագայ», ինչպէս նաեւ այն իրողութիւնը, որ երկու օր ետք Հայկական Յեղասպանութեան նշումը պիտի կատարենք այս վայրէն, պիտի խնդրեմ ձեզմէ, որ ձեր աջ ձեռքերը վեր բարձրացնէք եւ հետս կրկնէք հետեւեալ տողերը, որոնք կ'ուզեմ որ ձեր մտքին մէջ պահէք մինչեւ ձեր կեանքին վերջը:

«Մենք՝ Լիբանանի մէջ հաւաքուած Հ.Մ.Ը.Մ.ի սկստուներ,

«Կ'ուխտենք

«Միշտ հաւատարիմ մնալ Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներուն, անկախ հայրենիքի պետականութեան, անոր դրօշին, զինանշանին եւ հօր բանակին:

«Կ'ուխտենք

«Այս վայրէն ամբողջ աշխարհին յիշեցնել, որ մենք հաւատաւոր ժառանգորդներն ենք Մեծ Եղեռնի սերունդին եւ ուխտեալ զինուորը մեր նահատակներու արդար դատին:

«Կ'ուխտենք

«Մեր բոլոր ուժերով պայքարիլ՝ ապահովելու համար Հայկական Յեղասպանութեան ամբողջական ճանաչումը եւ Հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքներուն ձեռքբերումը:

«Կ'ուխտենք»:

**(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի ջահավառութեան ընթացքին արտասանած խօսքէն, Լիբանան, 2018)**

**1** 00-ամեակը առիթ է Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին համար վերանորոգելու իր ուխտը՝ ազգային մեր ընդհանրական նպատակներուն ծառայելու: Ուրիշ ճամբայ չունի այս միութիւնը, բացի հայ նորահաս սերունդին ծառայութենէ եւ ազգային առողջ միջնորդութիւն մէջ յանձնառու տղաք ու աղջիկներ կերտելէ:

Ազգային արժէքներու նահանջի, բարոյական բարքերու այլասերումի, նիւթապաշտութեան եւ յաճախ մոլորեցուցիչ արհեստագիտութեան մեր օրերուն, կը հաւատանք, որ Հ.Մ.Ը.Մ. մեծ ընելիք ունի՝ մեր պատանիներն ու երիտասարդները համախմբելու, դաստիարակելու եւ ազգային նպատակներով առաջնորդելու համար: Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը լաւ պէտք է սերտել՝ տեսնելու համար, թէ մարմնակրթական այս միութիւնը ինչպէ՛ս կարողացած է դար մը ամբողջ կանգուն



2017. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղերով փրաւոր մարզիկի այցելութիւն

մնալ հաւատաւոր սկսողներու, նուիրեալ մարզիկներու եւ անձնուէր վարչականներու նիւթական եւ բարոյական հսկայական գոհողութիւններուն շնորհիւ:

Հ.Մ.Ը.Մ.ի անցեալը լաւ պէտք է ուսումնասիրել գիտնալու համար, թէ ի՞նչ ըսել է միութենականութիւն, ի՞նչ ըսել է մարզական ոգի, ի՞նչ ըսել է կամաւոր աշխատանք, լուռ եւ հետեւողական ծառայութիւն, առանց որեւէ ակնկալութեան եւ վարձատրութեան:

Ահա թէ ինչու, մեր ժողովուրդը ակնածանքով կը նայի Հ.Մ.Ը.Մ.ին, որովհետեւ քաջ գիտէ, որ ան ազգային ներշնչումի եւ խանդավառութեան մնայուն աղբիւր կը հանդիսանայ:

Երբ «Յառաջ նահատակ»ը կը հնչէ մեր մարզադաշտերուն վրայ, ամբողջ հայ ժողովուրդի սրտերն են որ կը թնդան ազգային ապրումներով:

Երբ մեր տղաքն ու աղջիկները կը տողանցեն դաշտերու վրայ՝ հայ ժողովուրդի պայծառ ապագան է, որ կը պարզուի մեր դիմաց:

Երբ մետալակիր մեր մարզիկները կը դիմաւորենք՝ իրենց յաջողութիւններուն մէջ հաւատաւոր միութենականներու քրտինքն ու վաստակն է որ կը տեսնենք:

Ու երբ մեր մատղաջ սկսողները կը տեսնենք, անոնց մէջ վաղուան յանձնառու հայերն են որ կ'ողջունենք:

Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.ը հայ իրականութեան մարմնակրթական մեծագոյն շարժումն է ու պիտի մնայ:

Ու որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ը Հ.Մ.Ը.Մ.ը մնայ այսուհետեւ ան պիտի ըլլայ աւելի հայկական, աւելի ընդհանուր եւ աւելի արդիական միութիւն՝ աշխարհասփիւռ իր 110 մասնաճիւղերով, իր հայրենատենչ սկսողներով ու հայրենակարօտ մարզիկներով:

(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի Մայիսեան փառատօնին արտասանած խօսքէն, Լիբանան, 2018)

**Հ**այաստանն է մեր ուժին աղբիւրը եւ կենսունակութեան աւիրը: Հայրենի հողն է մեզ օտարացումէ եւ ձուլումէ փրկող միակ ապաւէնը:

Ճիշդ է, ձեր մեծամասնութիւնը կ'ապրի Հայաստանէն դուրս, բայց, կասկած չունինք, որ Հայաստանը կ'ապրի ձեզմէ իւրաքանչիւրին հոգիին ու սրտին մէջ:

Կասկած չունինք, որ դուք Հ.Մ.Ը.Մ.ական ձեր դաստիարակութեամբ, Հայաստանը կը ճանչնաք առանց զայն ունենալու,

Դուք Հայաստանը կը սիրէք առանց զայն ճանչնալու, Որովհետեւ ձեր երակներուն մէջ կը հոսի հայու արիւնը, ձեր կուրծքերուն տակ կը տրոփէ Հ.Մ.Ը.Մ.ականի սիրտը:

Դո՛ւք, սիրելիներ, բախտաւոր սերունդ էք, որովհետեւ Հայաստանի անկախութեան 100-ամեակի տարին, առիթն ու պատեհութիւնը ունիք ձեր սիրելի միութեան 100-ամեակը տօնելու արդար գոհունակութեամբ եւ հպարտութեամբ:

Դո՛ւք, սիրելիներ, նաեւ յաւելեալ պարտականութիւն ունեցող սերունդ էք, որովհետեւ կոչուած էք 100 տարուան վաստակի մը արժանաւոր կրողները ըլլալու եւ այդ վաստակին վրայ անպայման ձեր կողմէ եւս բան մը աւելցնելու:

(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին առիթով Երեւանի «Հանրապետութեան» հրապարակին վրայ արտասանած խօսքէն, Հայաստան, 2018)

**Շ**նորհակալութեան խօսքերէն անդին, շնորհաւորութեան խօսք՝ միութեան 28 հազար անդամներուն, որոնք առիթն ու բախտը ունեցան միութեան 100-ամեակին ժամանակակիցները ըլլալու, տօնակատարութիւններուն մասնակից դառնալու եւ իրենց հաւաքական կամքին զօրութեամբ անգամ մը եւս հաստատելու 100 տարի առաջ, Հայաստանի լուսաւորութեան նախարար Նիկոլ Աղբալեանի այն բնորոշումը, թէ՛ «Մեծ է դերը Հ.Մ.Ը.Մ.ին: Այդ դերը լաւ ըմբռնելու համար անհրաժեշտ է ազգային բարձր գիտակցութիւն, այսինքն մեր ուժերուն, մեր արժէքին, մեր ընթացքին եւ նպատակին պայծառ ըմբռնում: Յարգանք, պատկառանք եւ տեղը այս աշխարհի մէջ՝ ուժով կը ստացուի, կը պարտադրուի եւ կը ներշնչուի: Իսկ ուժեղ են առոյգը, առողջն ու կորովին»:

Հ.Մ.Ը.Մ.ը, յարգելի՛ ներկաներ, առոյգ, առողջ ու կորովի հայութիւն պատրաստող այդ միութիւնն է:

Հ.Մ.Ը.Մ.ը մեր ուժին աղբիւրն է: Մեր յաջողութեան գրաւականներէն մէկն է, որուն պէտք է գուրգուրալ ազգովին:

100-ամեակի իր նշանաբանին հաւատարիմ, այսօր, աւելի քան երբեք, Հ.Մ.Ը.Մ. պատուաբեր անցեալէն կ'ուղղուի յաղթական ապագայ:

Մենք լաւատես ենք ապագայով ու ապագայի մեր յաղթանակներով: Ու մեր լաւատեսութիւնը բարի ցանկութիւններէ չի բխիր միայն, այլ՝ մեր աշխատանքէն, կամքէն եւ համոզումէն, միշտ երիտասարդութեան ի սպաս գործելու մեր տրա-

մադրութեան, հայութեան եւ Հայաստանին անմնացորդ ծառայելու մեր երդումն է:

Չմոռնանք, որ մեր ժողովուրդը Հ.Մ.Ը.Մ-ին տուած է «Կամաւոր բանակ»ի կոչում եւ պարտականութիւն:

Այդ կոչումն ու պարտականութիւնը կը թելադրեն այսուհետեւ ըլլալ աւելի զգօն ու պատրաստ՝ դիմագրաւելու մեր ժողովուրդին եւ հայրենիքին սպառնացող բոլոր տեսակի մարտահրաւէրները: Ի վերջոյ, մեր կեանքը, Հայրենիք թէ Սփիւռք, հայապահպանութեան համար մղուող մէկ մեծ պատերազմ է: Հ.Մ.Ը.Մ-ը կամաւոր այն բանակն է, որ այդ մեծ պատերազմը, փոքր-փոքր կռիւներով, մասնաճիւղ առ մասնաճիւղ, կը մղէ երկիրէ երկիր, շրջանէ շրջան: Ի՛նչ փոյթ, եթէ ան տեղ-տեղ կռիւր կը կորսնցնէ: Կարեւորը մեծ պատերազմը չկորսնցնելն է: Կարեւորը հայապահպանութեան գրահները գետին չզննելն է:

Այլապէս, Հ.Մ.Ը.Մ-ը յաղթանակներու միութիւնն է:  
(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի Օփերայի պաշտօնական հանդիսութեան արտասանած խօսքէն, Հայաստան, 2018)

**Ե**րիտասարդութիւնը նորութիւն եւ արդիականութիւն կը փնտռէ իր շուրջ: Հետամուտ է լայն հորիզոններու: Չի փափաքիր կառուցային-կանոնադրային կաղապարներու ենթարկուիլ: Ան կը նախընտրէ միութենական աշխատանքի մը օժանդակել, բայց միութենական չըլլալ: Մնալ համակիր՝ քան յանձնառութիւն եւ պատասխանատուութիւն ստանձնել: Գործել առանձին նպատակի մը համար, բայց ոչ՝ միութենական պարտաւորութիւններու շարքի մը համար:

Նորերու հետաքրքրութիւնը շատ աւելի համամարդկային հարցերու շուրջ է՝ քան ազգային եւ միութենական մտահոգութիւններու, որովհետեւ առաջինին գործադաշտը անասման է, ըստ իրենց, մինչդեռ ազգայինն ու միութենականը դատապարտուած են մնալու սահմանափակ շրջանակի մէջ:

Այս բոլորը իրականութիւններ են, որոնց մասին անպայման պէտք է խօսիլ, ապա ծրագրել, որոշել եւ գործի անցնիլ նախկինէն աւելի արագ կշռոյթով, դաստիարակութեան եւ քարոզչութեան արդի մօտեցումներով, տեղեկատուական արհեստագիտութեամբ, կառուցային ժամանակակից յարմարութիւններով եւ մեր շրջապատին աւելի լայնօրէն բացուելու քաղաքականութեամբ:

Պէտք է հասնիլ մեզմէ հեռու գտնուող երիտասարդութեան: Իսկ հասնելու համար պէտք է արդիականանալ եւ զօրանալ:

Պէտք է ներգրաւել երիտասարդութիւնը, բերել զայն մեր մօտ, իսկ բերելէն ետք պէտք է կարենալ պահել մեր մէջ, մեր կողքին:

(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական Ա. համագումարին արտասանած խօսքէն, Յունաստան, 2019)

30-ամեակը առիթ է վերյիշումի եւ գնահատանքի:

Պէտք է վերյիշել եւ գնահատել Հ.Մ.Ը.Մ-ի Հայաստանի մէջ վերնձիւղման առաջին սերունդի չակերտաւոր խենթերը՝ Վարդանը Բախչեանը, այս սրահին մէջ ներկայ Բագրատ Եսայեանը, Մանուկ Մանուկեանը եւ դեռ ուրիշներ:

Պէտք է վերյիշել եւ խոնարհիլ յիշատակին դիմաց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի այն նահատակներուն, որոնք իրենց թանկագինը զոհաբերեցին հայրենիքին եւ հայութեան համար: Յաւերժ ապրի յիշատակը եղբայրներ Վարդան Բախչեանին, Վահէ Ռոստոմեանին եւ Յակոբ Առուստամեանին, որոնց՝ Սփիւռքէն կը միանայ նահատակ Վիգէն Զաքարեանը:



եանին, Վահէ Ռոստոմեանին եւ Յակոբ Առուստամեանին, որոնց՝ Սփիւռքէն կը միանայ նահատակ Վիգէն Զաքարեանը:

Պէտք է վերյիշել մանաւանդ սեւ աշխատանքի ախոյեան մեր քոյրերն ու եղբայրները, որոնք յաճախ ամիսներով հանգիստ ու դադար չունեցան համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակում մը կամ մարզախաղ մը իրականացնելու համար: Միութիւնը իր խոնարհ հերոսներուն կը պարտի յաջողութիւնները:

Վերջապէս, յիշենք ու գնահատենք անոնք որոնք պատնէշի վրայ են այսօր: Կրնային պատնէշի վրայ չըլլալ, սեփական հանգիստի եւ հաճոյքի հետամուտ ըլլալ, ինչպէս իրենց սերունդակիցներէն շատերը, բայց անոնք որոշած են Հ.Մ.Ը.Մ-ի սիրոյն զոհել ամէն բան՝ անհատին մէջ մարդը, մարդուն մէջ ազնիւ քաղաքացին կերտելու համար:

Հ.Մ.Ը.Մ-ը, սիրելիներ, այս բոլորով Հ.Մ.Ը.Մ. է:

Բոլորին զոհողութիւններուն գումարն է, որ այս միութիւնը արժանի կը դարձնէ Հայաստանի Ազգային Սկզբնական Կազմակերպութիւնը ըլլալու եւ մնալու կոչումին:

Բոլորին նուիրաբերումի անչափելի տարողութիւնն է, որ այս միութիւնը կը պահէ Հայաստանի ամէնէն աշխոյժ, ամէնէն զաղափարական եւ ամէնէն յանձնառու պատանեկան-երիտասարդական միութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի ուժին անրապառ աղբիւրն է: Այդ աղբիւրը այսօր կը բխի շրջանի 13 միաւորներէն՝ Երեւանէն Աբովեան, Արմաւիրէն Էջմիածին, Մարտունիէն Վետի եւ այլ քաղաքներ: Մեր սպասումն է, 40-ամեակի եւ 50-ամեակի տօնակատարութիւններուն, միաւորներուն թիւը տեսնել կրկնապատկուած, իսկ անդամներուն թիւը՝ բազմապատկուած, որովհետեւ մենք կը հաւատանք, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը մեծ ընկերք ունի այսօրուան եւ վաղուան Հայաստանի մէջ, ազգային մեր արժեհամակարգը նոր սերունդին ներկայացնելու, Հայաստան-Սփիւռք-Արցախ եռամիասնութիւնը ամրապնդելու եւ բարոյական արժանիքներով, ազգային գաղափարախօսութեան տէր քաղաքացիներ պատրաստելու համար:

Հետեւաբար, 30-ամեակի երթը թող ըլլայ անխափան: Թող նորանոր ամեակներ հարստացնեն Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի պատմութիւնը, որպէսզի ան իր կարգին նորանոր իրագործումներով հարստացնէ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը, համայն հայութիւնն ու Հայաստանը:

(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի 30-ամեակի հանդիսութեան արտասանած խօսքէն, Հայաստան, 2019)



## ՀԱԼԷՊԻ ՄԷՋ ՀՈԳԵ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՀՈԳԻՈՅՆ

### Թղթակից ՀԱԼԷՊ

**Բ**արձր հովանավորություններ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեանի, նախաձեռնություններ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբ Շրջանային Վարչութեան, Կիրակի, 10 Յունուար 2021-ի առաւօտուն, յետ Սուրբ Եւ անմահ Պատարագի, Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ 6 Յունուարին Լիբանանի մէջ իր մահկանացուն կնքած ազգային գործիչ, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի հոգւոյն:

Հոգեհանգստեան պաշտօնին ներկայ էին պատկան մարմինի եւ Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեան, Հ.Մ.Ը.Մ.ական շքանշանակիրներ եւ երէց եղբայրներ, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբ Շրջանային Վարչութիւնը, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբ Շրջանային Սկառու. Խորհուրդն ու Խմբագրութիւնը, Հ.Մ.Ը.Մ.Ի Հալէպի մասնաճիւղին վարչութիւնը, Սկառու. Խորհուրդը, մասնաճիւղին խմբագրութեան, աստիճանաւորական տարազաւոր կազմերը եւ Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր ու եղբայրներ:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք ներկաները ուղղուեցան «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան «Լեւոն

Շանթ» սրահ, ուր տեղի ունեցաւ հոգեւորական յիշատակի հանդիպում:

Հանդիպումին բացումը կատարելով, քոյր Սեւան Ազարիկեան-Պարմաքսիան հրաւիրեց Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Եղիա Քիլիճեանը, փոխանցելու Շրջանային Վարչութեան ցաւակցական խօսքը:

Եղբ. Քիլիճեան եղբայր Գառնիկ Մկրտիչեանի նկարագրային օրինակելի վարքը բնութագրելով նշեց, թէ եղբ. Գառնիկը ծնունդ առնելով Հալէպի մայր գաղութէն, ազգայնաշունչ ընտանիքի մէջ հասակ առաւ եւ դարձաւ վեհաձայն հայու իսկական տիպարը, որ մտահոգուեցաւ իր ազգին տագնապներով եւ ուրախացաւ անոր ձեռքբերած նուաճումներով:

«Իբրեւ Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ, ան մօտէն հետաքրքրուեցաւ միութեան աշխարհասփիւռ շրջաններով եւ մասնաճիւղերով: Լայնասրտութեամբ լսեց անոնց մտահոգութիւնները եւ իր կարելին ի գործ դրաւ հաւասարակշռուած եւ շինիչ լուծումներ գտնելու համար»:

Եղբ. Քիլիճեան եղբոր Սուրբ կատարած այցելութիւններուն անդրադառնալով ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբ շրջանը քանիցս վայելած է եղբ. Գառնիկին ներկայութիւնը Սուրբ զանազան մասնաճիւղերէն ներս եւ օգտուած է եղբոր փորձառութիւնէն եւ շահեկան ցուցմունքներէն»:

Խօսքին աւարտին, եղբայրը Շրջա-

նային Վարչութեան ցաւակցութիւնները յայտնեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան, աշխարհասփիւռ Հ.Մ.Ը.Մ.ականներուն եւ հանգուցեալին ընտանիքին:

Այնուհետեւ ներկաները ունկնդրեցին 2019-ին, Միութեան Պատգամաւորական վերջին ժողովի փակման նիստին, եղբ. Գառնիկին արտասանած սրբաբան խօսքը:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան խօսքը արտասանեց եղբ. Մանուկ Քէօշկերեան, նշելով, թէ «Ո՞վ է՞ր ճանշար եղբայր Գառնիկը, 58-ամեայ, բայց միշտ առույգ ու կայտառ Հ.Մ.Ը.Մ.ականը, որուն կեանքը ամբողջական նուիրաբերում մը եղաւ հայ մարմնակրթութեան, հայ երիտասարդութեան, հայութեան, Հայաստանին, Արցախին եւ իր պաշտած կազմակերպութեան»:

«Սկզբունքային, անշահախնդիր ու առաքինի՝ մարդ՝ իր վարք ու բարքով:

«Հայ՝ բառին վաւերական առումով:

«Հ.Մ.Ը.Մ.ական տիպար՝ իր հարազատ կերպարով: Բոլորը կը սիրէին ու կը յարգէին զինք»:

«Միութեանական կեանքի մա՛րդ էր ան, ողնածուծով Հ.Մ.Ը.Մ.ական»:

«Տեղ մը դժուարութի՛ւն կար, տագնապ գոյութիւն ունէր, եղբայր Գառնիկ հոն էր եւ շրջահայեաց մօտեցումով հարցերը բարուք կերպով լուծելու շնորհք ունէր»:

«Ժողովներու մէջ տեսակէտներու բախում եւ երկուութիւն կա՞ր, լուծու-





մը եղբայր Գառնիկին մօտն էր, ոսկէ միջինը գտնելու բացառիկ կարողութեամբ:

«Կանոնագրային-կազմակերպչական հարցերու շուրջ շփոթ կար, դարձեալ եղբայր Գառնիկն էր, որ իւրաքանչիւր հարցի համոզիչ լուսաբանութիւնն ու բացատրութիւնը ունէր:

«Մեծ էր ան իր համեստութեամբ եւ խոնարհ՝ իր պարկեշտութեամբ, ընկերասիրութեամբ եւ ծառայասիրութեամբ:

«Ան կը պատկանէր մեծերու սերունդին:

սկզբունքներէն մէկն էր»:

Եղբ. Մանուկ յայտնեց, թէ յանուն Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական ընտանիքի 111 մասնաճիւղներուն եւ 28 հազար հաշուող անդամներուն, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը խորապէս կը սգայ Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ Եղբ. Գառնիկ Մկրտիչեանին կորուստը եւ կը խոնարհի անոր վաստակին առջև:

Աւարտին, Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեան փոխանցեց իր սրտի խօսքը,

յայտնելով, որ հանգուցեալ եղբ. Գառնիկ Մկրտիչեան հետեւելով Քրիստոսի լուծը քաղցրութեամբ շալկելու կոչին, հակառակ բոլոր դժուարութիւններուն, լաւատեսութեամբ եւ համբերութեամբ կրեց ազգին հարցերը, լսեց բոլորին, ամօքեց եւ թեթեւցուց անոնց ցաւերը եւ առաջարկեց շինիչ լուծումներ:

Սրբազան Հայրը Լիբանանի, Քուէյթի եւ Հալէպի մէջ մօտէն ճանչնալով հանգուցեալը, մատնանշեց Հ.Մ.Ը.Մ.ին, Հայ Դատին եւ ազգային կեանքին անոր ծառայութիւնները, յատկապէս անոր աշխատանքային կազմակերպուած վարքագիծը եւ մաղթեց, որ իրմէ օրինակ առնելով նոր սերունդի Հ.Մ.Ը.Մ.ականները պատրաստուին դառնալու ապագայի մեր ղեկավարները:

Խօսքին աւարտին, Առաջնորդ Սրբազանը թեմի ժողովականութեան եւ ժողովուրդին անունով եւ անձնապէս իր ցաւակցութիւնները յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին եւ հանգուցեալին ընտանիքին, աղօթելով, որ Ամենակալը երկինքի լուսաւոր երկնակամարին մէջ հանգչեցնէ իր հոգին: Ապա, ան «Պահպանիչ»ով փակեց օրուան հանդիպումը:

## ՊԱՂՏԱՏԻ ՄԷՋ ՀՈԳԵ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ



Ուրբաթ, 14 Յունուար 2021-ի առաւօտուն, Պաղտատի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ի յիշատակ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ, նորոգ հանգուցեալ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի:

Հոգեհանգիստին ներկայ գտնուեցան Իրաքի Հայոց Առաջնորդ Աւագ Արք. Ասատուրեան, Ազգային Վարչութեան ատենապետ Մելքոն Մելքոնեան եւ վարչութեան անդամներ, Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի վարչութեան ատենապետ եղբ. Արա Եսայեան եւ անդամներ, սկաուտներ, Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եւ եղբայրներ:



Այս առիթով իր արտասանած քարոզին մէջ, օրուան պատարագիչ Պետրոս Աբդ. Ազարեան խօսեցաւ եղբայր Գառնիկի ազգային նուիրումի, ծառայութեան, սերունդներ դաստիարակելու արժանիքին եւ տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի յատկութիւններուն մասին:



## ԵՂՔԱՅՐ ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻԶԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆՆԵՐԻ ԹՈՐՈՆԹՈՅԻ, ԳԱՀԻՐԷԻ ԵՒ ԱԼՄԵԼՈՅԻ ՄԷՋ

**Կ**իրակի, 14 Փետրուար 2021-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի մահուան

քառասունքին առիթով հոգեհանգրստեան պաշտօն կատարուեցաւ Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, կազմակերպուեցաւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Թո-

րոնթոյի մասնաճիւղի վարչութեան եւ ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տանի Մարկոսեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի վարչական անդամներ՝ քոյր Սեւան Հաճիարթիկեանի եւ եղբ. Արա Յարութիւնեանի, մասնաճիւղի Սկառու. Խորհուրդի ատենապետ եղբ. Բաֆֆի Թաշճեանի, մասնաճիւղի խմբապետուհի քոյր Աննա Մուլթաֆեանի, սկառուներ եղբ. Հայկ Յարութիւնեանի եւ քոյր Լուի Պէրպէրեանի:



### ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Նոյն օրը, եղբ. Գառնիկ Մկրտիչեանի հոգևոյն խաղաղութեան հոգեհանգրստ տեղի ունեցաւ Գահիրէ, Հելիոպոլսոյ Ազգային գերեզմանատան մէջ, գլխաւորութեամբ թեմի Առաջնորդ Աշոտ Եպս. Մնացականեանի եւ հոգեւոր հայրերու, ներկայութեամբ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատի» վարչութեան, Սկառու. Խորհուրդին, մարզական եւ երիտասարդական յանձնախումբերու անդամներու, ինչպէս նաեւ՝ սկառուներու, մարզիկներու եւ մասնաճիւղի անդամներու:

### ԱԼՄԵԼՈՅԻ ՄԷՋ

14 Փետրուարին, եղբ. Գառնիկ Մկրտիչեանի մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ նաեւ Նետրըլէնտներու (Հորանտայի) Ալմէլո քաղաքի Ս. Գրիգոր Լու-





սաւորիչ եկեղեցւոյ մէջ, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի տեղւոյն վարչութեան:

Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիւռ մասնաճիւղերուն նախաձեռնութեամբ, եղբ. Գառնիկ Մկրտիչեանի յիշատակին հոգեհանգստեան պաշտօններ կատարուեցան Մ. Նահանգներու, Գանատայի, Եւրոպայի եւ Միջին Արեւելքի հայկական

զանազան համայնքներուն մէջ: Քորոնայի համաճարակին պատճառով, Հ.Մ.Ը.Մ-ականներ հոգեհանգստեան պաշտօններուն հետեւեցան առցանց, եկեղեցիներէն կատարուած ուղղակի սիրումներով:

**ԱՅԼ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**  
Յայտնենք, որ 14 Փետրուարին,

## ՀՈԳԵ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ Հ.Մ.Ը.Մ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ

### Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

**Կ**իրակի, 14 Փետրուար 2021-ին, Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Արք. Փանոսեանի հանդիսապետութեամբ, Պուրճ Համուտի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ ի յիշատակ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի:

Հոգեհանգստին ներկայ գտնուեցան եղբայր Գառնիկին ընտանեկան պարագաները, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամներ Յակոբ Խաչերեան եւ Բենիամին Պշաքճեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամներ, Հ.Յ.Դ. Լիբա-



նանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Երեսփոխան Յակոբ Բազրատունի եւ Կեդրոնական Կոմիտէի անդամներ, Պուրճ Համուտի եւ Այնճարի քաղաքապետներ Մարտիկ Պօղոսեան եւ

Վարդգէս Խօջեան, Լիբանանի զբօսաշրջութեան նախկին նախարար Աւետիս Կիտանեան, Հ.Յ.Դ. «Սարգարապատ» կոմիտէի անդամներ, Հ.Մ.Ը.Մ-ական քոյրեր եւ եղբայրներ:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ՝ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի մատան քառասնից անդամներով, եղբայրներու պաշտօն պիտի կատարուի, Գիբանի, 14 Փետրուար 2021-ին, Կիւնայի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ աւրք և անուան Պատարագի:

Միտին եղբայր Գառնիկին յիշատակը միշտ վառ պիտի մտայ մեր մէջ:

Հ.Մ.Ը.Մ-ի Արևմտեան ԱՄ, Շրջանային Վարչութիւն

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ՝ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի մատան քառասնից անդամներով, եղբայրներու պաշտօն պիտի կատարուի, Գիբանի, 14 Փետրուար 2021-ին, Կիւնայի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ աւրք և անուան Պատարագի:

**Հոգեհանգստ**

ՀԱՄԱՅՆՔՆԵՐ Առաջնորդ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐ Առաջնորդ

**ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ**  
հոգով

Հանգրուցեալին քառասնից հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Փետրուար 2021-ին յաւարտ Աւրք և Անուան Պատարագին Ա.Աստուածածին եկեղեցւոյ մէջ՝ Կիւնայի, Հաւել:

Տես հոգեհանգստեան արարողութեան ցուակցութիւնները պիտի ընդունուին ԱՄՏՏ-ի «Լեւոն Շալա» պաշտէն կերպ:



Հոգեհանգստեան պաշտօնին կատարումէն ետք, ներկաները եկեղեցւոյ «Յակոբ եւ Սօսի Չիլինկիրեան» սրահին մէջ կատարեցին հոգեսուրճ: Այս առիթով խօսքեր արտասանեցին Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Հայկ Թապազեան եւ Հ.Յ.Դ. «Սարգարապատ» կոմիտէի կողմէ Սազօ Մարտիրոսեան:

Եղբ. Թապազեան իր խօսքին մէջ նշեց, որ «Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան իր համա-Հ.Մ.Լ.Մ.ական բեղուն գործունէութեան կողքին հիմնական աւանդ ունեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի շրջանին մէջ»: Ապա, եղբոր յիշատակին եւ վաստակին անդրադառնալով, եղբ. Թապազեան նկատել տուաւ, որ շատ-շատեր պիտի ուզէին թուղթին յանձնել իրենց յուշերը, ապրումներն ու մտածումները՝ ժողովուրդին կողմէ սիրուած մեր մեծ եղբոր մասին՝ «Ժողովական ըլլան անոնք թէ բանակումի աշխատանքներու վերաբերին, փառատօնի կազմակերպում ըլլան թէ միութեան դաստիարակչական աշխատանքներուն հետ կապ ունենան եւ կամ՝ Հ.Մ.Լ.Մ.ի մեծ յրբեւանի լայնածաւալ աշխատանքներուն առնչուին, բոլորը անպայման յիշատակ մը, դրուազ մը, խորհրդակցութեան պահ մը ունին եղբայր Գառնիկին հետ, որ գիտցաւ հաւաքական ղեկավարութեամբ ըստանձնել Սփիւռքի մեծագոյն կազմակերպութեան իրեն վստահուած ղեկը»:

Իր կարգին, Սազօ Մարտիրոսեան հաստատեց, որ «Քառասուն օրեր անց, դժուար է համոզուելի եւ ընդունիլ, որ մեր բոլորին սիրելի ընկեր Գառնիկը այլ լեւս չկայ մեր կեանքին մէջ: Դժուար է, անկարելի է, քանի մը տողերու մէջ խօ-



սիլ ազգային, հասարակական եւ կուսակցական գործիչ ընկեր Գառնիկ Մկրտիչեանի կեանքին իրագործումներուն մասին, որոնք կրնան ամբողջ գիրքի մը էջերը լեցնել»:

Շարունակելով, Մարտիրոսեան շեշտեց, որ «Գառնիկ Մկրտիչեան իրեն վրատահուած բոլոր պարտականութիւնները կատարեց առանց ընկրկումի, սիրալոյսի եւ առանց թերանալու, նոյնիսկ իր անձնական կեանքն ու գործը մոռնալով յաճախ: Ան եղաւ ժողովուրդին անկեղծ գինուորն ու խոնարհ ծառան: Իր սիրտը կը տրոփէր Պուրճ Համուտի համար, Պուրճ Համուտի ժողովուրդին համար: Ան կ'ուզէր հասնիլ բոլորին ցաւերուն: Չկար մէկը, որ իր թաղին կամ անձնական կեանքին մէջ խնդիր ունենար եւ չզիմէր ընկեր Գառնիկին: Համեստ, բարեսիրտ, օգնող, կուսակցական ամէն աշխատանք եւ պարտականութիւն իր անձէն վեր դասող, խրատապահանջ, լուրջ եւ օրինակելի կեցածքով ընկեր էր ան, Դաշնակցութեան ոգիով թրծուած»:

Ապա, եղբայր Գառնիկին մէկ խօսքը ոգեկոչելով, Սազօ Մարտիրոսեան ըսաւ. «Դուն կ'ըսէիր, թէ Հ.Մ.Լ.Մ.ի եւ Հ.Յ.Դ.ի գաղտնիքը այն է, որ այս միութիւններուն անդամակցողը չի կրնար բաժնուիլ անոնցմէ: Այո՛, չի կրնար բաժնուիլ, սակայն դաժան մահը քեզ Ֆիզիքապէս բաժնեց, բայց վստահ եղիր, որ սերունդներ պիտի յիշեն քեզ ու պիտի կատարեն կտակդ, պիտի յիշեն դաստիարակչական զրոյցներդ եւ ընկերական խրատներդ: Քեզ բնաւ բացակայ պիտի չզննք մեր ժողովներէն եւ աշխատանքներէն»:

Խօսքերէն ետք, հոգեսուրճը փակուեցաւ եղբայր Գառնիկի յիշատակին

աղօթքով եւ ազգային-միութենական գործը շարունակելու խոստումով:

Յայտնենք, որ այս առիթով, Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը նախաձեռնեց յատուկ բացառիկի մը հրատարակութեան, որ իբրեւ «Ազդակ» օրաթերթի յաւելում, թերթին հետ լոյս տեսաւ Շաբաթ, 13 Փետրուար 2021-ին (Տեսնել Գ. կողք):

24 էջնոց յաւելումը ընդգրկեց Շրջանային Վարչութեան խօսք, եղբայր Գառնիկի մահուան առիթով արտասանուած դամբանական խօսքեր եւ եղբոր յիշատակին գրուած յուշեր եւ վկայութիւններ (Ընթերցել հետեւեալ կապով՝ <https://www.facebook.com/378235705657393/posts/1819417948205821>)

**ՀԱՄԼՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութիւնը**  
 Կը օրօժ մտք վաստակաւոր ՀԱՄԼՄ-ական տարիներու հերոսական Վարչութեան ատենապետ, ծառայաւոր վերաբնակաւ, կրթական Լիբանանի Չարք Թեմի Ազգ. Վարչութեան Յիշատակով, Պուրճ Համուտի մեր շարքաւորն է Լիբանանի Շրջային Վարչութեան Վարչութիւնը ատենապետ

**Եղբ. Գառնիկ Մկրտիչեանին**  
 Իր պատմեցաւ Չորեքշաբթի 6 Յունուար 2021 ին Լիբանան Լայնագաղտնաբանութեամբ

Բնիկի Չարք Թեմի Բարեկեան Առաջնորդ Գերբ. Տ. Անտոն Սրբ. Եպս. Չարքաւանի

Գանձուցեալին հոգեկանգտանալ պաշտօն պիտի կատարուի Կիրակի 10 Յունուար 2021-ին յաւարտ Սուրբ եւ Անան պատարագին Ա. Աստուածամորն եկեղեցւոյ մէջ

Վիպակներ-Չարքա:  
 Տես հոգեկանգտանալ արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուի ԱՄՏԵԱՆ «Լեւոն Շաբթ» քառիկն կերպ:

**ՀԱՄԼՄ-ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը**  
 Կը օրօժ մտք վաստակաւոր ՀԱՄԼՄ-ի Վերստեան վարչութեան ատենապետ

**Եղբ. Գառնիկ Մկրտիչեանին**

Մահուան քառասուն օրի ստորի:  
 Հոգեկանգտանալ արարողութիւնը տեղի ունիւցաւ Կիրակի՝ 14 Փետրուար 2021 ին, յաւարտ սուրբ եւ անան պատարագին, կը կրուի ՎՊ. Գործար Լուսաւորչի՝ կեղեցւոյ մէջ:

Մահաբարակի պատճառով, վարչութիւնը իր ատենապետական պիտի ըլլայ, անպակ Վարչութեան կը կրուի իր ընտանիքի բոլոր անդամները, որպէսզի մասնակցի դասուան արարողութեան արցանց կերպով՝ ՀԱՄԼՄ-ի Շրջանային Վարչութեան Պիտակներ (FACEBOOK) կը կը:

ՀԱՄԼՄ-ի Յունաստանի Շրջանային Վարչութիւն

**ՀԱՄԼՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութիւնը**  
 Կը օրօժ մտք վաստակաւոր ՀԱՄԼՄ-ի Վերստեան վարչութեան ատենապետ

**Եղբ. Գառնիկ Մկրտիչեանին**

Մահուան քառասուն օրի ստորի:  
 Հոգեկանգտանալ արարողութիւնը տեղի կ'ունայ Կիրակի՝ 14 Փետրուար 2021-ին, սուրբ պատարագի ապարտին, Լուսնոյի Սուրբ Եղիշէ կեղեցւոյ մէջ:

Համաբարակի պատճառով, վարչութիւնը կը կրուի իր ընտանիքի բոլոր անդամներին մասնակցել արարողութեան արցանց կերպով՝ Saint Yeghiche Parish FACEBOOK կը կը:

ՀԱՄԼՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւն



## ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ ՀԱԼԷՊԻ, ԼԱԹԱՔԻՈՅ ԵՒ ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ

**Թղթակիցներ  
ՅԱԼԷՊ, ԼԱԹԱՔԻԱ, ԳԱՄԻՇԼԻ —**

**Հ**ՄԼՄ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Կիրակի, 14 Փետրուար 2021-ի առաւօտուն, Հայկ պի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, յետ Պատարագի հոգեհանգստեան արարողութիւն կատարուեցաւ ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի մահուան քառասունքին առիթով, ներկայութեամբ՝ ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեանի, Շրջանային Վարչութեան անդամներու, Շրջանային Սկաւտ. Խորհուրդի, Հայկ պի մասնաճիւղի վարչութեան, շքանշանակիր ՀՄԼՄ-ականներու, խմբապետական եւ աստիճանաւորական կազմերու եւ տարազաւոր ՀՄԼՄ-ականներու:

Հոգեհանգստեան արարողութեան էտք ներկաները ուղղուեցան «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահ, ուր մատուցուեցաւ հոգեսուրճ:

Այս առիթով, Շրջանային Վարչութեան անունով բացման խօսք արտասանեց գրական յանձնախումբի անդամ եղբ. Վիգէն Չաղլասեան: Եղբայրը լուսարձակի տակ առաւ բոլորին սիրելի,

հոգեհարազատ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի նկարագրային գիծերը, ապա ակեցնելով ըսաւ. «Եղբ. Գառնիկ Մկրտիչեան, իբրեւ Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ, անսակարկ զոհողութեան օրինակ հանդիսացաւ: Ան հասաւ միութեան բոլոր շրջաններուն, լսեց անոնց դժուարութիւնները եւ պատշաճ լուծումներ որդեգրելով նեցուկ կանգնեցաւ բոլորին»:

Եղբայր Չաղլասեան նկատել տուաւ, որ եղբայր Գառնիկին նպատակը միութեան բարձրագոյն շքանշաններուն արժանանալ չէր, որովհետեւ ան ունէր այն համոզումը, թէ իբրեւ գործօն ՀՄԼՄ-ական տակաւին շատ աշխատանք ունէր կատարելիք միութեան շարքերէն ներս, իսկ շքանշանը հասանելի կը դառնար գործի աւարտին: Հետեւաբար, եղբ. Գառնիկ Մկրտիչեանը գործի մարդ էր եւ ո՛չ խօսքի», շեշտեց ան:

Այնուհետեւ, ներկաները վերլիչեցին եղբ. Գառնիկ Մկրտիչեանի Սուրբոյ շրջան կատարած այցելութիւնները եւ մասնակցութիւնները Սուրբոյ շրջանի ներկայացուցչական ժողովներուն եւ նախաձեռնութիւններուն՝ «Եղբայր Գառնիկը Սուրբոյ մէջ» խորագիրը կրող տեսերիցի ցուցադրութեամբ:

Աւարտին, ներկաներուն իր սրտի խօսքը ուղղեց ՀՄԼՄ-ի հոգեւոր հովիւ Մաշտոց Ա. Քնյ. Արապաթիեան:





Ան ողջունեց միութեան դրօշակի փոխանցման արարողութեան երեւոյթը, որ սովորական փոխանցում մը չէ, այլ՝ միութեան նախնիներուն ժառանգած ականդն է, որ կը փոխանցուի նոր սերունդներուն, եւ այդ հայապահպանութեան ականդին փոխանցման պայծառ օրինակը հանդիսացաւ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը, նչեց ան:

Քահանայ հայրը յայտնեց, որ եղբ. Գառնիկ Մկրտիչեան աշխատասէր, համեստ, ժպտաղէմ, դրական եւ Հ.Մ.-

Ը.Մ.ականները քաջալերող անձնաւորութիւն էր: Հետեւաբար, ան հրաւիրեց ներկաները, որպէսզի իրենք եւս եղբ. Գառնիկի նման քաջալեր հանդիսանան միութեան շարքերուն մէջ հասակ առնող Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

Այնուհետեւ, քահանայ հայրը աղօթք բարձրացուց առ Աստուած՝ հանգուցեալ եղբոր հոգիին խաղաղութեան համար:

Հոգեսուրճը իր աւարտին հասաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

**ԼԱԹԱՔԻՈՅ Մէջ**

Նոյն օրը, եղբայր Գառնիկ Մկրտիչեանի մահուան քառասունքին յիշատակին հոգեհանգստեան պաշտօն կատարւեցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ մասնաճիւղին վարչութեան կազմակերպութեամբ, Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Հոգեհանգստեան արարողութեան ներկայ գտնուեցան մասնաճիւղին վարչութիւնը եւ սկառուտ քոյրեր ու եղբայրներ:

**ԳԱՄԻՇԼԻԻ Մէջ**

Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղին վարչութիւնը, իր կարգին, հոգեհանգրատեան արարողութիւն կազմակերպեց Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ներկայութեամբ Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Լեւոն Վրդ. Եղիայեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Զաւէն Գասպարեանի, մասնաճիւղի վարչութեան անդամներու, աստիճանաւորական կազմերու եւ տարագաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներու:

Հոգեհանգստեան արարողութենէն ետք, ներկաները ուղղուեցան Գամիշլիի Ազգային Առաջնորդարանին դահլիճը, ուր վարչութիւնը ընդունեց ցաւակցութիւններ: Վարչութեան ատենապետ եղբ. Անդրանիկ Սարգիսեան այս առիթով խօսք առնելով ներկայացուց եղբ. Գառնիկ Մկրտիչեանի ազգասէր ու հայանուէր գործունէութեան երկար տարիներու ծառայութիւնները: Ապա, Լեւոն Վարդապետ փոխանցեց իր սրտի խօսքը եւ հոգեսուրճը աւարտին հասաւ «Ով հայ արի» սկառուտական քայլերգով:





## ՔՈՒԷՅԹԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔԸ՝ ԵՂԲԱՅՐ ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Թղթակից  
ՔՈՒԷՅԹ

**Ո**ւրբաթ, 19 Փետրուար 2021-ին, նախագահութեամբ Քուէյթի եւ շրջակայից երկիրներու Կաթողիկոսական Փոխանորդ Պետրոս Վրդ. Մանուէլեանի, ներկայութեամբ գաղութի ազգային եւ միութենական մարմիններու ներկայացուցիչներուն, յետ Արեւազալի ժամերգութեան, տեղի ունեցաւ հանդիսաւոր հոգեհանգիստ՝ ի յիշատակ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եւ ազգային-միութենական վաստակաշատ գործիչ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի:

Հոգեհանգիստէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Քուէյթի մեկուսի մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ, եկեղեցւոյ ներքնասրահին մէջ տեղի ունեցաւ եղբայր Գառնիկի յիշատակին յարգանքի մատուցման ձեռնարկ: Վայրկեան մը յոտնկայս լռութենէ ետք, բացման խօսքով հանդէս եկաւ մասնաճիւղի ընդհանուր խմբապետ եղբ. Ժանօ Քէթիճեան: Ան անդրադարձաւ եղբ. Գառնիկի կերպարին՝ յիշելով հայկական բոլոր համայնքներու մէջ անոր ունեցած բեղուն գործունէութիւնը: Ապա, ներկաներուն ցուցադրուեցաւ եղբայր Գառնիկին կեանքն ու գործունէու-

թիւնը ներկայացնող տեսերիզ մը՝ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին պատաստութեամբ:

Այնուհետեւ, խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ-ի Քուէյթի մեկուսի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Արամ Մահտեսեան եւ պատկան մարմինի ներկայացուցիչ Յակոբ Մելիքսէթեան: Եղբ. Արամ կարեւորեց եղբ. Գառնիկի երկտասնամեայ ժառանգութիւնը, որ ներկայ սերունդներուն կը փոխանցուի իբրեւ անսպառ զանձ, բարձրանալու եւ բարձրացնելու համար երիտասարդ նոր հոգիներ: Իր կարգին, եղբ. Գառնիկի անձին մասին խօսելով, Յակոբ Մելիքսէթեան լուսարձակի տակ առաւ եղբոր երեք յատկանիշները՝ մարդը, հայրենասէրը եւ եկեղեցասէրը, որոնք մնայուն ներկայութիւն եղան կեանքին մէջ եւ իր առաքելութեան կորիզը հանդիսացան:

Փակման խօսքով հանդէս եկաւ Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Պետրոս Վրդ. Մանուէլեան, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Դժուար է եղբայր Գառնիկ Մկրտիչեանին նման անձնուրաց ազգային գործիչներու եւ ղեկավարներու մասին խօսիլը, որովհետեւ ան կեանք մը ամբողջ ապրած է անանձնական կերպով՝ յօգուտ ազգին եւ հայրենիքին: Երբ տարբեր համայնքներ այսօր նման ջերմութեամբ կը պահեն եղբայր Գառնիկին յիշատակը, կը հասկնանք արդէն, որ ան յիրաւի այդ բոլոր համայնքներու կազմակերպման գործին մէջ ներդրած է իր լուծման, երբ իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ գտնուած է պարտականութեան վրայ»:

Այս առիթով Պետրոս Վարդապետ մասնաւորաբար շեշտեց եղբայր Գառնիկին այցելութիւնները Քուէյթ, եւ, անձնապէս ծանօթութիւն ունենալով անոր հետ, վկայեց, որ եղբայր Գառնիկ շատ կը սիրէր Քուէյթի հայ համայնքը եւ Հ.Մ.Ը.Մ-ի Քուէյթի մասնաճիւղը: Բան մը, որ փոխադարձ է Հ.Մ.Ը.Մ-ականներուն կողմէ, շեշտեց ան:

Կաթողիկոսական Փոխանորդի խօսքէն ետք, ձեռնարկը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:





## ԵՂԲԱՅՐ ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՁԵՌՆԱՐԿ ՍԻՏՆԻԻ Մէջ

### Թղթակից ՍԻՏՆԻ

**Հ**ՄԼՄ-ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Ուրբաթ, 19 Փետրուար 2021-ին, Սիտնիի մէջ տեղի ունեցաւ ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբայր Գառնիկ Մկրտիչեանի մահուան քառասունքի հոգեհանգիստ եւ յիշատակի ձեռնարկ:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, Սիտնիի Հայ Մշակութային Կեդրոնի սրահին մէջ կազմակերպուած ձեռնարկին ներկայ գտնուեցան Աւետիս Քհնյ. Համբարձումեան, ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ Տիրան Վահրատեան եւ Սարգիս Տէր Պետրոսեան, Հ.Յ.Դ. Աւստրալիոյ Կեդրոնական Կոմիտէի եւ կոմիտէներու ներկայացուցիչներ, ուղեկից միութիւններ պատասխանատու անդամներ, ՀՄԼՄ-ական քոյրեր եւ եղբայրներ:

Ձեռնարկին բացման խօսքը արտասանեց ՀՄԼՄ-ի Աւստրալիոյ Շրջանային Խմբապետուհի քոյր Սեւան Պազարճեան: Ան ըսաւ, որ բոլորը կը յարգէին ու կը սիրէին եղբայր Գառնիկը, որ համեստութեան, խոնարհութեան, պարկեշտութեան, ընկերասիրութեան եւ ծառայասիրութեան օրի-

նակն էր: Եղբոր մահը մեծ կորուստ եղաւ ՀՄԼՄ-ի ընտանիքին համար: Եղբայր Գառնիկին անունն ու յիշատակը անմոռանալի պիտի մնան մեր միութեան անդամներուն եւ յաջորդող սերունդներու յիշողութեան մէջ:

Ապա, Շրջանային Սկսուած Խորհուրդի անդամ քոյր Մարիա Ալայեան ընթերցեց եղբայր Գառնիկի կենսագրականը, որմէ ետք տեսերիզով ներկայացուեցաւ եղբոր ազգային-միութենական գործն ու վաստակը:

Խօսք առաւ ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայր Տիրան Վահրատեան եւ եղբոր մասին իր վկայութիւնը փոխանցելով հաստատեց, որ եղբայր Գառնիկ ժողովական կեանքի իտէյլ մարդն էր, միշտ մթնոլորտը հանդարտեցնող իր իւրայատուկ բնավորութեամբ եւ զիւրանագէտ ատենապետի բացառիկ կարողութեամբ: Ան սկզբունքային էր եւ ունէր անկարելի թուացող ծրագիրներ իրականացնելու

չնորհ: Եղբոր տիպար օրինակը իբրեւ ուղեցոյց պիտի ծառայէ ՀՄԼՄ-ի յաջորդող սերունդներուն:

ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբայր Վիգէն Քորթեան երկրէն դուրս գտնուելով յղած էր գրաւոր խօսք մը, ուր կ'ըսէր, թէ ինք բախտաւորութիւն ունեցած է գործակցելու եղբայր Գառնիկին հետ: Շուրջ քսան տարի եղբոր հետ գործակցած է ՀՄԼՄ-ի եւ Հ.Յ.Դ.աշնակցութեան աշխատանքներով: Եղբայր Գառնիկ ունէր կազմակերպական փայլուն յատկութիւններ: Ան կը փորձէր ժողովները եւ հանրային ձեռնարկները իրականացնել շատ փայլուն եւ հեզասահ կերպով:

Այս առիթով, եղբայր Գառնիկի մասին իրենց սրտի խօսքերը արտասանեցին նաեւ ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբայր Սարգիս Տէր Պետրոսեան եւ Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան նախկին ատենապետ եղբայր Պերճ Մոմճեան: Անոնք յիշեցին եղբայր Գառնիկին միութենական բարեմասնութիւնները, նուիրեալ գործունէութիւնը եւ ամէն ղեփուարութիւն յաղթահարելու կամքն ու վճռականութիւնը:

Աւարտին, Աւետիս Քհնյ. Համբարձումեան փոխանցեց իր սրտի խօսքը եւ ձեռնարկը փակեց աղօթքով:







ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ՝

## ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ՆՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

**Հ**.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի մահուան քառասունքը արժանավայել կերպով նշուեցան մայր հայրենիքի՝ Հայաստանի մէջ, որուն համար ապրեցաւ եւ կեանք մը ամբողջ գործեց եղբ. Գառնիկ, տեական ճիգ ի գործ դնելով Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի նորանոր մասնաճիւղերու հիմնադրման եւ գործող մասնաճիւղերու հզօրացման համար:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան նախաձեռնութեամբ, քառասունքը տեղի ունեցաւ Կիրակի, 28 Փետրուար 2021-ին, էջմիածինի Ս. Գայիանէ վանքին մէջ, յաւարտ Ս. Պատարագի, հանդիսապետութեամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին: Օրուան Պատարագը մատուցանեց եւ յաւուր պատշաճի քարոզեց յատուկ յանձնարարութիւններով Հայրապետական Պատուիրակ Պար-

գեւ Արք. Մարտիրոսեան:

Հոգեհանգստեան արարողութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական վարչութեան անդամ եղբ. Դաւիթ Յակոբեան, Կեղրոնական վարչութեան նախկին անդամ եղբ. Բագրատ Եսայեան, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամ Արթիւր Խաչատրեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի նախկին ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան եւ վարչութեան անդամներ, ՀՕՄ-ի Կեղրոնական վարչութեան անդամ Համեստ Պէօճէքեան, ՀՕՄ-ի Հայաստանի վարչութեան ատենապետ Մարինէ Համբարձումեան, ազգային բարերար Գաբրիէլ Զէմպէրճի, եղբ. Գառնիկի զաւակը՝ եղբ. Բիւզանդ Մկրտիչեան եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի սկառուտներ:

## ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Թղթակից  
ԵՐՈՒՍԱՂԷՄ

**Կ**իրակի, 21 Փետրուար 2021-ի երեկոյան, Երուսաղէմի Հայ Կաթողիկէ Յաւազին Տիրամօր եկեղեցւոյ



մէջ, յետ Սուրբ Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն մատուցուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի մահուան քառասունքին յիշատակին: Պատարագը մատուցեց Ռափայէլ Քհնյ. Շէֆիքեան եւ իր քարոզին մէջ նշեց եղբայր Գառնիկին հետ իր ունեցած երկար տարիներու գործունէութիւնը Հ.Մ.Ը.Մ-ի շարքերէն ներս, Լիբանան:

Այս առիթով խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Երուսաղէմի մասնաճիւղի ատենապետ եղբ. Յարութ Պաղամեան եւ անդրա-



դարձաւ եղբայր Գառնիկի Հ.Մ.Ը.Մ-ի մէջ ունեցած մեծ վաստակին եւ սերունդներուն փոխանցած աւանդին:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, եկեղեցւոյ դահլիճին մէջ տեղի ունեցաւ հոգեուորճի հիւրասիրութիւն:

## «Յ.Ս.Ը.Ս.Ի ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ ՖՈՆՏ»ԻՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Տեր եւ տիկ. Զրաչ եւ Էլիզապեթ		Տեր եւ տիկ. Յակոբ եւ Արփի Սուլաքեան	
Սիսեռեան (Ֆրանսա)	10.000 \$	(Արեւելեան Մ. Նահանգներ)	50 \$
Տեար Երջօ Սամուելեան	10.000 \$	Տեր եւ տիկ. Լեւոն եւ Լիւսի Չէթունեան	
Յ.Ս.Ը.Ս.Ի Արեւելեան Մ. Նահանգներու		(Արեւելեան Մ. Նահանգներ)	20 \$
Շրջանային Վարչութիւն	1015 \$	Տեր եւ տիկ. Սեպուհ եւ Մարիա Պապիկեան	
Տեր եւ տիկ. Տիրան եւ Վերժինիա		(Լիբանան)	20 \$
Վահրատեան (Աւստրալիա)	1000 \$	Յ.Ս.Ը.Ս.Ի Միւնիխի Մեկուսի Վարչութիւն	250 եւրօ
Տեր եւ տիկ. Վիգէն եւ Նօնօ Աբելեան		Յ.Ս.Ը.Ս.Ի Յունաստանի Շրջ. Վարչութիւն	100 եւրօ
(Արեւմտեան Մ. Նահանգներ)	1000 \$	Խրիսթոս Ճորճիս եւ Մարլէն Տագետեան ընտանիք	
Տեր եւ տիկ. Չարեհ եւ Լիոնի		(Յունաստան)	50 եւրօ
Սարմազեան (Գանատա)	1000 \$	Տիկ. Նայիրի Սուրատեան (Կիպրոս)	50 եւրօ
Տեր եւ տիկ. Ատոմ եւ Սելլա Թնճուկեան			
(Լոնտոն)	1000 \$	Տեր եւ տիկ. Փօլ եւ Սեդա Այանեան	
Տեր եւ տիկ. Օշին եւ Իրէն Փիրումեան		(Լիբանան)	4.000.000 Լ.Ն.
(Արեւմտեան Մ. Նահանգներ)	500 \$	Վարուժան Պարսումեան եւ զաւակունք	
Տեր եւ տիկ. Պետրոս եւ Արեւ Տեր Վարդանեան		(Լիբանան)	3.000.000 Լ.Ն.
(Արեւելեան Մ. Նահանգներ)	300 \$	Մարաշի Զայրենակցական Միութիւն	
Տեր եւ տիկ. տղոք. Նազարեթ Աղէկեան		(Լիբանան)	2.000.000 Լ.Ն.
(Գերմանիա)	300 \$	Տեր եւ տիկ. Վաչէ եւ Ալին Նաճարեան	
Տեր եւ տիկ. Մանուէլ եւ Սիրան Մարսելեան		(Լիբանան)	1.000.000 Լ.Ն.
(Արեւմտեան Մ. Նահանգներ)	250 \$	Տեր եւ տիկ. Բենիամին եւ Վերա Պչաքճեան	
Յ.Ս.Ը.Ս.Ի Փրովիտցենսի մասնաճիւղ		(Լիբանան)	500.000 Լ.Ն.
(Արեւելեան Մ. Նահանգներ)	200 \$	Տեր եւ տիկ. Զրայր եւ Սիլվա Սաղըրեան	
Տեր եւ տիկ. Վրեժ եւ Անի Յակոբեան		(Լիբանան)	500.000 Լ.Ն.
(Արեւելեան Մ. Նահանգներ)	200 \$	Րաֆֆի, Շաղիկ եւ Կալի Խիւտավերտեան	
Տեր եւ տիկ. Խաժակ եւ Անի Գուլաճեան		(Լիբանան)	500.000 Լ.Ն.
(Գանատա)	200 \$	Տեար Կարօ Շահապեան (Լիբանան)	500.000 Լ.Ն.
Տեր եւ տիկ. Փիեր եւ Արաքս Գուլաճեան		Տեր եւ տիկ. Յարութ եւ Ռիթա Լաքիսեան	
(Լիբանան)	200 \$	(Լիբանան)	500.000 Լ.Ն.
Տեր եւ տիկ. Արա եւ Նորա Զեօհնելեան		Յ.Ս.Ը.Ս.Ի Այնճարի մասնաճիւղ	500.000 Լ.Ն.
(Եգիպտոս)	200 \$	Տեարք Զայկազ եւ Զրաչ Եարտըմեաններ	
Տիկ. Տիգրի Թորիկեան (Լիբանան)	100 \$	(Լիբանան)	300.000 Լ.Ն.
Տեր եւ տիկ. Վարուժան եւ Անի Սերոբեան		Տեար Յովսէփ Զամամճեան (Շուէտ)	200.000 Լ.Ն.
(Գանատա)	100 \$	Յ.Ս.Ը.Ս.Ի Ճիւնիի մսնճ. (Լիբանան)	200.000 Լ.Ն.
Տեր եւ տիկ. Վահէ եւ Էլօ Թանաշեան		Կեպէլեան ընտանիք (Լիբանան)	150.000 Լ.Ն.
(Արեւելեան Մ. Նահանգներ)	100 \$	Տեար Սեդրակ Թօփալեան (Լիբանան)	100.000 Լ.Ն.
Տեար Արամ Գայսերեան		Տեար Ժորժ Աւետ Գարամանուկեան	
(Արեւելեան Միացեալ Նահանգներ)	100 \$	(Լիբանան)	100.000 Լ.Ն.
Տեր եւ տիկ. Ռազմիկ եւ Մարալ Պանոսեան		Տեր եւ տիկ. Կիրակոս Նէնճեան	
(Արեւելեան Մ. Նահանգներ)	100 \$	(Լիբանան)	100.000 Լ.Ն.
Օրդ. Լոռի Փիլիպոսեան (Արեւելեան		Տեր եւ տիկ. Արա եւ Վերա Սիսեռեան	
Մ. Նահանգներ)	100 \$	(Հայաստան)	100.000 Լ.Ն.
Տեր եւ տիկ. Գեորգ Յակոբճեան (Վիեննա)	100 \$	Տեր եւ տիկ. Վարազ եւ Նայիրի Սիսեռեան	
Տեր եւ տիկ. Յակոբ եւ Շողիկ Գազանճեան		(Հայաստան)	100.000 Լ.Ն.
(Կիպրոս)	100 \$	Տեր եւ տիկ. Շահան եւ Գոհար Գանտահարեան	
Յակոբ եւ Յարութ Պետիրեաններ (Զուէլթ)	100 \$	(Լիբանան)	100.000 Լ.Ն.
Տեար Սեւակ Արմենեան (Ֆրանսա)	100 \$	Տեր եւ տիկ. Մարտիկ եւ Թամար Խանճիհանեան	
Տեր եւ տիկ. Շանթ եւ Ծովինար Ժամկոչեան		(Լիբանան)	100.000 Լ.Ն.
(Արեւելեան Մ. Նահանգներ)	50 \$		



# ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՄԸՄ-Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՇԱՐԱԹ, 13 ՓԵՏՐՈՒՄ 2021



ԱԶԳԱԿ ՅԱՒԵԼՈՒՄԾ

https://www.facebook.com/378235705657393/posts/1819417948205821

## ԱՆՋՆՁԵԼԻ ԱՒԱՆԴ

ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչության նախկին ատենապետ Գառնիկ Մկրտիչեան իր համա-ՀՄԸՄ-ական բեղուն գործունեության կողքին հիմնական աւանդ ներդրած է ՀՄԸՄ-ի Լիբանանի կազմակերպության մեջ:

Ոչ միայն միութենական, այլ նաև ազգային, կուսակցական եւ հասարակական իր վաստակաշատ գործունեության մասին շա՛տ շատեր պիտի ուզէին թուղթին յանձնել իրենց յուշերը, ապրումներն ու մտածումները՝ ժողովուրդին կողմէ սիրուած մեր մեծ եղբոր մասին: Ժողովական ըլլան անոնք, թէ բանակումի աշխատանքներուն վերաբերին, փառատօնի կազմակերպում ըլլան, թէ մեր մարմնակրթական կեանքին, ՀՄԸՄ-ի կրթադաստիարակչական աշխատանքներուն հետ կապ ունենան, թէ՛ ՀՄԸՄ-ի մեծ յոբելեանի լայնածաւալ աշխատանքներուն, բոլորը յիշատակ մը, դրուագ մը, խորհրդակցութեան պահ մը ունին անպայման Գառնիկ Մկրտիչեանին հետ, որ գիտցաւ հաւաքական ղեկավարութեամբ ստանձնել սփիւռքի մեծագոյն կազմակերպութեան իրեն վստահուած ղեկը:

Այս բոլորին վրայ կ'աւելնան անշուշտ իր ազգային-հասարակական եւ կուսակցական արդիւնաշատ գործունեութեան բաժինները՝ պատանեկանէն ԼԵՄ, «Սարդարապատ» կոմիտէն ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէ, քաղաքացիական պատերազմի ընթացքին յարաբերական գործերէն մինչեւ Ազգային վարչութիւն, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային ընդհանուր ժողով, Լիբանանի թեմի Ազգային վարչութիւն, մինչեւ Լիբանանահայութեան վերականգնումի մարմին:

Յետեաքար բազմաթիւ էին թէ՛ ՀՄԸՄ-ին, եւ թէ՛ «Ազդակ»-ին յղուած յուշագրութիւններն ու վկայութիւնները: ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային վարչութիւնը անհրաժեշտ համարեց յատուկ հրատարակութիւն նուիրել մեզմէ վաղաժամ բաժնուած մեր եղբոր յիշատակին:

Այս հրատարակութիւնը ՀՄԸՄ-ի Լիբանանի կազմակերպութեան յիշատակի տուրքն է ոչ միայն լիբանանահայ, այլ նաև սփիւռքահայ իրականութեան մէջ անջնջելի աւանդ վաստակած եղբայր Գառնիկ Մկրտիչեանին:

ՀՄԸՄ-Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ԳԼԽԱՒՈՐ ԴԵՐ ՈՒՆԵՅԱԻ ՀՄԸՄ-Ի ՇԱՐՔԵՐԸ ԹԱՐՄԱՅՆԵԼՈՒ, ԸՆԴԱՐՉԱԿԵԼՈՒ ԵՒ ԱՇԽՈՒԹԱՅՆԵԼՈՒ ՄԵՉ



Մեզմէ շատ կանուխ բաժնուցաւ մեր ազգի ընկեր Գառնիկ Մկրտիչեանը: Ընկեր Գառնիկը հաւատաւոր ու նուիրեալ կուսակցական էր եւ գաղափարի մարտիկը. թէ՛ որպէս պարզ շարքային, թէ՛ ալ որպէս ղեկավար՝ ան շարունակաբար դրսեւորած է իր ժողովուրդին եւ հայրենիքին հանդէպ հաւատքի ու նուիրումի լաւագոյն յատկանիշները: Եղած է՝ միշտ կարգապահ, անշէղ սկզբունքներու տէր, համբերատար, լայնախոհ, նորարար, հաճելի գրուցակից, փոթորիկներու մէջ խաղաղ ափեր որոնող եւ մանաւանդ իր հայրենիքին ու հայրութեան ծառայելու միշտ պատրաստ: **Շար.ը էջ 10**

## ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ ԵՂԱԻ ԾԱՌԱՅԱՍԵՐ՝ ԲԱՌԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՒ ՎԱԻԵՐԱԿԱՆ ԱՌՈՒՄՈՎ



Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս ժօտէն ճանչցած է հանգուցեալ Գառնիկ Մկրտիչեանը եւ հետեւեալը կը վկայէ անոր մասին. «Գառնիկը կը պատկանի այն գաղափարապաշտ ու մարտունակ սերունդին, որ իր ազգային մկրտութիւնը ու կազմատրուարը ստացաւ հայաբոյր ու հայակերտ ակումբին մէջ: Պուրճ Համուտի սրտին վրայ գտնուող Սարդարապատ ակումբը դարձաւ իր առաջին ընտանիքը, եւ հոն սարդարապատեան ոգիով թրծուած՝ Լիբանանի քաղաքական պատերազմի թե՛ օրերուն հայկական թաղերու ապահովութեան ու հայ ընտանիքներու պաշտպանութեան իր կարեւոր ներդրումը ունեցաւ: **Շար.ը էջ 10**

## ՀՄԸՄ-Ի ՇՐՋՈՒՆ ԴԵՄՊԱՆԸ՝ ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ՀՄԸՄ-ի համահայկական կառոյցի ամենէն հեղինակաւոր ու տիրական ղեմքերէն Գառնիկ Մկրտիչեան ծնած է 10 ապրիլ 1962-ին: Ան իր կրթութիւնը ստացած է Համազգայինի Նշան Փալանճեան ճեմարանին եւ Չմմառեան միաբանութեան Ս. Պօղոս վարժարանին մէջ: Զօրը կանխահաս մահը, սակայն, պատճառ դարձած է, որ ան կանուխէն նետւի գործի ասպարեզ՝ դիմագրաւելու համար կեանքի դաժան մարտահրաւերները:



Բիւզանդ եւ Ծաղիկ Մկրտիչեաններու ընտանեկան յարկին տակ հայրենի շունչով եւ գաղափարական դաստիարակութեամբ հասակ առած Գառնիկ Մկրտիչեան, ինքնակերտման առաջին քայլերէն ետք, մաս կը կազմէ ՀՅԴ Լիբանանի երիտասարդական միութեան «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղին՝ կանուխէն իր մէջ յայտնաբերելով ղեկավարի եւ շրջափառեաց առաջնորդի բնատուր յատկանիշներ: Զսանմէկ տարեկանին կ'ընտրուի ՀՅԴ «Սարդարապատ» կոմիտէի անդամ, իսկ կարճ ատեն մը ետք՝ կոմիտէի ներկայացուցիչ՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմի ամենէն դժուարին օրերուն, անելի քան տասնամեակ մը իր շուրջը անպակաս պահելով շրջանի հայութեան ֆիզիքական պաշտպանութեան **Շար.ը էջ 10**



HOMENETMEN